ԷՋՄԻԱԾԻՆ



ԺԸ
2000

#ЖС146



ԾԶ ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Նոյեմբեր
2000

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Տեղեկագրություն Վեհափառ Հայրապետի Հռոմ և Մոսկվա այցելությունների մասին 3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Հռոմ և Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքների վերադարձը Հայաստան (Զետեղված է նաև «Միացյալ հաղորդագրություն Հովհաննես-Պողոս Բ Պապի և Գարեգին Բ Կաթողիկոսի միջև») 4
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Համայն Ռուսաց Պատրիարքի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդի հետ եռակողմ հանդիպումում 19
Համատեղ հռչակագիր 21
Դիմում՝ ուղղված Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նախագահներին 23
Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ն.Ս. Ալեքսի Բ-ի խոսքը Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների եռակողմ հանդիպման բացման ժամանակ . . . 26
Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մոսկվայում հոգևոր առաջնորդների հետ հանդիպման ժամանակ 29

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արա Աբրահամյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 31
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Թորոս Թորանյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին 33

Վեհափառ Հայրապետի Օրհնության և գնահատականքի գիրը Բուենոս Այրեսի Մարի Մանուկյան կրթական հաստատությանը 35
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Գիտությունների Ազգային Ակադեմիայում Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակին նվիրված գիտաժողովի բացման առիթով 37

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԿԱՎԱԳ ՄԱԿԱՐՅԱՆ - Հանդիսություն Մայր Աթոռում նվիրված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի օծման և գահակալության առաջին տարեդարձին 40
Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . 44
ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Քահանայական ձեռնադրություն Մայր Տաճարում 46
Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյան 49
Տ. Արիստակես աբեղա Այվազյան 50
Տ. Սահակ աբեղա Շաքարյան 51
Տ. Դանիել աբեղա Թումանյան 52
Տ. Խաչ քահանա Ղազարյան 53
Օծվեց Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու նորակառույց զանգակատունը 54
Ձեռամբ Վեհափառ Հայրապետի օծվեց Մալիշկայի Ս. Աննա եկեղեցին 55
«Շողակաթ» հեռուստաստուդիայի նոր տաղավարի բացում 56
Գարեգին Բ Կաթողիկոսը մասնակցեց Գյումրիի Բայրոնի անվան դպրոցի հոբելյանական հանդիսությանը 57
Գարեգին Բ Կաթողիկոսը ներկա գտնվեց Դավիթաշենի կամրջի բացմանը 58
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության պետ, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Պատրուշևին 58
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Մեծ Բրիտանիայի Պաշտպանության նախարարության ներկայացուցիչներին . . . 59
1700-ամյակի երիտասարդական ուխտագնացության միջթեմական ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 60

ԿՐՈՆՈԳԻՏԱԿԱՆ

Վ. ԼՈՍՄԿԻ - Աստվածային լույս 61

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

Ռ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - Գրիգոր Լուսավորչի ավետարանական քարոզությունը Անդրկովկասում 76
ԷՄՄԱ ԱՇՈՏԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ - Մխիթարյանները և Մկրտիչ Խրիմյանը 84
ԼՈՒԻԿ ԱՎԱԳՅԱՆ - Նոր Ջուղայի հայկական եկեղեցիները . . 91
ԱՐԱՄ ՏԱԿՈԲԻ ՄԱՐԳՍՅԱՆ - Հայկական հարցը և Կ. Պոլսի պատրիարքությունը 19-րդ դարի 70-ական թվականներին . . . 102
ԿԱՐԵՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ - Դրվագներ Գևորգյան Ճեմարանում Կոմիտասի մանկավարժական գործունեությունից 114
ՎԱՀԱՆ ՄԱՂԱՅՅԱՆ - Երևանի պետական համալսարանը՝ մեր պատմական հուշարձանների պահապան 125

Եկեղեցական բեմ. լուրեր 133
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . 135
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin 138
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine 141

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՄԻՀ՝ 77764

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2000 թ. նոյեմբերի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատկառելի մի պատվիրակությամբ մեկնեց Հռոմ Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ հանդիպելու և Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները Հայաստան փոխադրելու, Արևելյան Եկեղեցիների աստվածաբանությանը, պատմությանը, ծիսագիտությանը նվիրված գիտական սիմպոզիումի բացմանը մասնակցելու համար: Նորին Սրբությունը Հռոմում հանդիպում ունեցավ նաև աշխարհի տարբեր երկրներից ժամանած հայ գործարարների հետ:

*
* *

Նոյեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա՝ հանդիպելու Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ի և Կովկասի ժողովուրդների Վերին Կրոնական Խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեի հետ: Հանդիպման ընթացքում երեք առաջնորդների կողմից ստորագրվեց համատեղ հռչակագիր, որով կոչ է արվում խաղաղության ամրապնդմանն Անդրկովկասում և սահմանակից տարածքներում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ՀԸՌՄ ԵՎ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 8

2000 թ. նոյեմբերի 8-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն ժամանեց Հռոմ եպիսկոպոսների և բարձրաստիճան անձանց ուղեկցությամբ, երեքօրյա այցելություն կատարելու Վատիկան և հանդիպելու Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապին:

Վեհափառ Հայրապետն իր շքախմբի ուղեկցությամբ, որին ընկերակցել էին Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը և ՀՀ Կրոնի գործերի խորհրդի նախագահ Ռազմիկ Մարկոսյանը, չորեքշաբթի երեկոյան ժամանեցին Հռոմի Լեոնարդո դա Վինչիի անվան օդանավակայան:

Վեհափառ Հայրապետին Հռոմում միացան Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանը, ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ և 1700-ամյակի վարիչ-տնօրեն Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նազգաշյանը, Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը:

Օդանավակայանում Վեհափառին դիմավորելու էին եկել Քրիստոնեական միության աջակցման քահանայապետական խորհրդի նախագահ, Կարդինալ Էդուարդ Իդրիս Կասիդին, նույն խորհրդի քարտուղար, եպիսկոպոս Վալտեր Կասպերը, նույն խորհրդի աշխատակից, հայր Ջոն Բոնին՝ հայ կաթոլիկ եպիսկոպոսների ուղեկցությամբ: Ներկա էր նաև Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գագիկ Բաղդասարյանը:

Վեհափառ Հայրապետը և նրա պատվիրակության անդամները երեք օրերում ընակվեցին Դումնաս Սանտա Մարթայում, Վատիկանում գտնվող Պապի անձնական հյուրանոցում:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9

Նոյեմբերի 9-ին Վեհափառ Հայրապետն իր շքախմբի ուղեկցությամբ սկսեց իր շրջագայությունները Հռոմում:

Ս. Պետրոսի շիրիմի առջև կարճ աղոթքից հետո պատվիրակությունը ոստիկաններից բաղկացած պահակազորի ուղեկցությամբ առաջնորդվեց առաքելական թանգարան՝ դիտելու Աստվածաշնչյան հնագույն ձեռագրերը, ինչպես նաև հնագույն մի քանի հայկական ձեռագրեր: Այստեղ պատվիրակությանը դիմավորեց Առաքելական գրադարանի տեսուչ, հայր Թավայելի Ֆայկանան:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետն ու իր շքախումբն առաջնորդվեցին քահանայապետական հայկական քոլեջ՝ Հռոմի Լևոնյան վարժարան, որը գտնվում է Վիա Վենետո Պիացցայում:

Վարժարան ժամանելուց հետո Վեհափառն առաջնորդվեց Ս. Նիկոլա եկեղեցի, որը երկար տարիներ ծառայել է հայ կաթոլիկներին: Եկեղեցու շեմին Նորին Սրբությանը դիմավորեցին ավանդական աղ ու հացով: Վեհափառին դիմավորելու էին եկել Հայ Կաթողիկե Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք Ներսես-Պետրոս ԺԹ-ն, Գերաշնորհ Էդուարդ Իդրիս Կասիդի Կարդինալը, Լևոնյան վարժարանի տեսուչ Տ. Վարդան եպս. Պողոսյանը, հաստատության փոխտեսուչ հայր Ղևոնդ Քեռեղիրջյանը, գրեթե 10 ճեմարանականների, քահանաների և եղբայրների ու Մխիթարյան ուխտի այլ 10 անդամների, ինչպես նաև Անարատ կույսերի միաբանության հայ կաթողիկե հայրերի ուղեկցությամբ:

Փոխտեսուչ հայր Ղևոնդ Քեռեղիրջյանի ողջույնից հետո Հռոմի հայ համայնքի անունից ներկաներին ողջունեց տիկին Միլվա Իդեկջյանը:

Վերջում իր ջերմ բարեմաղթանքներն ու ողջույնի խոսքը հղեց հայ կաթողիկե համայնքի Կաթողիկոս-Պատրիարք Ներսես-Պետրոս ԺԹ-ն:

Խոսքի ավարտին, մինչ ժառանգավորներից, Մխիթարյան հայրերից և քույրերից բաղկացած խումբը երգում էր «Ամեն հայի սրտից բխած» հայրապետական մաղթանքը, հայ կաթոլիկ վարժարանի սաներից մեկը Վեհափառին նվիրեց ոսկե սկիհ:

Նորին Սրբությունը իր խոսքում գոհունակություն հայտնեց իրեն մատուցված ջերմ ընդունելության համար: Իր խոսքում Վեհափառն անդրադարձավ Կաթոլիկ և Հայ Եկեղեցու միջև գոյություն ունեցող դարավոր հարաբերություններին, քանի որ Վազգեն Ա և Գարեգին Ա երջանկահիշատակ Կաթողիկոսների օրոք նոր հարաբերությունների էջ բացվեց: Վեհափառը ցանկություն հայտնեց, որ երկու Եկեղեցիների միջև գոյություն ունեցող եղբայրական համագործակցությունը վերահաստատվի և

վերանորոգվի: Նա նշեց, որ քույր Եկեղեցիների համագործակցությունը մեր ժամանակների հրամայականն է: Սա նշանակում է փոխադարձ սեր, վստահություն և եղբայրական համագործակցություն:

Խոսքի վերջում Նորին Սրբությունը, օրհնություն բաշխելով բոլոր հայ կաթոլիկներին, աղոթեց, որ երկու Եկեղեցիները հավատարիմ մնան Քրիստոսի պատգամին:

Երեկոյան Վատիկանում, Դոմնուս Մարտ Սանկտայում, Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ Հռոմի Պապ Հովհաննես-Պողոս Բ-ի հետ առաքելական հարկաբաժնում. Պապի պաշտոնական բնակավայրում: Ժամը 5.35-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը և իր պատվիրակությունը առաջնորդվեցին դեպի առաքելական բնակարանի շքամուտք: Նրանց պաշտոնապես դիմավորեցին շվեյցարական գինվորները:

Կաթողիկոսի և Պապի միջև տեղի ունեցած 45-րոպեանոց առանձնազրույցից հետո ամբողջ շքախումբը եպիսկոպոսների, քահանաների ուղեկցությամբ առաջնորդվեցին Պապի գլխավոր ընդունարան, ուր Վեհափառ Հայրապետը Պապին անձնապես ներկայացրեց պատվիրակության յուրաքանչյուր անդամին:

Կաթողիկոսի և Պապի միջև փոխանակված խոսքերից հետո պատվիրակությունը առաջնորդվեց մեկ այլ՝ ավելի մեծ սրահ, ուր ավելի քան 75 հայ բարերարներ և բարձրաստիճան անձինք էին հրավիրված Միացյալ Նահանգներից, Եվրոպայից և Հարավային Ամերիկայից՝ ներկա գտնվելու Հայոց 132-րդ Հայրապետի և Հովհաննես-Պողոս Բ Պապի պատմական հանդիպմանը:

Սրահում երկու առաջնորդներն իրենց հայրապետական խոսքերն ուղղեցին ժողովրդին:

Պապի ողջույնի խոսքից հետո իր խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը.

«Զերդ Սրբություն,
Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ ողջունի հրաման տուաւ.
Եկեղեցիս մի անձն եղեւ
Համբոյրս յօդ լրման տուաւ,
Թշնամութիւնն հեռացաւ,
Մեր յընդհանուրս ապրեցաւ:

Հայոց սրբազնախորհուրդ Պատարագի կենարար, բարի այս ավետիսով ենք ողջունում Զերդ Սրբությանը՝ ի դեմս այն եղբայրական, հիասքանչ ապրումի, որ միավորում է մեզ՝մեր Տիրոջ Ս. Ծննդյան 2000-րդ տարում:

Փա՛ռք Բարձրյալին, որ Մենք՝ 132-րդ գահակալը Աստվածակառույց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, երջանիկ առիթն ու պատեհությունն ունենք խաղաղության համբույր փոխանակելու Զերդ Սրբության հետ և այստեղ՝Հռոմի սրտում մեր այս հանդիպումով հավատալու Ս. Թադեոսի և Ս. Պետրոսի՝մեր երկու Առաքելահաստատ Աթոռների եղբայրությունը:

Վերջին անգամ օրհնյալ այս վայրում կանգնած էինք ընդամենը մեկ և կես տարի առաջ՝որպես ողնեկից երջանկահիշատակ Մեր նախորդ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որ Զերդ Սրբության հրավերով եկել էր Վատիկանում հայ հոգևոր գանձերի ցուցահանդեսի բացումը կատարելու:

Հիրավի, ժամանակների մեջ զգացվում է Աստծո մշտանորոգ և կենսատու Ս. Հոգու հարատև ներկայությունը, որի առաջնորդությամբ Զեր նախորդ Պողոս 6-րդ Պապի և Վազգեն Ա Հայոց Հայրապետի պատմական հանդիպումից ու ողջագուրումից հետո համախառնեալ են մեր Աթոռների՝ի Քրիստոս միասնության վկայությունները՝ աստվածային նախախնամությամբ դիմագրավելու համար ներկա դարի բոնություններին, անարդարություններին ու բազում մոլորություններին: Այս մարտահրավերների թելադրանքով Քրիստոսի Եկեղեցին, որին դժոխքի դռները չեն կարողանալու հաղթահարել, կանգնած է միության և միասնականության իր աստվածահաճո առաքելությունը գործագրելու հրամայականի առջև:

Եվ Մենք՝Հայրապետ Հայոց, ուրախ ենք, որ քրիստոնեական եղբայրության, Քրիստոսի Եկեղեցու միասնականության այդ շնչորդաձայնը հնչում է նաև Կաթոլիկ Եկեղեցու կենտրոնից՝ Վատիկանից, նրա շնորհազարդ գահակալի սրտից ու հոգուց և չի կարող չարձագանքել աստվածաշնչական Արարատի նույնվածքի տակ տրոփող Հայաստան աշխարհում, որը դարեր

շարունակ եղել է և այսօր էլ է քրիստոնեական մշակույթի հավատարիմ ու անհոգնաբեկ սահմանապահը:

Այդ կոչը հարազատ է Մեր սրտին, քանզի այնտեղ տեսնում ենք Ավետարանի ոգին՝ սիրո և եղբայրության ամենահաղթ ոգին, որի առջև անզոր են և անուժ ամեն խոչընդոտ ու արգելք: Քրիստոնեական Եկեղեցիների միասնությամբ ու միմյանց զորակցությամբ, հավատում ենք, որ նոր՝ երրորդ հազարամյակում առավել արդասավորվելու է ասպվածահաստատ ու առաքելաշավիղ առաքելությունը Քրիստոսի բազմանդամ Սուրբ Եկեղեցու:

Ուրախությամբ է լի այս պահին մեր հոգին, քանզի Հայաստանյայց Եկեղեցու բարձրաստիճան եկեղեցականները Մեզ ուղեկից ունենալով, աշխարհասփյուռ մեր զավակների հետ եկել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Լուսավորչի Աջի և երկրպագելի սուրբ նշխարների մոտ առաքնորդելու Մեր հավատքի հոր՝ Սրբազնասուրբ Գրիգոր Լուսավորչի հրաշագործ այն մասունքները, որոնք Կաթողիկ Եկեղեցին, որպես մեր Եկեղեցիների դարավոր եղբայրության վկայություն ու երաշխիք, հանձնում է Հայոց Եկեղեցուն:

Ձերդ Սրբություն, սիրելյայ եղբայր ի Քրիստոս, հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Մեր շնորհակալությունն ենք հայտնում սիրո ու հարգանքի այս խոսուն վկայության համար, որը նաև բարձրագույն գնահատականն է Հայ Եկեղեցուն, նրա ժառանգությանը, նահատակությունները կերտված նրա պատմությանը:

Հայ Եկեղեցին ինքնուրույն պատմական զարգացմամբ հանդերձ երբեք չի կոգիացել, այլ միշտ առաջնորդվելով «միութիւն ի կարեւորս, ազատութիւն ի երկրայականս եւ սէր յամենայնի» գաղափարականով, իրեն համարել է Քրիստոսի Տիեզերական Եկեղեցու մեկ փոքրիկ, սակայն կարևոր մասնիկը:

Հայ Եկեղեցու անկախությունը դարձել է մեր ժառանգության արժեքներից մեկը, որը հայ հոգին ու հայ հովիվը պահել ու պահպանել են ամենայն նախանձախնդրությամբ ու ջանադրությամբ՝ աստվածաշնորհ ազատության և անկախության այդ ընկալումով հարգելով ուրիշի՝ նույնքան թանկ և նույնքան գնահատելի ինքնությունն ու առանձնահատկությունը: Դարերի փորձությունների մեջ, ազգային պետականության կորստի դառնագին պայմաններում Հայ Եկեղեցին անթեղել ու անապարտ է պահել ազատության արբազան գաղափարն ու ապրումը հայ հոգիներում և ոգեշնչել հայության «վասն հաւատոյ, վասն հայրենեաց» պայքարը:

Մեր խորին համոզումն է, որ դավանական տարբերությունները Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցուց ներս մեր ընդհանուր պատմության անբաժան մասն են, որ ծագել են Աստվածային հայտնության խորքերը թափանցելու ձգտումներում միևնույն ճշմարտությունը ուրույն լեզվամտածողությամբ արտահայտելու իրողությունից, սակայն երբեք խոչընդոտ չեն Ե-

կեղեցիների հաղորդութենական իրական կապի համար: Խոչընդոտ չեն և չպետք է լինեն նաև վարչական ինքնուրույնություններ ու եկեղեցական յուրահատկություններ, որոնք, եթե միայն կամենանք, մեզ կարող են օգնել և ոչ՝ վնասել:

Այս իմաստով մենք հավատացողն ենք Եկեղեցու իրական, խորհրդական միության: Հավատացողն ենք նաև, որ Քրիստոսի Մեկ Եկեղեցու միությունը հնարավոր է նախ և առաջ տեղական Եկեղեցիների մեջ միության վերահաստատումով:

Ձերդ Սրբություն, մեր հանդիպման այս առիթն օգտագործելով, սիրով նորոգում ենք Մեր հրավերը Ձեզ՝ այցելելու Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և մասնակցություն բերելու հայոց մեծ դարձի հավատակերտ օրերի 1700-ամյա հիշատակի տոնախմբության հանդիսություններին՝ Ձեր բարձրաշնորհ ներկայությամբ պատվելով հայ Եկեղեցին աշխարհասփյուռ համայն իր զավակներով:

Ապրված կամեցավ, որ բազմադարյա իր կենսագրության շրջադարձային իրադարձության՝ դեպի Քրիստոս համազգային դարձի պատմականորեն ճանաչման մեծ տոնը հայ ժողովուրդը տոնախմբի ինքնիշխան իր Հայրենիքի ազատ երկնքի ներքո՝ նոր հույսերով ազդափակելով այն դարը, որ իր համար սկսվեց ցեղասպանությամբ: Հարության մեր սուրբ հավատքի զորությամբ մեր ժողովուրդը վերապրեց մեծ աղետը, իր դեմ նյութված չարիքը հաղթահարեց բարիք ստեղծելով ու կառուցելով և այսօր՝ նոր դարի շեմին, մարդկային արդարության հանդեպ հավատով ապասում է Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը, որպեսզի մարդկային հոգիներում չարի մերժումով որպես ձեռաց գործեր կյանք առնի ու պրդարերի Բարին, և Ապրծ խնամքը ամենակաս լինի իր արարածներից, քանզի «որ նիւթ զբարին, խնդրէ զշնորհս բարութեան»:

Մեր աղոթքն է, որ երրորդ հազարամյակը համայն աշխարհին բացվի խաղաղության արևազարդով ու հաշտության ավետիսով: Աղոթքով ան Ասված հայցում ենք, որ Երկնավոր մեր Տերը՝ Հարուցյալ Փրկիչը, օրհնի մեզ, օրհնի մեր Եկեղեցիները և օրհնի մեր խնամքին հանձնված իր բանավոր հոտը, ամեն»:

Խոսքերի փոխանակումից հետո Կաթողիկոսի և Պապի միջև նվերների փոխանակում կատարվեց:

Վերջում Պապի և Կաթողիկոսի միջև ստորագրվեց համատեղ հռչակագիր:

ՄԻԱՑՅԱԼ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Նորին Սրբություն, Հռոմի Եպիսկոպոսապետ Հովհաննես-Պողոս Բ Պապը և Նորին Սրբություն Ծայրագույն Պատրիարքը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհություն են հայտնում Տիրոջը և Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, որ Հոբելյանական 2000 տարվա առթիվ և Հայաստանի մեջ քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-րդ տարեդարձի նախաշեմին կարելիություն ընծայեց միմյանց հանդիպելու:

Նրանք նաև փառք են տալիս Սուրբ Հոգուն, որ վերջին տարիների ընթացքում եղբայրական հարաբերություններն ավելի զարգացած և խորացած են Հռոմի Աթոռի և Էջմիածնի Աթոռի միջև: Այս առաջընթացն իր արտահայտությունն է գտնում նրանց ներկայիս հանդիպմամբ և ի մասնավորի մասունքների ընծայաբերմամբ՝ Սուրբ Առաքյալի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի, որ, եավատարոս անելով Հայոց թագավորին, Քրիստոսի 301 թվականին սկիզբ դրեց Հայոց Եկեղեցու Կաթողիկոսության շարքին: Սույն հանդիպումը հիմնավորված է և հաջորդում է նախորդ հանդիպումներին, որոնք տեղի են ունեցել Պողոս Զ Պապի ու Վազգեն Ա Կաթողիկոսի (1970) և Հովհաննես-Պողոս Բ Պապի ու Գարեգին Ա Կաթողիկոսի միջև երկու հանդիպումներով (1996 և 1999): Հովհաննես-Պողոս Բ Պապը և Գարեգին Բ Կաթողիկոսը այժմ հույսով ակնկալում են մի հավանական հանդիպում Հայաստանում: Ներկա պատեհությամբ նրանք միասնաբար հայտարարում են հետևյալը.

Մենք միասնաբար խոստովանում ենք և հավատում ենք Երեք ե Մի Աստվածությանը՝ Մի Տիրոջ, Հիսուս Քրիստոսին, Աստուծո միակ Որդուն, որ մարդացավ մեր փրկության համար: Մենք նաև հավատում ենք Մի, Կաթողիկե, Առաքելական և Սուրբ Եկեղեցուն: Արդարև, Եկեղեցին, ինչպես Քրիստոսի մարմինը, մի է և եզակի: Այս մեր հասարակության հավատքն է՝ հիմնված Առաքյալների և Եկեղեցու Հայրերի ուսմունքի վրա: Մենք նաև ընդունում ենք, որ Կաթողիկե Եկեղեցին և Հայոց Եկեղեցին, երկուսը, ունեն ճշմարիտ խորհուրդներ, առավել ևս, եպիսկոպոսների առաքելական հաջորդականությամբ, քահանայությունը և Հաղորդության Խորհուրդը: Մենք շարունակում ենք աղոթել մեր միջև ամբողջական և տեսանելի հաղորդության համար: Կրոնական տոնակատարությունը, որին միասնաբար նախագահում ենք, նշան է խաղաղության, որ փոխանակում ենք միմյանց հետ, և օրհնությունը, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով միասնաբար բաշխում ենք, վկայում են, որ մենք եպիսկոպոսության մեջ եղբայրներ ենք: Միասնաբար և միասին մենք պատասխանատու ենք մեր հասարակաց առաքելության, որ նշանակում է ուսուցանել առաքելական հավատքը և վկայել Քրիստոսի Միրո մասին, բոլոր մարդ արարածների հանդեպ, մասնավորաբար նրանց, որոնք ապրում են դժվարին պայմաններում:

ՄԱՍՏՅԱՆ ՀԱՄԱՐՈՒՄՆԵՐԻՆ ՍՏՈՒՅԳԱՓԱՐՈՒՄ

Կաթողիկե և Հայոց Եկեղեցիներն ունեն միմյանց հարգելու երկար մի փորձառություն, որպես միմյանց ամբողջացնող, քան թե հակասող նկատելով իրենց զանազան աստվածաբանական, ծիսական և օրինական ավանդույթները: Այսօր ևս մենք իրարից առնելիք շատ բաներ ունենք: **Հայոց Եկեղեցու համար** Կաթողիկե ուսման անհուն միջոցները կարող են դառնալ գանձ և ներշնչման աղբյուր դաստիարակների և ուսանողների փոխանակման, միասնարար ձեռնարկված թարգմանությունների և ուսումնական նախաձեռնությունների, աստվածաբանական երկխոսությունների զանազան կերպերի միջոցներով: Նմանապես, **Կաթողիկե Եկեղեցու համար**, անխախտ և համբերատար հավատքը նահատակված ազգի, օրինակ հայության, կարող է դառնալ աղբյուր հոգեկան ուժի հատկապես հասարակաց աղոթքի միջոցով: Մեր հաստատ բաղձանքն է միմյանց հետ փոխանակված այս բազմաթիվ կերպերը և միմյանց միջև կայացած մտերցումները բարելավված և հզորացած տեսնել:

Երբ մենք մուտք ենք գործում երրորդ հազարամյակից ներս, հետադարձ մի ակնարկ ենք գցում անցյալին և ակնկալությամբ դիտում ապագան: Անցյալը նկատի ունենալով, մենք գոհություն ենք տալիս Աստծուն բազում օրհնությունների համար, որոնք ստացել ենք Իր անսահման առատաձեռնությունից, սրբազան այն մարտիրոսությունների համար, որոնց ենթարկվել են բազմաթիվ սրբեր և վկաներ, հոգևոր և մշակութային այն ժառանգության համար, որ մեզ կտակված է մեր նախահայրերի կողմից: Հակառակ դրան, թե՛ Կաթողիկե Եկեղեցին, և թե՛ Հայոց Եկեղեցին մութ ու դժվարին ժամանակահատվածներում գոյատևել են:

Քրիստոնեական հավատքը վիճարկել էր անաստվածության և նյութապաշտական գաղափարախոսությունը, **Քրիստոնեական վկայությունն** ընդդիմակայված էր ամբողջատիրական և բռնապետական իրավակարգերի կողմից, քրիստոնեական սերը ոտնակոխ էր դարձել անհատապաշտության, անհատի շահի հետապնդման մեջ: Ազգերի առաջնորդները այլևս ոչ վախ ունեին Աստծուց, ոչ էլ ամոթ էին զգում մարդկության առջև: Մեր երկու Եկեղեցիների համար 20-րդ դարը հատկանշվեց ծայրահեղ բռնությամբ: Հայկական Ցեղասպանությունը, որով սկսվեց դարը, նախամուտն էր ահաբեկչությունների, որոնք իրար պիտի հաջորդեին: Երկու համաշխարհային պատերազմները, անհամար տեղական ընդհարումներն ու կանխամտածված, կազմակերպված ոչնչացման արշավները միլիոնավոր հավատացյալների կյանքեր խլեցին: Բայց և այնպես, առանց նվազեցնելու այս դեպքերի սարսափը կամ նրանց հետևանքները, թերևս նրանց մեջ աստվածային մարտահրավեր կար. ի պատասխան նրանց՝ քրիստոնյաները համոզվեցին, որ պետք է միմյանց միանալ ավելի խոր բարեկամությամբ, ի խնդիր քրիստոնեական ճշմարտության և սիրո:

Այժմ մենք ապագային ենք նայում հույսով և վստահությամբ: Պատմության այս հանգրվանին մենք նոր հորիզոններ ենք տեսնում մեզ՝ քրիստոնյաներիս և աշխարհի համար: Թե՛ Արևելքի, և թե՛ Արևմուտքի մեջ, անտեսված իրավակարգերի և ապրելակերպերի մահացու հետևանքները ճաշակելուց հետո, շատ մարդիկ իմանալի

ճշմարտության և փրկության ճանապարհն են բաղձում: Միասնաբար առաջնորդված սիրով և ազատության հանդեպ հարգանքով, մենք ջանում ենք պատասխանել նրանց փափագին, որպեսզի կարողանանք նրանց հասցնել վավերական կյանքի և ճշմարիտ երջանկության ակունքներին: Մենք խնդրում ենք միջնորդությունը Կաթողիկե Եկեղեցու և Հայոց Եկեղեցու Առաքյալներ Պետրոսի և Պողոսի, Թադեոսի և Բարդուղիմեոսի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի և բոլոր Սրբակրոն Հովիվների և աղաչում ենք Տիրոջը՝ առաջնորդել մեր համայնքները, որպեսզի միաձայն կարողանանք վկայություն տալ Տիրոջ մասին և հռչակել փրկության ճշմարտությունը: Մենք նաև աղոթում ենք, որ աշխարհով մեկ, ուր որ Հայոց և Կաթողիկե Եկեղեցու անդամները ապրում են կողք-կողքի, բոլոր ձեռնադրված սպասավորները, կրոնավորները և հավատացյալները «Զմիմեանց բեռն բարձէք եւ կատարեցէք զօրէնսն Քրիստոսի» (Գաղատ. Զ 2): Նրանք փոխադարձաբար թող միմյանց զորակցեն և օգնեն՝ կատարելապես հարգելով յուրաքանչյուրի յուրահատուկ ինքնությունը և եկեղեցական ավանդությունները, խուսափելով իրար ճնշելուց. «Այսուհետեւ մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոց» (Գաղատ. Զ 10):

Վերջապես, մենք խնդրում ենք Աստուծո Սուրբ Մոր միջնորդությունը՝ ի նպաստ խաղաղության: Թող Տերը ազգերի առաջնորդներին իմաստություն շնորհի, որպեսզի արդարություն և խաղաղություն հաստատվեն աշխարհով մեկ: Մանավանդ այս օրերին, երբ մենք աղոթում ենք Միջին Արևելքի խաղաղության համար: Թող Աբրահամի բոլոր զավակները զորանան միմյանց հարգելով և աշխարհի այս սրբազան մասում գտնեն իրար հետ խաղաղ ապրելու պատշաճ ճանապարհները:

ԳԱՐԵԳԻՆ Բ **ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ»**

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10

Նոյեմբերի 10-ին Ն.Ս. Հովհաննես-Պողոս Բ-ն և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն Ս. Պետրոսի տաճարում նախագահեցին սրբազան արարողությանը, որի ընթացքում Հռոմի Պապը Վեհափառին հանձնեց Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները:

Ըստ ավանդության, այս մասունքները, այդ թվում նաև Ս. Լուսավորչի գլուխը և ձեռնաշղթայի կտորներ, միջնադարում Զվարթնոց եկեղեցուց Նեապոլ են փոխադրվել հայ կույսերի ձեռքով: Այստեղ, ի պատիվ Ս. Լուսավորչի, կառուցվել է Ս. Գրիգոր Հայի տաճարը, որտեղ մինչ այսօր սրբորեն պահպանվում են բոլոր մասունքները:

Հովհաննես-Պողոս Բ Պապը Վեհափառին դիմավորեց տաճարի գլխավոր մուտքի մոտ, Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները ձեռքին, ապա նրանք հանդիսավոր

երգեցողության ներքո շարժվեցին դեպի խոստովանության Ս. Խորան, որտեղ սկըսվեց ծիսական արարողությունը: Հավարտ արարողության Պապը Կաթողիկոսին փոխանցեց սրբազան մասունքները, որն էլ խորհրդանշանակորեն վստահեց այն Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանին: Ավետարանի հայերեն ընթերցանությունից հետո խոսք ասաց Հովհաննես-Պողոս Բ Պապը, որից հետո իր խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը.

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Օրհնյալ է Աստված, որ Մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան հոբելյանական 2000 թվականին, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր գահակալության առաջին տարում առաքելորդեց Մեր քայլերը դեպի քրիստոնեական քույր Եկեղեցիներ՝ ողջագուրումի, Մեր հոգևոր եղբայրների հետ հաստատելու և զորացնելու մեր Եկեղեցիների դարավոր ամուր կապերն ու համագործակցությունը: Երախտագիտությամբ գոհաբանական նոր աղոթք ենք առաքում աստ Բարձրյալը, որ այսօր Ս. Պետրոսի Տաճարում ի Քրիստոս մեր սերն ու փոխադարձ հարգանքն ենք հավաստում Կաթոլիկ Եկեղեցու Վեհապետի հետ:

Ձերդ Սրբություն. այս պահին երջանկությամբ է համակված Մեր հոգին, քանզի Մեր այցելությունը Հռոմ պսակվեց եղբայրական անկեղծ սիրո անզուգական դրսևորումով: Ս. Պետրոս առաքյալի արժանավոր, իմաստնաբարոյ հաջորդի՝ Ձերդ Սրբության ձեռքից Մենք՝ հաջորդը Ս. Թադեոս առաքյալի և առաքելապատիվ Ս. Գրիգոր Լուսավորչի, երախտագիտությամբ ընդունում ենք Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցու մեծ սրբի և հայոց Երկրորդ Լուսավորչի նվիրական նշխարները: Արդարև, պատմական, մեծ ու ցնծագին իրադարձություն է այսօր հայության համար ինչպես Մայր Հայրենիքում, այնպես և սփյուռքում: Կաթոլիկ Եկեղեցին անգին դնծուս է մատուցում հայոց մեծ դարձի՝ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանի առիթով:

Համազգային մեր ուրախության և ոգևորության վկայությունն է այս Տաճարում աշխարհասփյուռ մեր զավակաց ներկայությունը, որոնք Հռոմ են ժամանել հինգ աշխարհամասերի 12 երկրներից: Գրիգոր Հայի, ինչպես այստեղ ճանաչում են մեծազորձ սրբին, հավատի մեր հոր՝ Ս. Լուսավորչի բարեխոսությամբ այս կամարների ներքո միահյուսվել են մեր զավակաց, հայ և հռոմեական կաթոլիկ մեր եղբայրների ու քույրերի աղոթքները, միաբանվել են մեր եկեղեցականաց հոգիները՝ կերտելով անկրկնելի այն կառույցը, որ ի Քրիստոս ունեցած մեր սիրով ու հավատով, «Տիրոջով վերաճում է մի սուրբ Տաճարի» (Եփես Բ 21): Այս լուսեղեն շինության՝ անձեռակերտ Տաճարի երանելի ճարտարապետներից է Ս. Գրիգոր Լուսավո-

ոիրը՝ Քրիստոսի մեծ դասվանողն ու վկան, հայոց հանուր ազգային օրենսդիրը ու առաջին Կաթողիկոսը:

1700 տարիներ առաջ նա հանձնեց անպատմելի տանջանքների, 13 տարի անդադրում աղոթեց Խոր Վիրապի մահապարտության գնդանում և նոր Աստծո կամքով դուրս բերվեց այնտեղից, անքնին ու մաքուր շուրթերով Աստծո կենարար խոսքը բազմապատկեց, Ավետարանի լույսը առատացրեց Հայոց աշխարհում ու հրաշակերտեց հայոց մեծ դարձը: Նրա հայացքով մեր ժողովուրդը տեսավ երկնի անմատույց բարձունքներից հայրենի մեր հողին լույսերի մեջ իջնող Հարուցյալ Փրկչին: Նրա հավատի զորությամբ նոր նկարագիր ու գոյության իմաստ առավ հայրենական մեր կյանքը, որ աստուածային ու առհավետ քրիստոսադրոշմ է ու խարսխված Միածնի Էջմիածնի հանձնած Սուրբ Էջմիածնին: Արդարև, «ի վերուստ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգս հայոց կապեալ կայ» (Առաքել Դավրիժեցի, գլ. 17):

Հայոց հոգի Քաջ Հովիվը՝ իր ժողովրդին անմնացորդ նվիրված սուրբը, պատմության քառուղիներում մշտապես եղավ գայլերից ցրիվ եկած իր հոտի հետ, հավիտենական հանգստում անգամ կիսեց նրան բաժին ընկած փորձությունները՝ մասամբ սփոփելով երկրե երկիր, մասամբ զերվելով օտար ու անսուրբ զավթիչի կողմից:

Հանուն մեր ժողովրդի Մեր գնահատանքն ու շնորհակալությունն ենք հայտնում Նեապոլի Կարդինալ, Գերաշնորհ Տ. Մայքլ Ջորդանոյին, Սուրբ Գրիգոր վանքի ոսպյալ քույրերին, որ երկյուղածությամբ պահպանել են Քրիստոսի մեծ խոստովանողի նշխարները և բարբարանաց գործիքները, որոնք հինգ երկար դարեր ոսպյալգնացների հազարավոր խմբեր են առաջնորդել դեպի Սուրբ Գրիգոր վանք՝ իրենց խորհրդով շարունակելով ասպվածանվեր նրա կյանքի հոգևորոգ առաքելությունը:

Այսօր Լուսավորիչ Սուրբ Հայրը մեր գալիս է իր ժողովրդի մոտ՝ ցնծալու վերջինիս ազատության ու անկախության շնչով և իր օրհնությունը լուսնկալ իր նշխարների միջոցով բաշխելու ու բաժանելու երկրին Արարատյան:

Սրբոց մասունքների հանդեպ մեր ժողովուրդը, ինչպես քրիստոնյա շատ ժողովուրդներ, հնուց ի վեր ունի ջերմեռանդ պաշտամունք, որ զարմացրել ու անհանգստացրել է բոլոր թշնամյաց, ովքեր փորձել են ուժով ու բռնությամբ ուրացություն պարտադրել քրիստոնեությունը իբրև մորթի գույն կրող մեր ժողովրդին: Իզուր էին նրանց ջանքերը, քանզի հայ ժողովուրդը ինչպես չիրաժարվեց նահատակություններ ապրելուց հանուն հավատի, այնպես և իր կյանքը զորացրած Քրիստոսով, Եկեղեցու սրբություններով, նաև՝ սրբոց մասունքներով, ամուր կանգնած մնաց խաչի փրկագործ ճանապարհին՝ անխորտակ պահելով քրիստոնեական աշխարհի բերդ-ամրոցը Արևելքում:

Մեր ժողովուրդն այսօր զրկված է բազում իր սրբություններից ու սրբավայրերից, որոնք քրիստոնեական հավատի դրոշմով վկայում են հայի քրտինքով ու արյամբ շաղախված ու սրբագործված Հայաստան աշխարհի մասին: Այստեղ գտնվող հայորդիների մեծ մասը զավակներն են Հայոց Ցեղասպանությունից փրկված ու պատմական մեր Հայրենիքից տարագրված հայության բեկորների, որոնք ասպանդական՝ հանգրվանեցին աշխարհի տարբեր երկրներում՝ սկիզբ տալով արդի Հայոց Սփյուռքին: Նրանք ազնիվ ու նվիրյալ քաղաքացիներն են իրենց պապերին ապաստան տված պետությունների՝ հարգանք ու վստահություն վայելելով իրենց երկրորդ՝ նույնքան թանկ Հայրենիքներում: Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայոց Ցեղասպանության իրողությունը քաջ հայտնի է նաև Արևմտյան Եկեղեցիների հոգևորականությանը, որոնք Աստծո մարդասեր օրինակով օգնության ձեռք մեկնեցին եղեռնահար մեր ժողովրդին:

Մեր ժողովրդի հոգում երբեք չի մարի երախտագիտության այն ազնիվ ապրումը, որ տածում է հանդեպ բոլոր նրանց, ովքեր զորակից եղան Եղեռնի դժնդակ օրերին, ինչպես նաև՝ պատմության ներկա հանգրվանում Սպիտակի երկրաշարժի, Հայաստանի Հանրապետության ու Ղարաբաղի ազատության ու անկախության ճանապարհին կրած ծանր փորձությունների ժամանակ: Այդ աջակցությունից անմասն չէ նաև Կաթոլիկ Եկեղեցին: Մեր ականջներում տակավին հնչում են հիշյալ հարցերի առնչությամբ տարբեր առիթներով արտասանված Ձեր միխթարիչ ու քաջալերող խոսքերը մեր ժողովրդին:

Ձերդ Սրբություն, մեր երկու Եկեղեցիների հարաբերություններում Մենք զգացել ենք Ձեր եղբայրասեր ոգին Հայ Եկեղեցին կազմող մեր ժողովրդի նկատմամբ: Եղբոր կամեցողությամբ Դուք տարիներ առաջ Առաքելական աթոռը կրող Հայաստանյայց Եկեղեցուն հանձնեցիք մասունքները Ս. Բարդուղիմեոս առաքյալի, որ Հայաստանում Ավետարանի լույսի տարածման գործակիցը եղավ Ս Թադեոս առաքյալի: Ինչպես Ձեր նախորդ՝ Պողոս Զ Պապի, այնպես և Ձեր շնորհանորոգ այցելությունները Մերձավոր Արևելքի երկրներում գտնվող հայոց եկեղեցիներ մեծապես միխթարական են եղել մեր ժողովրդի զավակների համար: Շնորհակալ ենք նաև Սուրբ Երկիր Ձեր այցելության ընթացքում առ Փրկիչը մեր աղոթելու համար Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց մայրավանքում:

Անցնող տարի մեր ժողովուրդը սիրով պատրաստվում էր ողջունել Ձերդ Սրբությանը Արարատի մաքրաշունչ հայացքի դիմաց ազատ իր կյանքը կերտող Հայաստանում: Ցավոք, վատթարացավ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի առողջական վիճակը: Մեր ժողովուրդը այսօր էլ սպասում է Հայաստանում հյուրընկալել Ձերդ Սրբությանը և Ձեր

միաբանական ներկայությամբ տոնախմբել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու 1700-ամյա հոբելյանը:

Ձերդ Սրբություն, մեր երջանկիկ հանդիպման և Ս. Գրիգոր Լուսավորչի աշխարհների՝ Հայ Եկեղեցուն հանձնման այս դարաշրջանիկ իրադարձության առիթով Մենք շնորհակալ զգացումներով կրկնում ենք Մեր հրավերը Ձեզ և աղոթում առ Աստված, որ ինչպես Ձեր, այնպես էլ քրիստոնեական բոլոր Եկեղեցիների հոգևոր պետերի աղոթքով ու զորակցությամբ, Սուրբ Լուսավորչի բարեխոսությամբ Հայաստանի՝ իր ազատությունը գտած փոքրիկ հողակտորի վրա նորոգվի մեր սուրբ հավատքը այնպես, ինչպես 1700 տարիներ առաջ ողջ Հայաստանում:

Միրեցյալ եղբայր ի Քրիստոս. Մենք խորագույն շնորհակալություն ենք հայտնում Ձեզ սիրալիր հրավերքի և ջերմ ընդունելության համար: Մեր աղոթքն է որ մեր բոլոր արքերի առ Աստված միջնորդությամբ Ամենախնամ Տերը օրհնի մեր հանդիպումը, զորակից լինի և առաջնորդի մեզ մեր պարտքի մեջ՝ հանուն Իր փառքի, հանուն հավատակից մեր Եկեղեցիների պայծառության ու բարիքի, ամեն»:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 11

Նոյեմբերի 11-ին, շաբաթ օրը, Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը մասնակցեց գիտական սիմպոզիումի բացման արարողությանը: Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի կապակցությամբ տեղի ունեցած հավաքույթը կազմակերպվել էր ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելության:

Սիմպոզիումը տեղի ունեցավ Քսենանայապետական արևելյան ինստիտուտում, Վատիկանի համալսարաններից մեկում, որը նվիրված էր Արևելյան Եկեղեցիների, ներառյալ Հայ Եկեղեցու աստվածաբանության, պատմության, ծեսի և կանոնների ուսումնասիրությանը: Այս հաստատությունում Հայ Եկեղեցու ներկայացուցիչներից ուսանել են Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը, տիար Դանիել Ֆինոիկյանը:

Միջազգային սիմպոզիումը կազմակերպել էր ինստիտուտի փոխռեկտոր և արևելյան ծեսի մասնագետ, պրոֆեսոր Ռոբերտ Թաֆտը: Սիմպոզիումը բացվեց Հայր Թաֆտի ողջույնի խոսքով, որին հաջորդեց ինստիտուտի փոխռեկտոր Միլվեստրի խոսքը:

Ապա Վեհափառ Հայրապետը ներկաներին հղեց իր խոսքը: Վեհափառ Հայրապետը խոսեց Հայ Եկեղեցու, ինչպես նաև այլ Եկեղեցիների կյանքում քրիստոնեական կրթության և դաստիարակության դերի մասին: Նա հիշեցրեց, որ Հայ Եկեղեցու համար անհրաժեշտ է պատրաստել նոր սերունդ հոգևորականների և աշխարհա-

կանների, որոնք պետք է գան վերստին կենդանացնելու քրիստոնեական հավատքը Հայաստանում:

Վեհափառի խոսքից հետո սկսվեց սիմպոզիումը: Բոլոր զեկուցողները Հայ Եկեղեցու պատմության և աստվածաբանության մասնագետներ էին:

Երեկոյան Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը, ավարտելով պաշտոնական այցը Վատիկան, վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ իր հետ բերելով հայոց առաջին քահանայապետի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները:

Սրբազան մասունքների վերադարձը ողջունելու և նրանից ճառագող օրհնությունը ստանալու համար արդեն իսկ օդանավակայանը բազմամարդ էր: Օդանավակայանից Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ նվիրական մասունքները հանդիսավոր թափորով բերվեցին Ս. Էջմիածին՝ օրհնություն և մխիթարություն բաշխելով Մայր Տաճար տանող ճանապարհին հավաքված հավատավոր ժողովրդին:

Երեկոյան ժամը 7-ին մասունքները հասցվեցին Մայր Տաճարի մերձակա Կոմիտասի անվան հրապարակ, որտեղ Վեհափառ Հայրապետին դիմավորեց հոգևորականներից կազմված թափորը: Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ թափորը հրապարակից շարականների երգեցողությամբ և մոմերով առաջնորդվեց դեպի Մայր Տաճար: Այստեղ էին նաև ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, պետական բարձրաստիճան այրեր, օտարերկրյա դիվանագետներ, բազմաթիվ հավատացյալներ:

«Բազում դարերի դեգերումներից հետո Աստված շնորհ է վերապահում մեզ առաջնորդելու Լուսավորչի նշխարները նվիրական մեր սուրբ կենդրոն՝ մեր Հավատքի Հոր ձեռքերով կառուցված Ս. Էջմիածին: Մենք վստահ ենք, որ հոգևորոգումի նոր շրջան է սկսվում հայոց կյանքում՝ սրբազան այս մասունքներից ճառագող մեր Հավատքի Հոր օրհնությամբ»,- ողջունելով բարեպաշտ ժողովրդին՝ ասաց Վեհափառ Հայրապետը: Ս. Էջմիածինը դարեր շարունակ սրբությամբ է պահպանում Հայ Եկեղեցու առաջին քահանայապետի Ս. Աջը, որ խորհրդանիշն է Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության: Նորին Սրբությունը համոզմունք հայտնեց, որ հայրենիք վերադարձված մասունքները, Սրբազան Աջի հետ մեկտեղ, նորանոր հազարամյակներ կշարունակեն օրհնություն պարգևել հավատավոր ժողովրդին՝ ամուր պահելով նրա հոգևոր կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու նախնյաց սրբազան հավատքին:

Մայր Աթոռ վերադարձին Վեհափառ Հայրապետին և նրան ուղեկից շքախմբին միացել էր նաև Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քրիստոնեական միության աջակցման քահանայապետական խորհրդի քարտուղար Վալտեր եպիսկոպոս Կասպերը: Կարդինալը ևս իր ողջույնը փոխանցեց հայ հավատացյալներին՝ ասելով. «Մենք՝ կաթոլիկ քրիստոնյաներս, գիտենք ձեր հինավուրց պատմության ողբերգական անցքերն ու անսահման տառապանքները, ձեր նկատմամբ գործադրված վայրագու-

թյունները, հալածանքները, ջարդերն ու միտումնավոր կազմակերպված ոչնչացման քաղաքականությունը, որոնք 20-րդ դարի ընթացքում խլեցին հայ ժողովրդի միլիոնավոր կյանքեր: Սակայն մենք նաև գիտենք և բարձրորեն ենք գնահատում ձեր հավատարմությունը քրիստոնեական հավատքի նկատմամբ, որ եղավ և շարունակում է լինել ձեր հոգևոր զորությունը այս բոլոր մարտահրավերների ընթացքում»:

Ձեռամբ Հայոց Հայրապետի Մայր Տաճարում Սրբի երաշագործ մասունքներով տեղի ունեցավ ջրօրհնյաց արարողություն, ապա մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հընթացս Ս. Պատարագի բարեպաշտ ժողովուրդը մի նոր ուժ և հնարավորություն ունեցավ երկրպագելու Ս. Էջմիածին վերադարձած նշխարներին:

Հետագայում այս մասունքները կտեղափոխվեն Երևան և կտեղադրվեն Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԵՏ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՈՒՄ

Նոյեմբերի 24-ին Պատրիարքական աթոռանիստ Սուրբ Դանիելյան վանքում Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների միջև տեղի ունեցավ եռակողմ հանդիպում, որին մասնակցեցին Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ն, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Բ-ն և Կովկասի ժողովուրդների Վերին Կրոնական խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեն:

Սա չորրորդ հանդիպումն է, որ տեղի է ունենում Ռուս Ուղղափառ Եկեղեցու առաջնորդի նախագահությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդի մասնակցությամբ:

Այս տարվա նոյեմբերյան հանդիպումը տեղի ունեցավ դարաբաղյան հակամարտության որակական մի նոր փուլում: Այն ողջունում է կողմերի միջև սկսված ուղիղ բանակցություններն այն համոզմունքով, որ ի վերջո կգտնվի փոխադարձաբար ընդունելի հաշտության տարբերակը: Երեք հովվապետերը կրկին հավաստեցին բոլոր խաղաղարար ուժերին խոսքով և գործով իրենց աջակցությունը ցուցաբերելու մասին: Հանդիպման արդյունքում ընդունվեցին համատեղ հռչակագիր և դիմում Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին:

Ադրբեջանական քաղաքական շրջանակները մինչ այսօր շարունակում են շահարկել այն պնդումը, թե հոգևոր պետերի նախորդ հանդիպումներից հետո Շեյխ-ուլ-իսլամի խնդրանքով մի քանի հայ ռազմագերիներ են ազատ արձակվել, իսկ հայկական կողմը համարժեք քայլեր չի ձեռնարկել: Ի պատասխան այդ պնդումի, Վեհափառ Հայրապետը հավաստեց, որ ազատ արձակված ադրբեջանցի գերիների թիվը կրկնապատիկն է Հայաստան վերադարձած հայ գերիների:

Մոսկովյան վերջին հանդիպման ընթացքում Գարեգին Բ Կաթողիկոսը Շեյխ-ուլ-իսլամին հանձնեց նաև դարաբաղյան հակամարտության տարիներին անհայտ կորած հարյուրավոր հայ ազատամարտիկների և գերիների անուններ, որ Նորին Սրբությանն էին փոխանցել այս տարի, Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության անդամները, Ղարաբաղ կատարած հովվապետական այցի ընթացքում, Նորին Սրբության աջակցությունն ստանալու խնդրանքով:

Նույն օրը Կրեմլում Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Վ. Պուտինը հանդիպեց Ռուսաստանի հոգևոր առաջնորդների խաղաղարարական եռակողմ հանդիպման մասնակիցների հետ:

Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ն, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն, Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեն հաղորդեցին Վ.Վ. Պուտինին Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված հայ-ադրբեջանական հարաբերություններում ծագած խնդիրների վերաբերյալ եռակողմ բանակցությունների արդյունքների մասին: Բոլոր կողմերը հստակորեն հայտարարել էին, որ անհրաժեշտ է ձգտել որքան հնարավոր է արագ հասնել վիճելի հարցերի խաղաղ կարգավորմանը:

ՌԴ նախագահը բարձր գնահատելով այս հանդիպումը՝ կարևորեց հոգևոր պետերի դերը ձեռք բերված զինադադարի և Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում՝ վստահություն հայտնելով, որ իրենց հեղինակությամբ կկարողանան առաջընթաց ապահովել վերջնական հաշտության ճանապարհին:

Ուղևորության ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար և Սանկտ Պետերբուրգի հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը:

Ստորև ներկայացնում ենք համատեղ հռչակագրի և երեք պետությունների նախագահներին ուղղված դիմումի տեքստերը:

ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Մենք՝ ադրբեջանցի, հայ և ռուս ժողովուրդների հոգևոր առաջնորդներս, հավաքվելով Մոսկվայում, կոչ ենք անում ամրապնդել խաղաղությունը Անդրկովկասում և սահմանակից տարածքներում:

Ուրախությամբ վկայում ենք, որ Ռուս Ուղղափառ Եկեղեցու, Հայ Առաքելական Եկեղեցու և Կովկասի մուսուլմանների ղեկավարների եռակողմ հանդիպումները բարի ավանդություն են դարձել: Վստահ ենք, որ հոգևորականության ջանքերը զգալիորեն օժանդակել են դադարեցնելու Ղարաբաղի խնդրից ծնունդ առած հայ-ադրբեջանական հակամարտության զինված փուլը, և օգնել խուսափելու խնդիրը միջկրոնական հակամարտության վերածելուց: Ինչպես և նախկինում, մենք խոստանում ենք խոսքով և գործով օժանդակել ամբողջական հաշտեցմանը, առկա վեճերի հարցերի լուծմանը և ադրբեջանցի ու հայ ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների ձեռքբերմանը՝ նրանց երկրում և սփյուռքում: Գիտակցելով, որ այդ հաճելի է Բարձրյալին, պետք է ձգտենք կատարել Նրա կամքը:

Այժմ, երբ ձեռք է բերվել և պահպանվում է զինադադարը, կենսականորեն կարևոր է, որ թույլ չտանք վերադառնալ պատերազմի միջոցով վիճելի հարցերի լուծմանը: Հակամարտությունը, որ արդյունք է աղետաբեր բռնատիրական համակարգի ազգային քաղաքականության, պետք է հաղթահարվի երկու ժողովուրդների օրինական հետաքրքրությունները հաշվի առնելով, կողմերի համաձայնությամբ և միջազգային համակեցության ճանաչված չափանիշների համաձայն: Մարդկանց մեջ չպետք է մեռնի ներկա բաժանումների և թշնամության շուրջափույթ ապաքինման հույսը:

Մենք պաշտպանում ենք ադրբեջանա-հայկական հակամարտության կարգավորման միջազգային ջանքերը, հատկապես գնահատում ենք Ռուսաստանի դերը և կոչ ենք անում առավել գործուն աշխատանքներ կատարել հանուն փոխհամաձայնեցված պայմանավորվածության ձեռքբերման: Մեզ չի կարող չուրախացնել նաև երկու պետությունների նախագահների միջև անկեղծ երկխոսության հաստատումը, որին մասնակցում է նաև ռուս ղեկավարությունը:

Միաժամանակ կուզենայինք նախազգուշացնել, որ Անդրկովկասում կատարվող գործընթացները շահագործվում են, որպեսզի ուժերի ստեղծված հավասարակշռությունը արհեստականորեն փոփոխության ենթարկվի, այն վերջնական հաշվով, որ աճեն «այս աշխարհի ուժեղ» քաղաքական, տնտեսական և զինվորական շահերը: Դրանից ավելի մեզ անհանգստացնում է ծայրահեղական խմբակցությունների ներխուժման վտանգը հակամարտության տարածք, որով վերստին կերաբերվի արյունահեղությունը:

Ամուր խաղաղություն և բարիդրացիական հարաբերություններ ձևոք բերելու համար անհրաժեշտ է ամրացնել վստահությունը և անկեղծությունը, ընդլայնել հայ և ադրբեջանցի ժողովուրդների ներկայացուցիչների հարաբերությունները: Մենք վճռականորեն դատապարտում ենք մարտնչող ազգայնամոլությունը, օտարատյացությունը, էթնիկական գերազանցության տարփողումը, ազգային զգացումների նվաստացումը: Չափազանց կարևոր ենք համարում, որ քաղաքագետները, թղթակիցները, հասարակական գործիչները խուսափեն ազգերի հանդեպ ունեցած իրենց բացասական զգացումներն արտահայտելուց և հաշտության, համաձայնության ու համագործակցության գաղափարներ տարածեն: Մենք նաև կոչ ենք անում հարգել ազգային փոքրամասնությունների իրավունքները, նրանց կրոնական և մշակութային ավանդույթները:

Աղոթում ենք Բարձրյալին, որ Կովկասի բարեբեր հողի վրա ամուր և արդար խաղաղություն հաստատվի, որպեսզի այնտեղ ապրող ժողովուրդները հաճույքը զգան լիակատար կյանքի, ժառանգեն բարօրություն և ծաղկում, օգնեն միմյանց ընդհանուր տուն կառուցելու գործին:

ԱԼԵՔՍԻ Բ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

ԱԼԱՀՇՈՒՔՅՈՒՐ ՓԱՇԱ-ԶԱԴԵ
ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԻՆ
ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԱԴՐԲԵՋԱՆԻ
ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ, ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԴԻՄՈՒՄ ՈՒՂՂՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

«Ռուսաստանի Դաշնության նախագահ, Նորին Գերազանցություն Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինին.

Ադրբեջանի Հանրապետության նախագահ, Նորին Գերազանցություն Հեյդար Ալիևին.

Հայաստանի Հանրապետության նախագահ, Նորին Գերազանցություն Ռոբերտ Քոչարյանին.

Ձերդ Գերազանցություններ,

Ռուսաստան, Ադրբեջան և Հայաստան պետությունների հարգարժան նախագահներ.

Ամբողջ պատմության ընթացքում մարդիկ համագործակցում էին հանուն խաղաղության, փոխհամաձայնության և բարի դրացիական հարաբերությունների: Այդ շնորհակալ գործում նրանք հենվում էին հոգևոր անանց արժեքների և ավանդական կրոնների գաղափարների վրա: Ջանքերի միության կարիքը հատկապես զգալի է ներկա վտանգավոր ժամանակներում, երբ շատ տեղերում իշխում են թշնամությունն ու ատելությունը, իսկ ժողովուրդները բաժանված են պատերազմների և զինված ընդհարումների պատճառներով: Այսօր, ավելի քան նախկինում, կարևոր է, որ կրոնական համայնքները ավելի ակտիվ ելույթ ունենան կյանքի սրբազան պարգևի համար, պատերազմների և բռնության դեմ, համառորեն ճանապարհներ որոնեն խաղաղության հաղթանակի համար, բարօրություն և երջանկություն բոլոր մարդկանց համար՝ անկախ ազգությունից և հավատքից:

Հանուն մեր Միակ Արարչի, մեր ժողովուրդների խաղաղության հանդեպ ունեցած սրբազան երազանքի իրականացման, բարեկեցության և երջանկության, Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Տ.Տ. Գարեգին Բ-ն և Կովկասի ժողովուրդների Վերին Կրոնական Խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեն, օգտվելով Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ի բարձր միջնորդությունից, հանդիպեցին Մոսկվայում, որպեսզի հավաստեն միմյանց նկատմամբ ունեցած հարգանքը և քննարկեն անհետաձգելի այն միջոցները, որոնք պարտավոր են նախաձեռնել պատասխանատու հոգևոր առաջնորդները, որպեսզի մեր կրոնական համայնքների, ժողովուրդների և պետությունների միջև արդար խաղաղության ընդունելի համաձայնություն ձեռք բերվի:

Մենք այս հանդիպումը դիտում ենք որպես զարգացումը խաղաղարարական այն երկխոսության, որ տեղի է ունեցել միասնական պետության ժամանակներում և շարունակվել նմանատիպ եռակողմ հանդիպումների ժամանակ: Հուսով ենք, որ իրական ձեռքբերումներ կունենանք մեր ժողովուրդների խաղաղ գոյակցության և համագործակցության սկզբունքների մշակման գործում, փոխհամաձայնեցված լուծում կգտնենք վճռական հարցերում՝ բացառաբար բանակցությունների միջոցով:

Հավատքի, բարության, կարեկցության ներուժը, որ ընդհանուր է քրիստոնեության և իսլամի համար, կարող է և պետք է հաշտեցնող հզոր ուժ դառնա: Նա, ով միջկրոնական ատելություն է քարոզում, ծանրագույն մեղք է գործում Բարձրյալի առջև: Չարությունը, ատելությունը, նվաճողությունը կոպիտ կոչ է բոլոր աշխարհների կրոնների սրբազան գաղափարների դեմ, մեղսալի հարձակում այն բանի վրա, ինչ պատկանում է Արարչին: Վճռականորեն դատապարտելով անգութ ազգայնականությունը, անհանդուրժողությունը, օտարամերժությունը և մարդատյացության յուրաքանչյուր արտահայտություն, կոչ ենք անում ժողովուրդներին, ովքեր ներքաշված են հակամարտությունների և արյունալի դիմադրությունների մեջ, որ բոլոր մարդիկ կատարեն Բարձրյալի կամքը՝ պահպանեն խաղաղությունը, բարեգթությունը և փոխհասկացողությունը:

Կրոնը իր զինանոցում չունի քաղաքական, տնտեսական կամ ուժային միջոցներ՝ հակամարտության կողմերի վրա ազդելու համար: Նրա զենքը և ուժը Բարձրյալ Արարչի օրհնությամբ սրբագործված խոսքն է, սիրտ և ճշմարտության խոսքը: Մեր բարեգութ և ողորմած Տերը խրատում է քրիստոնյաներին. «Խաղաղության մեջ եղեք բոլոր մարդկանց հետ», և կոչ է անում մուսուլմաններին. «Մարդիկ, խաղաղության մեջ մտեք»:

Խնդրում ենք Ձեզ, որ մեծ ջանքեր ներդնեք հակամարտությունը վերացնելու համար, և միշտ հիշեք, որ ամենավստահելի խաղաղությունը՝ Արարչի օրհնությամբ սրբագործված արդար խաղաղությունն է, որ նույն իրավունքներն է պարգևում յուրաքանչյուր մարդու:

Ոչ մի ժողովուրդ երջանիկ չի լինի ուրիշ ժողովրդի հաշվին, և կյանքի այդ օրենքի անհասկացողությունը հղի է դժբախտությամբ՝ մեզանից յուրաքանչյուրի համար, որ դաժան ակներևությամբ հաստատվում է պատմությամբ և այժմեականությամբ:

Մենք ջերմորեն ողջունում ենք Ռուսաստանի Դաշնության ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցած Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության նախագահների հանդիպումները և աղոթում Բարձրյալին, որ Ադրբեջանի և Հայաստանի հարգարժան առաջնորդները՝ նախագահ Հեյդար Ալիևը և նախագահ Ռոբերտ Քոչարյանը, բոլոր բարդությունները և անհամաձայնությունները համբերությամբ հաղթահարելով՝ հասնեն դարաբաղյան խնդրի փոխըմբռնված լուծմանը: Այն ոգևորող օրինակ կդառնա այլ հակամարտությունների խաղաղ կարգավորման համար՝ Եվրոպայում և աշխարհում:

Խորապես համոզված ենք, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինի անկեղծ ձգտումը՝ օժանդակել ժողովուրդների հաշտության գործընթացին և նրանց միջև վստահության վերականգնմանը, անգնահատելի դեր կխաղա ինչպես հայ-ադրբեջանական հարցի, այնպես էլ այլ հակամարտությունների արդար լուծման համար: Մեծ Ռուսաստանը, որի հետ պատմության ընթացքին Կովկասի ժողովուրդները կիսում էին փխրություններն ու ուրախությունները, կոչված է դառնալու երաշխավորը խաղաղության և կայունության՝ արյունահեղությամբ ողողված տարածաշրջանում:

Աղոթք ենք վերառաքում մեր Բարձրյալ Տիրոջը և Արարչին՝ խնդրելով, որ օրհնված հաջողությամբ պսակվեն ձեր ջանքերը հանուն խաղաղության և համաձայնության, բարի և արդար հարաբերություններ հաստատվեն ժողովուրդների միջև, որպեսզի 21-րդ դարը դառնա եղբայրասիրության և ծաղկունքի դար՝ մարդկային ցեղի բոլոր որդիների և աղջիկների համար:

ԱԼԵՔՍԻ Բ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱԼԼԱՀՇՈՒՔՅՈՒՐ ՓԱՇԱ-ԶԱԴԵ
ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ, ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ Ն.Ս. ԱԼԵՔՍԻ Բ-Ի ԽՈՍՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(24 նոյեմբերի 2000 թ.)

Ձերդ Սրբություն, Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս. Գարեգին Բ, Կովկասի ժողովուրդների Վերին Կրոնական Խորհրդի արժանապատիվ նախագահ, Ադրբեջանի մահմեդականների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադե, Ձերդ Սրբազնություններ, պարոն դեսպան, սիրելի եղբայրներ.

Բարձրյալն Աստծո ողորմածությամբ երեք ժողովուրդների հոգևոր առաջնորդներս հավաքվել ենք այստեղ՝ Սուրբ Դանիելյան վանքում, որպեսզի ընդհանուր ջանքերով խաղաղության ու համաձայնության ուղիներ փնտրենք: Նման հանդիպումներն արդեն, առանց չափազանցության, կարելի է ավանդական համարել:

Ռուս Ուղղափառ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների ներկայացուցիչներն ու Ադրբեջանի մահմեդականների հոգևոր առաջնորդը Խորհրդային Միության հոգևոր առաջնորդների երկխոսության շրջանում հանդիպել են միմյանց: Երբ բռնկվեց հայ-ադրբեջանական արյունահեղ հակամարտության բոցը, մեր Եկեղեցին, հավասարապես երկու ժողովուրդների հոգևոր առաջնորդների հետ, զգաց հոգևոր գործիչների երկխոսության անհրաժեշտության սուր կարիքը, որպեսզի իր նպաստը բերի արյունահեղությունը դադարեցնելու և խաղաղություն հաստատելու գործին: 1993 և 1994 թթ. նույն այս դահլիճում մեր միջնորդությամբ իրար մոտ եկան հարգարժան Շեյխ-ուլ-իսլամ, Ալլահշուքյուր Փաշա-զադեն և Հայ Առաքելական Եկեղեցու ղեկավարները՝ երջանկահիշատակ Վազգեն Կաթողիկոսը և Ծայրագույն Պատրիարքի ներկայացուցիչները: Այդ ժամանակ ընդունվեցին ոգևորող փաստաթղթեր, Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի պետական այրերին մեր երկրների ժողովուրդներին հասցեագրված դիմումներ: Հոգևոր առաջնորդները կոչ արեցին դադարեցնել արյունահեղությունը, լայնածավալ երկխոսություն հաստատել, որպեսզի խաղաղ միջոցներով լուծվեն առկա բոլոր տարաձայնությունները: Հատուկ ուշադրություն դարձրեցինք այն բանին, որ վճռականորեն մերժվի ադրբեջանա-հայկական հակամարտության մեկնաբանումը իբրև միջկրոնական հակամարտություն: Մենք միաժամանակ հաստատակամություն հանդես բերեցինք, որպեսզի քրիստոնեության և մահմեդականության հետևորդները փոխադարձ կերպով նպաստեն խաղաղարար ջանքերին, այն նպատակով, որ համատեղ ուժերով գտնվեն խաղա-

դության հանգեցնող ուղիներ: Կայունացման սկզբնական շրջանում, 1995 թ., հենց այստեղ մեր հրավերով հանդիպեցին Գարեգին Ա Սրբազնագույն Կաթողիկոսը և արժանապատիվ Շեյխ-ուլ-իսլամ, Ալլահշուքյուր Փաշա-զադեն: Այդ հանդիպման ժամանակ ընդունված Մոսկովյան հռչակագրի նպատակն էր ձեռք բերված խաղաղության ամրապնդում և այրունահեղ հակամարտության ժամանակ հայ և ադրբեջանցի ժողովուրդների խոր վերքերի ապաքինում:

Այսօր Երկնային Հոր շնորհիվ կատաղի, եղբայրասպանության շրջանը, հուսով եմ, անցյալ է դարձել: Համարձակվում եմ ենթադրել, որ այս հարցում քիչ չեն Ադրբեջանի, Հայաստանի և մեր երկրի հոգևոր սպասավորների ջանքերը: Խաղաղության նկատմամբ ցուցաբերված անհողդողդ կամքը, ուժի դատապարտումը, միմյանց նկատմամբ ձեռք չբարձրացնելու հավատացյալների կոչը դրական, անգնահատելի ազդեցություն ունեցան հակամարտության տարածաշրջանում տիրող իրավիճակի վրա: Մեծ բարիք է, որ հակամարտությունը չվերածվեց միջկրոնական պատերազմի, չտարածվեց մերձակա երկրներում և տարածաշրջաններում, չխրախուսվեց բարձրագույն հոգևոր գործիչների կողմից: Իրադրության նման զարգացումը ես վերագրում եմ հանուն հաշտության ազնիվ ու արդար աշխատողների և մեր նկատմամբ Աստծո ողորմածության:

Այսօրվա իրադրությունն Անդրկովկասում երբեք էլ չի կարելի գոհացուցիչ համարել: Ցայժմ չեն կարգավորված հայ-ադրբեջանական հակամարտության լուրջ տարածայնությունները: Ժողովուրդներն իրարից բաժանված են օտարացման, վշտի ու վիրավորանքի պատնեշով: Մի քանի հրապարակախոսներ և հասարակական գործիչներ շարունակում են սերմանել միջցեղային ատելությունը, վտանգվում է մարդկանց հոգևոր և ազգային զգացմունքը: Արտաքին որոշակի ուժեր երկու ժողովուրդների հակամարտությունը ձգտում են օգտագործել իրենց քաղաքական, տնտեսական և ռազմական շահերի համար: Վտանգ կա, որ տարածաշրջան թափանցեն էքստրեմիստական խմբեր, որոնք կարող են նոր արյունահեղություն հրահրել:

Այդ մասին հիշելով, իմ կարծիքով, պետք է նորոգել խաղաղության, երկխոսության և փոխադարձ համագործակցության կոչը: Համոզված եմ, որ պետք է պաշտպանել և հավանություն տալ այն երկխոսությանը, որ տեղի է ունենում Ադրբեջանի և Հայաստանի նախագահների միջև, և նաև հակամարտության կարգավորման միջազգային ջանքերին: Այսպիսով ստեղծվում է թեև առանձնացված, բայց հավասարակշռված եռանկյունի, որի մեջ շարունակում է առաջնակարգ դեր խաղալ Ռուսաստանը: Պետք է խթանել ուղղափառ և մահմեդական հոգևորականների, քաղաքագետների, թղթակիցների, ազդեցիկ այլ մարդկանց ջանքերը, որպեսզի կտրականապես կանխենք թշնամանքը, աջակցենք հաշտությանն ու համաձայնությանը:

Հին և իմաստուն հոգևոր ավանդություններ ունեցող հայ և ադրբեջանցի ժողովուրդները, բառիս դրական իմաստով, դատապարտված են համատեղ գոյատևելու

և համագործակցության: Մենք կարող ենք և պարտավոր ենք նպաստել այդ երկու ժողովուրդների միջև երկխոսությանն ու համագործակցությանը: Հուսով եմ, որ մեր ջանքերը կշարունակվեն և հաջողությամբ կպսակվեն: Չէ՞ որ այդ են սպասում հավատացյալները, որոնք եռգնել են փառապելուց, սպասում են ժողովուրդները և նրանց ղեկավարները, սպասում են ադրբեջանցի, հայ, ռուս և այլ ազգերի նոր սերունդները: Խաղաղության մեջ ապրող երեխաները պատերազմ չեն ուզում, ուրեմն արդարացնենք նրանց սպասելիքները, և դա մենք կարող ենք:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ձերդ Սրբություն, Սրբազան Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսիո.

Մեծարգո Շեյխ-ուլ-իսլամ.

Հոգու բերկրանքով ողջունում ենք մեր՝ հոգևոր առաջնորդներիս հանդիպումը այստեղ՝ Մոսկվայում, որը, կազմակերպված Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ալեքսի Բ Սրբազան Պատրիարքի նախաձեռնությամբ, առաքինի նպատակ է հետապնդում նպաստելու հարևանությամբ ապրող մեր ժողովուրդների խաղաղ գոյակցության համար համաձայնության ուղիներ գտնելու գործին:

Բարի կամքի դրսևորման այս նախաձեռնության համար Մենք Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Սրբազան Պատրիարքին, որն անկեղծ նախանձախնդրություն է հանդես բերում մեր ժողովուրդների կյանքում խաղաղության հաստատման գործում:

Մեր խոսքը ցանկանում ենք սկսել այն հաստատ համոզմունքով, որ մեր այս հանդիպումը դրական անմիջական անդրադարձ պիտի ունենա Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա՝ ի շահ մեր երկու՝ հայ և ադրբեջանցի ժողովուրդների ապահով ու բարօր կյանքի և ի նպաստ տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման գործընթացի:

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն»: Քրիստոսատուր այս պատվիրանն այսօր առավել, քան երբևէ, սպասում է իր կենսագործմանը մեր կյանքում: Պատմությամբ մեզ վիճակված է ապրել հարևանությամբ: Մեր ընդհանուր տունը, որն է Կովկասը, այսօր խաղաղություն է փափագում:

Կորուստների դառնագին փորձությունը, համագործակցաբար ապրելու մեր ժողովուրդների երկուստեք շահը պահանջում են գտնել համերաշխության ամրապնդման ճանապարհը, հակամարտության՝ բացառապես բանակցությունների միջոցով կարգավորման ուղին: Դժվարին այդ գործընթացը, շնորհիվ ԵԱՀԿ-ի գնահատելի ջանքերի, արդեն ունի 6-ամյա զինադադարի իր իրական արդյունքը, որ կարող է ելակետ դառնալ բանակցությունների հետագա զարգացման և դրական ելքի համար:

Մեր խորին համոզմամբ մեր աղոթքներն ու ջանքերը այսօր պիտի հետապնդեն վստահության ու փոխըմբռնման մթնոլորտ ձևավորելու նպատակներ՝ որպես երաշխիք պատերազմական գործողությունների վերսկսման կանխման, փախստական-

ների դժվարին կացության բարելավման և ռազմագերիների խնդիրների վճռման: Մենք ողջունում ենք կողմերի բարի կամքի վկայությունն արտահայտող քայլերը գերիների ու պատանդների՝ վերջին շրջանի հաճախադեպ փոխանակումների հարցում, և կոչ անում էլ ավելի մեծացնել ջանքերն այդ ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է պահանջվում նաև փախստականների հանդեպ:

Ձեզ ենք փոխանցում անհայտ կորած զինվորների ցուցակները, որ նրանց մայրերն ու կանայք Մեզ են հանձնել Լեռնային Ղարաբաղ Հայրապետական Մեր այցելության ընթացքում: Մենք հուսով ենք, որ Ձեր աջակցությունը նրանց նոր քայլ կդառնա դեպի բարի կամեցողություն մեր ժողովուրդների ճանապարհին:

Ստեղծված դժվարին կացության հաղթահարումը և բարիդրացիական ու համակցաց մեր կյանքի լավագույնս կազմակերպումը հայ ու ադրբեջանցի ժողովուրդների սրբազան պարտքն է, որ իրական հիմք կարող է ունենալ, երբ մեր հոգիներում հաղթանակեն ազատության, արդարության և իրավունքի հարգման սկզբունքները:

Մեծարգո Շեյխ-ուլ-իսլամ.

Հակամարտության առաջին իսկ օրերից մեր ժողովուրդների հոգևոր առաջնորդները՝ հանձին երջանկահիշատակ Մեր նախորդ Հայրապետների, հանձին Ձեզ, հանդիպումներ են ունեցել և միասնական կոչ ուղղել զորացնելու հաշտության ոգին՝ հանուն բոլորին ցանկալի խաղաղության հաստատման: Մենք հավաքվել ենք հավաստելու, որ որդեգրում ենք՝ այդ դիրքորոշումը և կոչ անում ընթանալ խաղաղության ու հաշտության արահետներով: Այս առումով առանձնակի կարևոր ենք նկատում ուղիղ բանակցությունները Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև: Ելակետ ունենալով ազատության, մարդու իրավունքների և արդարության հարգումը և առաջնորդվելով դրանցով, մեր ժողովուրդները վստահաբար պիտի կարողանան կանխել 10-ամյա հակամարտության էլ ավելի խորացումը ու եզրեր գտնել խաղաղության վերջնական հաստատման ու հետագա համագործակցության: Երրորդ հազարամյակի շեմին հոգևոր առաջնորդներիս պարտավորությունն է՝ ամեն ջանք ներդնել, որպեսզի մեր ժողովուրդները գալիք սերունդներին ավանդեն խաղաղ և բարեկամ պետություններ:

Առ Բարձրյալն աղոթքով Նրա զորակցությունն ենք հայցում և կոչ անում երկու երկրների իշխանավորներին, պետական այրերին, հոգևորականաց դասերին ու ժողովուրդներին՝ եռանդուն դարձնել իրենց մասնակցությունը երկխոսության զարգացման և հաշտության շուտափույթ կնքման գործընթացում՝ ի նպաստ փարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման, հանուն մեր ժողովուրդների այսօրվա և գալիք սերունդների երջանիկ կյանքի:

Աղոթում ենք, որ նոր՝ երրորդ հազարամյակը ողջ մարդկության համար լինի այնպիսի ժամանակաշրջան, ուր «Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆ

Գոհութիւն եւ Փառք ենք մատուցում Երկնաւորին, որ ի սփիւռս աշխարհի բազում են հայրենասէր ու եկեղեցանուէր հայորդիք, որ, հաւատարիմ մեր նախնեաց առաքելական ուղիներին, իրենց հոգեւոր, մտաւոր ու նիւթական կարողութիւնները անսակարկ սիրով ու պատրաստակամութեամբ ի սպաս են դնում յանուն ազգային հասարակական մեր կեանքի շինութեան եւ Առաքելական մեր Մայր Եկեղեցու պայծառութեան:

Ցարգարժան պրն Աբրահամեան. Դուք թէեւ երկար տարիներ ապրում եւ գործում էք Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկուայում, սակայն հայրենաբնակ մեր ժողովուրդը եւս քաջատեղեակ է ազգաշահ ու եկեղեցաշէն Ձեր բազմաթիւ ձեռնարկումներին, որոնք ճանաչում ու բարի համբաւ են բերում Ձեզ:

Արդարեւ, երանեալ էք Դուք, քանզի շատեր այցելելով Ձեր բարեգործութեամբ Միւնեաց Տիրախնամ թեմում հիմնուած շքեղակառոյց Սուրբ Աննա եկեղեցի, երախտագէտ հոգով ու բարի մաղթանքով պիտի յիշեն Ձեզ եւ բիւր աղօթք առ Աստուած վերառաքեն յանուն յարգարժան բարերարիդ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու խորին գնահատանքն ենք յղում Ձեզ եւ, սիրով ընդառաջելով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտօնակատար, Հոգեշնորհ Տ. Եզրաս աբեղայ Ներսիսեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Մեր Կոնդակով զոհունակ սրտով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ առաջնորդելով բարի ու հայրենանուէր նորանոր իրագործումների:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան», ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 31

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ա. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՍՐ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, ՈՐ Ի ՀԱԼԷՊ, ՍԻՐԻԱ

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վահէ արքեպիսկոպոս Յովսէփեանից գոհունակութեամբ տեղեկացանք, որ այս տարի լրանում են Ձեր ծննդեան 70 եւ գրական ու ազգային-հասարակական գործունէութեան 50-ամեայ տարեդարձները, եւ առաջիկայ Նոյեմբեր 26-ին Լոս Անջելէսի հաւատարիմ հայութիւնը յատուկ հանդիսութեամբ պիտի պատուի Ձեզ յիշարժան գոյգ յոբելեանների առիթով:

Ցարգարժան պրն Թորանեան. բարձր ենք գնահատում երկարամեայ Ձեր ազգօգուտ գործունէութիւնը: Անցնող տասնամեակների ընթացքին Դուք Ձեր ողջ կարողութիւնները անմնացորդ կերպով ի սպաս էք դրել ազգային մեր մշակոյթի ծաղկմանն ու զարգացմանը, հայրենական ու եկեղեցական մեր կեանքի շինութեանը եւ սրբազան աւանդների անխաթար պահպանմանը:

Կէսդարեայ Ձեր բարեջան աշխատանքի շնորհիւ այսօր ընթերցողի սեղանի վրայ են Ձեր հեղինակած եւ խմբագրած հարիւրաւոր գրքեր ու արժէքաւոր աշխատութիւններ, որոնք բերել են Ձեզ հայրենանուէր մտաւորականի եւ ազգային նուիրեալ գործչի բարի եամբաւ ու ճանաչում:

Ամենայն հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք յղում Ձեզ կրկնակ յոբելեանների առի-

թով եւ, ի գնահատութիւն գրական Ձեր հարուստ ժառանգութեան ու ազգային-հասարակական կեանքում տարիների Ձեր մեծ վաստակի, Հայրապետական այս Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով բարեմաղթում ենք, որ Երկնաւոր Տէրը Իր Հայրական սիրոյ եւ խնամքի մէջ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով երկնատուր ամենայն բարիք եւ գործոց յաջողութիւններ:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ», ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Նոյեմբերի
Յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 32

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆ, ՈՐ Ի ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱ

Սիրելի վաւակունք Առաքելական մեր Մայր Եկեղեցու ի Բուէնոս Այրէս.

Գոհունակ սրտով փեղեկացանք, որ այս տարի լրանում է ՀԲԸ Միութեան Բուէնոս Այրէսի մասնաճիւղի Մարի Մանուկեան կրթական հաստատութեան հիմնադրման արձաթեայ յոբելեանը եւ այս առիթով յատուկ հանդիսութեամբ պիտի մեծարուեն վարժարանի հիմնադիրները, առաջին տնօրէններն ու ուսուցիչները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր բարձր գնահատանքը, Հայրապետական օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք բերում Մարի Մանուկեան կրթական հաստատութեան բոլոր երախտաւորներին, որոնց տեսիլքով, նիւթական ու հոգեւոր աջակցութեամբ հիմնադրուել է ազգային կրթօջախը եւ քառորդ դար գնահատելի ծառայութիւն է մատուցում Արգենտինայում ապրող հաւատաւոր հայորդիներին:

Սիրելիներ. Ալեք եւ Մարի Մանուկեան անունները թանկ են ու հարազատ ինչպէս սփիւռքում, այնպէս եւ Հայրենիքում բնակուող բոլոր հայորդեաց սրտերին: Ապրուած կեանքով ու բարութեան գործերով երջանկայիշատակ բարեգործները բազմիցս հաւաստել են իրենց սէրն ու արարող հաւատը առ ժողովուրդն հայոց, առ Հայրենին ու Մայր Եկեղեցին՝ արժանանալով համայն հայութեան երախտագէտ բարեմաղթանքներին:

Մեծահամբաւ բարերարների գործունէութիւնը սփիւռքում առաւելաբար միտուած էր հայեցի սերունդ կրթելուն ու դաստիարակելուն՝ որպէս անխախտ գրաւական աշխարհաստիւռ մեր ժողովրդի ազգային ինքնութեան պահպանութեան ու պայծառ գալիքի: Շնորհիւ Մանուկեան աստուածասէր ամոլի՝ մաշտոցեան գրին ու հայոց փառապանծ պատմութեանը հաղորդ են դարձել բազմաթիւ հայորդիք աշխարհի չորս ծագերում:

Հանապազ աղօթք եւ օրհնութիւն նրանց լոյս անուններին:

Մարի Մանուկեան կրթական հաստատութեան երախտաւորներին յատուկ հանդիսութեամբ պատուելու մեծապէս գովելի նախաձեռնութիւնը պատիւս արժանատրաց շնորհելու օրինակելի աւանդոյթի սկզբնատրումն է, քանզի վարժարանի կրթու-

թեան մշակների անմնացորդ ջանքերով մատաղ հայորդեաց հոգիներում սերմանուած հայրենասիրութեան եւ եկեղեցասիրութեան բարի հունդերը աստուածային սիրոյ ու խնամքի մէջ պտղաբերել եւ շարունակ պտղաբերելու են ի շահ համօրէն մեր ազգի ու Եկեղեցու:

Արժանայիշատակ յոբելեանի առիթով Մեր սրտի ջերմ խօսքն ենք ուղղում նաեւ կրթական հաստատութեան սիրասուն սաներին, որպէսզի նրանք մշտապէս հաւատարիմ լինեն Մարի Մանուկեան Կրթական հաստատութեան սան լինելու բարձր պատուին՝ փարուած մեր սուրբ աւանդներին, Հայոց Եկեղեցուն, Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Հայրենի երկրին: Միրելի սաներ. հանապազ բաջեռանդ եղէք ուսման մէջ եւ «յամենայն ժամ բազմապատկէք զգիտելիս Ձեր»:

Առ Աստուած Մեր սրտաբուխ աղօթքով նորանոր յոբելեաններ ենք մաղթում Մարի Մանուկեան կրթական հաստատութեանը, որպէսզի իր հայրենաշահ գործունեութեամբ եւ արձանագրած ձեռքբերումներով ուրախանալու բազում առիթներ պարգեւի արգենտինահայ համայնքին ու համայն մեր ժողովրդին:

Մեր պատգամն է Ձեզ ամենքիդ, որ շարունակէք ամենօրեայ հոգածութեամբ զօրացնել ու ծաղկեցնել Բուենոս Այրէսի Մարի Մանուկեան կրթական հաստատութիւնը՝ ի խնդիր Արգենտինահայ գաղութի բարգաւաճման եւ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան:

Թող Բարձրեալն Աստուած հաստատուն եւ շէն պահի Մարի Մանուկեան կրթական հաստատութիւնը եւ Իր օրհնութեան ներքոյ՝ նրա բոլոր նուիրեալներին ու սիրասուն սաներին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ». ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԵՈՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 29-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 129

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 300-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(22 նոյեմբերի 2000 թ.)

Հարգելի Նախագահ Ազգային Ակադեմիայի,

Սիրելի ներկաներ.

Մեծ ուրախություն է Մեզ համար, որպես Ամենայն Հայոց Հայրապետ, Գիտությունների Ազգային Ակադեմիայում ներկա գտնվել վաստակաբեռն կյանքի 300-ամյա իր հոբելյանը տոնող Մխիթարյան միաբանությանը նվիրված գիտաժողովի բացմանը: Համայն մեր ժողովրդի հետ Մեր հոգին բերկրանք է ապրում, որ այսօր անկախ մեր Հայրենիքի խաղաղ երկնքի ներքո հայոց գիտության կաճառում հնչելու են մեծագործ հայորդյաց նվիրական ու թանկ բազում անուններ, որոնց առջև երախտագետ մեր ժողովուրդը գլուխ է խոնարհում և հիշելու է սերնդե սերունդ:

Հավատքի և նրանից բխած անմնացորդ նվիրումի վրա է խարսխված հայոց հոգևոր կյանքն ու մշակույթը: Մեր տաճարների որմերին ու ձեռագիր Ավետարանների գեղահյուս խորաններին դրոշմված են հայ վարպետների ու ծաղկողների «Հաւատքով կանգնեցաւ» խոսքերը:

Արդարև, հավատքով կանգուն է Մխիթարյան միաբանությունը: Իր մեծագործ հիմնադրի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետ Մխիթար Սեբաստացու հավատն ու նվիրումը Ս. Ղազարում 300-ամյա ստեղծարար կյանք դարձավ՝ պսակելով հայ մշակույթի աստղազարդ երկնակամարը պայծառաշուք համաստեղությամբ:

Պատմական հիշատակներով ու երաշխագործ զորությամբ հանրահայտ Սեբաստիա Սուրբ Նշան վանքից էր Մխիթար վարդապետը: Սեբաստիայի Հողդար թաղամասում ծնված պատանին դեռևս 9 տարեկանում դպիր ձեռնադրվելով, 15 տարեկանում վանք է մտնում, ուր ձեռնադրությամբ վերանվանվում Մխիթար: Նրա կյանքում բախտորոշ եղավ հանդիպումը Ս. Էջմիածնի Միքայել արքեպիսկոպոսի հետ, որը հռչակված էր իր իմացությամբ ու ճգնակեցությամբ: Ուսուցիչ և աշակերտ վանքից վանք անցնելով, հասնում են Սևանի մենաստան:

Մխիթարի երազանքն էր հայոց վանքերի օրինակով նոր միաբանություն ստեղծել. սակայն դժնդակ ժամանակները անհնարին էին դարձնում նրա ծրագրի իրականացումը Հայաստանում: Քաջ գիտակցելով իրողությունը, ծանր ապրումների մնջ Մխիթարը կորցնում է տեսողությունը, բայց ոչ՝ հավատը: 1692 թ. այդ հավատով բազկաստարած իտնարհվելով Սևանա վանքի Տիրամոր պատկերի առջև ու դիմելով Ամենասրբուհի Կույսի բարեխոսությանը, լսում է Տիրամոր «Եղիցի»-ն: Հետագա ողջ կյանքում Մխիթար Սեբաստացին իր հոգում միշտ անմար պահեց Սևանա վանքում հնչած «Եղիցի»-ն:

Այդ «Եղիցի»-ով սկսեցվեց ու եղև մխիթարյանների հսկայածավալ գիտա-գրական ժառանգությունը: Հիրավի, հեռելի է այդ վաստակը գիտության, մասնավորաբար՝ հայագիտության բնագավառում, ինչպես նաև՝ հայ տպագրության ու թարգմանական գրականության զարգացման գործում: Այն մեծ ու նշանակալի է ոչ միայն գիտական առումով, այլև ներծծված է հարազատ հայ ժողովրդի և Մայր Հայրենիքի հանդեպ Մխիթարյան հայրերի ունեցած սիրով, նվիրումով ու մտահոգությամբ: Նրանց մանրակրկիտ ուսումնասիրություններում Հայաստանը դեսանելի է հուշարձան առ հուշարձան, բնակավայր առ բնակավայր, հայ ժողովուրդը ներկա է իր հարուստ պատմության մանրամասներով, բանահյուսությամբ, ազգագրությամբ, արքայական գրաբարով: Մենք գնահատանքով ցանկանում ենք արձանագրել, որ Մխիթարյանները մեծապես արժևորել են Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու դերակատարությունը հայության կյանքում և ներդրում ունեն նաև Հայ Եկեղեցու ժառանգության մատուցման ու պահպանման մեջ:

Ի նշան առ Ս. Էջմիածինն ունեցած իրենց հարգանքի ու խոնարհության, սկսած Մխիթար Սեբաստացուց, Մխիթարյանները ողջ 18-րդ դարում իրենց տպագրած գրքերի տիտղոսաթերթերին նշում էին ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը, իսկ Եվրոպայում ընդունված Փրկչական թվականի կողքին՝ Հայաստանյայց Եկեղեցում ընդունված հայոց թվականը:

Խորհրդանշական մեծ իմաստ ունեն երբեմն պարզ զուգադիպությունները, ինչպես Խրիմյան Հայրիկի ու Ղևոնդ Ալիշանի պարագայում, որ ծնվել են միևնույն՝ 1820 թ. և համընթաց անցել ութ տասնամյակների վաստակալ ճանապարհ: Ժողովուրդը Խրիմյանին անվանեց Հայոց Հայրիկ, իսկ Հայր Ալիշանին՝ Հայոց Նահապետ, հոգևոր կամուրջ կապելով Ս. Էջմիածնից մինչև Ս. Ղազար և 1901 թ. տոնախմբելով իր խնկելի մեծերի ծննդյան 80-ամյա տարեդարձները: Այդ օրերին Վենետիկում հիշվում էր Ս. Էջմիածինը, իսկ Մայր Աթոռում Ս. Ղազարը: Արդեն դողդոջուն Նահապետը հիշելով մշտառույգ Խրիմյանին՝ ասում է. «Ան Մասսի հովին տակ կը քնանայ, Արաքսի ջուրը կը խմէ, Հայաստանի հացը կ'ուտէ, անոր հողի ուժը կ'առնէ»: Հայոց Նահապետին նոր ուժ ու զորություն պարգևելու համար Հայոց Հայրիկը պատվիրում է «Մասիսի հողէն, Երասխի ջուրէն ու Հայաստանի ծաղիկներէն քիչ մը վերցնեն եւ փոքրիկ արկղով մը դրկեն Վենետիկ»: Ավաղ, սակայն, այն ուշ տեղ հասավ և ցողվեց Հայր Ալիշանի թարմ հողաթմբին:

Սիրելի Մխիթարյան Հայրեր, Մենք՝ Հայրապետ Հայոց, հոբելյանական այս օրերին Մեր ազգային գիտության այս բարձր ամբիոնից Հայոց Հայրիկի հարազատ ոգով գալիս ենք ջերմորեն ողջունելու և Հայրապետական Մեր օրհնությունը բերելու Ձեզ ու Մխիթարյան ուխտի ողջ միաբանությանը: Այսօր, գոհություն և փառք Աստծո, Դուք ներկայացնում եք միացյալ աբբայություն, ինչպիսին այն ստեղծվեց 300 տարիներ առաջ: Մեր հայցն ու մաղթանքն է, որ միության ոգին սավառնի ինչպես մեր ներքին եկեղեցական, այնպես և համայն ազգային կյանքից ներս, որպեսզի կարողանանք 1700-ամյա երազները մեր սուրբ նախնյաց կյանքի կոչել՝ ի բարօրություն ազգիս հայոց: Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Տերը առաջնորդի Մխիթարյան միաբանության հոգևոր առաքելությունը, աջակից լինի նրա անդամներին հավատով, ծառայասիրության ու ջանադրության զորավոր ոգով շարունակելու միաբանության 300-ամյա ավանդները:

Մխիթարյան միաբանության 300-ամյակին նվիրված գիտաժողովի բացման առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում նաև նրա կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին և աղոթքով առ Աստված մաղթում հաջողություններ՝ հանուն անցյալի մեր ժառանգության արժևորման, հանուն հայոց գիտության այսօրվա ու գալիքի:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ամենեսեան». ամեն:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՄԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

2000 թ. նոյեմբերի 4-ին Մայր Աթոռում, Վեհարանի հանդիսությունների սրահում, տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում՝ նվիրված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օծման և գահակալության առաջին տարեդարձին: Վեհափառ Հայրապետը կողմնակից էր տարեդարձը համեստությամբ տոնելուն, բայց և այնպես տարեդարձը տոնվեց շատ հանդիսավոր կերպով, ինչի վկաներն էին լեփ-լեցուն դահլիճում ներկա եղողները: Հանդիսությունն սկսվեց «Հայր մեր»-ով և Հայաստանի Հանրապետության հիմնով, որին հետևեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչության, դասախոսության և ուսանողության անունից ասված խոսքը՝ Արթուր դպիր Կարապետյանի ներկայացմամբ: Խոսքը ներկայացվեց գրաբարով, և մեր այդ դասական լեզվի ներդաշնակությունն ու բարեհնչունությունն ավելի ազդեցիկ դարձրին խոսքը, որում ասվում էր.

«Զամ մի յառաջ քան յայսմ աւուր, ի սեամս նորոյ եազարամեկիս, պատգամատրքն ընտրեալք ի համայն Հայոց կամօքն Աստուծոյ եւ խղճի մտօք կարգեցին յԱթոռ Հայրապետութեան Առաքելական Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց զայր ոմն երիտասարդ տիտղք եւ պայծառ հոգւով եւ տեսլեամբ, որպէս զարժանաւոր ժառանգորդ փայլատակելոց ի պարզ երկինս Եկեղեցւոյս առաքինազարդ մեծաց՝ Սրբոյն Սահակայ, Յովհաննու Օձնեցւոյ, Մովսէսի Տաթեւացւոյ, Ներսէսի Աշտարակեցւոյ, Խրիմեան Հօրն, եւ սկայիցն մտաց մերոց հոգետրաց, որք կերտեցին զիմացական եւ զհոգետոր հարստութիւնս եւ զգանձսն մեր՝ հաստատելով զնոսա մինչեւ ցաւուրս ցայսոսիկ:

Եւ յաւուրս մեր, յորժամ Առաքելական Ս. Եկեղեցին Հայաստան աշխարհիս եւ համայն ազգս մեր Հայոց տօնեն զառաջին տարեդարձ օծմանն եւ գահակալու-

թեանն Ձերդ Սրբազնութեանն, փոք մեզ հրաման, զի մեք յանուն տնօրութեան, ուսուցչապետաց եւ սանուց Հոգեւոր Ճեմարանին Գէորգեան շնորհաւորեսցուք զՎեհոյ՝ զՀոգեւոր Հայրդ մեր: Լիայոյս իսկ եմք, եթէ ի գահակալութեան ձերում ազգն Հայոց վերագտցեն զանբասիր նկարագիր իւրեանց զքրիստոնէական, եւ կեցցեն Աստուածահաճոյական եւ հայրենաշէն կենաց:

Հաճոյ է մեզ հպարտութեամբ արձանացուցանել, եթէ ի շարս բազմութեան Ձերոց Հայրապետական հոգածութեանց Ճեմարանս Հոգեւոր Գէորգեան՝ սիրելիդ Ձեր, հանգամանս կարեւորս ունի: Եւ սեպուն պարտք են հաստատութեանս՝ հասուցանել եկեղեցականս՝ ծառայս նուիրեալս, բանիմացս եւ արժանաւորս Առաքելական Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց, որք յերրորդում հազարամեկին կարող եւս լիցին ապահովել զյառաջխաղացութիւն Ս. Եկեղեցւոյս, զի պատգամն Վանափառութեանդ առ մեզ է՝ տեսանել զՃեմարանն իբրեւ «աղբիւր բացեալ գիտութեան Աստուծոյ»:

Ցայսմ ատուր առնու սկիզբն ի հայրենիս մեր նորոգ շրջան ինչ արթնութեան եւ Ճեմարանս Հոգեւոր Գէորգեան առհաւատչեայ մեծ է արձարձել զզարթումն զայն եւ առնել զնա եւս արդիւնաւորագոյն:

Արդ, Բարձրեալն շէն եւ պայծառ պահեսցէ զԱռաքելական Ս. Եկեղեցիս Հայաստանեայց եւ զկեդրոն ուղղափառ հաւատոց մերոց՝ զՔրիստոսակերտ Մայր Աթոռն Ս. Էջմիածնի, ուստի Հովուապետն արթուն զտիւ եւ զգիշեր հսկէ, զի լոյսն Կանթեղին Լուսաւորչական կախելոյ անպարտաւ յերկնից Հայոց զշողն իւր արձակեսցէ յաւիտեանս:

Սիրելիդ մեր Վեհափառ. ուղղեալ զնայուածս մեր յերկինս, խնդրեմք, զի Տէրն երկնի եւ երկրի առանց փտրձանաց եւ վտանգից պահեսցէ զՁեզ ի փառս Սուրբ Եկեղեցւոյ եւ ազգին մերոյ:

Մաղթեմք Սրբութեանդ Ձերում ի խորոց սրտից արեւշատութիւն ամաց բազմաց»:

Վեհափառին շնորհավորելու էր եկել Գէորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն Շարբաթյանի: Երգչախմբի կատարմամբ հնչեցին Վ. Բեղելյանի «Եկեղեցին հայկական» և Մ. Եկմալյանի «Ով հայոց Աստված» երաժշտական հոգևորյզ ստեղծագործությունները: Մեր ժողովրդի կողմից սիրված և հայտնի ասմունքողներ Միլվա Յուզբաշյանն ու Սարգիս Նաջարյանը իրենց կատարողական բարձր արվեստով հիացմունք պատճառեցին ունկնդիրներին՝ ընթերցելով հատվածներ Վեհափառ Հայրապետի կոնդակներից, ուր զգացվում էր հպարտություն մեր հաղթանակների և մտահոգություն՝ մեր ժողովրդի ներկա պետության համար:

Իրենց բանախոսություններով հանդես եկան Հայաստանի գրողների միության քարտուղար Արգար Ադիլյանը և եգիպտահայ թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը: Ելույթ ունեցավ նաև Էջմիածնի Քրիստոնեական դաս-

փիարակության և քարոզչության կենտրոնի «Նավասարդ» երգչախումբը՝ Ռուբեն Շարբաթյանի ղեկավարությամբ: Նրանք ներկայացրին Շուբերտի, Մոցարտի ստեղծագործություններից մի քանիսը, ինչպես նաև Ա. Հարությունյանի՝ բոլորին հայտնի և բոլորի կողմից սիրված «Դեն յաման»-ը:

Արվեստն ու մշակույթը, որպես արդյունք մարդկային բանական հոգու, չեն կարող բաժան լինել քրիստոնեությունից: Դեռևս հնագույն ժամանակներից քրիստոնեական լսելիքը քաղցրացել է հիանալի ու ներդաշնակ երգեցողությամբ ու երաժշտությամբ: Միայն, դժբախտաբար, վերջին հարյուրամյակից սկսած բաժանում տեղի ունեցավ քրիստոնեական կրոնի և մշակույթի միջև, քանի որ փոխվեցին մշակույթի բնույթն ու ուղղությունը: Մշակույթը միջոցից վերածվեց նպատակի, այսինքն՝ Աստծուն փառաբանելու միջոցից վերածվեց մարդու՝ հաճույք ստանալու նպատակի: Եվ այս իրողությունն ավելի է ընդգծվում ու ակնհայտ դառնում, երբ հնչում է Կոմիտասի հոգեցունց ու կատարյալ երաժշտությունը: Կոմիտասի «Հայրիկ, Հայրիկ», «Երկնից, գետնից», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» երաժշտական ստեղծագործությունները հնչեցին Մայր Տաճարի երգչախմբի կատարմամբ, որի երգիչներն իրենց շնորհավորանքները Վեհափառին հայտնում էին իրենց գեղեցիկ երգեցողությամբ: Մենակատար Վալերիկ Հարությունյանի կատարմամբ ներկայացվեց Արմեն Տիգրանյանի «Աշուղի արիան» «Դավիթ Բեկ» օպերայից: Երգչախմբի կատարմամբ հնչեց նաև Խ. Մեյխանեջյանի «Էջ Միածինն ի Հօրէ»-ն, որով էլ վերջացան երաժշտական համարները:

Վեհափառ Հայրապետի օծման և գահակալության առաջին տարեդարձի առթիվ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս իր շնորհավորական ուղերձը հղեց, որում ի մասնավորի ասված էր. «Այսօր եկեղեցաշեն, ճշմարիտ հոգևորականին վայել ամբողջական Ձեր գործունեությունը, հայ քրիստոնյաների մեջ հավատքը արմատավորելու Ձեր նախանձախնդրությունը, թեմերից ու վանքից ներս պատշաճ կարգ ու կանոն հաստատելու Ձեր մտադրությունն ու գործադրած ջանքերը առհավատչյան են այն բանի, որ ազգն ունի Ձեր երջանկահիշատակ նախորդների բարի ավանդույթները շարունակելու և զարգացնելու մտադրությունն ունեցող, գինվորյալ մի Հովվապետ»:

Վեհափառ Հայրապետին իր սրտի խոսքն է հղել նաև Մայր Աթոռի տպարանի անձնակազմը:

Վերջում ներկաներին իր սրտի խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը:

Ընդամենը մեկ տարի է անցել իր գահակալության օրվանից, բայց այդ ընթացքում արդեն իսկ նկատելի է Եկեղեցու գործունեության զգալի առաջընթաց: Մասնավորապես վերանորոգվում են մեր հին վանքերն ու եկեղեցիները, կառուցվում նորանոր եկեղեցիներ, կատարվում են քրիստոնեության ընդունման 1700-ամյակի փոնակատարության մեծ աշխատանքներ, կարևոր տեղ է հատկացվում հոգևոր կրթա-

բաններում ուսումնառության մակարդակը կտրուկ բարելավելու գործին: Եվ այս ամենը՝ ժողովրդի համար: Հավատքը, Եկեղեցու համար հոգալը և Եկեղեցու պայծառության համար գործունեությունն այնպիսի հատկանիշներ են, որոնք պետք է միշտ ներկա գտնվեն բոլոր և հատկապես նոր պատրաստվող հոգևորականների սրտերում:

Եվ Պատարագից, և՛ նման հանդիսություններից հետո միշտ հնչում է Վեհափառ Հայրապետին նվիրված ազգային օրհներգը, որի բառերով էլ խնդրենք Աստծուց. «Տեր անսասան պահիր դու միշտ Քո իսկ հիմնած Մայր Աթոռ»:

Երեկույթը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԿԱՎԱԳ ՄԱԿԱՐՅԱՆ
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի
Ջ լսարանի սան

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 6 նոյեմբերի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, իր աշխատանքն սկսեց Գերագույն Հոգևոր խորհուրդը՝ նոր կազմով:

Տերունական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը իր շնորհակալությունը հայտնեց ԳՀԽ նախկին կազմին, ապա ներկայացրեց խորհրդի նորանշանակ անդամներին՝ մաղթելով նրանց բեղուն և արդյունավետ աշխատանք՝ ի նպաստ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և բարեպաշտ ժողովրդի:

Երուսաղեմում և Թուրքիայում տիրող քաղաքական իրավիճակների պատճառով Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխատանքներին իրենց մասնակցությունը չեն կարողացել բերել խորհրդի զույգ ատենապետերը՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Թուրքիո Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, որի պատճառով նիստը ատենապետում են խորհրդի ավագագույն անդամները՝ Տ. Ջավեն արքեպս. Չինչինյանը և Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Երկօրյա նիստերի ընթացքում քննարկվեցին նոյեմբերի 8-ին Վեհափառ Հայրապետի՝ Վատիկան կատարելիք այցի, 1700-ամյա տոնակատարությունների կազմակերպման, թեմական և եկեղեցական այլ հարցեր:

* * *

Նոյեմբերի 7-ին, Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի ավարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը ԳՀԽ անդամների ուղեկցությամբ այցելեց Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Նորին Սրբությունը հոգևոր այրերի հետ աղոթք բարձրացրեց առ Աստված երանաշնորհ Հայրապետներ Վազգեն Ա-ի և Գարեգին Ա-ի հոգիների հանգստության համար, որոնց նախաձեռնությամբ ու օրհնությամբ սկիզբ առավ հայակերտ տաճարի շինարարությունը:

Երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը ունեցել է նաև իր նյութական ներդրումը համազգային այս կառույցի մեջ՝ մահվանից հետո եկեղեցու շինարարությանը իր անձնական խնայողություններից կտակելով շուրջ 750 հազար դոլար: Ծանուցելով այս մասին, Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ երանաշնորհ կաթողիկոսի այս ներդրումը առանձնակի ոգևորության ու խանդավառության առիթ է բարեպաշտ զավակների և ազգային բարերարների համար:

Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին կառուցվում է ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի: Օրեցօր լայն ծավալ ստացող շինարարությունը թույլ է տալիս հավատալու, որ եկող տարի, 1700-ամյակի տոնակատարության օրերին, եկեղեցին իր ավարտական տեսքը կունենա:

Այս օրերին Մայր Տաճարում կայացած Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը մեկ անգամ ևս անդրադարձել է եռբեղյանական տոնակատարություններին ու եկեղեցու շինարարությանը:

1700-ամյակի տոնակատարության սկիզբը կագդարարվի դեկտեմբերի 31-ի գիշերը, երբ Խոր Վիրապից հանդիսավոր թափորով Ս. Գրիգոր Լուսավորչի անմար կանթեղի լույսը կբերվի Մայր Աթոռ և կբարձրացվի Իջման Ս. Սեղանի վրա, և որտեղից աշխարհասփյուռ յուրաքանչյուր հայորդի տոնական տարում իր ուխտի մոմը կվառի Ս. Տաճարում:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Եւ եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա:
Այլ դուք մարմին Քրիստոսի էք եւ անդամք յանդամոց Նորա...»:
(Ա Կորնթ. ԺԲ 26-27)

Ամեն անգամ, երբ ինքնընծայման ուխտով եկեղեցու բեմին են կանգնում երբևէ աշխարհին պատկանող, բայց այսուհետև իրենց կյանքը Քրիստոսի Եկեղեցուն նվիրող, Քրիստոսին զինվորագրվող նվիրյալները, ցնծում, բերկրում է Սուրբ Եկեղեցին՝ լի նոր հույսերով ու սպասումներով:

Սույն թվականի նոյեմբերի 5-ին Միածնաէջ Սուրբ Տաճարում ընծայում էր «ի պաշտօն քահանայութեան»: Հընթացս Սուրբ Պատարագի, ձեռամբ Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի և խարտավիրակությամբ Տ. Բագրատ աբեղա Գայստյանի, քահանայական ձեռնադրություն և օծում ստացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ հինգ սարկավագներ՝ Հրայր սրկ. Խաչատրյանը, Մկրտիչ սրկ. Այվազյանը, Վիգեն սրկ. Ղազարյանը, Մանվել սրկ. Շաքարյանը և Արտակ սրկ. Թումանյանը:

ԿՈՉՈՒՄ ՆՈՐԸՆԾՅԱԼՆԵՐԻ

Նախընթաց օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, «Նայեա եւ լուր» շարականի երգեցողության ներքո, սարկավագները, ի նշան խոնարհության, մոտենում և ծնկի են իջնում ձեռնադրող Սրբազան Հոր շուրջը: Միաբանների և ժողովրդի ներկայությամբ կատարվում է հավատքի քննություն. խոստովանահայրը ներկայացնում է ընծայյալներին՝ պատասխանելով ձեռնադրող եպիսկոպոսի հարցերին: Ապա սարկավագները հանձն են առնում հետևել Առաքելական Սուրբ Եկեղեցու ուղղափառ դավանությանը և հայրերի ուսմունքին՝ ի լուր ամենքի ընթերցելով Ս. Գրիգոր Տաթևացու «Հաւատոյ խոստովանութիւն»-ը:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ

Հաջորդ առավոտյան Մայր Տաճարում մատուցվում է Սուրբ Պատարագ: Պատարագում է Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: «Ջի ողորմած եւ մարդասէր ես Աստուած» մաղթանքից հետո հնչում է «Այսօր Աստուածութիւնն գուարճանայ» շարականը, և նորընծաները, խարտավիլակ Տ. Բագրատ աբեղա Գալստյանի առաջնորդությամբ, աջակողմյան աստիճաններով բարձրանում են Ավագ խորան, ապա, դառնալով արևմուտք՝ դեպի ժողովուրդը, վեր են բարձրացնում իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման և ի նվիրումն հոգևոր կյանքի: Տաճարի կամարների ներքո հնչում է «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» շարականը:

Ընծայյալները դառնում են դեպի Ավագ խորան, և ձեռնադրող եպիսկոպոսը, ձեռքերը խաչաձև դնելով նորընծաներից յուրաքանչյուրի գլխին, ասում է. «Ես դնեմ գձեռս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Սարկավագական ուրարը, որը կրում են ձախ ուսին, ի նշան Քրիստոսի Եկեղեցու սպասավորի լծի ծանրությունը մասնակցորեն կրելու, վերածվում է փորուրարի և գցվում ընծայյալի պարանոցին՝ խորհրդանշելով այդ քաղցր լուծն ամբողջությամբ հանձն առնելուն: Ապա տրվում է քահանայական փիլոն և պատարագչի զգեստներ:

Մոտենում է հոգևոր վերացման, երկնայինին հաղորդ դառնալու գերագույն պահը, երբ ձեռնադրող Սրբազան Հայրը նորընծաների ճակատն ու ձեռքերն օծում է Սրբալույս Մյուռոնով և նրանց տալիս նոր՝ հոգևոր անուններ. Հրայր սարկավագն այսուհետ դառնում է Տ. Գրիգոր, Մկրտիչ սարկավագը՝ Տ. Արիստակես, Վիգեն սարկավագը՝ Տ. Խաչ, Մանվել սարկավագը՝ Տ. Սահակ, իսկ Արտակ սարկավագը՝ Տ. Դանիել:

Նրանք արդեն քահանաներ են և, որպես Տիրոջ փրկագործական խորհուրդը մատուցող պաշտոնյաներ, Սրբազան Հորից ընդունում են սկիհը և իրենց անդրանիկ օրհնությունը տալիս ժողովրդին:

ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, ժամերգությունից առաջ, կատարվում է «Օրհնութիւն վեղարի» կարգը, որով խորհրդանշվում է ընծայյալի կուսակրոնության ուխտը: Վեղարի օրհնություն են ստանում չորս քահանաներ՝ Տ. Գրիգոր աբդ. Խաչատրյանը, Տ. Արիստակես աբդ. Այվազյանը, Տ. Սահակ աբդ. Շաքարյանը և Տ. Դանիել աբդ. Թումանյանը, իսկ Տ. Խաղը դառնում է ամուսնացյալ քահանա՝ սպասավորության կոչվելով «ի մէջ ժողովրդեան»:

Հանդիսավոր արարողությունից հետո նորընծաները ուղղվում են Վահարան՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ստանալու: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և ողջ ժողովուրդն ակնկալում է տեսնել իր ժամանակի հոգևոր հովվին և մաղթում է. «Տիրոջ աջը ձեզ զորավիգ»:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի
Ջ լսարանի սան

Տ. ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ավագանի անունը՝ Հրայր)

Ծնվել է 1974 թվականի սեպտեմբերի 8-ին Սևան քաղաքում:

1981-1991 թթ. սովորել և ավարտել է Սևանի թիվ 7 միջնակարգ դպրոցը:

1991 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1998 թվականին, ավարտելով Հոգևոր Ճեմարանը, ծառայության է անցել Գեղարքունյաց թեմում:

1998 թվականի օգոստոսի 6-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա արքեպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1998 թվականի դեկտեմբերի 1-ից ծառայության է նշանակվել Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնում:

2000 թվականի հոկտեմբերի 28-ին պաշտպանել է «Պետրոս արքեպս. Բերդումյանի "Տարեկան քարոզներ (Մեծ պահքի շրջան)"» թեմայով ավարտաճառը:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ԱՐԻՍՏԱԿԵՍ ԱԲԵՂԱ ԱՅՎԱԶՅԱՆ
(ավագանի անունը՝ Մկրտիչ)

Ծնվել է 1974 թվականի սեպտեմբերի 6-ին Ախալցխա քաղաքում:

1980-1991 թթ. սովորել և ավարտել է տեղի Հովհ. Թումանյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցը:

1991 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1998-ին, ավարտելով Ճեմարանը, աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյան Գանձատանը՝ որպես պատասխանատու:

1998-ի սեպտեմբերի 20-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թվականի հոկտեմբերի 28-ին պաշտպանել է «Հովհաննես Արճիշեցու "Պատարագի մեկնության" աստվածաբանությունը և թարգմանությունը» թեմայով ավարտաճառը:

Նույն թվականից ծառայության է կոչվել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 58831 զորամասում՝ որպես հոգևոր սպասավոր:

2000 թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ՄԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՇԱՔԱՐՅԱՆ
(ավագանի անունը՝ Մանվել)

Ծնվել է 1974 թվականի նոյեմբերի 14-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Խունշինակ գյուղում:

1981-1991 թթ. սովորել և ավարտել է գեղի միջնակարգ դպրոցը:

1993-ին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1999 թվականի մայիսի 23-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆաքյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

1999 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է անցել Վեհարանում՝ որպես ընդունարանի քարտուղար:

2000 թվականի հոկտեմբերի 11-ին պաշտպանել է «Հրեշտակաբանություն» թեմայով ավարտաճառը:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ԴԱՆԻԵԼ ԱԲԵՂԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ
(ավագանի անունը՝ Արտակ)

Ծնվել է 1976 թվականի նոյեմբերի 5-ին Երևան քաղաքում:

1982-1992 թթ. սովորել և ավարտել է Երևանի թիվ 106 միջնակարգ դպրոցը:

1993 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1999 թվականի մայիսի 23-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Ռոկան արքեպս. Գալփաքյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

1999 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է անցել տեղում որպես վերակացու:

2000 թվականի հոկտեմբերի 11-ին պաշտպանել է «Եղիազար Կաթողիկոս Այնթապեցի» թեմայով ավարտաճառը:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ԽԱԴ ՔԱՀԱՆԱ ՂԱՋԱՐՅԱՆ
(ավագանի անունը՝ Վիգեն)

Ծնվել է 1975 թվականին Էջմիածին քաղաքում:

1981-1991 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1991 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1998 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, անցել է ծառայության Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնում:

1998-ի սեպտեմբերի 20-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. պաշտպանել է «Մատթեոս վրդ. Ջուղայեցու քարոզները» (ուսումնասիրություն, քննական բնագրեր) թեմայով ավարտաճառը:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

ՕԾՎԵՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ

Նոյեմբերի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ օծվեց Արարատյան Հայրապետական թեմի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու նորակառույց զանգակատունը, սրբագործվեցին եկեղեցու բակում տեղադրված երեք խաչքարերը:

Ներառեալ Ամենայն Հայոց Հայրապետի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ԱՄՆ արևմտյան և արևելյան թեմերի առաջնորդներ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանի ու Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի և Ավստրալիայի թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանի օծվեցին զանգակատան մուտքը, արևելյան ու արևմտյան կողմերի աջ և ահյակ այուները:

Աստծո նախախնամությամբ Երևանի Ս. Սարգիս եկեղեցին մարտնչող անաստվածության տարիներին չավերվեց այլ եկեղեցիների նման, իսկ ժամանակի իշխանավորների ազնիվ մղումով նաև նորոգվեց ու բարեզարդվեց՝ հովանավորությամբ լոնդոնաբնակ Սարգիս և Աստղիկ Քյուրքչյանների ու նրանց որդիների:

«Բարերարներն այդ պահից ի վեր հոգեպես կապվեցին այս եկեղեցուն և նախանձախնդրորեն հետամուտ եղան, որպեսզի եկեղեցին միշտ մնա պայծառ, միշտ մնա շեն»,- օրհնությամբ ու գնահատանքով ասաց Վեհափառ Հայրապետը, որ 17 տարիներ շարունակ լինելով Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, մշտապես գործակցել է եկեղեցասեր բարերարների հետ:

Այժմ էլ նորակառույց զանգակատունը վեր է խոյացել շնորհիվ Քյուրքչյան որդիների՝ Ջորջ և Հովհաննես Քյուրքչյանների: Նրանց բարերարությամբ շարունակվում է նաև առաջնորդանիստ եկեղեցու տարածքի բարեկարգումը: Ինչպես նշեց Նորին Սրբությունը, եկեղեցանվեր բարերարի հաջորդ հանձնառությունը Տաթևի եկեղեցու վերաշինությունն է լինելու:

Ի դեմս արարողությանը ներկա Ջորջ Քյուրքչյանի՝ Վեհափառ Հայրապետը իր օրհնությունը փվեց բարերարներին և իր գնահատանքը հայտնեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանին ու թեմի հոգևոր դասին:

ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՎԵՑ ՄԱԼԻՇԿԱՅԻ Ս. ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 4-ին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Սյունեաց թեմում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Սրբազան Հայրերի, օծվեց ևս մի հոգևոր տուն՝ Մալիշկայի Ս. Անանա եկեղեցին:

Հայրենի գյուղում կառուցված եկեղեցու հովանավորը ներկայումս Մոսկվայում բնակվող հայ գործարար, «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Արա Աբրահամյանն էր: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր երեք տարի առաջ, իսկ այսօր գյուղի բարձունքում փառահեղ հառնել է նորակառույց եկեղեցին: Բազալտակուռ եկեղեցու ճարտարապետը Արծրուն Գալիկյանն է: Եկեղեցին զարդարված է էջմիածնաբնակ երեք նկարիչների գեղեցիկ որմնանկարներով՝ քրիստոնեական սրբերի պատկերներով:

Բազմահազար ժողովուրդ էր եկել Մալիշկա՝ մասնակցելու օծման սրբազան արարողությանը: Այստեղ էին ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, Երևանի քաղաքապետ Ալբերտ Բագեյանը, հատուկ օծման արարողության առիթով Ռուսաստանից Հայաստան ժամանած «Ռուսաստանի հայերի միության» պատվիրակությունը, որոնց թվում ՌԴ պառլամենտի փոխխոսնակ Արթուր Չիլինգարովը, հայտնի քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանը, բազմաթիվ ռուս հյուրեր: Վերջիններիս ներկայությունը հավաստիքն էր ռուս-հայկական դարավոր բարեկամության, որին և նվիրվում էր եկեղեցու բակում կառուցված աղբյուր-հուշարձանը:

Իր ուրախությունը հայտնելով 1700-ամյա հոբելյանի նախաշեմին ևս մի լույսի խորան կառուցված տեսնելու առիթով, Հայոց Հայրապետը իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարին, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանին, հայցեց Տիրոջ սերն ու զորակցությունը, որպեսզի անբեկանելի ու հաստատուն լինի հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը: Ս. Անանա եկեղեցուն Վեհափառ Հայրապետը, որպես խորհրդանիշ Ս. Հոգու, նվիրեց մյուռոնաթափ աղավնի:

Հավարտ Սրբազան արարողության կատարվեց երեխաների մկրտություն: Եկեղեցու բակում կատարվեց նաև ծառատունկ, որ կազմակերպել էր «Հայաստան-ծառ» ամերիկահայ կազմակերպությունը:

«ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՍՏԱՍՏՈՒԴԻԱՅԻ ՆՈՐ ՏԱՂԱՎԱՐԻ ԲԱՑՈՒՄ

Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, տեղի ունեցավ «Շողակաթ» հեռուստաստուդիայի նոր տաղավարի բացումը: Բացման արարողությանը մասնակցում էին հոգևոր հայրեր, արտերկրյա հյուրեր, ֆիլմարվեստի և հեռուստատեսության ներկայացուցիչներ: Այն այսուհետև գործելու է Մայր Աթոռի շրջափակից ներս, հին ճեմարանի շենքում, ունենալու է տեխնիկական բոլոր չափանիշներին համապատասխան տաղավար, մոնտաժային սրահներ:

Իր երկարամյա գործունեության ընթացքում ստուդիան հանրապետության գրեթե բոլոր հեռուստալիքներով հեռուստադիտողի ուշադրությանն է ներկայացնում տեսահոլովակներ, հաղորդաշարեր, հեռուստածրագրեր և ֆիլմեր, որոնք ծանուցում են եկեղեցական տոների և կրոնական արարողությունների մասին, մեկնում սրբազան ավանդություններն ու աստվածաշնչյան պատմությունները:

Հեռուստատեսային ոլորտում հոգևոր թեմաներով տեսանյութերի արտադրությունը խթանելու և Հայ Առաքելական Եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Շողակաթ» հեռուստաստուդիան և 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովը նոր տաղավարի բացման առիթով նախաձեռնել էին հոգևոր թեմայով տեսանյութերի ամենամյա փառատոն-մրցանակաբաշխություն՝ լավագույն աշխատանքի համար սահմանելով «Շողոկաթ» մրցանակ: Փառատոնին ներկայացվել էր 32 աշխատանք:

Ժյուրիի անդամները հեռուստատեսության, ֆիլմարվեստի և մշակույթի ներկայացուցիչներ էին, որոնց որոշման համաձայն փառատոնի լավագույն հոլովակ ճանաչվեց Տիգրան Պասկևիչյանի և Արա Շիրինյանի «Ներա» տեսանյութը, լավագույն հեռուստահաղորդում ընտրվեց «Վարդաձորի խաչքարը» (հեղինակ՝ Էդիկ Բաղդասարյան, ռեժիսոր՝ Արա Շիրինյան): Հետաքրքիր մտահղացման համար խրախուսական մրցանակի արժանացավ Տիգրան Պասկևիչյանը, ինքնատիպ ռեժիսոր ճանաչվեց Արա Շիրինյանը, լավագույն օպերատորներ՝ Բենիկ Հարապետյանը և Տիգրան Գևորգյանը: Գնահատող հանձնախմբի կարծիքով թեև ներկայացված աշխատանքներից և ոչ մեկը արժանի չէր «լավագույն հեռուստաֆիլմ» մրցանակի, այդուհանդերձ հատուկ խրախուսական մրցանակ շնորհվեց «Ծարաված մարդուն» ֆիլմի հեղինակներին: Ինչ վերաբերում է գլխավոր մրցանակին, ապա ժյուրիի որոշմամբ արժանի հավակնորդ չգտնվեց:

Փառատոնի մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ նոյեմբերի 3-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՄԱԿՑԵՑ ԳՅՈՒՄՐԻ ԲԱՅՐՈՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄՆ արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանի և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ուղեկցությամբ մեկնեց Գյումրի՝ մասնակցելու քաղաքի Բայրոնի անվան դպրոցի 50 և վերակառուցման 10-ամյակի հանդիսությանը:

Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանը:

50-ամյա դպրոցը, որ նախկինում Գ. Սունդուկյանի անունն է կրել, Գյումրիի շատ դպրոցների պես երկրաշարժից: 10 տարի առաջ, շնորհիվ լոնդոնաբնակ բարերար Ջորջ Քյուրքչյանի, քաղաքի անգլիական թեքումով միակ դպրոցը վերակառուցվեց և, ի պատիվ հայ ժողովրդի մեծ բարեկամ Բայրոնի, վերանվանվեց նրա անվամբ: Այսօր էլ պրն Ջորջ Քյուրքչյանն ու Հայաստանում Անգլիայի դեսպանատունը շարունակում են հոգ տանել դպրոցը հարմարավետ ու բարեշեն պահելու համար:

Ազգանվեր բարերարը՝ տիկնոջ հետ, ինչպես նաև Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Թիմոթի Ջոնսը ևս մասնակից էին դպրոցի հոբելյանական հանդիսությանը:

Վեհափառ Հայրապետի հետ մեկտեղ հյուրերը շրջեցին դպրոցում և ապա ներկա եղան դպրոցի շնորհալի աշակերտների կազմակերպած համերգին:

«Դպրոցի հոբելյանի առիթով Հայրապետիս հորդորն ու պատգամը պիտի լինի, որ մեր երեխաներին առաջնորդենք մեր հոգևոր արժեքների ճանապարհներով, առաջնորդենք նրանց դեպի Եկեղեցի, որովհետև առանց հոգևոր կյանքի առկայության մեր զավակներն անկարող պիտի լինեն արարել ու հայրենիք շենացնել»,- իր օրհնությունը տալով դպրոցի աշակերտներին ու ուսուցչական կազմին՝ ասաց Նորին Սրբությունը, հորդորելով նաև ամուր պահել բարեկամության ոգին, որ միայն բարիք է ծնում: Վեհափառ Հայրապետը ներկաներին ուրախությամբ ծանուցեց նաև, որ Գյումրիի ևս մեկ դպրոց կունենա հարմարավետ շենք: Մի քանի ամիս առաջ Գյումրի կատարած հովվապետական այցի ընթացքում, տեսնելով դեռ փոքրիկ տնակներում իրենց պարապմունքներն անցկացնող մանկապատանեկան դպրոցի շնորհաշատ սաներին՝ Վեհափառ Հայ-

ռապետը խոստացավ աջակցել նրանց: Այսօր մարզային իշխանությունները դպրոցին են տրամադրել մի շենք:

Մայր Աթոռ վերադառնալուց առաջ Նորին Սրբությունը այցելեց նաև Գյումրիի Անի թաղամասում կառուցվող Ս. Հակոբ եկեղեցի, որի հիմնարկեքը ևս կատարվել էր հովվապետական այցի ընթացքում, ձեռամբ Հայոց Հայրապետի:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ԴԱՎԻԹԱՇԵՆԻ ԿԱՄՐՋԻ ԲԱՑՄԱՆԸ

Նոյեմբերի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ ներկա գտնվեց Երևանի Արաբկիր և Դավիթաշեն թաղամասերն իրար միացնող կամրջի բացմանը:

«Խորհրդանշական է Մեզ համար կամրջի կառուցումը այս դժվարին ժամանակներում, երբ առարկայական պատճառներով անջրպետված են մեր կյանքից բարոյ ու անվրդով ապրելու զգացումները, երբ հացի ու օրավարձի խնդիրը դարձել է հիմնական ու ճնշող մտահոգություն»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր օրհնությունը տալով բոլոր նրանց, ովքեր մասնակից են եղել կամրջի կառուցման հայրենանվեր գործին:

Բացման արարողությունից հետո Նորին Սրբությունն ու հայոց պետական այրերը ոտքով անցան կամրջի ողջ երկարությունը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՆԻԿՈԼԱՅ ՊԱՏՐՈՒՇԵՎԻՆ

Նոյեմբերի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության պետ, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Պատրուշևին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ

ԱԱ նախարար Կառլոս Պետրոսյանի և Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում կարևորվեց հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության ամրապնդումը, որին իրենց կարևոր նպաստն են բերում նաև Հայ և Ռուս Եկեղեցիները: Վերջինիս խոսուն վկայությունն է Ամենայն Հայոց Հայրապետի պարբերական հանդիպումները Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալ Ալեքսի Բ Պատրիարքի հետ և, մասնավորապես, Վեհափառ Հայրապետի այս տարի կատարած անդրանիկ այցը Ռուս Ուղղափառ Եկեղեցի, որ կաթողիկոսական ընտրությունից հետո առաջինն էր քույր Եկեղեցիներին տրված այցելությունների շարքում:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև վերջերս Ալեքսի Բ Պատրիարքի միջնորդությամբ Մոսկվայում կայացած հայ և ադրբեջանցի հոգևոր պետերի հանդիպման մասին, կարևորվեց հոգևոր առաջնորդների առաքելությունը խաղաղության հաստատման և հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման գործում:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Նոյեմբերի 13-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց փարածաշրջանում Մեծ Բրիտանիայի զինվորական կցորդ Էնդրյու Քերին և Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության ներկայացուցիչներին՝ դեսպան Թիմոթի Ջոնսի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց բանակում հոգևորականի դերի և զինված ուժերում հոգևոր ծառայության կազմակերպման կարևորության մասին: Վերջինիս առիթով հյուրերն իրենց աջակցությունն առաջարկեցին Հայ Եկեղեցուն՝ այդ ասպարեզում ունեցած իրենց երկարամյա փորձը փոխանցելու նպատակով: Նորին Սրբությունը, շնորհակալություն հայտնելով բարի կամեցողության համար, հյուրերին ներկայացրեց հայոց բանակում Մայր Աթոռի կողմից իրականացվող աշխատանքները, որ կատարվում է ՀՀ Պաշտպանության նախարարության համագործակցությամբ:

Նորին Սրբությունը նշեց, որ հայոց հոգևոր դարձին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանին նվիրված հանդիսություններին անմասն չի մնա նաև հայկական բանակը, որտեղ ևս կկազմակերպվեն տոնական միջոցառումներ: Նման միջոցառումների ծրագիր կկազմվի նաև ազատագրման վայրերում գտնվող կալանավորների համար:

1700-ԱՄՅԱԿԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների շարքում առանցքային միջոցառումներից է 2001 թ. հուլիսի 10-20-ը կայանալիք երիտասարդական ուխտագնացությունը, որին կմասնակցեն մեծ թվով երիտասարդներ Հայաստանի և սփյուռքի բոլոր թեմերից: Երիտասարդական ուխտագնացության երրորդ միջթեմական ժողովը հրավիրվեց նոյեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նախագահությամբ 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և մասնակցությամբ ուխտագնացության եվրոպական հանձնախմբի ատենապետ Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանի: Ժողովին մասնակցում էին նաև 1700-ամյակի տոնակատարությունների պետական հանձնաժողովի, քաղաքապետարանի, շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչները և այլ հյուրեր:

Ժողովի ընթացքում ներկայացվեց տեղեկատվություն 1700-ամյակի գրասենյակի և Հայաստանի ու սփյուռքի թեմերում կազմված համապատասխան հանձնաժողովների կողմից մինչև այժմ կատարված աշխատանքների մասին: Առանձնապես կարևորվեցին եկեղեցական և պետական հանձնաժողովների համագործակցության, ուխտավորների հոգևոր կրթության խնդիրները, ուխտավորների ժամանման, կեցության ապահովման, բժշկական սպասարկման և անվտանգության, ինչպես նաև «Ուխտավորի ուղեցույց-գրքույկի» նախապատրաստական աշխատանքների ընթացքին վերաբերող հարցեր:

Երևանում իր գործունեությունն է սկսել Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակը: Գրասենյակի պատասխանատու է նշանակվել Արեգ Թադևոսյանը, և մոտակա ժամանակներս գրասենյակը համալրվելու է նաև այլ աշխատակիցներով:

ԱՌՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Վ. ԼՈՍՍԿԻ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԼՈՒՅՍ*

Աստծու հետ միավորվելը մարդ անհատների մեջ իրականացող խորհուրդ է: Մարդն Աստծու հետ միավորվելու իր ճանապարհին անհատականությունից երբեք ոչինչ չի կորցնում, թեև հրաժարվում է իր սեփական կամքից, իր բնական հակումներից: Միայն ամեն ինչից (ինչ բնականից հատուկ է նրան) հրաժարվելու դեպքում է մարդկային անհատականությունը բացահայտվում շնորհի մեջ: Այն, ինչ որ հարկադրաբար է, այն, ինչ որ անգիտակցաբար է, անհատական արժեք չունի: Զըրկանքներն ու տառապանքները չեն կարող միավորվելու ճանապարհ դառնալ, եթե դրանք հոժարակամորեն չեն ստանձնվում: Կատարյալ անհատականությունն իր բոլոր որոշումների մեջ բացարձակ գիտակից է. նա ազատ է ամեն տեսակի հարկադրանքից, ամեն տեսակի բնական կարիքներից: Որքան առավել է շարժվում անհատականությունն Աստծու հետ միավորվելու ճանապարհով, այնքան նա ավելի գիտակից է դառնում: Այս գիտակցությունը հոգևոր կյանքում՝ արևելյան ասկետիկ հեղինակների մոտ, իմացություն (γνῶσις) է կոչվում: Այն ամբողջականորեն դրրսևորվում է միստիկ ուղու բարձր աստիճանների վրա, իբրև Ամենասուրբ Երրորդության կատարյալ ճանաչողություն: Այդ պատճառով Եվագր Պոնտացին Աստծու Արքայությունը նույնացնում է Ամենասուրբ Երրորդության ճանաչողության հետ, միավորվելու գիտակցությամբ: Հակառակը. անգիտությունը (ἄγνοια) իր վերջնագծում ոչ այլ ինչ է, եթե ոչ դժոխք՝ մարդկային անհատականության անկման սահման[1]: Հոգևոր կյանքը՝ մարդկային անհատականության աճը շնորհի մեջ, միշտ գիտակցական է, մինչդեռ անգիտությունը մեղքի նշան է՝ «հոգու քուն»: Այսպիսով

---

* **Вл. Лосски**, Очерк Мистического Богословия Восточной Церкви, Глава XI, Божественный свет, стр. 238-251.

[1] Գործող գլուխներ, XXXIII, PG, t. 40, col. 1268 A.

պետք է միշտ արթուն լինել, գործել իբրև «լուսո որդիներ» (Եփ. Ե 8), հետևելով Պողոս առաքյալի խոսքերին. «Վեր կաց դու, որ ննջում ես, և կանգնիր մեռելների միջից, և Քրիստոս պիտի լուսավորի քեզ» (Եփ. Ե 14):

Սուրբ Գիրքն առատ է լույսին, Աստվածային լուսավորմանը, Աստծուն վերաբերող արտահայտություններով, որին տրվում է Լույս անվանումը: Արևելյան Եկեղեցու Միստիկ Աստվածաբանության համար դրանք մետաֆորներ չեն, հռետորական ձևեր չեն, այլ Աստծու իրական ասպեկտն արտահայտող խոսքեր: Եթե Աստծուն Լույս են անվանում, ապա դա այն պատճառով է, որ Նա չի կարող օտար մնալ մեր փորձառությունից: «Գնոսիսը»՝ Աստվածային իմացությունն իր բարձրագույն աստիճանի վրա՝ անստեղծ Լույսի փորձառու ընդունումն է: Եվ այդ ընդունումն ինքընըստինքյան լույս է. «Քո լույսով ենք տեսնում լույսը» (Սղմ. ԼԵ 10): Դա այն է, ինչ ընդունվում է միստիկ փորձառության մեջ, և այն է՝ ինչ ընդունում են նրա մեջ լինելով: Սուրբ Սիմեոն Նոր Աստվածաբանի համար լույսի, այն է՝ գիտակցական հոգևոր կյանքի կամ «Գնոսիսի» փորձառու ընդունումը մարդկային անհատականության կողմից ձեռք բերված շնորհի բացահայտ ներկայությունն է. «Մենք ինչ չգիտենք, այն չենք ասում, բայց ինչ գիտենք դրա մասին՝ վկայում ենք: Լույսն արդեն խավարի մեջ լուսավորում է և՛ գիշերը, և՛ ցերեկը, և՛ մեր սրտերում, և՛ մեր մտքում, և լուսավորում է մեզ հարատևորեն, անվիճարկելիորեն, անփոփոխելիորեն, ակնհայտորեն. բարբառում է, գործում է, ապրում ու կենագործում և լույս է դարձնում նրանց, ովքեր լուսավորվում են իրենով: Աստված լույս է, և նրանք, ովքեր Իրեն տեսնելուն են արժանանում, բոլորը տեսնում են Նրան իբրև լույս, և նրանք, ովքեր ընդունել են Նրան՝ իբրև լույս են ընդունել: Քանզի Նրա փառքի լույսը նախորդում է Իր դեմքին, և առանց լույսի Նա չի կարող Իրեն հայտնել: Նրանք, ովքեր չեն տեսել Նրա լույսը, չեն տեսել նաև Իրեն, որովհետև Աստված լույս է, և նրանք, ովքեր չեն ընդունել Նրա լույսը, դեռևս չեն ընդունել շնորհը, քանի որ շնորհն ընդունողներն ընդունում են Աստծու լույսը և Աստծուն: Բայց նրանք, ովքեր դրան ընդունելուն կամ ճաշակելուն դեռևս չեն արժանացել, բոլորը դեռ օրենքի լծի տակ են գտնվում, դեռևս ստվերի ու պատկերների տակ են, դեռևս ըստ էության ստրկության զավակներ են: Թեկուզ դրանք լինեն թագավորներ, թեկուզ պատրիարքներ, թեկուզ քահանայապետներ կամ քահանաներ, թեկուզ դեկավարներ կամ ենթականներ, թեկուզ աշխարհականներ կամ վանականներ: Նրանք բոլորը դեռևս խավարի մեջ են ննջած և խավարի միջով են ընթանում, և չեն ուզում հասկանալ. թե ինչպես պետք է ապաշխարել: Ապաշխարությունը դուռ է, որը հանում է մարդուն խավարից և մտցնում լույսի մեջ: Ով դեռևս չի մտել լույսի մեջ և ինչպես որ հարկն է չի անցել ապաշխարության դռնով, նա ակնհայտորեն բարի չէ: Մեղք գործողը մեղքի ծառա է և ատում է լույսը, որպեսզի չբացահայտվեն իր գործերը»[2]: Եթե կյանքը՝ մեղքի մեջ, երբեմն դիտավորապես անգիտակցական է լինում (մենք փակում ենք մեր

[2] Մատ 79, 2. Ռուսերեն թարգմանությունը՝ Ֆեոֆան եպիսկոպոսի, II հրատ., էջ 318-319:

աչքերը, որպեսզի չտեսնենք Աստծուն), ապա կյանքը՝ շնորհի մեջ, գիտակցական անդուլ խորասուզում է՝ փորձառու աճ Աստվածային լույսի մեջ:

Սուրբ Մակար Եգիպտացին ասում է, որ քրիստոնյաների սրտերում Սուրբ Հոգով բորբոքված շնորհի կրակը պարտադրում է նրանց իբրև լապտերներ փայլել Աստծու Որդու առջև: Աստվածային այդ կրակը մարդկային կամքին համաչափորեն մերթ աշխուժանում է և վառ լույսով փայլում, մերթ նվաղում է ու այլևս լույս չի տալիս կրքերից մթագնած սրտերում: «Աննյութական ու Աստվածային կրակը լուսավորում է հոգիները և թրծում նրանց ... Այս կրակը գործել է առաքյալների մեջ, երբ հրե լեզուներով խոսում էին: Այս կրակը ձայնի միջոցով լուսավորեց Պողոսին և պայծառացրեց նրա միտքը, սակայն մթագնեց նրա տեսողության զգայարանը, քանզի նա անմարմնապես տեսավ լույսի զորությունը: Այս կրակը տեսավ Մովսեսը մորենու մեջ: Այս կրակը հրե կառքի տեսքով հափշտակեց Եղիային երկրից ... Ե՛վ հրեշտակները, և՛ ծառայող հոգիները այս կրակի պայծառությանն են հաղորդակցվում ... Այս կրակը հալածում է դևերին, ոչնչացնում է մեղքը, նա է հարության զորությունը, անմահության գործունեությունը, սուրբ հոգիների լուսավորությունը, մտավոր ուժերի հաստատումը»[3]: Դրանք Աստվածային էներգիաներ են, «Աստվածության ճառագայթներ», որոնց մասին Դիոնիսիոս Արեոպագացին է խոսում, աշխարհ ներթափանցող, իրենց ստեղծականից դուրս իբրև լույսի մասին, որի մեջ Սուրբ Երրորդությունն է բնակվում, ճանաչողություն ստեղծող արարչագործ ուժեր: Սուրբ Հոգով քրիստոնյաներին փոխանցված էներգիաներն այլևս չեն ներկայանում իբրև արտաքին պատճառներ, այլ իբրև աստվածացման ճանապարհով բնությունը փոփոխող շնորհ, ներքին լույս. «Աստծուն Լույս են անվանում ոչ թե ըստ Իր էության, այլ ըստ Իր էներգիաների»,- ասում է Սուրբ Գրիգոր Պալամաս[4]: Քանի որ Աստված հայտնվում է, հաղորդակցվում է, կարող է ճանաչվել՝ Նա լույս է: Եթե Աստծուն լույս են անվանում, ապա դա միայն նյութական լույսի համանմանությամբ չէ: Աստվածային լույսը այլաբանական կամ վերացական նշանակություն չունի, այն միստիկ փորձառության մեջ տրված իրականություն է: «Աստծու այդ փորձառու ճանաչողությունը տրվում է յուրաքանչյուրին ըստ իր չափի, և կարող է տարբեր լինել ըստ իր աստիճանի՝ կախված նրանց արժանիքներից, որոնց այն տրվում է»[5]: Աստծու կատարյալ տեսությունը, որը հնարավոր կլիներ ընկալել Իր անստեղծ լույսի մեջ՝ «Ութերորդ օրվա» խորհուրդն է, այն վերաբերում է գալիք դարին: Նրանք, ովքեր արժանի են, հասնում են նրան, որ տեսնում են «Աստծու արքայությունը՝ զորությամբ եկած» (Մրկ. Ը 39) արդեն այս կյանքում, նմանությամբ այն բանի, ինչպես երեք առաքյալները տեսան այն Թաբորի վրա:

---

[3] Հոգևոր զրույցներ, V. 8: PG, t. 32, col. 513 B; XII, 14, col. 565 AB; XXV, 9, 10, col. 673 (Ռուսերեն թարգմ. Հոգևոր զրույցներ. XXV, 9, 10, էջ 254-256):

[4] Ընդդեմ Ակինդինոսի: PG, t. 150, col. 823.

[5] Ս. Գրիգոր Պալամա. Վերափոխման ճառ: PG, t. 151, col. 448 B.

Թաքորական լույսի բնության վերաբերյալ XIV դարի կեսերին Ուղղափառ Եկեղեցու դոգմատիկ ուսմունքի ջատագովների և Թովմա Աքվինացու արևելյան կողմնակիցների միջև ծագած աստվածաբանական վեճերն ըստ էության առաջնակարգ նշանակություն ունեցող կրոնական խնդրի են վերաբերել: Այստեղ հարց է դրվել միստիկ փորձառության իրականության մասին, շնորհի անստեղծ կամ ստեղծական բնության մասին: Այստեղ հարցեր են շոշափվել մարդու վերջնական կոչումի, նրա երանության և աստվածացման մասին:

Դա վիճաբանություն էր Միստիկ Աստվածաբանության և կրոնական փիլիսոփայության միջև, կամ, ավելի ճիշտ, այնպիսի աստվածաբանության միջև, որը գործածում էր վերացական հասկացություններ, ուստի հրաժարվում էր ընդունել այն, ինչ իր համար անմտություն էր թվում «հիմարություն»: Հայտնության և կրոնական փորձառության Աստված միստիկայի մարզում կարծես թե հակադրված է փիլիսոփաների և գիտնականների Աստծուն, բայց մեկ անգամ ևս Աստվածային վերացականությունը հաղթեց մարդկային իմաստությանը: Գտնվելով իրենց դիրքը որոշելու անհրաժեշտության առջև՝ իրերի մասին ամեն տեսակի փիլիսոփայական մտահայեցողության գերազանցող հասկացություններ ձևակերպել, փիլիսոփաները վերջնական արդյունքում պետք է կարծիք հայտնեին, որն իր հերթին հիմարություն էր թվում Արևելյան Եկեղեցու ուսմունքի համար. նրանք պետք է հաստատեին աստվածացնող շնորհի բնության ստեղծականությունը: Մենք չենք անդրադառնա այդ հարցին, որը քննարկել ենք IV գլխում, ուր խոսվում էր Աստվածային էության և էներգիաների միջև եղած տարբերությունների մասին: Մոտենալով մեր ակնարկի ավարտին, մենք պետք է Աստվածային էներգիաները մեկ այլ տեսանկյունով քննենք՝ անստեղծ լույսի տեսանկյունով, որի մեջ Աստված հայտնվում և հաղորդակցվում է նրանց, ովքեր Իր հետ միության մեջ են մտնում:

Այդ լույսը (φῶς) կամ լուսավորումը (ἐλλαμφις) կարելի է սահմանել իբրև Աստվածության, Աստվածային էներգիաների կամ շնորհի տեսանելի հատկանիշ, որի մեջ Աստված ճանաչվում է: Այս լույսը բանականության կարգի չէ, ինչպիսին երբեմն լինում է մտքի լուսավորումը՝ այլաբանական և վերացական իմաստով վերցրած: Դա նաև զգայական կարգի իրականություն չէ: Բայց և այնպես այս լույսը միաժամանակ լցնում է բանականությունն ու զգացումը՝ բացահայտելով ամբողջական մարդուն և ոչ թե նրա ունակություններից մեկը: Աստվածային լույսը իբրև միստիկ փորձառությամբ տրված իրականություն, միաժամանակ գերազանցում է զգացումն ու բանականությունը: Այն նյութական չէ և իր մեջ զգայական ոչինչ չունի: Այդ պատճառով Սիմեոն Նոր Աստվածաբանն իր բանաստեղծություններում այն «անտեսանելի կրակ» է անվանում, թեև հաստատում է դրա տեսանելիությունը.

Հիրավի Աստվածային կրակ է,
Անստեղծ ու անտեսանելի,
Անսկիզբ ու աննյութ...[6],

բայց սա նաև մտային լույս չէ: Այսպես կոչված «Հագիորեստիկ տոմարը»՝ թաբորական լույսի մասին աստվածաբանական վիճաբանությունների ժամանակ Աթոնի վանականների կողմից ստեղծված ջատագովությունը, տարբերակում է մտցնում զգայական լույսի, մտավոր լույսի և հավասարապես առաջին երկուսը գերազանցող անստեղծ լույսի միջև: «Մտքին հատուկ է մի լույս ընդունել,- ասում են Աթոնի վանականները,- իսկ զգացումին՝ մեկ ուրիշ, զգայական լույսով զգայական առարկաներն են հայտնաբերվում, իսկ մտքի լույսով՝ դատողությունների մեջ ամփոփված իմացությունն է հայտնվում: Հետևաբար տեսողությանն ու մտքին հատուկ չէ միևնույն լույսն ընդունել, այլ նրանցից յուրաքանչյուրն իր բնությանն ու դրա սահմաններին համապատասխան է գործում: Բայց երբ արժանավորներն ստանան հոգևոր և գերբնական շնորհն ու զորությունը, նրանք և՛ զգացումով, և՛ մտքով տեսնում են այն, ինչ գերազանցում է ամեն զգացում և ամեն միտք... Ինչպես այն գիտի միակ Աստված, և այդպիսի ներգործություններ զգացողները»[7]:

Պայծառակերպության մասին խոսող սուրբ հայրերի մեծամասնությունը հաստատում է առաքյալներին հայտնված լույսի անստեղծ ու Աստվածային բնությունը: Սուրբ Գրիգոր Աստվածաբանը, Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացին, Սուրբ Մաքսիմիանոս Խոստովանողը, Սուրբ Անդրեաս Կրետացին, Սուրբ Հովհան Դամասկացին, Սուրբ Սիմեոն Նոր Աստվածաբանը, Սուրբ Եփիմ Ջիգաբենը արտահայտվում են հատկապես այս իմաստով, և կարիք չկա նրանց խոսքերն իբրև փոխաբերական արտահայտություններ մեկնաբանել: Սուրբ Գրիգոր Պալաման զարգացնում է այս ուսմունքը միստիկ փորձառության վերաբերյալ հարցի կապակցությամբ: Լույսը, որն առաքյալները տեսել էին Թաբորի վրա, ըստ բնության հատուկ է Աստծուն: Հավիտենական, անվախճան, ժամանակից և տարածությունից դուրս գոյություն ունեցող, Հին Կտակարանում այն հայտնվում էր իբրև Աստծո փառք, որն արարածների համար սարսափելի ու անտանելի մի հայտնություն էր, քանզի մինչև Քրիստոս այն արտաքին, մարդկային բնությանն օտար և Եկեղեցուց դուրս էր: Ահա թե ինչու, ըստ Սիմեոն Նոր Աստվածաբանի, Դամասկոսի ճանապարհին Աստվածային լույսի հայտնությամբ Պողոս առաքյալը կուրանում և գետնին է փռվում, քանի որ նա դեռևս հավատք չուներ ի Քրիստոս[8]: Հակառակը, Մարիամ Մագդաղենացին, ըստ Սուրբ Գրիգոր Պալամայի, կարող էր տեսնել հարության լույսը, որը, չնայած գիշե-

---

[6] Ս. Սիմեոն Նոր Աստվածաբանի գործեր, Սմիրնյան հրատ., 1886, մաս II, էջ 1:

[7] PG, t. 150, col. 1833 D.

[8] Ժաո 57, 1. Ռուսերեն հրատարակությունը՝ Աթոնի Պանտելեիմոնի վանքի, հրատ. II, էջ 36; Ս. Գրիգոր Պալամա, Ֆիզիկական գլուխներ և այլն (գլուխ. 67): PG, t. 150, col. 1169 A.

ության խավարին, լցնում էր Տիրոջ գերեզմանն ու տեսանելի դարձնում այն ամենը, ինչ այնտեղ էր գտնվում: Մինչդեռ երբ «զգայական օրը» դեռևս չէր լուսավորել երկիրը, այդ լույսն ուժ տվեց նրա աչքերին՝ հրեշտակներին տեսնելու և նրանց հետ զրուցելու համար[9]: Մարմնավորման պահին Աստվածային լույսը կենտրոնացավ, եթե կարելի է այդպես ասել, Քրիստոսի՝ Աստվածամարդու մեջ, Որի մեջ մարմնապես բնակվեց Աստվածային ամբողջությունը: Սա նշանակում է, որ Քրիստոսի մարդկային բնությունն Աստվածային բնության հետ ունեցած առանձնավորական միությամբ Աստվածացավ, որ Քրիստոս իր երկրավոր կյանքի ընթացքում միշտ լուսավորված է եղել՝ մարդկանց մեծամասնության համար անտեսանելի մնացող Աստվածային լույսով: Տիրոջ պայծառակերպությունը ժամանակի և տարածության մեջ բովանդակված հայտնություն չէր, Քրիստոսի համար այդ պահին ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ, նույնիսկ Նրա Աստվածային բնության մեջ, բայց փոփոխություն տեղի ունեցավ առաքյալների գիտակցության մեջ՝ որոշ ժամանակով հնարավորություն ստանալով իրենց Ուսուցչին տեսնել այնպիսին, ինչպիսին Նա եղել է՝ Իր Աստվածության հավիտենական լույսով փայլող[10]: Սա առաքյալների համար, հավիտենական իրականությունների ընդունմամբ, ելք էր պատմությունից: Սուրբ Գրիգոր Պալամա Պայծառակերպության մասին իր զեկույցում ասում է. «Տիրոջ պայծառակերպության լույսը չի սկսվել և չի վերջացել, այն աննյութական է մնացել ժամանակի ու տարածության մեջ և՝ արտաքին զգացողությանը չենթարկվող, չնայած որ տեսանելի եղավ մարմնական աչքերով... Իրենց զգացումների հատուկ վերափոխությամբ Տիրոջ աշակերտները մարմնից դեպի Հոգի եկան»[11]:

Աստվածային լույսը մարմնավոր աչքերով տեսնելու համար, ինչպես աշակերտները տեսան այն Թաբորի վրա, պետք է այդ լույսին հաղորդակից լինել, պետք է շատ կամ քիչ չափով նրանով վերափոխվել: Այսպիսով, միստիկ փորձառությունը շնորհի ներգործությամբ մեր բնության վերափոխումն է ենթադրում: Սուրբ Գրիգոր Պալամա պարզ խոսում է այս մասին. «Աստվածային էներգիաները բաժին ստացած անձը կարծես թե լույս է՝ և՝ լույսի հետ է, և՝ լույսի հետ մեկտեղ գիտակցաբար տեսնում է այն, ինչ առանց այդ շնորհի՝ բոլորի համար ծածկված է, այն գերազանց է ոչ միայն մարմնավոր զգացումների համեմատ, այլև այն ամենի, ինչ մեզ տեսանելի է... Քանզի սրտով սրբագործվածները տեսնում են Աստծուն, Որը Լույս լինելով բնակվում և հայտնվում է Իրեն սիրողների ու Իր կողմից սիրվածների մեջ»[12]:

---

[9] Մատ 20: PG, t. 151, col. 268 AB.

[10] Հագիորիտիկ տոմար: PG, t. 150, col. 1232 C.

[11] PG, t. 151, col. 433 B.

[12] Մատ Սուրբ Աստվածածնի տաճար մտնելու մասին, Ս. Գրիգոր Պալամայի 22-րդ զրույց, Աթենք, 1861, էջ 175-177:

Մարմինը չպետք է խոչընդոտի միստիկ փորձառությանը: Մարմնական բնության վերարերյալ մանիքեական արհամարհանքն օտար է ուղղափառ ճգնավորությանը: «Մենք մարդ անվանումը հոգու կամ մարմնի համար առանձնաբար չենք գործածում, այլ երկուսին միասին, քանզի ամբողջական մարդն է ստեղծվել Աստծու պատկերով»,- ասում է Սուրբ Գրիգոր Պալամաս[13]: Մարմինը, Պողոս Առաքյալի արտահայտության համաձայն, պետք է հոգևոր մարմին դառնա: Մեր վերջնական նպատակը միայն Աստծուն մտքով հայելը չէ: Եթե դա այդպես լիներ, ապա մեռելներից հարություն առնելու կարիք չէր լինի: Երանությանն արժանացողներն իրենց ամբողջական ստեղծական բնությամբ կտեսնեն Աստծուն երես առ երես: Ահա թե ինչու «Տոմարը» արդեն այստեղ իսկ՝ երկրի վրա սրբագործված մարմնական բնության մեջ որոշ «հոգևոր նախատրամադրություններ» է ենթադրում: «Եթե մարմինը պետք է հոգու հետ գալիք դարի անճառելի բարիքներին մասնակցի, ապա կասկածից վեր է, որ նա դրանց մեջ հնարավորության չափով արդեն հիմա պետք է մասնակցի... Քանզի մարմինը նույնպես Աստվածային իրերի փորձառություն ունի, երբ պարզվում է, որ հոգու չարչարված ուժերը մահացած չեն, այլ պայծառակերպված ու սրբագործված»[14]:

Աստվածության շնորհը հայտնվող լույս լինելով չի կարող մեր կողմից չընդունվել: Մենք չենք կարող չզգալ Աստծուն, եթե մեր բնությունը հոգեպես առողջ վիճակում է գտնվում: Ներքին կյանքի անզգայությունն անբնական վիճակ է: Պետք է սովորել զատորոշել մեր հոգու վիճակները, ինչպես նաև՝ դատել միստիկ կյանքի հայտնությունների մասին: Այդ պատճառով Սուրբ Սերաֆիմ Սարովսկին իր հոգևոր խրատները հետևյալ խոսքերով է սկսում. «Աստված սրտերն ու երիկամները ջերմացնող ու բորբոքող կրակ է: Այսպիսով, եթե մենք մեր սրտերում սառնություն ենք զգում, որը սատանայից է, քանզի սատանան սառն է, ապա կանչենք Տիրոջը, ու Նա կգա և մեր սրտերը կատարյալ սիրով կջերմացնի ոչ միայն Իր հանդեպ, այլև՝ մերձավորի: Եվ ջերմության երեսից կհալածվի բարիատյացի սառնությունը»[15]: Շնորհն իրեն ճանաչել է տալիս իբրև ուրախություն, խաղաղություն, ներքին ջերմություն, լույս: «Միստիկ գիշերվա» հոգևոր չորության վիճակը Արևելյան Եկեղեցու հոգևոր կյանքում այլ իմաստ ունի, քան Արևմուտքի հոգևոր կյանքում: Աստծու հետ ավելի ու ավելի սերտ հաղորդակցության մեջ մտնող մարդը չի կարող լույսից դուրս մնալ:

---

[13] Հոգու և մարմնի զրույցներ: PG. t. 150, col. 1361 C. Ս. Գրիգոր Պալամային վերագրվող այս աշխատասիրության վավերականությունը երկբայական է, համենայն դեպս այն պատկանում է նույն հոգևոր ուղղությանը:

[14] PG. t. 150, col. 1233 BD.

[15] Լ. Ի. Դենիսով, Երանելի Սերաֆիմի՝ Սարովսկի հրաշագործի սուրբ մասունքների հայտնությունը, վարքը, սխրանքները, հրաշքներն ու հոգևոր խրատները, Մ., Ստուպինի հրատ.., 1904, էջ 420:

Եթե նա խավարի մեջ խորասուզված վիճակում է հայտնվում, ապա դրա պատճառն այն է, որ իր բնությունը մթագնվել է ինչ-որ մեղքով, կամ էլ Աստված փորձում է նրան, որպեսզի առավել զորացնի նրա նախանձախնդրությունը: Այսպիսի վիճակները կարելի է հաղթահարել հնազանդությամբ ու խոնարհությամբ, որոնց փոխարեն Աստված պատասխանում է նրանով, որ կրկին հայտնվում է հոգում Իր լույսը հաղորդելով որոշակի ժամանակով Իր կողմից լքված մարդկային էությանը: Հոգևոր չորությունը հիվանդագին վիճակ է, որը չի կարող երկարատև լինել. այն երբեք չի քննարկվել Արևելյան Եկեղեցու հայրերի կողմից՝ իբրև Աստծու հետ միավորվելու ճանապարհին անհրաժեշտ ու բնական էտապ: Այս ճանապարհին նման վիճակները չափազանց հաճախ են, բայց միշտ էլ վտանգավոր, քանի որ դրանք մեծ կապվածություն ունեն ἀχηδία-ի, տրտմության ու հուսալքության հետ, սրտի սառելու հետ, որն անզգայություն է առաջացնում: Սա մարդուն հոգևոր մահվան սահմանին կանգնեցնող փորձություն է: Քանզի դեպի սրբություն վերելքը, Աստվածային լույսի համար պայքարը անվտանգ չեն: Նրանք, ովքեր լույս են փնտրում, Աստծու մեջ գիտակցական կյանք են փնտրում, հոգևոր մեծ վտանգի են ենթարկվում, սակայն Աստված չի թողնում նրան խավարի մեջ խարխափել:

«Ես հաճախ եմ տեսել լույսը,- ասում է Սուրբ Սիմեոն Նոր Աստվածաբանը,- և երբեմն այն հայտնվում էր իմ ներսում, երբ իմ հոգին խաղաղություն ու լռություն ուներ, իսկ երբեմն այն հայտնվում էր ինձ հեռվում, կամ նույնիսկ ամբողջովին ծածկվում էր, և երբ ծածկվում էր, ինձ անսահման տրտմություն էր պատճառում, քանզի այն ժամանակ ես մտածում էի, որ հավանաբար այն այլևս չի կամենում հայտնվել: Բայց երբ ես սկսում էի արցունքներ հեղել, և ամեն ինչից, ամեն տեսակի օտարվածություն և ամեն տեսակի հնազանդություն ու խոնարհություն ցույց տալ, այն ժամանակ նա կրկին երևում էր, ինչպես արեգակը, երբ այն հալածում է ամպի թանձրությունը և ստիպանաբար երևում է բերկրալից... Այսպես, վերջիվերջո, Դու անճառելի, անտեսանելի, անշոշափելի, մշտաշարժ, ամենուր, միշտ և ամեն ինչում ներկա և ամեն ինչ իրականացնող, անտեսանելի և ամեն ժամ թաքնվող... Ե՛վ ցերեկը, և՛ գիշերը, հեռացող ու մոտեցող, կամաց-կամաց հալածեցիր իմ մեջ եղող խավարը, ցրեցիր ինձ ծածկող ամպը, մաքրեցիր իմ մտքի աչքերի բիբերը, բացեցիր իմ հոգու լսողությունը... Ինձ այդպիսին դարձնելով՝ Դու մաքրեցիր իմ երկինքն ամեն տեսակի ամպից, այսինքն՝ իմ մաքրված հոգին, որի մեջ անտեսանելիորեն գալով՝ չգիտեմ ինչ ձևով և որտեղից, Դու ամենազգ, հանկարծակիորեն, իբրև մի ուրիշ արեգակ հայտնվելով, քնակվում ես նրանում: Ով անճառելի բարեհաճություն...»[16]: Այս խոսքերը մեզ ցույց են տալիս, որ հոգու չորությունը փոփոխվող երևույթ է, որը չի կարող մշտական վիճակ լինել: Եվ իսկապես, հերոսական պայքարը, որը մենք տեսնում ենք Աստծու հետ ողբերգական բաժանումից տրտմությամբ համակված Արևմտյան քրիստոնեության մեծ սրբերի մոտ, «միստիկ գիշերը»՝ որպես ուղի, որ-

[16] Ճառ 90-րդը Ֆեոֆան եպիսկոպոսի թարգմանության մեջ, II հրատ. էջ 487-488:

պես հոգևոր անհրաժեշտություն, ծանոթ չէ Արևելյան Եկեղեցու ճգնավորներին: Երկու ավանդությունները բաժանվել են ուսմունքի խորհրդավոր՝ Սուրբ Հոգում սրբության աղբյուրին վերաբերող կետում: Երկու տարբեր դոգմատիկ տեսություններ համապատասխանում են երկու փորձառությունների, բացարձակապես իրար չնմանվող սրբության երկու ուղիների[17]: Դրան տանող ճանապարհները Եկեղեցու բաժանումից հետո նույնական չեն Արևմուտքի ու Արևելքի համար: Ոմանք գեթսեմանյան գիշերի միայնության ու լքվածության մեջ Քրիստոսի հանդեպ իրենց ունեցած հավատարմության մասին են վկայում, մյուսները՝ Աստծո հետ իրենց միավորությամբ՝ վստահությունն են ձեռք բերում պայծառակերպության լույսի մեջ:

Սուրբ Սերաֆիմ Սարովսկու՝ Ն. Ա. Մոտովիլովի հետ ունեցած զրույցի մի հատված, ամենն տեսակի աստվածաբանական տրակտատներից լավ է բացատրում, թե ո՞րն է այդ վստահությունը, Աստծու հետ միավորվելու այդ ճանաչողությունը (Գնոսիս): Ցմեռվա առավոտյան, անտառեզրին տեղի ունեցող զրույցի ժամանակ այդ աշակերտը Սուրբ Սերաֆիմ Սարովսկուն՝ իր ուսուցչին, ասում է. «Ամեն դեպքում ես չեմ հասկանում, թե ինչպես ես պետք է հաստատ համոզված լինեմ, որ ես Աստծու Հոգու մեջ եմ: Ես ինչպե՞ս ինքս իմ մեջ ճանաչեմ Նրա ճշմարիտ հայտնությունը»:

Հայր Սերաֆիմը պատասխանում է. «Ես արդեն ձեզ ասել եմ, որ դա շատ դյուրին է, և մանրամասնորեն պատմել եմ ձեզ, թե ինչպես են մարդիկ Աստծու Հոգու մեջ լինում, և ինչպես պետք է ըմբռնել Նրա հայտնությունը մեր մեջ... Ձեզ ի՞նչ է այլևս հարկավոր, Հայր Սուրբ»:

Ես ասացի. «Հարկավոր է, որ ես լավ հասկանամ դա»:

Այդ ժամանակ Հայր Սերաֆիմը բավականին պինդ բռնեց իմ ուսերից և ասաց.

«Հայր Սուրբ, մենք հիմա, ձեզ հետ երկուսով, Աստծու Հոգու մեջ ենք, ինչո՞ւ եք դուք ձեր աչքերը խոնարհել, ինչո՞ւ ինձ չեք նայում»:

Ես պատասխանեցի. «Հայր, չեմ կարող նայել, քանզի ձեր աչքերից կայծակներ են թափվում: Ձեր երեսը արևից պայծառ է դարձել, և իմ աչքերը ցավից ծակում են»:

Հայր Սերաֆիմն ասաց. «Մի՛ վախեցեք, ձերդ բարեձնություն, դուք էլ այժմ այնպես լուսավոր եք դարձել, ինչպես ես ինքս: Դուք ինքներդ այժմ Աստծու Հոգու լիության մեջ եք, հակառակ դեպքում դուք ինձ այդպիսին չէիք կարող տեսնել»: Եվ դեպի ինձ հակելով գլուխը՝ ականջիս մեղմորեն ասաց. «Շնորհակալություն հայտնեք Տեր Աստծուն ձեր հանդեպ ցուցաբերած Իր անճառելի ողորմածության համար,

---

[17] Արևմտյան և Արևելյան Եկեղեցիներին հատուկ աստվածաբանական ուղիները հակադրելով, մենք ոչինչ միանշանակ պնդել չենք ուզում: Զափազանց նուրբ և բազում տարբեր երանգներ ունեցող այս առարկան դուրս է մնում համակարգման ամեն տեսակի փորձերից: Այսպես, Արևմուտքում միստիկ խավարի փորձառությունը բնավ բնորոշ չէ արևմտյան այնպիսի սրբերի համար, ինչպես, օրինակ, Ս. Բեռնարդ Կլերվացու համար: Մյուս կողմից՝ Արևմտյան Եկեղեցու ճգնավորների հոգևոր կյանքը մեզ է ներկայացնում «միստիկ գիշերվա», համենայն դեպս, բավականին մի բնորոշ օրինակ, հատկապես՝ Ս. Տիխոն Զադոնսկու (XVIII դ.) մոտ:

դուք տեսաք, որ ես նույնիսկ չխաչակնքվեցի, այլ միայն իմ սրտում մտքով Տեր Աստծուն աղոթեցի և իմ ներսում ասացի. «Տեր, արժանացրու իրեն՝ մարմնական աչքերով պարզ տեսնելու Քո Սուրբ Հոգու այն գալուստը, որին Դու Քո ծառաներին ես արժանացնում, երբ բարեհաճում ես հայտնվել նրանց Քո սքանչելի փառքի լույսի մեջ»: Եվ ահա, Հայր Սուրբ, Տերը վայրկենապես իրականացրեց թշվառ Սերաֆիմի խոնարհ խնդրանքը... Ինչպե՞ս մենք շնորհակալություն չհայտնենք Նրան՝ մեզ երկուսիս տրված այս անճառելի պարգևի համար: Այսպիսով, Հայր Սուրբ, նույնիսկ մեծ անապատականներին միշտ չէ, որ Տերը հայտնում է Իր ողորմածությունը, այս դեպքում արդեն Աստծու շնորհը, իբրև որդեսեր մայր, նույն իր՝ Մարիամ Աստվածամոր բարեխոսությամբ, բարեհաճեց մխիթարել ձեր փշրված սիրտը: Հայր Սուրբ, ինչո՞ւ չեք նայում իմ աչքերի մեջ, պարզապես նայեք, մի՛ վախեցեք: Աստված մեզ հետ է»: Այս խոսքերից հետո ես նրա երեսին նայեցի, և ինձ վրա ավելի մեծ ու երկյուղալից սարսափ ընկավ: Կեսօրվա արևի կենտրոնում նրա ամենավառ ճառագայթների մեջ, ձեզ հետ խոսող մարդու դեմքը պատկերացրեք: Դուք տեսնում եք նրա շրթների շարժումը, նրա աչքերի փոփոխվող արտահայտությունները, լսում եք նրա ձայնը, զգում եք, որ մեկը ձեռքերով ձեր ուսերից է բռնել, բայց ո՛չ այդ ձեռքերն եք տեսնում, ո՛չ ինքներդ ձեզ, ո՛չ էլ նրա կերպարանքը, այլ միայն կուրացնող, շրջագծով մի քանի սաժեն հեռու տարածվող, և իր վառ փայլով բացատի ձնե շղարշը և թե՛ ինձ ու թե՛ մեծ ծերունուն ծածկող փաթիլները լուսավորող լույս...»:

«Դուք հիմա ի՞նչ եք զգում»,- հարցրեց ինձ հայր Սերաֆիմը: Ես պատասխանեցի. «Անընկարագրելի լավ»: «Սակայն, ինչպե՞ս լավ,- հարցրեց նա,- հատկապես ի՞նչը»: Ես պատասխանեցի. «Իմ հոգում այնպիսի լռություն ու խաղաղություն եմ զգում, որ այն ոչ մի խոսքով չեմ կարող արտահայտել»:

«Դա, ձերդ աստվածահիրություն, այն խաղաղությունն է,- ասաց Հայր Սերաֆիմը,- որի մասին Տերն ասաց Իր աշակերտներին. «Զխաղաղութիւն Իմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ» (Հովհ. ԺԴ 27), ըստ առաքելական խոսքի. «Ամենայն միտք գերազանցող» «խաղաղություն»: «Էլ ինչ եք զգում»,- հարցրեց ինձ Հայր Սերաֆիմը: Ես ասացի. «Իմ ամբողջ սրտում անսովոր ուրախություն է»: Եվ Հայր Սերաֆիմը շարունակեց. «Երբ Աստծու Հոգին բարեհաճում է մարդու նկատմամբ և Իր էջքի լիությամբ լուսավորում է նրան, այդ ժամանակ մարդու հոգին անճառելի ուրախությամբ է լցվում, քանզի Աստծու Հոգին ինչին որ դիպչում է, ամեն ինչ ուրախալից է դարձնում... Այդ ուրախության նախասաղմները մեզ տրվում են այժմ, և եթե դրանից այդպես քաղցր, լավ ու զվարճալի է մեր հոգիներում, ապա ինչ ասել այն ուրախության մասին, որը պատրաստված է այնտեղ՝ երկնքում, այստեղ՝ երկրի վրա լացողների համար: Հայր, ահա և դուք ձեր երկրային կյանքում բավականին լաց եք եղել, և տեսեք, թե տակավին այս կյանքում Տերն ինչպիսի ուրախությունով է ձեզ մխիթարում: Հիմա, Հայր Սուրբ, մեր գործն այն պետք է լինի, որ աշխատանք աշխատանքի կցելով ուժից ուժ բարձրանանք և հասնենք Քրիստոսի կատարելու-

թյան տարիքի աստիճանին... Հենց այդ ժամանակ է, որ մեզ քիչ և կարճ հայտնվող այժմյան ուրախությունն իր կատարյալ ամբողջությամբ մեզ կհայտնվի, և ոչ ոքի չի վերցնի մեզանից այն գերերկրային անճառելի հաճույքների լիությունը»[18]:

Մի փորձառության մասին այս պատմությունն իր պարզության մեջ Արևելյան Եկեղեցու հայրերի ամբողջ ուսմունքն է պարունակում «Գնոսիսի» շնորհի ճանաչողության մասին, որն իր ամենաբարձր աստիճանին է հասնում Աստվածային լույսի ճանաչողության մեջ: Այդ լույսն Աստծու հետ միավորման հասած մարդկային անհատականությունն է լցնում: Դա այլևս զմայլվածություն չէ, փոփոխական վիճակ չէ, որը շլացնում է՝ մարդկային էությանը կտրելով իր սովորական փորձառությունից, այլ՝ գիտակցական կյանք է լույսի, Աստծու հետ անդադար հաղորդակցության մեջ: Իրապես, վերևում մենք Սիմեոն Նոր Աստվածաբանից այն հատվածը մեջբերեցինք, ուր ասվում է, որ զմայլվածության վիճակները հատուկ են մանավանդ այն անձանց, որոնց բնությունը դեռևս չի փոփոխվել, և որոնք իրենց կյանքը դեռ չեն կառուցել Աստծու մեջ: Արդեն երկրային կյանքում սկսվող ստեղծական բնության պայծառակերպությունը նոր երկնքի ու նոր երկրի խոստումն է, արարածի մուտքն է հավիտենական կյանք՝ նախքան մահն ու հարությունը: Երկրային կյանքում նույնիսկ ամենամեծ սրբերից շատերը չէ, որ այդ վիճակին են հասնում: Երանելի Սերաֆիմի օրինակը հատկապես նրանով է ապշեցուցիչ, որ նա մեզ բավականին մոտ դարաշրջանում հարություն է տալիս առաջին դարի քրիստոնեության անապատական հայրերի սրբությունը, որը «կանտյան» դարձած մեղանչումի հետևանքով մեր հավատքի համար կարծես թե անհասանելի, իսկ մտքի համար՝ քննական ու սառն է թվում: Մենք միշտ պատրաստ ենք նոումենալյան մարզին, «հավատքի մարզին» վերագրել այն ամենը, ինչը չի տեղավորվում օրենքի կամ, ավելի ճիշտ, մեր ընկած բնության սովորությունների մեջ: Փիլիսոփայական ճանապարհով մեր սահմանափակ բնության ինքնավարության պաշտպանությունը, որի համար անհասանելի է շնորհի փորձառու ճանաչողությունը, մեր անգիտակցականության գիտակցական հաստատումն է, հրաժարումն է աստվածճանաչողությունից, հրաժարումն է լույսից, մարդկանց մեջ հակադրություն է՝ Աստծու հետ հարաբերության ամբողջական գիտակցությունը բացահայտող Սուրբ Հոգուն:

Հենց նույն հոգևոր զրույցում, որը մենք վերևում մեջբերեցինք, Սուրբ Սերաֆիմը հարց տվողին ասում է. «Մենք իրականում սուրբ հավատքի՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր համատարած սառնությամբ և Նրա Աստվածային նախախնամության գործերի նկատմամբ անուշադրությամբ այն բանին ենք հասել, որ գրեթե չենք հասկանում Սուրբ Գրքի խոսքերը: Ոմանք ասում են. այս հատվածն անհասկանալի է, քանզի մի՞թե առաքյալներն իրենց մեջ այդպես ակնհայտորեն կարող էին Սուրբ Հոգին զգալ: Այստեղ որևէ սխալ չկա՞: Սակայն որևէ սխալ չէր

---

[18] «Քրիստոնեական կյանքի նպատակի մասին». Երանելի Սերաֆիմ Սարովսկու զրույցը Ն. Ա. Մոտովիլովի հետ. Սերգիև Պոսադ, 1914, էջ 17-20:

եղել... և չկար... Այդ բոլորը նրանից ծնվեց, որ, կամաց-կամաց քրիստոնեական գիտակցության պարզությունից հեռանալով, մենք լուսավորվելու պատրվակով անգիտության այնպիսի խավարի մեջ ենք մտել, որ մեզ անըմբռնելի է թվում այն, ինչի մասին վաղ քրիստոնյաները պարզ դատել են, և մարդկանց մեջ Աստծու հայտնությունների մասին ամենասովորական խոսակցությունները զրուցակիցներից ոչ մեկին տարօրինակ չի թվացել»[19]:

Մենք «քրիստոնեական գիտակցության պարզությունը» այնտեղ ենք գտնում, ուր այդ գիտակցությունն ու սերը միասին են՝ խորհրդավոր փոխներթության մեջ, աշխարհի աչքից ծածկված, նրանց կյանքում, ովքեր Ամենասուրբ Երրորդության հավիտենական լույսի հետ են միավորվում, սակայն այս փոխներթությունն անպատմելի է: «Գալիք դարի իրերի համար,- ասում է Սուրբ Եփրեմ Ասորին,- հարազատ ու ճշմարիտ անվանում չկա, դրանց մասին միայն մեկ պարզ գիտակցություն կա, որը վեր է ամեն անվանարկությունից և ամեն բաղադրյալ սկզբնավորությունից, ձևից, գույնից, ուրվագծումից և ամեն տեսակի մտացածին անվանումից»[20]: «Սա մերթ կա, մերթ էլ անգիտություն է, որի մասին ասված է, որ այն բարձր գիտակցություն է»[21]: Այս պարագային մենք կրկին ապոֆատիկականի մարզում ենք հայտնվում այնտեղ, որտեղից մենք մեր ուսումնասիրությունն սկսեցինք Արևելյան Եկեղեցու ուսմունքի մասին: Սակայն Աստվածային մեզի փոխարեն՝ դա լույս է, ինքնագիտակցության կորստի փոխարեն՝ ամբողջովին շնորհի մեջ բացահայտվող անհատականության գիտակցություն: Այստեղ խոսքը ձեռք բերված կատարելության մասին է, Աստծու հետ միավորվելու շնորհական զորության մեջ վերափոխված բնության մասին: Այս փոխներթությունն ինչպես հասկացնել նրան, ով չի ունեցել այն: Այն, ինչ Սուրբ Սիմեոն Նոր Աստվածաբանը փորձում է արտահայտել իր հակասական արտահայտություններում, մեզ թույլ է տալիս տեսնել այն, ինչը դեռևս ծածկված է մնում մեր անսուրբ գիտակցությունից: «Երբ մենք կատարյալ շնորհի մեջ ենք, այդ ժամանակ նա այլևս չի գալիս, ինչպես նախկինում անձև ու անտեսանելի, այլ մի ուրիշ տեսքով է գալիս՝ Աստծու տեսքով, քանզի Աստված չի հայտնվում որևէ ուրվագծի կամ պատկերացման մեջ, այլ հայտնվում է իբրև պարզ, անտեսանելի լույսով կազմված, անհասանելի ու անճառելի: Սրանից ավելի ես չեմ կարող ոչինչ ասել: Մի խոսքով՝ Նա Իրեն պարզորեն է հայտնում, բավականին լավ է ճանաչվում, կատարելապես անտեսանելի է երևում, անտեսանելիորեն խոսում ու լսում է, Աստված Իր էությամբ նրանց հետ է խոսում, ովքեր շնորհով իրենից ծնված աստվածներ են. զրուցում են ինչպես ընկերն ընկերոջ հետ՝ երես առ երես: Հոր նման սիրում է Իր որդիներին, և անսահմանորեն սիրվում է նրանց կողմից, և նրանց համար մի հրաշալի տեսիլք ու երկյուղալից լսողություն է լինում, որոնց մասին նրանք, ինչպես որ պետք է, չեն կարող խոսել, բայց չեն կարող նաև լռել:

---

[19] «Քրիստոնեական կյանքի նպատակի մասին», էջ 33 և 10:

[20] Ռուսերեն թարգ., էջ 63:

[21] Ռուսերեն թարգ., էջ 67:

Նրանց մեջ Սուրբ Հոգին լինում է այն ամենը, որն, ինչպես լսում ենք, Աստվածային գրքերում Երկնային Արքայության մասին է ասվում. հատկապես՝ մարգարիտ, մանանեխի հատիկ, թթխմոր, ջուր, կրակ, հաց, կենաց ջուր, մահիճ, ամուսնական դղյակ, ամուսին, ընկեր, եղբայր և հայր: Եվ ես ինչ կարող եմ ասել անպատմելիի մասին, քանզի ինչ աչքը չի տեսել և ինչի մասին ականջը չի լսել և ինչ մարդու սիրտը չի մտել, ինչպես կարող է լեզուն չափել, և ինչպես կարելի է խոսքով ասել: Հիրավի դա անկարելի է: Չնայած որ մենք այս ամենը ձեռք ենք բերել, և մեր ներսում ունենք այն Աստծուց տրված, սակայն ամենևին չենք կարող այն ո՛չ մտքով չափել, ո՛չ խոսքով բացատրել»[22]:

Համաձայն անստեղծ լույսի ջատագովների, գալիք դարի իրերի փորձառությունը դոգմատիկորեն չի կարող սահմանված լինել: Այսպես՝ Հին Ուխտում դոգմաների և օրենքի պատվերների հետ միասին կար դրա մարգարեական ըմբռնումը, ինչը ծածկվեց և Եկեղեցում դոգմա դարձավ: Այսպես է նաև ավետարանական դարաշրջանում, որի մեջ ապրում ենք մենք, դոգմաների հետ միասին, կամ էլ, ավելի ճիշտ, նույն դոգմաների մեջ մեր առջև ծածկված խորությունն է բացվում գալիք դարին ու Աստծու Արքայությանը վերաբերող խորհուրդը[23]: Նաև կարելի է ասել, որ Հին Ուխտը հավատքով է ապրել և հույսին է ձգտել, որ ավետարանական դարը հույսով է ապրում և սիրո է ձգտում, որ սերը խորհուրդ է, որը հայտնվում և ամբողջականորեն իրականանում է միայն գալիք դարում: Նրա համար, ով սեր է ձեռք բերել, «Խավարն անցնում է և ճշմարիտ լույսն արդեն իսկ լուսավորում է» (Ա Հովհ. Բ 8), ինչպես այդ մասին Սուրբ Հովհաննես Աստվածաբանն է ասում:

Աստվածային լույսն այստեղ՝ երկրի վրա, ժամանակի մեջ է հայտնվում: Այն բացահայտվում է պատմության մեջ, բայց այն այս աշխարհից չէ, այն հավիտենական է և նշանակում է եղ՝ պատմական կյանքից: Սա «Ութերորդ օրվա» խորհուրդն է, ճշմարիտ ճանաչողության խորհուրդը, «Գնոսիսի» կատարելությունը, որի ամբողջությունը չի կարող խառնված լինել այս աշխարհով նախքան նրա վախճանը: Սա երկրորդ գալստյան սկիզբն է, երկրորդ գալուստը սուրբ հոգիներում, վերջնական հայտնության սկիզբը, երբ Աստված հայտնվում է բոլորին Իր անմատչելի լույսի մեջ: Ահա թե ինչու, ըստ Սիմեոն Նոր Աստվածաբանի, նրանց համար, «ովքեր լույսի որդիներ և գալիք օրվա զավակներ են դարձել և միշտ կարող են ինչպես ցերեկով բարեպաշտորեն քայլել, նրանց համար երբեք չի գա Տիրոջ օրը, քանի որ նրանք միշտ Նրա հետ են և Նրա մեջ են: Քանզի Աստծու օրը նրանց համար չի հայտնվում, ովքեր արդեն լուսավորվում են Աստվածային լույսով, այլ այն հանկարծակիորեն նրանց մեջ է հայտնվում, ովքեր կրքերի խավարում են գտնվում, աշխարհում ըստ աշխարհի են ապրում և սիրում են այս աշխարհի փառքը. նրանց համար

---

[22] Ճառ 90-րդ, Ռուսերեն թրատ. Աֆոնսկի Պանտելեիմոնի վանքի, հատոր II, էջ 488-489:

[23] Հագիորիտիկ տոմար: PG, t. 150, coll 1225-1227.

անսպասելիորեն է հայտնվում, հանկարծակի, և նրանց երկյուղալից է թվում ինչպես անհանդուրժելի ու անտանելի կրակը»[24]:

Աստվածային լույսը մեր գիտակցության հիմքն է դառնում, նրանում մենք ճանաչում ենք Աստծուն և ճանաչում ենք ինքներս մեզ: Այն Աստծու հետ միության մեջ մտնող մեր Էության խորքն է թափանցում, որը նրա համար Աստծու դատաստան է դառնում նախքան աշխարհ դատաստանը: Քանզի, ըստ Սուրբ Սիմեոնի, երկու դատաստան կա. մեկը կատարվում է այստեղ՝ երկրի վրա, այս դատաստանն ի նկատի ունի փրկությունը, մյուսը՝ աշխարհի վախճանին, որը դատապարտության դատաստանն է. «Իրական կյանքում, երբ ապաշխարության շնորհիվ մենք ազատորեն և կամովին Աստվածային լույսի մեջ ենք մտնում, մենք մեղադրված ու դատապարտված ենք լինում, սակայն Աստվածային սիրով ու ողորմածությամբ այդ մեղադրանքն ու դատաստանը գաղտնաբար պիտի տեղի ունենա մեր հոգիների խորքերում, մեր սրբագործման ու մեղքերի թողության համար: Այն ժամանակ միայն Աստված ու մենք ենք տեսնում մեր սրտերի ծածկված խորությունները: Նրանք, ովքեր իրական կյանում նմանատիպ դատաստանի են ենթարկվում, ուրիշ փորձությունից կարող են չվախենալ: Իսկ նրանց համար, որ չեն ցանկանում դեռ այստեղ՝ երկրի վրա լույսի մեջ մտնել, որպեսզի մեղադրված ու դատապարտված չլինեն, ով ատում է լույսը, Քրիստոսի երկրորդ գալուստը հայտնում է այժմ ծածկված լույսը և բացահայտ է դարձնում այն ամենը, ինչ մինչ այդ գաղտնիք էր մնում: Այն ամենը, ինչ մենք հիմա թաքցնում ենք՝ չկամենալով հայտնել մեր սրտերի խորքերի ապաշխարությամբ, այն ժամանակ կհայտնվի լույսի մեջ, Աստծու դեմ դիմաց, ամբողջ տիեզերքի առջև, և այն, ինչ իրականում մենք մեզանից ներկայացնում ենք, բացահայտ կդառնա»[25]:

Բոլորի մոտ Աստվածային լույսի մեջ ամբողջական գիտակցությունը Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ կբացահայտվի: Սակայն դա շնորհի մեջ ազատակամորեն բացահայտվող, Աստծու կամքի հետ համաձայնության մեջ եղող գիտակցություն չի լինի, դա ներմուծված գիտակցություն է, այսպես ասած՝ դրսից, անհատականության մեջ՝ նրա կամքից անկախ բացահայտվող, ենթադրաբար մարդկային Էությունների հետ միավորվող լույս, այսինքն՝ ըստ Սուրբ Մաքսիմիանոս Խոստովանողի՝ «շնորհից դուրս»: Աստվածային լույսն անտանելի տանջանք կդառնա նրա համար, ով այն իր ներսում ձեռք չի բերել: Ըստ Սուրբ Եփրեմ Ասորու՝ «գեհենում տանջվողները սիրո խարազանին են ենթարկվում: Եվ որքա՜ն դառն ու դաժան է այդ սիրո տառապանքը: Քանզի նրանք, ովքեր զգում են, որ իրենք մեղանչել են սիրո դեմ, տառապանքի երկյուղ ծնող ցանկացած բանից առավել տանջանքներ են կրում, սիրո դեմ մեղանչելու համար ցանկացած հնարավոր պատժից ավելի սարսափելի սիրտը խոցող տրտմություն: Որևէ մեկին վայել չէ այն միտքը, որ մեղավորները գեհենում Աստծու սիրուց զրկվում են... Այլ սերն իր զորությամբ երկակիորեն

---

[24] Ժաո 57, 2. Ռուսերեն հրատ. Աֆոնսկի Պանտելեիմոնի վանքի, հատոր II, էջ 37:

[25] Նույն տեղում:

է ներգործում. այն տանջում է մեղավորներին... Եվ իրենով ուրախացնում է իրենց պարտականությունները կատարողներին»[26]:

Մեռելներից հարությունն ինքնին մարդկային էության վիճակի համար հայտնություն կլինի, քանզի մարմնի միջից կթափանցեն հոգու խորհուրդները: Իր վախճանաբանական նախախնամության աստվածաբանության մեջ Սուրբ Մակար Եգիպտացին հետևյալ ձևով է արտահայտում այս միտքը. «Աստվածության այդ երկնային կրակը, որը քրիստոնյաները դեռ այժմ, վեցերորդ դարում, իրենց ներսում սրտում են ընդունում, նրանց սրտի ներսում է ներգործում, երբ կործանվի մարմինը, դրսից կսկսի ներգործել և կրկին կկցորդի մարմնի անդամները՝ կործանված մարմնի անդամների հարությունն իրականացնելով»[27]: Այդ ժամանակ այն ամենը, ինչ հոգին կուտակել է իր ներքին գանձարանում, մարմնի մեջ արտաքինից կհայտնվի: Ամեն ինչ լույս է դառնալու, ամեն ինչ անստեղծ լույսով է ներթափանցելու: Սրբերի մարմինները Փրկչի փառավոր մարմնին են նմանվելու, որպիսին այն հայտնվեց առաքյալներին պայծառակերպության օրը: Աստված լինելու է «ամեն ինչ ամեն բանի մեջ», և Աստծու շնորհը, իբրև Ամենասուրբ Երրորդության լույս, փայլելու է մարդկային բազում առանձնավորությունների մեջ, բոլոր նրանց մեջ, ովքեր ձեռք են բերել այն, նրանք իբրև նոր արեգակներ Հոր Արքայության մեջ Որդու՝ Լույսի Պարգևատուի նման են դառնալու՝ Սուրբ Հոգով պայծառակերպված: «Իր Ամենասուրբ Հոգու շնորհը,- ասում է Սուրբ Սիմեոն Նոր Աստվածաբանը,- առաքյալների վրա իբրև լուսատու է փայլելու, և նրանց մեջ Դու ես փայլելու, Դու, անմատչելի արեգակ: Այդ ժամանակ նրանք բոլորն էլ Քո Հոգով լուսավորվելու են՝ իրենց հավատքի ու գործերի, իրենց հույսի և իրենց սիրո չափով, Քո ողորմության մեջ անսահման, ով Աստված»:

Երկրորդ գալստյան ժամանակ և վերջին ժամանակների լրումին աշխարհի ամբողջությունը Աստծու հետ կատարյալ միության մեջ է մտնելու: Այդ միությունը լինելու է Եկեղեցում՝ Սուրբ Հոգու շնորհը ձեռք բերած յուրաքանչյուր մարդկային անհատականության մեջ, յուրահատուկ կերպով է հայտնվելու: Բայց որտեղով են անցնում Եկեղեցու սահմանները մահվանից անդին, և ինչպիսին է նրանց փրկության հնարավորությունը, ովքեր այս կյանքում չեն ճանաչել լույսը, դա մեզ համար Աստվածային գթասրտության գաղտնիքն է մնում, որը մենք չենք համարձակվում քննել, բայց որը մենք չենք էլ կարող սահմանափակել մեր մարդկային չափանիշներով:

Ռուսերենից թարգմանեց

ԱՐՄԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐՈՅԱՆԸ

---

[26] Ռուսերեն թարգմ., էջ 76:

[27] Հոգևոր զրույցներ, XI, 1:PG, t. 34, col. 544 D (Ռուսերեն թարգմ., էջ 110):

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

Ռ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Մոտենում է նշանավոր տարեդարձի հոբելյանը՝ 2001 թ. աշնանը Հայաստանը և նրա հետ միասին ամբողջ քրիստոնյա աշխարհը նշելու են Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ճանաչելու 1700-ամյակը:

301 թ. Արշակունյաց Հայաստանը, Տրդատ Գ թագավորի օրոք, պաշտոնապես ընդունեց քրիստոնեությունը որպես պետական գաղափարախոսություն և պետական կրոն: Հայ Եկեղեցու առաջին կաթողիկոսը դարձավ Գրիգոր Պարթևը, որը կոչվեց «Լուսավորիչ». Հայ Եկեղեցին հանդիսանում է առաքելական, որովհետև մեր երկրում քրիստոնեության տարածողներն էին առաքյալներ (Քրիստոսի աշակերտներ) Թադեոսն ու Բարդուղիմեոսը:

Նոր կրոնի տարածումը, թագավորի, նրա ընտանիքի, նախարարների և ամբողջ ժողովրդի օծումը, եկեղեցիների կառուցումը, այդ թվում և Մայր Տաճարի, մանրամասն շարադրված են 5-րդ դ. պատմիչ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ և հանրահայտ են:

Բայց Գրիգորը քարոզությունը տարածել է ոչ միայն Հայաստանում, այլ նաև ամբողջ Կովկասում՝ Վիրքում, Աբխազիայում, Աղվանքում և Հյուսիսային Կովկասում: Այդ մասին հաղորդում են Ագաթանգեղոսի «Պատմության» հայկական, հունական և արաբական խմբագրությունները, ընդ որում օտարալեզու խմբագրությունները հայտնի են գիտական հասարակությանը շատ վաղուց. հունական խմբագրությունը հայտնաբերվել և լույս է տեսել դեռևս XVIII դ., քննական հրա-

տարակությունը՝ 1887 (հրատարակիչ՝ Լագարդ)[1] , իսկ արաբականը հրատարակվել է զուգահեռ ռուսերեն թարգմանությամբ Ն. Մառի կողմից 1905 թ.[2]:

Արաբական խմբագրությունը Ն. Մառը կազմած բնագրից թարգմանել է հայերեն և տպագրել 1910 թ. «Արարատ» հանդեսում[3]:

Գոյություն ունեն նաև վրացերեն, եթովպերեն և այլ խմբագրություններ:

Հայերեն, հունարեն և արաբերեն երեք խմբագրությունների տվյալները լրացնում են միմյանց և հստակ ներկայացնում ամբողջ Անդրկովկասում (Վիրք, Աղվանք, Աբխազիա, Հյուսիսային Կովկաս) քրիստոնեության տարածման, եկեղեցիների կառուցման գործընթացը, որը կատարվել է Գրիգոր Լուսավորչի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ:

Պետք է նշել, որ նշված երեք խմբագրությունների բնագրերը տարբերվում են Լուսավորչի գործունեության մանրամասներով: Հայկական խմբագրությունը Գրիգորի գործունեությունը ներկայացնում է ամփոփ՝ Հայաստանում, Միջագետքի հյուսիսային շրջաններում և Անդրկովկասի տարածաշրջանում: Այստեղ նոր կրոնի քարոզիչներ ուղարկելու մասին ասված է.

«Այսպես ամբողջ Հայոց երկրում, ծայրից ծայր, ջանաց, սփռեց, տարածեց քարոզության ու ավետարանության գործը՝ Սատաղացիների քաղաքից մինչև Խաղտեաց երկիրը, Կղարջքի մոտ, ընդհուպ մինչև Մասքութների սահմանները, մինչև Ալանաց դուռը, Կասպից սահմանները և Հայոց թագավորության Փայտակարան քաղաքը, Ամիդ քաղաքից մինչև Մծբին քաղաքը, անցնելով Ասորիքի սահմանները, Նոր Շիրական երկիրը, Կորդուք գավառը մինչև Մարաց ամուր աշխարհը, մինչև Մահքր-տուն իշխանի երկիրը և Ատրպատական՝ սփռում, տարածում էր իր ավետարանական գործը»[4]:

Արաբական խմբագրությունը, հակառակը, թվարկում է Անդրկովկասի առանձին երկրները՝ նշելով երկրանունները:

Արաբական խմբագրության մեջ նախ ասված է, որ Տրդատ թագավորը Գրիգորի քարոզությունից դառնալով հավատացյալ քրիստոնյա, իր մոտ է կանչում նախարարներին, առաջնորդներին, իշխաններին, ապա թուղթ ուղարկում Վրաց, Աբխազաց և Ալանաց արքաներին «... զի գայցէք առ իս վաղվաղակի»:

---

[1] Տե՛ս Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), թարգմանություն հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, «Էջմիածին», 1966, Է, էջ 28:

[2] Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием, (Арабская версия), С.-Петербург, 1905.

[3] Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց եւ Ալանաց: Արաբական վերսիա: Պրոֆ. Ն. Մառի ռուս. հրատարակությունից, թարգ.՝ Հուսիկ արքեպիսկոպոս.: Տե՛ս «Արարատ», 1910 և առանձին գրքով, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1911, Էջմիածին:

[4] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմանություն, մերձակայքով ու ծանոթագրություններով՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1977, էջ 139, § 842:

Երբ բոլորը հավաքվում են, Տրդատը հրամայում է կործանել մեհյանները, ինքն առաջինը քանդում է Արտաշատի հեթանոսական տաճարը, ապա մյուս տաճարները. «այսպէս արարին եւ յերկրին Լազաց, Վրաց եւ Ալանաց»[5]:

Այնուհետև պատմվում է, որ Տրդատ թագավորը, լսելով Գրիգորի վերադարձը Կեսարիայից, իր կնոջ՝ Աշխենի, խոսրովիդուխտ քրոջ, իշխանների, տերերի, ժողովրդի հետ գնաց ընդառաջ Գրիգորին, նրա հետ էին նաև «զթագաւորն վրաց, զթագաւորն ռուսաց (վրիպակ է - Ռ. Մ.), զթագաւորն ալանաց»:

Նրանք հասնում են Եփրատ գետի ափ, Բագավան քաղաքի մոտ, դնում վրաններ, որից հետո Գրիգորը հրամայում է բոլորին մտնել ջուրը: Առաջինը մտան «Տրդատայ եւ ընդ նմին երից թագաւորաց եւ իշխանացն նորին (Տրդատայ) եւ սրբեաց զնոսա միտոնաւ եւ խաչիւ»[6]:

Երբ նրանք դուրս եկան ջրից, Գրիգորը բոլորին ներս բերեց Բագավանի եկեղեցի, կատարվեց Պատարագ «եւ հաղորդեաց (մարմնով եւ արեամ Տեառն) զարքայն, զիշխանս նորա եւ զայլ մարդիկ եւ արձակեաց զնոսա յիւրաքանչիւր տեղիս ուրախ եւ բերկրեալս...»[7]:

Դրանից հետո Գրիգորը Հայաստանի և մյուս երկրների համար պատրաստում է եկեղեցու սպասավորներ:

Դեռևս Կեսարիայից Հայաստան ժամանելիս, Գրիգորը կառուցել էր Բագավանի եկեղեցին և կարգել քահանաներ նրանցից, ովքեր հմուտ էին Սուրբ Գրքին: Դրանցից «զոմանս առաքեաց ի Վրաստան, զոմանս՝ յերկիրն աբխազաց և զոմանս՝ առ ալանս»[8]:

Իսկ մկրտելուց հետո Գրիգորը պատրաստում է եպիսկոպոսներ «ընդ ամենայն երկիրն Հայոց, ի Վրաստան եւ ի կողմանս «դ - ր - զ - կ - ի - տ» եւ յալանս: Եւ էառ զմի ի վրաց անտի, որ եկեալ էր ընդ նմա ի Սեբաստիոյ իբիր - բ - զ - խ - ուա, արար մետրոպոլիտ եւ յղեաց՝ զի կարգեսցէ նա եպիսկոպոսունս ի վերայ ամենայն Վրաստանի... Եւ յղեաց յաշխարհն աբխազաց զՍոփրոնոս, եւ էր նա քահանայ ի Կապադովկիայէ... Եւ յղեաց ի կողմանս ալանաց զԹովմաս զայրն ընտիր... Եւ էին սոքա յայնոցուսնց, որք ընդ նմա (Գրիգորի) եկին (ի Սեբաստիայէ) եւ էին տեղեակք Սուրբ Գրոց»[9]:

Նույն տեղեկությունները հաղորդում է հունարեն խմբագրությունը: Այնտեղ նշվում է, որ Ս. Գրիգորը քաջածանոթ մարդկանց քահանա նշանակեց, ոմանց ուղարկեց Վրաց և Լազերի երկիրը, ուրիշներին՝ Աղվանք: Նախ՝ Արածանի գետում Գրի-

---

[5] Տե՛ս «Արարատ», 1910, հուլիս, էջ 48, օգոստոս, էջ 49, 52:

[6] Նույնը, սեպտեմբեր, էջ 67:

[7] Նույնը, էջ 69-70:

[8] Նույնը, էջ 68:

[9] «Արարատ», սեպտեմբեր, էջ 70-71:

գորը մկրտեց երեսունյոթ բյուր մարդ, նրանց թվում էին Տրդատը, լազերի, վրաց և աղվանից թագավորները, այլ մեծամեծներ[10]:

Ապա Կովկասի երկրներ եպիսկոպոսներ ուղարկեց՝ Լազերի երկիրը կապադովկիացի Սոփրոնեսին, Աղվանք՝ Թովմային, Սատաղ քաղաքից[11]:

Վրացական խմբագրությունը լռում է վրաց, աբխազաց և մյուս կովկասյան թագավորներին Եփրատում մկրտելու, նրանց երկրները Գրիգորի կողմից քարոզիչներ և եպիսկոպոսներ ուղարկելու մասին, կովկասյան երկրներից հիշատակում է միայն հոներին, բայց հիշատակում է նաև Պարսկաստանը, Ասորեստանը և Մարաստանը՝ «Այսպես արդեն նրա կենաց քարոզը ոչ միայն Հայաստանը բովանդակեց, այլ նաև Պարսկաստանը, Ասորեստանը, Մարաստանը և որ՝ Հոներ են կոչվում: Այս բոլորից բազում ժողովուրդներ Քրիստոսի քաղցր լծի բերեց...»[12]:

Վրաց խմբագրության լռությունը բացատրվում է միտումնավորությամբ՝ վրաց թարգմանչի սուբյեկտիվ տրամադրությամբ, ինչի մասին ժամանակին նշել է Լ. Մելիքսեթ-բեկը[13]:

Վրաստանն ու Աբխազիան, Լազերի երկիրը չի հիշատակում նաև Ագաթանգեղոսի հրատարակած հայերեն խմբագրությունը, ինչպես նշվեց վերը: Բայց, Ն. Մառի ճիշտ կռահումով, կար ժամանակ, որ վրացիների դարձը Գրիգոր Լուսավորչի ձեռքով նշված է եղել նաև Ագաթանգեղոսի մոտ: Այդ մասին հաղորդում է Մովսես Խորենացին՝ վկայակոչելով Ագաթանգեղոսին (Պատմ. Հայոց, 3, 86):

Ն. Մառը գրում է, որ ըստ Ագաթանգեղոսի Գրիգորի գործունեության ոլորտը ընդգրկում էր նաև Ս. Նունեի քարոզության շրջանը (Վիրքը), բայց այդ հատվածը ավելի ուշ դուրս է մնացել Ագաթանգեղոսի երկից[14]:

Ն. Մառի կռահումը հաստատվեց, երբ արաբագետ Ա. Տեր-Ղևոնդյանը Ագաթանգեղոսի պատմության 17-րդ դ. ընդօրինակության մեջ գտավ Ս. Նունեի քարոզության հատվածը, որը համապատասխանում է Մ. Խորենացու «Պատմության» նշված հատվածին[15]:

Մյուս հայ պատմիչները, ավելի ուշ ժամանակաշրջանում, ևս ունեն վկայություններ վրացիների դարձի մասին Գրիգորի ձեռքով: Նրանց հաղորդմամբ Վրաց Եկեղեցու առաջնորդներ նշանակվում էին Գրիգոր Լուսավորչի ազգակիցները:

---

[10] Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը, «Էջմիածին», 1966, Թ-Ժ, էջ 84, § 163, 164:

[11] «Էջմիածին», 1966, Թ-Ժ, էջ 85, § 170:

[12] Տե՛ս Գ. Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 213:

[13] Տե՛ս Л. Меликсет-бек, Грузинская версия Агафангела и ее значение для грузинской историографии, "Христианский Восток", 1915, IV, стр. 165, 166.

[14] Н. Марр, Крещение..., стр. 175.

[15] Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագիր № 6632, էջ 38-40: Հմմտ. Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Եր., 1968, էջ 33, ծան. 1:

Այսպես, Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Գրիգորը իր որդուն՝ Արիստակեսին նշանակեց եպիսկոպոսապետ Հայոց, Վրաց և Աղվանից[16]:

Հաջորդ Վրաց և Աղվանից կաթողիկոսն էր Գրիգորի թոռ, Վրթանես կաթողիկոսի որդի Գրիգորիսը: Սա չամուսնացավ, գրում է V դ. պատմիչ Փավստոս Բուզանդը, և արդեն տասնհինգ տարեկան հասակում հասավ եպիսկոպոսական աստիճանի Վրաց և Աղվանից աշխարհների վրա, այսինքն մասքութների սահմաններ: Այստեղ նա եկեղեցիները նորոգեց՝ նմանվելով իր պապին: Աղվանքում էլ զոհվեց խավարամոլ ամբոխի ձեռքով[17]:

Գրիգոր Լուսավորչի՝ վրաց եպիսկոպոսապետեր ձեռնադրելու հաստատված կարգը շարունակվեց հետագայում: Ներսես Ա Մեծը «... գլխատրս արքեպիսկոպոսացն Վրաց և Աղուանից՝ արքեպիսկոպոս ընդ ձեռամբ նորա կարգեալ»[18]:

Այս վկայությունն ունի իր զուգահեռը վրաց աղբյուրում: Վրաց պատմիչ Ջուանշերը գրում է՝ «Եւ զկնի Ցովհաննիսի եպիսկոպոսին՝ եղեւ եպիսկոպոս Ցակոբ, եւ յետ նորա՝ Ներսէս Կաթողիկոսն Հայոց՝ ձեռնադրեաց զսարկաւագն իւր զՑակոբ՝ եպիսկոպոս Վրաց եւ առաքեաց»[19]:

Գրիգոր Լուսավորչի՝ Վիրքի քրիստոնեացման փաստը հստակ նշել է նաև IX դ. վրաց կաթողիկոս Արսեն Սափարացին, որը գրել է հատուկ աշխատություն VII դ. սկզբին տեղի ունեցած Հայոց և Վրաց Եկեղեցիների բաժանման մասին:

Արսեն Կաթողիկոսը գրում է, որ մեծ վեճ ծագեց Հայոց (Սոմխիթի) և Վրաց (Քարթլիի) միջև: Վրացիք ասում էին, «Սուրբ Գրիգորը Հունաստանից բերել տվեց մեզ (այն) հավատը, որը՝ իբրև նրա սուրբ դավանություն՝ դուք թողեցիք և ենթարկվեցիք Աբդիշո Ասորվույն և այլ չար հերձվածողներին... չհնազանդվեցիք Սուրբ Գրիգորի դավանությանը..., և ամբողջ Քարթլին և Չորրորդ Հայքը (Սոմխիթը) հրաժարվեցին հայերից քահանայական ձեռնադրություն առնելուց»[20]:

Այս տողերում ուղղակիորեն հաստատված է այն փաստը, որ վրացիներին հավատը տվել է Գրիգորը (մեղադրանքը, որ հայերը հրաժարվեցին Գրիգորի սուրբ դավանանքից՝ ոչ մի արժեք չունի):

Վրաց Եկեղեցու կապը և կախումը Հայ Եկեղեցուց տևեց մինչև VII դ. սկիզբը և խզվեց վրաց Կյուրիոն Կաթողիկոսի ըմբոստությամբ: Խզման պատմությունը մանրամասն շարադրել է X դ. պատմիչ Ուխտանեսը: Նրա երկը այդպես էլ կոչվում է՝ «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց»:

---

[16] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 12:

[17] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմութիւն, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանի, Եր., 1987, էջ 21: Նաև էջ 25, 27:

[18] Ցովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1912, էջ 48:

[19] Ջուանշէր, Համառօտ պատմութիւն Վրաց, Վենետիկ, 1884, էջ 70:

[20] Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, հ. Ա., Եր., 1934, էջ 37, 39:

Կյուրիոնը նախապես եղել է Դվինի կաթողիկե վանքի երեցը. Հայոց Մովսես Եղվարդեցի Կաթողիկոսը (574-604) նրան «ձեռնադրէ յարքեպիսկոպոսութիւն Վրաց նահանգին եւ Գուգարաց եւ Եգերացւոց՝ ըստ օրինակի կարգացն առաջնոց»: Սակայն Մովսեսի աթոռակալության վերջում Կյուրիոնը հեռացավ «զճշմարիտ կարգաց եւ զկրօնից... զոր ի Հարցն մերոց՝ ուղղափառաց աշակերտեալ էին կողմանքն այնոքիկ միտէր զհեր... ժողովոյն Քաղկեդոնի, զկնի փառամոլ ամբարհաւաճութեանն իւրոյ, ձգեալ դաւաճանեալ զնախահարս աշխարհին»[21]:

Մովսես Կաթողիկոսը բազում անգամ փորձեց խրատել և համոզել նրան վերադառնալ «ի ճշմարիտ գիտութիւնն ըստ հարցն սրբոց դաւանութեան», բայց Կյուրիոնը չենթարկվեց: Վերջնական խզումը տեղի ունեցավ Մովսեսի հաջորդ Աբրահամ Ա Աղբաթանեցի Կաթողիկոսի օրոք: Աբրահամը իր հերթին փորձեց համոզել Կյուրիոնին, բայց ապարդյուն, որից հետո, Դրասխանակերտցին գրում է, որ Կյուրիոնը «մարդադաւան տօմարն Լեւոնի փոխանակէին ընդ առաքելական աւանդից երիցս երանեալ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, որ եբաց նոցա զդուռն լուսոյ ճշմարիտ աստուածգիտութեան...»: Աբրահամը Դվինում ժողով հրավիրեց, որը նզովեց «զԿիւրիոն զպառակտիչն եկեղեցւոյ Քրիստոսի»[22]:

Ուխտանեսն իր հերթին գրում է, որ Աբրահամ Կաթողիկոսի ժամանակ «բաժանումն Վրաց ի միաբանութենէ Հայոց ի ձեռն Կիւրիոնի Վրաց առաջնորդի... փոխեալ զօրէնս սրբոց հարցն, եւ մոռացեալ զուխտն աստուածեղէն»[23]:

Խզմանը նախորդել են խիստ վիճաբանություններ և գրագրություն, որը զետեղված է Ուխտանեսի երկում ու «Գիրք թղթոց» ժողովածուում[24]:

Խզումը տեղի է ունեցել 606 (607) թ., երբ այլևս վրաց եպիսկոպոսները չէին ձեռնադրվում Հայոց Կաթողիկոսից. «եւ յայնմ հետէ բարձաւ ձեռնադրութիւնն վրաց՝ որ ի հայոց, զի սկսան նոքա զյունոք թեւակոխիլ»[25]:

Վրաց և Հայոց եկեղեցիների խզման պարագաներին մանրամասն անդրադարձել են եկեղեցու պատմաբան Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը և հայր Ներսես Ակինյանը[26]:

Գրիգոր Լուսավորչի ավետարանական քարոզությունը Վիրքում, Աղվանքում և Հյուսիսային Կովկասում անհերքելի փաստ է. այդ մասին, բացի հայ աղբյուրներից, հաղորդում են նաև օտար մատենագիրները:

---

21 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 65, 66:

22 Նույն տեղում, էջ 71,72:

23 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, Հատված երկրորդ՝ «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», էջ 3:

24 Թիֆլիս, 1901:

25 Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմութիւն, էջ 46:

26 Տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, հ. 1, Կ. Պոլիս, 1912, §§ 395, 396, 403, 404,421, 422: Ն. Ակինյան, Կյուրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910:

Այսպես, VI դ. ասորի Անանուն պատմիչը, իր պատմագրական երկը գրելիս, առատորեն օգտվել է ասորի Զաքարիա Մելիտինացու հունարեն գրված «Ժամանակագրությունից», որի բնագիրը մեզ չի հասել: Անանունի գրվածը հրատարակվել է որպես Զաքարիա Հռետորի երկ: Նրանում կան արժեքավոր տեղեկություններ մեզ զբաղեցնող հարցի վերաբերյալ:

12-րդ գրքի Է գլուխը վերնագրված է՝ «Աշխարհի քարտեզի մասին, որը ջանասիրությամբ պատրաստեց Եգիպտոսի Պտղոմեոս Փիլոմետորը»:

Հեղինակը գրում է, որ «Պտղոմեոսի աշխարհագրության (վերը) նշված սարմատներից, սկյութացիներից, սերիկներից բացի, այս հյուսիսային շրջանում կան հինգ հավատացյալ ժողովուրդներ, որոնք ունեն քսանչորս եպիսկոպոս և իրենց կաթողիկոսը Դվինում է՝ Պարսկական Հայաստանի գլխավոր քաղաքում (մայրաքաղաքում): Իրենց (առաջին) կաթողիկոսի անունը Գրիգոր էր, արդար և հայտնի մի մարդ:

Ապա Գուրզանը (Վիրք՝ Ռ. Մ.) Հայաստանում մի երկիր, և իր լեզուն հունարենի նման է և ունի քրիստոնյա թագավոր, որը ենթարկվում է Պարսկաստանի արքային:

Ապա Առան երկիրը Հայաստան աշխարհում, իր լեզվով, հավատացյալ ու մկրտված մի ժողովուրդ, և ունի իր թագավորը, որը հպատակ է Պարսկաստանի արքային»:

Հոների երկրում, նույն աղբյուրը հիշատակում է Մակար (Մակու) անունով հայ եպիսկոպոս, որը եկեղեցի էր կառուցել այդ երկրում:

Վրաստանն ու Աղվանքը Հայաստանի կազմում ներկայացնելը պատմիչի կողմից, «Ժամանակագրության» թարգմանիչ, Հ. Մելքոնյանի ճիշտ բացատրությամբ, արդյունք էր այդ երեք երկրները, որպես եկեղեցական մեկ միավորի, ամբողջության ընկալման[27]:

V դ. հույն պատմիչ Սոզոմենոսը գրել է «Եկեղեցական պատմություն» երկը: Հայերի հարևան ժողովուրդների դարձի մասին նա գրում է. «Լուսաք, եթէ Հայք վաղ իսկ յառաջագոյն եղեն քրիստոնեայք: Զի ասի, եթէ Տրդատ թագաւորն այնր (Հայոց) ազգի՝ աստուածանշան իմն սքանչելեօք, որ եկին հասին ի վերայ տան իւրոյ. նախ ինքն լինէր քրիստոնեայ եւ ապա արձակէր քարոզս տուեալ հրամանն ամենայն հպատակելոց իւրոց նոյնպէս աստուածապաշտս գտանել: Յետ այնորիկ աստուածախօս վարդապետութիւնս առ դրացի ազգս տարածեցաւ եւ աճեաց մեծապէս»[28].

---

[27] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Ասորական աղբյուրներ: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Մելքոնյանի, Զաքարիա Միտիլենացու (Հռետոր) «Ժամանակագրությունը», Երևան, 1976, 12-րդ գրքի Է գլուխ, էջ 313, 314, 316: Նույնը ռուսերեն՝ Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, Москва-Ленинград, 1941, стр. 165, 166.

[28] Sozomeni, Hist. eccl., II, 8, 1.: Տե՛ս Ն. Ակինյանի հոդվածը՝ Քրիստոնեության մուտքը Հայաստան և Վրաստան ըստ ավանդության Բակուր իշխանի, «Հանդէս ամսօրեայ», 1947, 8-9, էջ 430: Տե՛ս նաև՝ Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 130:

Այսպիսով, կան նաև օտար հեղինակներ, որոնք հաստատում են Հայ Եկեղեցու առաքելական քարոզությունը Հայաստանի հարևան երկրներում: Նրանք կասկածում, որ եթե կատարվի հատուկ հետազոտություն, ապա կհայտնվեն նշված իրողությունը հաստատող նոր օտար մատենագիրներ:

Հակառակ պատմական իրողության, հայ և ոչ հայ սկզբնաղբյուրների տվյալների, վերջին շրջանում փորձեր են արվում ժխտելու Վրաց Եկեղեցու կապը Հայ Եկեղեցու հետ, մերժել Գրիգոր Լուսավորչի առաքելությունը Վիրքում և Անդրկովկասի մյուս երկրներում[29]: Ավելին՝ այս տարի, ամռանը, Վրաստանում նշվեց Վրաստանի քրիստոնեացման 1700-ամյակը՝ Հայաստանից մեկ տարի առաջ:

Այդ փորձերը ապարդյուն են, ոչ ոք չի կարող ժխտել Գրիգոր Լուսավորչի մեծագույն դերը Անդրկովկասյան երկրների քրիստոնեացման գործում:

[29] Տե՛ս Н. Апциаури, К вопросу о миссионерской деятельности св. Григория Просветителя, "Христианский Восток", Новая серия, Санкт-Петербург-Москва, 1999, стр. 289-295.

ԷՄՄԱ ԱԾՈՏԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ

19-րդ դարի երկրորդ կեսին հայ հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքում կային գործիչներ, դեմքեր, անձնավորություններ, որոնք իրենցով խորհրդանշում էին մի ողջ ժամանակաշրջան: Այդ անձնավորությունների շարքում առանձնահատուկ տեղ ունի Մկրտիչ Խրիմյանը՝ վարժապետ, վարդապետ, Հայաստանի տարածքի առաջին պարբերականի խմբագիր, վանահայր, հոգևոր առաջնորդ, եպիսկոպոս, Կ. Պոլսի հայոց Պատրիարք, Բեռլինի վեհաժողովի հայ պատվիրակության ղեկավար, Ազգային ժողովի երեսփոխան, Կրոնական ժողովի ատենապետ, քաղաքականապես անբարեհույս անձնավորություն Բ. Դռան աչքում և այդ իսկ պատճառով Երուսաղեմի աքսորյալ, ապա՝ համազգային ընտրությամբ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Դա համառոտ թվարկումն է այն ամենի, ինչ կատարել է կամ ինչպես հանդես է եկել Մկրտիչ Խրիմյանը, գործի բերմամբ իսկ դառնալով հանուր հայության իղձերի արտահայտիչ: Այդ իսկ պատճառով Խրիմյանի ապրած ժամանակաշրջանում չկար որևէ համազգային նշանակություն ունեցող ձեռնարկում կամ հաստատություն, որի հետ ինչ-որ չափով չառնչվեր Խրիմյանի գործունեությունը: Իսկ Մխիթարյան միաբանությունն այն հաստատությունն է, որ դեռևս 18-րդ դարի սկզբից ծավալեց իր գործունեությունը լուսավորական, գիտա-հրատարակչական այնպիսի բնագավառներում, որ ձեռք բերեց համազգային նշանակություն, ճանաչում և հարգանք: Միաբանության հսկայածավալ գործունեությունը չէր կարող վրիպել հասարակական գործունեության ասպարեզում իր առաջին քայլերն անող Խրիմյանի տեսադաշտից: Դեռ պատանի, ուսման անհագ տենչը սրտում, հիասթափված Լիմ և Կտուց անապատների վանական դպրոցների կրթական մակարդակից, նա երազում էր ուսանել Եվրոպայում, Ս. Ղազար կղզու ուսումնական հաստատությունում: Միջոցների պակասը, սակայն, անկատար թողեց նրա իղձի իրականացումը: Հետագայում, Կ. Պոլսում ինքնակրթությամբ իր մտավոր կարողությունների զարգացմանը ձեռնամուխ եղած Խրիմյանը վարժապետություն էր անում, ակնդետ հետևում գրական, գիտական նոր հրատարակություններին, ազահորեն կլանում հայ պարբերականներում լույս տեսած գրական-գեղարվեստական, պատմագիտական, առանձնապես հայագիտական հոդվածները: 1843-ից Ս. Ղազարում հրատարակվող «Բազմավեպը» Խրիմյանի ամենասիրած պարբերականնե-

րից էր, իսկ այն հրատարակող միաբանությունը վայելում էր վերջինիս հարգանքն ու ակնածանքը: Բայց Խրիմյանը դրանով չէր բավարարվում: Նա նամակագրական կապ է հաստատում «Բազմավեպի» խմբագրության հետ: 1849-ին վարժապետ Խրիմյանն ամսագրին ուղարկում է նամակ և բանաստեղծություն: Ամսագրի խմբագիրն այդ ժամանակ Ղևոնդ Ալիշանն էր. նա ամսագրի ընթերցողներին համառոտ տեղեկություն է տալիս Խրիմյանի անձի և նրա ուղարկած բանաստեղծության մասին, ապա հրապարակում այն: Բանաստեղծությունը նվիրված էր Վիրգիլիոսի «Մշակականք»-ի հայ թարգմանչին՝ հայր Արսեն Բագրատունուն, որը թարգմանությունը կատարել էր՝ վերականգնելով հին հայկական տաղաչափությունը, նաև այդ տաղաչափությամբ գրել սեփական՝ «Հայկ դյուցազն» պոեմը: Ալիշանը հրատարակում է իր իսկ խոսքերով այդ «տնանավոր գովեստը» և խոստանում հրատարակել Խրիմյանի մյուս քերթվածները, որոնք «կը յուսամք, թէ պատիւ ընեն իրեն եւ իր հանճարաշատ հայրենակցաց վանեցւոց եւ հորդոր համազգի պատանեաց՝ հայրենական դպրութեան նախանձախնդիր ըլլալու»[1]: Բանաստեղծության մեջ հեղինակը գովերգում է հայր Բագրատունուն իր բանաստեղծական և թարգմանչական սքխրանքի համար, այն բանի համար, որ նա հայ ընթերցողին հաղորդակից է դարձրել «Վիրգիլեան ճարտար քերթուածին» և հայտնում մի նվիրական ցանկություն՝ հեղինակն իր «քաղցրալուր քնարը» հնչեցնի ոչ թե օտար երկրում, այլ հայրենիքում Արարատի ստորոտին և հրաշաձայն նվագով իր շուրջը հավաքի «Թորգոմեան զմանկըտիս բոլոր», շոյի նրանց լսողությունը և միաժամանակ ինքը նոր ուժ ու ոգի ստանա հայրենի բնության գեղեցկությամբ: Խրիմյանը հորդորում է.

«Հայր, առաւել արժան էր քեզ ոչ զօտարին քնար հարկանել,
Այլ զքոյդ՝ որ վեհ ոգւով քաջ եւս հնչի հայրենեաւն,
... Եւ դու ի յԱրարատ առ դրախտին երանի թէ
Նստէիր նըւագէիր զարարատեան գեղեցկութիւն»[2]:

Ինչպես տեսնում ենք, դեռ իր գործունեության վաղ արշալույսին Խրիմյանը՝ իր սկզբունքներին հավատարիմ, գտնում էր, որ հայության համար ամենաթանկը հայրենի հողն է, հայրենի եզերքը, իսկ ինքը, որ «զօդ ծրծեալ հայաստանեայց՝ շուտ ըզգացի զոգի նախնեացն», և այդ պատճառով իր ականջին ավելի հաճելի էր Բագրատունու անզուգական քնարը: Այս նամակով և բանաստեղծությամբ չսահմանափակվեց Խրիմյանի կապը ո՛չ Ս. Ղազարի միաբանության, և ո՛չ էլ Արսեն Բագրատունու հետ: Պոլսում Մխիթարյաններն ունեին գրատուն, որտեղ վաճառվում էին միաբանության հեղինակների աշխատությունները: Խրիմյանն այդ գրատան ամենաեռանդուն հաճախորդն էր, գրքերի և ամսագրերի գնորդը:

1850-ին Պոլսում լույս տեսած Խրիմյանի «Հրավիրակ երկրին Արարտյան» պոեմը կրում էր դարձյալ Բագրատունու «Հայկ դյուցազն» պոեմի ազդեցությունը,

---

[1] «Բազմավեպ», 1849, № 20, հոկտ. 15, էջ 309:

[2] Նույն տեղում:

գրված էր նույն՝ հին հայկական տաղաչափությամբ, և նրա նման պոեմը գրելու շարժառիթը համարում էր «հայրենյաց սերը»:

1854-ին Աղթամար կղզում Խրիմյանը ձեռնադրվում է վարդապետ: Խորին հարգանք և ակնածանք տածելով Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության նկատմամբ՝ Խրիմյանը ցանկանում էր Աղթամարը դարձնել Հայաստանի Վենետիկ, վանքում հիմնել տպարան ու վարժարան, բայց տեղի միաբանությունը թշնամանքով դիմավորեց նրան: Սկսվեցին հալածանքները, որի պատճառով Խրիմյանը հեռացավ Պոլիս: Այնտեղ 1855-ին նա հրատարակեց «Արծուի Վասպուրական» ամսագիրը՝ նպատակ ունենալով այն փոխադրել Հայաստան: Այս անգամ Խրիմյանը գործեց ավելի հեռատես և շրջահայաց: Տեղի նշանավոր հայկական գերդաստանների օժանդակությամբ, ժամանակի Հակոբոս Պատրիարքի կոնդակով և Բ. Դոռան ֆերմանով Խրիմյանը դարձավ Վարագա վանքի վանահայր, իսկ վանքը հանվեց Վասպուրականի հոգևոր առաջնորդի իրավասությունից: 1857-ին Վարագա վանահայրը դարձյալ հետևելով Մխիթարյաններին, հիմնադրում է վանական դպրոց՝ ժառանգավորաց, ապա սկսում հրատարակել «Արծուի Վասպուրական» հանդեսը՝ առաջինը Հայաստանի տարածքում, այդ իսկ պատճառով՝ է՛լ առավել ծանր, դժվարին պայմաններում: Դա իսկապես խիզախություն էր, սխրանք: Իր հեղինակությամբ գրված հոդվածներն ապացուցում են, որ նա աչալրջությամբ ուսումնասիրում էր Մխիթարյանների հրատարակած պատմագիտական, հայագիտական աշխատությունները: Մեսրոպ Մաշտոցին, Մովսես Խորենացուն, Դավիթ Անհաղթին, Եղիշեին և Եզնիկ Կողբացուն նվիրված հոդվածներում[3] նա իր երախտագիտությունն է հայտնում Մխիթարյան հայրերին, որ գիտական մեկնաբանություններով հրատարակել են հայոց այդ մեծերի աշխատությունները՝ նշելով ո՛ր թվականին՝ ումը:

Անցնում են տարիները. Խրիմյանի ազգանվեր գործունեությունը լայն թափ է ստանում: Եթե սկզբում նա միայն Վասպուրականում էր, 1862-ից տարոնահայության խնդրագրով և պատրիարքարանի հաստատումով նա դառնում է Տարոնի հոգևոր առաջնորդ և Ս. Կարապետ վանքի վանահայր: Ժառանգավորաց է բացվում նաև այդ վանքում, լույս է տեսնում մի նոր պարբերական՝ «Արծուիկ Տարոնոյ»: Խրիմյանը չբավարարվեց հոգևոր դպրոցներով: Նրա հանձնարարությամբ աշակերտ, ապա գործընկեր Գարեգին Սրվանձտյանցը բազմաթիվ դպրոցներ բացեց Տարոնի գյուղերում: Վարագում և Ս. Կարապետում «Արծվի» և «Արծվիկի» հետ մեկտեղ տպվում էին զանազան դասագրքեր և անվճար բաժանվում գյուղական վարժարաններին: Հասկանալի է, որ Խրիմյանի հրատարակչական թափը չէր կարող համեմատվել Մխիթարյանների կատարած գործի հետ, սակայն տեղի և պայմանների համեմատ նրա կատարածը սխրանք էր: Վանահայր և վարդապետ Խրիմյանը շրջում էր հայրենի գյուղերում, հայտնաբերում բազմաթիվ ընդունակ երեխա-

[3] «Արծուի Վասպուրական», 1858 թ., № 7, 8, 9, 10:

ներ, ոմանց ձրիավարժ ընդունում իր բացած վարժարաններում[4], ոմանց ուղարկում Կ. Պոլիս ուսանելու, ոմանց համար էլ թախանձագին խնդրագրեր հղում Մխիթարյան հայրերին՝ իրենց ուսումնական հաստատություններում ընդունելու համար:

Գրականության և Արվեստի թանգարանի արխիվի Խրիմյանի ֆոնդում հայտնաբերել ենք ուշագրավ երկու նամակ. մեկն ուղղված է Արսեն Բագրատունուն, մյուսը՝ Ղևոնդ Ալիշանին: Նամակների հիմնական շարժառիթը վանեցի մի որբի՝ Ոստանիկ անունով ընդունակ պատանուն Փարիզի Մուրադյան վարժարանում ձրիավարժ աշակերտ ընդունելու խնդրանքն էր: Երկու նամակների այդ հատվածներն ընդգծում են Խրիմյանի մարդասիրությունը, անհուն բարությունը, մեծ հոգատարությունը մատաղ սերնդի, առավելապես որբ երեխաների նկատմամբ: Նամակները գրված են այնպիսի հուզիչ զգացմունքայնությամբ, որ անհնար էր դրանց մերժելը: Այդ մասնավոր շարժառիթը պատճառ է դարձել, որ Խրիմյանը նամակներում շարադրի նաև իր գեղարվեստական չափանիշները, գնահատի և՛ Բագրատունու, և՛ Ալիշանի գրական-գեղարվեստական, թարգմանական և հասարակական գործունեությունը: Երկու նամակն էլ կրում են նույն թվականը՝ օգոստոսի 19, 1864 թ.: Անդրադառնանք նամակներին առանձին-առանձին: Բագրատունուն ուղղված նամակում[5] Խրիմյանը հիշեցնում է իրենց 16-ամյա բարեկամությունը, 1848 թ. սկսած, երբ ինքը «Հայկ դյուցազն» պոեմի ազդեցության ներքո բանաստեղծություն է ձոնել հեղինակին: Բարձր գնահատականի է արժանանում Բագրատունու թարգմանական գործունեությունը, որի միջոցով հայ ընթերցողը ծանոթանում է Վիրգիլիոսի «Մշակականքին», Հոմերոսի «Իլիականին»: Խրիմյանը նշում է, որ Հոմերոսի նախկին թարգմանիչը այդ բարձրարժեք գործը «անտաշ» էր թարգմանել, իսկ Բագրատունու թարգմանությունը «արվեստապես հղկյալ է» և Հոմերոսին արժանի: Նշելով Վիրգիլիոսի և Հոմերոսի ստեղծագործությունների «անգիտական» և բարձրարվեստ որակը, Խրիմյանը դրանց շարքում դասում է նաև «զՀայկ դիցազն զբազմաքիրտն վաստակ աշխատասէր ծերունւոյդ»: Սակայն անմիջապես ավելացնում է, որ չի ցանկանում շողոքորթել հայր Արսենին, որի պոեմը բարձր է առավելապես հայկական ոգով: Գնահատականներից պարզվում է, որ Խրիմյանը քաջածանոթ է ոչ միայն համաշխարհային ճանաչում գտած արժեքներին, այլև Միլտոնի «Կորուսյալ դրախտին»՝ դարձյալ Բագրատունու թարգմանությամբ: Այս գրքի թարգմանության մեջ Խրիմյանի կարծիքով թարգմանիչ հայ հանճարը մրցում է անգլիական հանճարի հետ և պատվով ելնում մրցությունից: Խրիմյանը գնահատում է յոթ տասնամյակն անցած Բագրատունու եռանդն ու աշխատասիրությունը և գտնում, որ «ամէն գրասէր հայ, որոց կիրթ է ճաշակ առ արգասիս քաղցր վաստակաց քոյին, համբերելով սպասէ տակաւին վայելել ի բերաց աշխուժ հոգի ծերունւոյդ»[6]: Փաստորեն

---

[4] ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 142, էջ 3:

[5] Նույն տեղում, գ. 159, էջ 1:

[6] Նույն տեղում:

ինքնակրթությամբ իր միտքն ու հոգին հաքստացրած Խրիմյանը. Մխիթարյանների ծավալած բազմարդյուն հրատարակությունների շնորհիվ. հաղորդակցվել է եվրոպական գրականության գոհարներին, դարձել դրանց գնահատողը և տարածողը հայ իրականության մեջ: Այս նամակում այնքան հոգի և միտք, հիացմունք ու զգացմունք է դրել Խրիմյանը, որ նույնիսկ այսօրվա ընթերցողին հուզում է այն: Առավել հուզիչը Բագրատունու պատասխանն էր ազգանվեր գործչին[7]: Նամակն ուղարկելուց 11 օր անց, 1864 թ. սեպտեմբերի 1-ին, Բագրատունին պատասխանում է Խրիմյանին՝ դիմելով նրան իբրև «Գերաթռիչ Արծուի Վասպուրական»: Այդ պատասխանից տեղեկանում ենք, որ նրանց նամակագրական կապը պահպանվել է 1848-ից մինչև 1858 թ., իսկ դրանից հետո՝ ընդհատվել, որը մեծ ցավ է պատճառել հայր Արսենին: Նշված թվականներն իրենք են հուշում նամակագրական կապի ընդհատման պատճառը. 1856-ին Խրիմյանը, թողնելով Պոլիսը, վերադառնում է հայրենիք՝ ձեռնամուխ լինելու ժողովրդի լուսավորության, կրթության և հոգևոր դաստիարակության դժվարին գործին: Ըստ երևույթին, արևմտահայ գավառի ծանր հոգսերը Խրիմյանին հնարավորություն չէին տալիս անխափան կապ պահպանել իր կողմից մեծ հարգանք վայելող անձնավորությունների հետ: Սակայն «Հայկ դյուցազնի» հեղինակն իրենց նամակագրական կապի ընդհատման համար վշտանալով հանդերձ, շտապում է պատասխանել «հայրենասեր ծայնին», որ նրա խնդիրքն անպայման կկատարվի. վանեցի «Ոստանիկ պատանյակը» կընդունվի Փարիզի Մուրադյան վարժարան իբրև «ձրիավարժ գիշերօթիկ սան», և հույս է հայտնում, որ այդ պարագան «նորոգութիւն լիցի յիշատակ եւ պարծանք հին սիրոյ մերոյ»:

Երկրորդ նամակն ուղղված էր Ղևոնդ Ալիշանին, թվագրված դարձյալ 1864 թ., 19 օգոստոսի: «Հուշիկների» հեղինակին Խրիմյանը դիմում էր այսպես. «Հոգի սիրահար հայրենեաց, հայր Ղեւոնդ Ալիշանին, նահատակեալ աղեկէզ հոգով ի սիրտ, ի ողբ, ի կոծ՝ վասն հայրենեաց»[8]: Խրիմյանն ու Ալիշանը տարեկիցներ էին. գուցե դա էր պատճառը, որ Բագրատունուն ուղղած նամակի խիստ հարգալից և որդիական տոնին ու ոճին այստեղ փոխարինել էր մտերմիկ հարազատի զրույցը: Թվարկելով Ալիշանի ստեղծագործության թեմաները՝ «հայրենասիրական գրվածոցդ մեջը, Նավարշական դաշտին մեջ, պյուլ-պյուլն Ավարայրին մեջ, դառն ողբերուդ մեջ, ընտիր ընտիր ճառերուն մեջ, Մասյաց շուքին տակ, Հրազդան գետին եզերք, այո, կճանչնամ զքեզ, դու մեր հայրենյաց հանրածանոթ մատենագիրն ես, ո՞վ է, որ զքեզ չի ճանչնար»: Ապա Խրիմյանը հարցնում է՝ իսկ Ալիշանը ճանաչո՞ւմ է «հայրենի ավերակաց մեջ բնակվող հեզ Արծվին»: Իրեն ու Ալիշանին համարելով 19-րդ դարի հայ հայրենիքի երկու թշվառ սիրահարներ, Խրիմյանը մտորում է, թե իրենցից ո՞րն է ավելի թշվառը: Պատասխանը ակներև է. «Հեզ Արծիվը իրավապես թշվառ է. գիտնա՞ս, հայրենի զավակները տոչորող Բաբելոնեան հնոցի մեջն է, աղքատությամբ,

[7] Նույն տեղում, էջ 3:

[8] Նույն տեղում, էջ 3-4:

թշվառությամբ, հայրենի երկրեն գաղթող զավակներու հուղարկավորն է»: Նամակագիրը գտնում է, որ իրեն բաժին են ընկել սարսափելի հոգսեր. Վասպուրականից Տարոն և Տարոնից Վասպուրական՝ ժողովրդի ծանր տառապանքների ականատես, հայրենի թշվառ զավակների հետ «չարչարեալ»: Ալիշանը, ճիշտ է, տառապում է հայրենիքի աղետների համար, բայց, գտնվելով ազատ ու քաղաքակիրթ երկրի մեջ, սփոփվում է գիտական և գրական աշխատություններով, ամոքվում: Սակայն հայրենիքը ողբերից և աղետներից բացի ունի սփոփանքներ և հրաշալիքներ: Խրիմյանը հայրենակարոտ և հայրենաբաղձ Ալիշանին հրավիրում է Հայրենիք՝ Հայաստանը տեսնելու, Եփրատի ջրերում լողանալու և վերստին մկրտվելու, Այրարատում շրջելու, Երասխի ջուրը խմելու, Անիի ավերակների վրա ողբալու, «Բյուրակնյան լերանց ծաղիկները քաղելու»: Նամակն ավարտվում է նույն խնդրանքով. հայր Արսենի հետ միացյալ ուժերով միջնորդել Ոստանիկ որբին Փարիզի Մուրադյան վարժարան, այդ «իմաստութեան տաճարն» ընդունելու համար: Արդյունքը պարզ էր. արժանապատիվ հայրերը հարգում են Խրիմյանի խնդիրքը:

Թե հետագայում ինչպիսին էին Մխիթարյան միաբանության որոշ հայրերի և Խրիմյանի հարաբերությունները, արխիվային փաստաթղթերը լռում են: Հայտնի է, որ Բեռլինի վեհաժողովի հայ պատվիրակության ղեկավարը վեհաժողովի ավարտից հետո տունդարձի ճանապարհին մտավ Վիեննա՝ ավստրիական արտաքին գործոց նախարարի մոտ, որպեսզի վերջինս Կ. Պոլսի իր դեսպանին հանձնարարի հայկական խնդիրը[9]: 1878-ի հուլիսի 11-ին նա այցելեց տեղի Մխիթարյաններին: Ըստ երևույթին, վեհաժողովի արդյունքներն էին պատճառը, որ այդ այցելությունը մնաց անարձագանք:

Տարիներ անց աքսորական Խրիմյանն ընտրվեց Կաթողիկոս Ամենայն Հայոց: Էջմիածին ուղևորվելու ճանապարհին նա դարձյալ եղավ Եվրոպայում[10]: Վենետիկի Մխիթարյանները Տրիեստ ուղարկեցին երկու վարդապետ՝ նրան ճանապարհելու համար: Առավել ջերմ էր Վիեննայի Մխիթարյանների հետ ունեցած հանդիպումը: Տեղի աբբահայր Այտնյանը երկու վարդապետների ուղեկցությամբ 1893 թ. օգոստոսի 30-ին այցելեց Վեհափառին: Հաջորդ օրը Խրիմյանը պատվիրակության անդամների հետ փոխադարձեց այցելությունը[11]: Մուտքի առաջ նրան ընդունեց աբբահայրը և առաջնորդեց երկրորդ հարկ՝ վանքի ընդունարան: Ապա կաթողիկոսն այցելեց վանքի հարուստ մատենադարան, եռահարկ տպարան, թանգարան, որի ամենաուշագրավ հարստությունը Կիլիկյան արքաների, մասնավորապես Ռու-

---

[9] Ա. Սարուխան. Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, 1912, էջ 475, նաև Է. Կոստանդյան. Մկրտիչ Խրիմյան. հասարակական քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 263:

[10] Մեսրոպվ վարդապետ Տեր-Մովսիսյանց, Ուղևորություն Տ.Տ. Մկրտիչ Վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց Երուսաղեմից Էջմիածին, 1894, էջ 200:

[11] Նույն տեղում, էջ 217:

բինյանների դրամական հավաքածուն էր: Այցելուների մատյանում Խրիմյանը թողեց հետևյալ մակագրությունը. «1878-ի հուլիսի 11-ին եկա Վիեննա, այցելեցի Մխիթարյան վանուց: 1893-ի օգոստոսի 31-ին դարձյալ այցելության եկի ի սույն վանս, որում ժամանակի ուխտին վանահայրն էր Արսեն արքեպիսկոպոս Այտնյան. տեսի միաբանական ուխտ, տեսի ամեն հառաջադիմություն, աշխատությունս գրական հանդեսի, օրինեցի և մաղթեցի, որ երթալով ևս պտղաբեր լինի վասն փառաց Քրիստոսի եկեղեցվո: Կաթողիկոս Ամենայն Հայոց Խրիմյան Հայրիկ»: Վեհափառի օգտագործած գրիչը հայր Գրիգորիս Գալեմքերյանը վերցրեց, որ պահեն թանգարանում իբրև հիշատակ: Մյուս օրը Վեհափառը նրանց ուղարկեց իր լուսանկարը՝ հետևյալ մակագրությամբ. «Հիշատակ առ միաբանական ուխտն Մխիթարյան ի Վիեննա - Խրիմյան Հայրիկեն: Թե կենդանագիր մահկանացուիս երթա ի գերեզման, սոսկ ստվերն իմ մնասցի առ Ձեզ հիշատակ»[12]:

1900 թ., երբ ողջ հայությունը նշում էր Մխիթարյան միաբանության 200-ամյակը, Խրիմյան Կաթողիկոսն արտահայտում է իր ջերմ վերաբերմունքը: Ավանդությունը պատմում է, թե Սևանա վանքում հուսահատված Մխիթարը ծնկաչոք աղոթում է Աստվածամոր պատկերի առջև և կարծում, թե լսում է նրա ձայնը՝ «Ուզածդ թող լինի»[13]: Այդ տեսլիքից ոգևորված Մխիթարը հեռանում է Սևանից իր անիրականանալի կարծված ծրագրերը իրականացնելու: Ողջ կյանքի ընթացքում նա մտորում է, որ իրեն օգնել է Աստվածամայրը և Սևանում գտնվող նրա պատկերը: Մխիթարյան միաբանության 200-ամյա տոնակատարության օրերին Խրիմյանը ցանկանում է կաթողիկոսական կոնդակի հետ միաբանությանը նվիրել այդ հինավուրց նկարը: Մի շարք պարբերականներ, «Նոր դարի» գլխավորությամբ, քննադատում են կաթողիկոսի այդ որոշումը[14]: Գուցե ճիշտ էր քննադատությունը, և կաթողիկոսը ետ կանգնեց որոշման իրագործումից: Սակայն այստեղ ընդգծելին կաթողիկոսի բուռն ու ջերմ վերաբերմունքն էր Մխիթարյան միաբանության նկատմամբ: Դա նաև նրա գնահատականն էր, մեծարանքը, նրա ակնածանքն ու խնկարկումը այն մարդկանց նկատմամբ, որոնց ողջ կյանքը եղավ Եկեղեցուն, հայրենիքին, ողջ հայությանը բոլորանվեր ծառայելու մի սքանչելի օրինակ:

Մեծերը խոնարհվում են Մեծերին:

[12] Նույն տեղում, էջ 218:

[13] Գանի մը հայ նշանավոր դեմքեր, էջ 35:

[14] Նույն տեղում, էջ 58:

ԼՈՒՍԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Նոր Ջուղա գաղթօջախի հիմնադրումը եղել է սրանից շուրջ 4 դար առաջ՝ 1606 թվականին:

Քաջ գիտենալով, որ օսմանյան թուրքերի հետ չի կարող առճակատվել, Շահ Աբբաս Մեծի խորագիտությունը նրան թելադրեց «...վարել զբնակիչս Հայաստանի ի սահմանս տէրութեան իւրոյ»[1] և, ամայացնելով Հայաստանի գավառներն ու քաղաքները, դժվարություններ ստեղծել թուրքերի համար: Սրանից բացի նորընտիր շահը առավել տենչալի մի միտք ուներ. հայերի ձեռքում և հայերի միջոցով իր տերությունում զարգացնել արհեստներն ու ծաղկեցնել վաճառականությունը: Եվ նա չսխալվեց: Հայերի աշխատասիրությանը, աչալրջությանն ու հմտությանը, որոնք նախանձելի էին «յաչս արքային պարսից», պարտական եղավ Պարսկաստանը և նրա մայրաքաղաքը՝ Սպահանը, իր շահավետ վաճառականության հաջողության և, հետևապես, իր ճոխության, շքեղության ու հզորության համար:

Պարսկաստանի նախկին մայրաքաղաքը՝ Սպահանը, հիմնադրվել է Ղաջարական հարստության հիմնադիր Մահմուդ շահի կողմից: Առավելապես զարգացել է 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբներին, երբ 1597-98 թթ. դարձել է Սեֆյան պետության մայրաքաղաքը, որը պարսից ամենահին քաղաքներից մեկն է: Ըստ պարսիկների՝ Էսֆահան կամ Իսֆահան: Ջեռագիր մատյաններում հայ հեղինակները Սպահանը կոչել են նաև Շոշ: Սպահանը Ասպադանա անվամբ հիշատակում է անտիկ հեղինակներից Պտղոմեոսը: Գտնվում է Պարսկաստանի կենտրոնում, Զայանդերուդ գետի ափին: 17-րդ դարի սկզբներին, երբ Սպահան տարվեցին նաև Հայաստանից հանված հայերը, այն հասավ իր փառքի զենիթին:

Նախ ասենք, որ Հայաստանի տարբեր շրջաններից և Հին Ջուղայից այստեղ գաղթած տարբեր զբաղմունքի տեր հայերը բնակեցվեցին ըստ իրենց նախկին կարգավիճակի՝ ջուղացիները տեղավորվեցին Սպահանի տարբեր գավառներում, քաղաքացիները՝ Սպահանում, իսկ ջուղայեցիները՝ Զայանդերուդ գետի հարավային ափին, «երեք քառորդ ժամ ճանապարհ հեռի ի նմանէ», փաստորեն այնքան մո-

[1] Ց. Տէր-Յովհաննեան, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, Ն. Ջուղա, 1880, հ. Ա, էջ19:

տիկ մայրաքաղաքին, որ այն գետի վրա կառուցված մի քանի կամուրջներով միացավ Սպահանին, և անվանեցին այս արվարձանը իրենց նախկին բնակավայրի անունով, միայն այս անգամ արդեն՝ Նոր Ջուղա:

Այդ կամուրջներից մեկը կառուցվել է հայ զորավարներից մեկի՝ Ալլահվերդի խանի կողմից և մինչև հիմա էլ կոչվում է այն կառուցողի անունով: Կամուրջն ունի 33 կամարներ, որոնք, իբր, հիշեցնում են Հիսուսի 33 տարիները, երբ նա խաչ հանվեց: Իսկ որպեսզի արգելվի ջրի հոսքը, կամուրջի աչքերից մեկը լցնում են արծաթով: Նոր Ջուղայի հիմնման օրերին ավանն ունեցել է հայաբնակ 6 մեծ և փոքր թաղեր՝ Մեծ Մեղդան (Հրապարակ), Փոքր Մեղդան, Զարսու, Հակոբջան, Վերին և Ներքին Ղարագել, որոնք կառուցապատված են եղել պալատակերպ մենատներով, իսկ 17-րդ դարի 2-րդ կեսից այդ թաղամասերը համալրվել են ի հաշիվ մայրաքաղաքի այն հայերի, որոնք 1650-ական թվականներին տեղափոխվել են Ջուղայի արևմտյան կողմը և հիմնադրել մի քանի նոր թաղեր, որոնք են. Քարակոփների կամ Քոչերի, Երևանի, Թավրիզի, Դաշտեցոց, Գազքի և Ծխսաբադի: Այս թաղերից մի մասն արդեն չկա, մի մասն էլ զուրկ է հայ բնակչությունից: Ներկայիս Ջուղան,- գրում է Լ. Մինասյանը,- ունի 8 թաղ, որոնք շատ մասերում խառնված են պարսիկ բնակիչների հետ[2]:

Բացի իրենց գործնական հրաշալի հատկանիշներից, նորջուղայեցիները եղել են նաև ջերմեռանդ, աստվածավախ և կրոնասեր ժողովուրդ: Դրա ապացույցը այն մեծաթիվ և փառահեղ եկեղեցիներն են, որոնք «ըստ թացս յիսուն ամաց» նրանք կառուցել են Սպահանում և Ջուղայում: Մեծ է նաև ջուղայեցիների՝ իրենց քրիստոնեական հավատքը հաստատուն պահելու պարծանքը, որի համար նրանք անտրտունջ դիմակայել են բազմատեսակ «հալածանաց, վշտաց, զրկանաց, աղքատութեան... որք սկսեալ են ի ժամանակի թագաւորութեանն Շահսուլթան Հօսէյնի...»[3]: Մինչ այդ ազատություն և հոգատարություն ստանալով Շահ Աբբասի կողմից, հայերը կամա թե ակամա հաստատվեցին Պարսկաստանում, և յուրաքանչյուր ընտանիք սկսեց հոգ տանել իր տունը կառուցելուն: Ջուղայեցիները, «որք փարթամ էին ճոխութեամբ», քան մյուս գաղթականները, սկսեցին կառուցել իրենց տուն-ապարանքները՝ բարձրաբերձ, լայնանիստ, կամարակապ, ոսկենկար ծաղկազարդերով: Ջուղայեցիների վաճառականության համբավը քաջ հայտնի է եղել:

Կարճ ժամանակում Նոր Ջուղան բարգավաճել է և արդեն 1620-ական թվականներին ունեցել շուրջ 30 հզ. բնակիչ, դարձել Իրանի առևտրական կապիտալի կենտրոն, նորջուղայեցի հայ վաճառականները՝ Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրի միջնորդներ: 1617 թ. շահը, չեղյալ համարելով Անգլիայի հետ կնքված առևտրական պայմանագիրը, ամբողջությամբ նորջուղայեցի վաճառականներին է

---

[2] Լ. Գ. Մինասյան, Նոր Ջուղայի եկեղեցիները, Ն. Ջուղա, 1992, էջ 10:

[3] Ց. Ցէր-Յովհաննեան, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Բ, էջ 293:

հանձնել իրանական հում մետաքսի արտահանման մենաշնորհը: Նրանք հաճախ կատարել են նաև դիվանագիտական հանձնարարություններ: Եվ դա եղել է այն աղբյուրը հարստության, որ հեղեղել է Ջուղան: Դա եղել է և այն, որ ջուղայեցիները կարողացել են կառուցել իրենց թագավորավայել պալատները ու ապարանքները, բարձրակառույց և գեղեցկաշեն եկեղեցիները: Շուրջ կես դարի ընթացքում, մինչև 1660-70-ական թվականները, նրանք կառուցել են այնպիսի եկեղեցիներ, որոնց մասին շատ պատմիչներ արդեն դարեր ի վեր պատմում են հիացմունքով ու ակնածանքով:

Ջուղայի ինչպես հին, այնպես էլ նոր պատմաբանները Ջուղայում կառուցված եկեղեցիների թիվը համարել են 24-ը, որոնք երբեմն նույն թաղում կառուցվել են իրար կից ու կողք-կողքի, ինչպես Բագրատունիների երբեմնի մայրաքաղաք Անին՝ իր «հազար ու մեկ» եկեղեցիներով: Այս եկեղեցիներից 6-ը բոլորովին անհետացել են, 8-ի էլ ավերակ հետքերն են միայն մնացել և միայն 10-ն են հաստատուն, «...որոնց մէջ ժամասացութիւն կը կատարուի»[4]: Դրանցից շատերը ունեցել են նաև ամռան եկեղեցի՝ մատուռ, որոնցից մեծ մասը մինչև հիմա էլ պահպանվում են: Եթե դիտելու լինենք Նոր Ջուղան Սոֆի լեռան լանջից կամ վերից,- պատմում է Լ. Մինասյանը,- ապա այնտեղ տուն ու ծառերի մեջ կտեսնենք սուրբ-սուրբ գմբեթներ, որոնք խոսում են մարդու սրտին և խաղաղություն բերում հոգուն: Նոր Ջուղայի «կրոնաբոյր» եկեղեցիների նմանը գաղթաշխարհում շատ քիչ կան, իսկ արվեստի ու նկարչական տեսակետից չկա անգամ Մայր Հայրենիքում: 17-18-րդ դդ. Ն. Ջուղան եղել է հայկական մշակույթի կարևոր կենտրոն: 1630-ական թվականներին Խաչատուր Կեսարացին հիմնել է դպրոց-համալսարան, որտեղ դասավանդվել է երաժշտություն, պոետիկա, քերականություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ: Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում աշակերտներին ուսուցանել են եվրոպական լեզուներ և «արուեստ վաճառականութեան»: Մեծ զարգացման են հասել որմնանկարչությունը, մանրանկարչությունը, ճարտարապետությունն ու աշուղական պոեզիան: Այն եղել է իրանաբնակ, իսկ հետագայում՝ նաև Հնդկաստանում բնակվող հայության կրոնավարչական կենտրոնը և կոչվել է «Առաջնորդութիւն Սպահանի և Հնդկաստանի»:

Իրենց նոր բնակավայրում հաստատվելով, հենց առաջին տարում Մեծ Մեղդան թաղում հայերը կառուցեցին իրենց առաջին՝ «անփառաւոր և առանց արձակ շինութեան»[5] մի փոքրիկ եկեղեցի՝ Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի անունով, որով և հիմք դրեցին Ս. Ամենափրկիչ վանքին: Այժմ Ս. Ամենափրկիչ եկեղեցին Ջուղայի ամենափառավոր եկեղեցիներից մեկն է, իսկ վանքն իր ամբողջության մեջ ոչ միայն Նոր Ջուղայի և իրանահայության, այլև համայն հայ ժողովրդի պարծանք հանդի-

---

[4] Ն. Գորոյանց. Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968, էջ 288:

[5] Ե. Տէր-Յովհաննեան, նշված աշխ., հ. Թ, էջ 1:

սացող հաստատությունն է, որի հոգևորականներից մի քանիսը նստել են Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսական գահին: Վանքը տվել է նաև այնպիսի գիտնական ու արժանահիշատակ հոգևորականներ, ինչպիսիք են Խաչատուր Կեսարացին, որի ջանքերով ստեղծվեց տպարան, և որն առաջինն էր ինչպես Իրանում, այնպես էլ ամբողջ Միջին Արևելքում, կամ «տիեզերալոյս» Հովհաննես վարդապետը, որ վեճի մտավ իսլամ կրոնավորների հետ իր պարսկերեն թարգմանված «Աւետարանաւ», կամ Սիմեոն վրդ. Ջուղայեցին, որ գրեց քերականության և տրամաբանության գրքերը: Գիտնական հոգևորականների ցանկը, անշուշտ, կարելի է շարունակել, բայց բավարարվենք այսքանով:

1655 թ. երբ Սպահանի հայերը բնակություն հաստատեցին Ջուղայի արևմտյան կողմում, քանդում են առաջին օրերին կառուցված փոքր ու արդեն խարխլված եկեղեցին և դրա տեղը կառուցում ներկայիս փառավոր եկեղեցին, որն ավարտվում է ինը տարվա ընթացքում 1664 թ.: Եկեղեցին ամբողջովին զարդարված է Հին և Նոր Կտակարանների որմնանկարներով ու ծաղկազարդերով, որի ծախսը հոգացել է խոջա Ավետիքը, գլխավորությամբ հանճարեղ որմնանկարիչներ Մինասի, Հովհաննես Մրքուզի, Տեր Կիրակոսի, Բարսեղի և այլոց: Վանքի առաջնորդարանի հին շենքը քանդվել է 1860 թ., որի տեղում կառուցվել է երկհարկ մի նոր շենք, իսկ 1915 թ. տաճարի արևելյան կողմում կառուցվել է առաջնորդարանի մեկ այլ շենք: Հին առաջնորդարանը 1930-ական թվականներից մինչև 1970-ական թվականները ծառայել է որպես գրադարան, իսկ հետո որոշ նորոգություններով դարձել առաջնորդարանի գրասենյակ-ընդունարան: 1905-6 թթ. Մայր Տաճարից դեպի հյուսիս, միաբանական խուցերի տեղում, կառուցվել է մի այլ շենք՝ «բարերարութեամբ Թադէոս Տէր Յովհաննեանի, ի յիշատակ իւր հօր՝ Նոր Ջուղայի պատմագիր Յարութիւն Տէր Յովհաննեանի»[6], որի ճակատին, հախճապակու վրա, մեծ-մեծ տառերով գրված է «Մատենադարան Ս. Ամենափրկչեան վանքի»: Այս շենքը ծառայել է որպես մատենադարան-գրադարան: Վանքի շրջակայքում կա 4 կիսանդրի: Դրանցից առաջինը Մ. Մաշտոցինն է, երկրորդը՝ Խաչատուր Կեսարացունը, իսկ գրադարանի շենքին մոտիկ՝ բանաստեղծներ Պ. Սևակի և Հ. Շիրազի կիսանդրիներն են: 1930 թ. մատենադարանի մոտ կառուցվել է տպարանի մի նոր շենք, իսկ 1975 թ.՝ մի հուշարձան՝ ի հիշատակ 1915 թ. Մեծ եղեռնի մեկ ու կես միլիոն հայ նահատակների:

Վանքի տպարանի առաջին գիրքը՝ «Սաղմոս Դաւթի», տպագրվել է 1638 թ.: Այսպիսով, Ս. Ամենափրկիչ վանքը իր մեջ ունի հետևյալ հաստատությունները՝ Մայր Տաճար, տպարան, գրադարան-մատենադարան և թանգարան: 1971 թ. փոխադրվելով նորակառույց շենք՝ մատենադարանը դարձել է առանձին միավոր:

---

[6] Լ. Գ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 52:

Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում «թէ՛ ըստ ծերոցն աւանդութեան, թէ՛ ըստ վկայելոյ ոմանց ձեռագիր թղթոց... եղեալ են բազում ձեռագիր մատեանք: Ոչ սխալիմ ասել,- գրում է Հ. Տեր-Հովհաննեսը,- թէ Ջուղա եղեւ մատենադարան Հայաստանի՝ յետ գաղթականութեան Հայկազնեայ ժողովրդոցն ի Պարսկաստան»[7]: Հայաստանի գաղթականները, մանավանդ ջուղայեցիները, ունենալով մեծ սեր դեպի գիրն ու գրականությունը և լավ իմանալով ձեռագիր մատյանների հարգը, խնամքով պահել-պահպանել են այդ մատյանները, մինչև այն «տարաբաղդ» ժամանակը, երբ «ի բռնանալ հարստահարութեանց՝ ի Ջուղայ (ի 1770-է ց1790), մինչեւ հայք Ջուղայու եւ մանաւանդ առաջնորդք վանին Ամենափրկչի իբրեւ խոհի վարեցան ի բռնակալութեանն հոսանաց նոյն ժամանակին... լքին զմատենիցն պահպանութիւն... ուստի բազում հին ձեռագիր մատեանք անհետացան եւ կորեան...»[8]:

Հետագայում մեկը մյուսի ետևից սկսել են կառուցվել մյուս եկեղեցիները, որոնցից առաջինը եղել է Ս. Նազարեթ եկեղեցին՝ 1611 թ. (կոչվել է նաև Փոքրիշինի կամ Նորաշեն): Նույն տարում է կառուցվել նաև Ս. Գևորգ եկեղեցին (նախկինում խոջենց ժամ): Երկու տարի անց կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցին, իսկ 1614 թ.՝ Ս. Ստեփանոս եկեղեցին: Բացի Ս. Նազարեթից, այս երեք եկեղեցիներն էլ այժմ կանգուն և հաստատուն են: Ինչպես պատմում է Առաքել Դավրիժեցին, մինչ այս եկեղեցիների կառուցումը, հայերը սրտանց կապված չէին Նոր Ջուղայի հետ և առիթը բաց չէին թողնում թեկուզ գաղտնի Հայաստան վերադառնալու: Այս հանգամանքը խիստ մտահոգում է շահին, և նա մտածում է, «թէ որպիսի հնարս հնարեցից վասն ազգին Հայոց՝ զի մի դարձցին յաշխարհն իւրեանց, այլ մնասցեն յաշխարհն Պարսից»[9]: Պատճառն իմանալու համար այլակերպված շրջում է փողոցներով և «խօսացուցանէր զժողովուրդսն... մտանէր ի տունս տունս, թէ՛ նշանաւոր եւ երեւելի արանց, եւ թէ՛ աղքատաց» իմանալու համար «ընդէ՞ր ազգն հայոց ոչ են ջերմագոյն եւ յոժար կալ ի յաշխարհիս Սպահանայ. զի շէն աշխարհ է եւ ինչեղի է, իսկ աշխարհն Հայոց սահրատ է եւ բերան թշնամւոյ»[10]: Եվ ահա լսում է նույն պատասխանը թե՛ հասարակ ժողովրդից, թե՛ մեծահարուստներից, որ հայերը վերադառնում են Հայաստան, որովհետև այնտեղ է իրենց մեծ եկեղեցին՝ Սուրբ Էջմիածինը, որովհետև այնտեղ է նստում Ամենայն Հայոց կաթողիկոսը, որովհետև այնտեղ է պահվում Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը, որով օրհնվում է սուրբ մեռոնը: Արդեն իսկ լավ ճանաչելով հայերին և այս բոլորը լսելուց հետո, որպեսզի փակի հայերի վերադարձի ճանապարհը, շահը միտք է անում Ս. Էջմիածինը քանդել և դրա հող ու քարը Պարսկաստան տեղափոխելով մի նոր Էջմիածին կառուցել: Որոշում է նաև

---

[7] Ց. Տէր-Յովհաննեան, հ. Բ, էջ 15:

[8] Նույն տեղում, էջ16:

[9] Ա. Դաւրիժեցի. Գիրք Պատմութեանց, Երևան, 1990, էջ180:

[10] Լ. Գ. Մինասյան, Նոր Ջուղայի եկեղեցիները.Նոր Ջուղա, 1992, էջ 10:

եկեղեցու տեղը. մի մեծ այգի Ջուղայի հյուսիս-արևելյան կողմում: Եվ այսպես իր մտքի որոշածը կատարելու համար մի օր էլ խոջա Նազարի և իր այլ մեծամեծների հետ գնում է այդ այգին և տեղը ցույց տալով՝ ասում խոջա Նազարին. «Վասն ձեր շինեմ աստ Էջմիածին, զի մի վասն այնմ Էջմիածնի կարօտութիւն կրեալ ճմլեսցին սիրտք ձեր, եւ հրամայեմ գնել բազում ուխտ եւ ջորի եւ սայլ, զի զքար եւ զհող այնր Էջմիածնի քանդեալ բերցեն աստ, զի այնու քարով եւ հողով շինեսցի այս Էջմիածին, որպէս զի առանց իմիք երկբայութեան հաստատեսցին սիրտք ձեր ի վերայ նոր շինեցելոյս»[11]: Բարեհիշատակ խոջա Նազարը, որն իհարկե, համաձայն չէր շահի առաջարկին, «զի կսկիծ էր սրտի նորա» խափանելու համար շահի որոշածը, ներքուստ խիստ անհանգստացած, բայց արտաքուստ հանդարտությամբ պատասխանում է այսպես. «Թագաւորն ողջ կայցէ, եթէ կամք քո յօժարեսցի շինել զԷջմիածին զեղեցիկ եւ հաստատ, կարող ես յարծաթոյ եւ յոսկւոյ շինել, թող թէ ի քարէ. եւ զինչ հարկ է յաղագս քարի եւ հողոյ յայսքան աշխատութիւնս կրել եւ որպէս զի ի հեռու եւ յօտար աշխարհէ քար եւ հող բերել: Բաւական եւ բարւոք է այս աշխարհիս քարն եւ հողն, եթէ կամիս շինել, սոքօք շինեա, եւ ընդունելի է մեզ»[12]: Այսպիսով, խոջա Նազարին հաջողվում է փոխել արքայի միտքը, բայց, այդուհանդերձ, շահի հրամանով, Թահմազդուլի խանի գլխավորությամբ Սուրբ Էջմիածնից բերվում են 15 կտոր քար՝ նոր եկեղեցի կառուցելու համար, որոնք 7 տարի մնում են Սպահանին մոտ Բաթուն գյուղում, մինչև որ գյուղացիների բողոքի հիման վրա քարերը հանվում են այդ գյուղից և մեծ շուքով տարվում «ի Խոջենց եկեղեցին», ուր և պահվում են ցայսօր: Բերվում է նաև Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, ոսկետուփ Ավետարանն ու արծաթյա խաչը: Եվ երբ մոտեցան քաղաքին, հայերն անսահման ուրախությամբ և ոգևորությամբ «...ելին ընդառաջ Լուսաւորչի Աջին՝ խաչվառով եւ Աւետարանաւ» խնկօք եւ մոմեղինօք, եւ երգօք-եղանակօք եւ բազում պատուով հասցրին ի տուն խոջա Սաֆարին»[13]:

Սուրբ Էջմիածինը քանդելու և քարերը Պարսկաստան տեղափոխելու արքայի մտադրությունը, ինչպես տեսնում ենք, չի իրականանում:

Այս բոլոր անցուդարձից հետո, երբ ջուղայեցիները իրենց հույսը կտրում են հայրենիք վերադառնալուց, նոր թափ է ստանում եկեղեցաշինությունը, ու մեկը մյուսի ետևից կառուցվում են Ս. Հովհաննու եկեղեցին, Ս. Կատարինեի մենաստանը, Ս. Բեթղեհեմը, Ս. Գրիգոր Լուսավորիչը և մյուսները:

Նախ ասենք, որ Ջուղայի եկեղեցիների մի մասը ի սկզբանե ունեցել են մեկ ուրիշ անուն, բայց հետագայում, երբ այդ եկեղեցիներ են բերվել սրբերի մասունքներ, դրանց անունները փոխվել և կրել են նույն սրբի անունը: Դրանցից են Ս. Ներսեսը

---

[11] Ա. Դավրիժեցի, էջ 183:

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում, էջ 190:

(Նախկինում Ավետյաց), Ս. Հովհաննեսը (Ս. Աստվածածին), Ս. Սարգիսը (Ամենափրկիչ), Ս. Նիկողայոսը (Ս. Աստվածածին), Ս. Մինասը (Ս. Լուսավորիչ): Ս. Ամենափրկիչ վանքի Մայր Տաճարը անցյալում հավանաբար կոչվել է նույն սրբի անունով, բայց հետո, երբ Ս. Հովսեփ Արեմաթացու Աջը բերվել է այդտեղ, անվանափոխվել է: Իրենց կառուցած եկեղեցիները ջուղայեցիները հիմնականում անվանել են այն նույն անուններով, որ ունեին Հին Ջուղայում:

Ջուղայի առաջին եկեղեցին է համարվում Ս. Հակոբ Մծբնա եկեղեցին, կառուցվել է 1606-7 թթ.: Իր փոքրության պատճառով այս եկեղեցին երբեմն անվանել են մատուռ, բայց իրականում դա մի օրինավոր եկեղեցի է, կանոնավոր կառույցով, բեմով, դասով:

Ջուղայի մեծ և վայելչաշեն եկեղեցիներից է նաև Ս. Գևորգ կամ Խոջենց ժամ կոչված եկեղեցին, որն իր մեծությունից ու վայելչագեղությունից բացի մեկն է Ջուղայի հնագույն եկեղեցիներից, կառուցվել է 1611 թ. խոջա Նազարի կողմից, որին կոչել են Մեծ Խոջա: Գտնվում է Փոքր Մեղդանում: Ըստ Հ. Տեր-Հովհաննյանի, 19-րդ դարի կեսերին բարի մադիկ օգնության հասնելով՝ վերակառուցել են այս եկեղեցին և փրկել անհետացումից: Այս եկեղեցին Ջուղայի հայտնի ուխտատեղիներից է նաև ոչ միայն Ս. Գևորգ զորավարի անունը կրելու պատճառով, այլ նաև այն քարերով, որ 17-րդ դարի սկզբներին Շահ-Աբասի հրամանով բերվել են Ն. Ջուղա: Որոշ գրչագիր մատյաններում այս եկեղեցին կոչվել է նաև Ս. Էջմիածին:

Հաջորդը Ս. Ստեփանոս եկեղեցին է, կառուցվել է 1614 թ. Հակոբջան թաղում, ժողովրդի նվիրատվություններով: «Է սա միանգ ի մեծաշէն եւ ի բարձրակառոյց եկեղեցեաց Ջուղայու»,- գրում է Տեր-Հովհաննյանը: Ս. Հովհաննես Մկրտչի անունը կրող եկեղեցին կամ Աջի ժամը գտնվում է Զարսու թաղում: Անցյալում կոչվել է Ս. Աստվածածին, իսկ ժողովրդի կողմից կոչվել է Աջի ժամ, որովհետև առաջին Աջը ունեցող եկեղեցին է: Կառուցվել է 1621 թվականին, ժողովրդի նվիրատվություններով, քառանկյուն է, խարսխված 4 սյուների վրա: Նորոգվել է 1859 թ. «ծախիւք եւ արդեամբ աստուածասէր աղայ Պօղոս Անդրէասի»:

Ջուղայի ամենափառավոր և շքեղակառույց եկեղեցին, իր ճարտարապետական հատուկ ոճով և հսկա գմբեթով, Ս. Բեթղեհեմ եկեղեցին է կամ, ինչպես գրում է Տեր-Հովհաննյանը՝ «Մէյդանի Բեթղահէմը»: Կառուցվել է 1627-28 թթ. խոջա Պետրոս Վեղիջանյանի կողմից, ունի բարձրակառույց շենք և հսկայական գմբեթ: 1850-ական թվականներին եկեղեցին ենթակա է եղել փլուզման, բայց 1870 թ. աղա Էլիազյանի միջոցներով վերանորոգվել է և փրկվել վեջնական խոնարհումից՝ ի պարծանք և հուրախություն Ջուղայի և հայ ժողովրդի,- գրում է Լ. Մինասյանը: Ավանդությունը այս եկեղեցու կառուցման մասին պատմում է, որ իբր այն հայ վարպետը, որը կառուցել է շահի մզկիթի գմբեթը, որպեսզի այլևս դրա նման մեծ գմբեթ չկառուցի, կտրում են նրա մեկ ձեռքը, բայց նա մեկ ձեռքով կառուցում է նրանից ա-

վեղի փառավորը: Եկեղեցին ամբողջությամբ նկարազարդ և ծաղկազարդ է: Նախկին Ս. Սարգիս եկեղեցին կամ «Օհանայ վանքը» չունի որոշ հիշատակարան, «թէ երբ կամ յումմէ շինեցաւ»[14]: Նոր Ջուղայի պատմագիրը, հենվելով մի գրչագրում եղած հիշատակարանի վրա, այն կառուցված է համարում 1609 թ.: Ամայացել է 19-րդ դարի կեսերին, իսկ սպասներն ու Ս. Սարգսի Աջը տարվել են Երևան թաղի Ս. Ամենափրկիչ եկեղեցի, որից հետո այդ եկեղեցին կոչվել է Ս. Սարգիս:

Ս. Սարգիսը (Ամենափրկիչը) կառուցվել է 1659 թ. ժողովրդի նվիրատվություններով: Այն թերևս ունեցել է նկարազարդումներ, բայց ներկայումս այն համարյա ամբողջությամբ սպիտակեցված է:

Նույն՝ 1659 թվականին է կառուցվել նաև Ս. Մինաս եկեղեցին, որը գտնվում է Դավրեժ թաղում (նախկինում՝ Ս. Աստվածածին): Կառուցվել է ժողովրդի հանգանակությամբ: Եկեղեցին կամարակապ է, պատերի վրա աչքի են ընկնում որմնախորշերի և պուճնազարդերի գունավոր զարդանկարները: Խորանն ամբողջովին նկարազարդ է: Վերանորոգվել է 1909 թ. հանգուցյալ Հ. Պողոսխանյանի կտակած գումարներով:

Բացի եկեղեցիներից, Ջուղայում կառուցվել է նաև մի կուսանոց-մենաստան: 1623 թ. Լազարյան «վեհազնեայ» հայտնի տոհմի նահապետ խոջա Եղիազարի ծախսով Զարսու թաղում կառուցվել է Ս. Կատարինեի մենաստանը (Կուսանաց Անապատ), որն ունեցել է խուցեր և աղոթատուն-եկեղեցի, որ ամեն մի մենաստանի հիմքն է կազմում: Եկեղեցին ունի պարզ ոճ, ոչ մեծ գմբեթ՝ ութ փոքր պատուհաններով, մկրտության ավազան: Եկեղեցու մի մասն ունի «զպատկերս տնօրինակացն Յիսուսի, իսկ առաստաղն է ծաղկազարդեալ, այլ ոչ գեղարուեստիս»[15]: Ավանդությունը պատմում է, որ Հայաստանից այստեղ են փոխադրվել երեք կույսեր, որոնց նկարները ասեղնագործվել են կտավի վրա: Անցյալում Անապատն ունեցել է 32 կույս: 1907 թ. Բազրատ Վարդազարյանի նախաձեռնությամբ քանդվել են կույսերի խցերը և կառուցվել է երկհարկանի մի շենք՝ որպես որբանոց-արհեստանոց, և մի քանի սենյակներ ևս՝ որպես գորգագործարան, որոնք նույնպես քանդվել են և դարձել սկզբում մանկատուն, ապա՝ ծերանոց, այնուհետև՝ բնակարան: Կույսերի մենաստանն ունի ընդարձակ պատմություն՝ իր միաբանների ծավալուն գործունեությամբ: 1858 թ. վանքում գործել է օրիորդների առաջին դպրոցը: Մենաստանի վերջին կույսը եղել է մայրապետ Եղիսաբեթ Իսրայելյանը, քույրը Երուսաղեմի երբեմնի Կյուրեղ Պատրիարքի, որը 1954 թ., կյանքից ձանձրացած, ինքնասպանություն գործեց: Անցյալում վանքը հայտնի է եղել նաև իր սառը ջրի ջրհորով, ինչպես նաև իր պատրաստած քաղցրավենիքներով՝ «գեազ»-ով ու «լոկզ»-ով:

---

[14] Ց. Տէր-Յովհաննէսեան, Ա. Ա., էջ 19:

[15] Ց. Տէր-Յովհաննէսեան, նույն աշխ., Ա. Բ., էջ 224:

Անցյալում այս բոլոր եկեղեցիները զանգի փոխարեն ունեցել են տախտակ, որի նմուշը դեռ պահվում է Ս. Կատարինեի մենաստանում: Առաջին անգամ Ս. Թովմաս եկեղեցու համար զանգ է բերվել, որի պատճառով էլ կոչվել է «Զանգով ժամ»: Եկեղեցին այժմ ավերված է:

Ինչպես արդեն ասացինք, Նոր Ջուղան իր հրաշալի նկարազարդված եկեղեցիներով միակն է ոչ միայն Սփյուռքում, այլև Մայր Հայրենիքում՝ կրկնակի գմբեթներով, ներսից կիսագնդաձև, իսկ դրսից՝ ձվաձև թաղանթներով: Մահմեդական ճարտարապետությանը բնորոշ այս լուծումը հայկական շինարվեստում հանդիպում է միայն Նոր Ջուղայում: Հայկական և պարսկական ճարտարապետության այսպիսի յուրատեսակ սինթեզի շնորհիվ Նոր Ջուղայի եկեղեցիները միակն են ճարտարապետության պատմության մեջ: Ընդունված է ասել ու կարծել, որ այս բոլոր նկարազարդումները ու որմնանկարները գծվել ու նկարվել են հայ արվեստագետների ձեռքով: 17-րդ դարից Նոր Ջուղայում գործել է հայկական կերպարվեստի դպրոց: Հայտնի նկարիչներ են եղել Մինասը, Հովհաննես Մրքուզը: Նրանց հետ կամ նրանց ղեկավարությամբ աշխատած նկարիչների՝ Դավթի, Կարապետի, Աբովի, Տեր-Ստեփանոսի, Ավետի, Մարտիրոսի և այլոց համար բնորոշ է հակումը դեպի իտալական և հռոմեական դասական արվեստի ավանդները, որոնց զուգակցվել են տեղական ոճական բազմազանությունը: Նրանց աշխատանքներում աչքի է զարնում արտաքին շքեղությունն ու կերպարների ազգային տիպականացումը: Այն հսկայական ազդեցություն է ունեցել սեֆյան արվեստի վրա (Ալի-Ղափու, Չեթել սոթուն պալատների նկարազարդումները): Նույն այդ դպրոցի նկարիչներից է եղել նաև Բոգդան Սոլթանովը: Ամենահայտնին եղել է Մինասը, որի անունը առաջին անգամ հիշատակել է Ա. Դավրիժեցին: Արխիվային վավերագրերը նույնպես վկայում են, որ Մինասը եղել է վարպետ-նկարիչ և մինչև անգամ Սպահանի բոլոր հայ և պարսիկ նկարիչների Վարպետը:

Նոր Ջուղայի եկեղեցիները, հատկապես Ս. Ամենափրկիչ վանքը, կտակների և նվիրատվությունների միջոցներով, ունեցել են մեծ թվով կալվածքներ՝ տներ, խանութներ, այգիներ, հողեր: Մեր հավատացյալ հայ ժողովուրդը մեծ սիրով ու գորովանքով է իր հարստությունից բաժին հանել ազգին ու եկեղեցուն: Եվ դա է պատճառը, որ եկեղեցիները, բացի իրենց ունեցած կրոնական սրբավայրի արժեքից, իրենց մեջ պարունակում են նաև այլ արժեքներ՝ նկարներ, ոսկյա և արծաթյա իրեր ու սպասներ, փայտե ու քարե արվեստի արժեքներ, խաչքարեր, պատմական արժեք ներկայացնող տապանաքարեր, որոնք վերաբերում են եկեղեցիները կառուցողներին ու բարերարներին, նահատակներին ու արհեստավորներին: Այս տապանաքարերից հայտնի են Ս. Բեթղեհեմ եկեղեցու բակում թաղված խոջա Պետրոսի, նահատակ Սիմոն Հայրապետյանի հուշաքարերը: Աստվածածին եկեղեցում թաղված են եկեղեցին կառուցող խոջա Ավետիքը, իր կինը, աֆղանների կողմից սպանված

բժիշկ Մինասի որդի Հարությունը և ուրիշներ: Ս. Ամենափրկիչ վանքի բակում թաղված են մեծ թվով հոգևորականներ, առաջնորդներ, աշուղներ, ոսկերիչներ:

Ներկայումս Նոր Ջուղայում կան 11 կանգուն եկեղեցի և 2 վանք: Եկեղեցիների կես մասը՝ թվով 12, ժամանակի ընթացքում խնամող ձեռքերի պակասի հետևանքով և հայերի հեռանալու պատճառով լքվել, ավերվել և շատերն էլ անհետացել են և այսօր դրանցից, բացի անուն ու հիշատակ, ցավոք, ոչինչ չի մնացել, իսկ մի քանիսի տեղն անգամ հնարավոր չի եղել ճշտել: Դրանցից են՝ Ս. Անանիա առաքյալ, Ս. Աստվածածին (Գասկեցվոց), Ս. Հոգի, Ս. Հրեշտակապետաց և այլն:

Ամփոփենք. Նոր Ջուղայում կառուցված առաջին եկեղեցին է համարվում Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի անունը կրող եկեղեցին, ամենափառավորը Ս. Ամենափրկիչ վանքի Մայր տաճարն է և Ս. Բեթղեհեմ եկեղեցին, ամենագեղեցիկ նկարազարդումներովը՝ Ս. Աստվածածինը, ամենամեծն իր չափերով՝ Ս. Ստեփանոսը:

Բացի որմնանկարներից, Ջուղայի եկեղեցիներից մի քանիսը զարդարված են նաև գունավոր ու նկարազարդ հախճապակիներով, որոնցից ամենահինը պատրաստվել է 1651-1666 թթ. (Ս. Աստվածածին եկեղեցու համար): Որպես ուխտատեղի ամենահայտնին Ս. Սարգիս եկեղեցին է: Նոր Ջուղայի եկեղեցիներում, սկսած կառուցման հենց սկզբից մինչև 19-րդ դարի վերջը, հավաքվել են մեծ թվով խաչքարեր, որոնք, բացի իրենց պատմական արժեքից, ունեն նաև գեղարվեստական արժեք: Արտաքին պատերին ամենաշատ խաչքարեր ունեցողը Ս. Ստեփանոս եկեղեցին է: Առաջին օրիորդների դպրոցը բացվել է Ս. Կատարինեի մենաստանում, 1858 թ.: Առաջին «Աջն» ունեցող եկեղեցին եղել է Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որի համար էլ ժողովուրդն այն անվանել է «Աջի ժամ»:

Ավերված եկեղեցիների մեջ ամենափառազարդն է եղել Ս. Հակոբ կամ Մուրադենց եկեղեցին: Անունին կից բառը ցույց է տալիս, որ այն կառուցվել է Մուրադենց տոհմի կողմից, 1632 թ.: Եկեղեցին կոչվել է նաև Խիարաբմբեթ՝ գմբեթի շերտ-շերտ կառուցված լինելու պատճառով: Ս. Նազարեթ եկեղեցին կոչվել է նաև Փոանիշինի (նշանակում է՝ փառավոր շինվածք ունեցող), կառուցվել է 1611 թ. և համարվում է Ջուղայի առաջին և հիմնավոր մեծ եկեղեցին՝ Ս. Հակոբից հետո, որի պատճառով էլ ստացել է իր երրորդ անունը՝ Նորաշեն: Եղել է ամենից շուտ կառուցվողներից և, ցավոք, նաև առաջին լքվող ու ավերվողներից մեկը:

Թե՛ Սպահանում, և թե՛ Նոր Ջուղայում եղել են նաև կաթոլիկ եկեղեցիներ, որոնք պատկանել են ինչպես հայ, այնպես էլ եվրոպացի կաթոլիկ հավատացյալների: Հայ կաթոլիկները,- գրում է Լ. Մինասյանը,- ջուղայեցիների հետ եկել են նաև Հին Ջուղայից: Դրանցից ամենահայտնին եղել է Ծաղրիմանյանների մեծահարուստ տոհմը, որոնք բնակություն են հաստատել Ջուղայում, ուր և հիմնել են իրենց եկեղեցին՝ Ս. Ավետյացը: Կաթոլիկ եվրոպացիները ևս ունեցել են մի քանի եկեղեցիներ թե՛ մայրաքաղաքում, թե՛ Ջուղայում, որոնցից այժմ կանգուն է միայն մեկը՝

Դոմինիկյանց վանքը, որի եկեղեցին կրում է Ս. Վարդարանի (Ռոզարիա) անունը և համարվել է Ջուղայի հայ կաթոլիկների առաջնորդանիստը: Այժմ թափուր է, կառուցվել է Քոչեր թաղում, 1705 թ.:

Ներկայումս Սպահանում կա մի մատուռ՝ Ս. Կույսի անունով, որը կառուցվել է 1838-39 թթ., ուր հիմնվել է նաև դպրոց և աղջիկների գիշերօթիկ: Այս մատուռը կառուցել են ֆրանսիացի լազարիստ կաթոլիկները:

18-րդ դարի վերջին, Իրանի մայրաքաղաքը Թեհրան փոխադրվելուց հետո, Սպահանը կորցրել է իր նախկին նշանակությունը:

Ներկայումս Նոր Ջուղան Սպահանի թաղամասերից մեկն է: Այժմ էլ այն մնացել է որպես թեմական և մշակույթի կենտրոն: Գործում են տպարանը, Նոր Ջուղայի թանգարանը, գրադարանն ու Մատենադարանը, որը գտնվում է Ս. Ամենափրկիչ վանքի տնօրինության ներքո: Մատենադարանի հավաքածուն սկսել է կազմվել դեռևս 17-րդ դարի 1-ին կեսին, վանքի և եկեղեցիների սեփականությունը կազմող ձեռագրերից: Հետագայում հարստացել է նվիրատվություններով և գնումներով: Ունի շուրջ 600 ձեռագիր (40-ը՝ մագաղաթյա): Ամենահինը 10-րդ դարի մագաղաթյա Ավետարանն է: Ձեռագրերի մեծ մասն ունի ընտիր մանրանկարչական նկարազարդումներ:

ԱՐԱՄ ՀԱԿՈԲԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Մ. Խրիմյան և Ն. Վարժապետյան)

Կ. Պոլսի պատրիարքությունը ստեղծել է 1460 (1461) թվականին սուլթան Մուհամմեդ 2-րդը: Քանի որ Թուրքիան կառուցված էր համայնքների (միլեթ) սկզբունքով, այսինքն ազգերն ընդունվում էին իրենց դավանանքով, այդ պատճառով պատրիարքությունն սկզբից ևեթ ձեռք բերեց զգալի արտոնություններ և դարձավ Օսմանյան կայսրության մեջ բնակվող հայերի կրոնական բարձրագույն հիմնարկությունը, նրանց ներքին գործերը կարգավորող հաստատությունը: Պատրիարքները լուծում էին ոչ միայն կրոնական, այլև սոցիալ-տնտեսական, ընկերային բնույթի հարցեր: Պատրիարքը ազգային շահերի արտահայտիչը, ղեկավարն ու պատասխանատուն էր: Նրա կայացրած որոշումները պարտադիր էին, իսկ անհրաժեշտության դեպքում դիմում էին պետական ուժի օգնությանը: Պատրիարքները թրքական կառավարության նկատմամբ վարել են խիստ զգուշավոր քաղաքականություն, որով ցանկացել են ազգի համար ստեղծել գոյության տանելի պայմաններ, իսկ հնարավորության դեպքում՝ ձեռք բերել առանձնաշնորհումներ:

Պատրիարքության ներքին ինքնուրույնությունը, ազգային-վարչական կենտրոնին բնորոշ գործառույթների իրականացումը և դրանց հետ կապված ազգային-քաղաքական պատրանքները հիմք հանդիսացան, որպեսզի Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Սերվիչենը և մի քանի այլ մտավորականներ բուրժուական սահմանադրության սկզբունքներով մշակեն մի կանոնադրություն, որը պատրիարքը հաստատեց 1860 թ. մայիսի 24-ին: Նահապետ Ռուսինյանի առաջարկությամբ կանոնադրությունն անվանվեց Ազգային Սահմանադրություն, որով էլ սկսեցին առաջնորդվել արևմտահայերը՝ պատրիարքի գլխավորությամբ:

Մինչև 1868 թ.՝ Մկրտիչ Խրիմյանի պատրիարք ընտրվելը, արևմտահայությանը ներկայացրել, նրա անունից խոսել և գործել է Կ. Պոլսի մտավորականությունը:

1860 թ. Ազգային Սահմանադրության ընդունումը խթանեց հայության ամբողջականության ըմբռնման տարածմանը, իսկ Մ. Խրիմյան Պատրիարքը ամրապնդեց այդ գործընթացը:

Գավառներից եկող բողոքներով զբաղվել են բոլոր պատրիարքները, առավել կարևորները ներկայացրել են Բ. Դուռ: Բողոքարկման մեխանիզմը եղել է հետևյալը. Բ. Դուռը ստանալով պատրիարքի ուղարկված տեղեկագիրը, հրամանագիր է ուղարկել անօրինականություններ, չարաշահումներ տեղի ունեցած նահանգի կուսակալին, կուսակալը հրահանգել է սանջակի պետին, վերջինս հրահանգը փոխանցել է գազայի պետին կամ գյուղապետին: Տեղում կատարվածի մասին պատրաստվել է համապատասխան տեղեկանք-արձանագրություն (որը ստորագրել են նաև հայերը՝ վախի կամ ակնկալիքի ազդեցության տակ), որը հակառակ հերթականությամբ հասել է Բ. Դուռ, առանց որևէ գործնական արդյունքի: Հանցագործությունները, թալանը, հարստահարությունը շարունակվել են, կատարողները եղել են հայտնի, բայց ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել: Մ. Խրիմյանը փոխեց բողոքարկման մեթոդաբանությունը: Նա որոշեց Բ. Դուռ ներկայացնել ոչ թե հարստահարության, անարդարության առանձին դեպքեր, այլ արևմտահայության վիճակի ընդհանուր պատկերը: Այդ նպատակով Ներսես Վարժապետյանի գլխավորությամբ ստեղծեց հանձնաժողով, որը, 10 ամիս տեղերում ուսումնասիրություններ կատարելուց հետո, գավառահայության մասին ներկայացրեց մի տեղեկագիր, որում նշվում են.

ա. Պետական տուրքերի գանձման մեջ թույլ տրված անկարգությունները:

բ. Կառավարական պաշտոնյաների զեղծումները:

գ. Դատարանների կողմից քրիստոնյաների վկայությունների մերժումը:

դ. Ջանգազան անձերի հարստահարությունները:

Տեղեկագրից բացի ներկայացվում են նաև գործնական առաջարկություններ, մասնավորապես.

ա. Քրիստոնյաներից զինվորական տուրքի փոխարեն զինվորական ծառայություն պահանջել, ինչպես նախատեսված է թանզիմաթով:

բ. Տուրքերի գանձումն իրականացնել Ազգային վարչության միջոցով:

գ. Կենտրոնական իշխանության կողմից քննիչ մարմին ուղարկել գավառներ՝ իրական պատկերը պարզելու համար:

դ. Դատական խնդիրները քննել քաղաքացիական և ոչ թե կրոնական օրենքներով:

ե. Քրդերի, չերքեզների և այլ թափառաշրջիկ ցեղերի կողմից զենքի օգտագործումն արգելել կամ ինքնապաշտպանության համար խաղաղ բնակչությանը զենք օգտագործելու իրավունք տալ:

Տեղեկագիրը լուրջ ուշադրության արժանացավ, բայց կիսեց նախորդների ճակատագիրը: Այսուհանդերձ, Մ. Խրիմյանի ներկայացրած տեղեկագիրը պատմական արժեք է ներկայացնում, որովհետև այնտեղ խոսվում է հայության ընդհանուր

վիճակի մասին և ներկայացնում արևմտահայության գոյության ընդհանուր պատկերը:

Պատրիարքները (այդ թվում՝ Մ. Խրիմյանը) գավառահայության հարցի բարձրացման մեջ տեսել են միայն տնտեսական-ընկերային բովանդակություն, որի լուծումը կապել են թրքական կառավարության հետ, այսինքն՝ խնդիրը դիտել են որպես Թուրքիայի ներքին հարց: Նույն տեսանկյունից է հարցին մոտեցել նաև կառավարությունը և հայերի բողոքների մեջ քաղաքական դիտավորություն չի տեսել: Կ. Պոլսի հայ ամիրայական դասը, մտավորականության և բարձրաստիճան հոգևորականության զգալի մասը թրքական պետությունը նաև իր պետությունն է համարել և նրանից է սպասել իր հարցերի լուծումը: Այսպես օրինակ, դեռևս 1862 թ. Արմենակ Հայկունին գրում է. «Գիտէ նա (թրքական կառավարությունը - Ա. Ս.) թէ Հա՛յ Ազգը իւր ամենահաւատարիմ հպատակն է..., Հայը ինչպէս որ հինգ դարերէ հետէ հաւատարմութեամբ ծառայած է Իրեն երախտագիտաբար, նոյնպէս ալ ասկից վերջը պիտի շարունակէ իւր ընթացքը ինչպէս որ օրինաւոր է եւ վայելուչ, իւր կողմանէ միշտ վստահ լինելով թէ իւր Տէրը կը սիրէ զինքը եւ միշտ պատրաստ է շնորհել իրեն որ եւ իցէ արտօնութիւն մը որ արժան եւ կարեւոր է իւր ներքին եւ արտաքին կացութեան բարեկարգութեանը, լուսաւորութեանը եւ յառաջադիմութեանը համար»[1]:

Գրեթե նույնն է ասում Ե. Տեմիրճիպաշյանը 1883 թ: Նրա խոսքերով «Հայք՝ Օսմանեան պետութենէն ուրիշ պետութեան մը ներքեւ՝ չէին կրնար աւելի խղճի եւ մտաց ազատութիւն վայելել, եւ թէ կը հաւատան Հայք՝ երկրի բոլոր բնակչաց հետ՝ կատարեալ բարօրութիւն վայելել ընդ հուպ բարեկորոգմանց անխափան գործադրութեամբ»[2]:

Համեմատելով թաթար-սելջուկյան, մոնղոլական, պարսկական և նույնիսկ ռուսական տիրապետության հետ, արևմտահայ մտավորականների մի մասը թրքական գերիշխանությունը համարել են նվազագույն չարիք: Ահա թե ինչու, հավանաբար դիվանագիտություն չէր բանեցնում Մ. Խրիմյանը, երբ ասում էր, թե «Ես Տէրութեան եւ Ազգին շահերը իրարմէ տարբեր չեմ ճանչնար»[3]: Հավանաբար դիվանագիտություն չէր բանեցնում նաև Խրիմյանին հաջորդած Ներսես Վարժապետյանը, որն իր ամենաթրքահաճ շրջաբերականներից մեկում գրում էր. «Այն օրէն ի վեր որ Հայոց ազգին ամենամեծ մասն Օսմանեան հզօր Տէրութեան հպատակաւէր քաղցր հովանւոյն ներքեւ մտաւ, իւր հինգ դարուց պատմութիւնը կը ցուցանէ, թէ ի՞նչ մեծամեծ շնորհներ իրեն պարգեւած է այս հզոր Տէրութիւնը: Եթէ այսօր Թուրքիոյ մէջ կը տեսնենք Հայ ազգը՝ որ կը պահէ իւր Կրօնը, իւր Եկեղեցին, իւր Լեզուն,

---

[1] Ա. Հայկունի, Հայ ազգ եւ Սահմանադրութիւն, «Մաղիկ», 1862, թիվ 35, էջ 289-290:

[2] Ե. Տէմիրճիպաշեան, Ժամանակակից պատմութիւն, «Գրական եւ իմաստասիրական շարժում», 1883, տետր Բ, էջ 40:

[3] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 414:

իւր Պատմութիւնն ու աւանդութիւնները, վերջապէս եթէ այսօր Հայ ազգն կը զգայ իւր Էութիւնը, նոյն բարեխնամ Տէրութեան շնորհաց արդիւնքն են... Հայոց ազգն ալ իւր այս վայելած շնորհներուն փոխարէն հաւատարիմ հպատակութիւն ցուցած է արդեամբ, եւ յարատեւ երախտագիտութիւն իւր սրտին մէջ կրած է յորդոց յորդիս: Ինչ ասպարէզ որ բացուած է իր առջեւ, հոն բերած արգասաւորած է իւր բոլոր մտաւորական, բարոյական եւ նիւթական կարողութիւնները եւ ապացուցած է այսու՝ թէ Օսմանեան Պետութեան ամենակարեւոր տարրն է... Ստոյգ է թէեւ որ Հայ ազգը մէրթ ընդ մէրթ գաւառներու մէջ բարեխնամ Տէրութեան կամաց հակառակ հարստահարութեանց ենթակայ եղած ալ է, հարստահարութիւնք՝ որոնք միայն մարմինը կը վնասեն, եւ հեռի են այն տեսակ հարստութիւններէն՝ որոնք ոգին եւ մարմինը միանգամայն կը վնասեն եւ ազգային գոյութեանը կը սպառնան... Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է. նոյն իսկ Հայուն Կրօնը, Դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը եւ պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է»[4]:

Այնքան մեծ էր այդ շրջաբերականի թողած բացասական ազդեցությունը (հատկապես արևելահայոց շրջանում), որ Գրիգոր Արծրունին այն բնութագրեց որպես «խայտառակ և ամօթալի»[5]:

Այս շրջաբերականում հստակ երևում է երկու հանգամանք. ա) թրքահպատակությունը նախընտրելի է համարվում ռուսահպատակությունից, որովհետև, ըստ պատրիարքի, Թուրքիայում հարստահարությունները վնաս են հասցնում միայն մարմնին, իսկ ոգին առողջ պահելու դեպքում վտանգը մեծ չէ, և ազգը կարող է գոյատևել, մինչդեռ Ռուսաստանը ոգուն է խփում, ինչը մեծացնում է ազգի ձուլման վտանգը, բ) Ներսեսը և նրա շրջապատը համոզված էին, որ հայերը Օսմանյան կայսրության ամենակարևոր տարրն են: Թուրքիայի համար հայ տարրի կարևորության հավատն այնքան խորն էր նստած պոլսահայ շրջանակներում, որ արմատախիլ չեղավ նույնիսկ եղեռնից հետո: Ահա թե ինչ է գրում Մաղաքիա Օրմանյանը եղեռնից հետո. «Հայը Թուրքիոյ անհրաժեշտ տարրն է... Թուրքիոյ գաւառները շէնցնողը, հողը մշակողը, արհեստներուն հետեւողը, առեւտուրը ապահովողը հայն է... Հայը Թուրքիայէն պակսեցնողը Թուրքիոյ ոխերիմ թշնամին եղած կ'ըլլայ... Թուրքիոյ կայսրութեան շինուածին քարը Թուրքն է, շաղախը հայն է...»[6]:

Ներսես Պատրիարքը իր թրքասիրության հաջորդ օրինակը ցույց տվեց 1877 թ. ապրիլի 14 (26)-ին Անգլիայի դեսպան Լեյարդի հետ ունեցած հանդիպման ժամանակ, երբ ասաց. «...հայ ազգը շատ աւելի կը գերադասէ օսմանեան վարչութեան տակ մնալը, քան թէ ռուսական իշխանութեան ենթարկուելը: Հայերը Թիւրքիայում բոլորովին ազատ են իրենց կրօնը դաւանելու եւ գործադրելու, մինչդեռ Ռուսաստա-

---

[4] Ներսէս Պատրիարքի շրջաբերականը. «Մշակ», 1876, թիվ 33, էջ 3:

[5] Նույն տեղում, էջ 1:

[6] Մ. Օրմանեան. Խոհք եւ խօսք. Երուսաղեմ, 1929, էջ 337-338:

նում այդպէս չէ... Հայերի շահերը նոյնն են թիւրքերի շահերի հետ, եւ նրանք յոյս ունեն աւելի զարգացնել եւ աւելի մեծ ազատութիւն վայելել օսմանեան հպատակ մնալով, քան թէ ռուսահպատակութիւն ընդունելով... թուրք կառավարութիւնը պարտատոր է հայ ժողովրդի մէջ տիրող այս ոգին քաջալերել... եթէ Բ. Դուռը փաստերով ցոյց տայ, թէ մտադիր է հայերի հետ արդարութեամբ վարուել... նա կարող է հայերից մի ազգային պահակախումբ կամ քաղաքային պահակների գունդ կազմել, որ մահմեդականների հետ միասին իրանց ընդհանուր հայրենիքն եւ քաղաքները կը պաշտպանեն ռուս արշատղների դէմ»[7]: Այս մտքերը դարձյալ զայրոյթ առաջացրեցին հայկական միջավայրում, և Ն. Վարժապետյանը ստիպված հերքում հրապարակեց: Բացի այդ, թեև Ներսեսը խոսում էր ժողովրդի անունից, բայց ժողովրդի իրական տրամադրությունները չէր արտահայտում, որովհետև բուն հայրենիքում ապրող հայությունը ռուսասեր էր, իսկ երբ գավառներից Կ. Պոլիս լուրեր հասան նահանջող թրքական բանակի և քրդական հրոսակների կողմից հայկական գյուղերում կատարած բարբարոսությունների մասին՝ Կ. Պոլսի հայության տրամադրությունները փոխվեցին նույնպես: 1877 թ. հունիսի 14-ին թրքական պառլամենտի նիստերից մեկում հայ պատգամավորները առանց վախի իրենց զայրոյթն արտահայտեցին կատարված դեպքերի կապակցությամբ: Պատգամավոր Պալլարյանն ասաց. երբ ինքը հարցնում է կուսակալներին, թե ինչո՞ւ չեն պատժում քրդերին, իրեն պատասխանում են, թե այս գործում «հիքմեթը հիքիմեթ կայ (վերապահեալ պետական գաղտնիք)»[8]: Պարզվում է, այդ գաղտնիքի իմաստը հետևյալն է. կառավարությունը քրդերին զինում է, որպեսզի նրանք Հայաստանում ապրող հայերին զսպեն ապստամբության դեպքում: Հայերին պառլամենտում պաշտպանեցին հույն և նույնիսկ մի քանի մահմեդական պատգամավորներ և պահանջեցին Բ. Դռնից ազդու միջոցներ գործադրել բռնությունների դեմն առնելու համար: Սա Հայկական խնդրի առաջին հրապարակային քննությունն էր թրքական պաշտոնական շրջաններում, ինչը դուր չեկավ կառավարությանը, իսկ սուլթանն ի վերջո ցրեց խորհրդարանը: Այս ընթացքում Վանում տեղի ունեցած դեպքերը (հրդեհը և ջարդերը) ճնշող տպավորություն թողեցին մայրաքաղաքի հայության և եվրոպական դեսպանատների վրա: Ստեղծված մթնոլորտը թուլացնելու նպատակով սուլթանը կազմակերպեց հանդիպում պատրիարքի հետ: Այդ հանդիպումը տեղի ունեցավ 1877 թ. օգոստոսի 10-ին: Սուլթանը պատրիարքին նվիրեց Օսմանիե շքանշան, իսկ պատրիարքը դիմելով սուլթանին ասաց. «Երանի թէ այսպիսի բարի եւ հազուագիւտ եւ *հրնշտականման թագաւորի* մը արժանատոր հպատակն ըլլայինք»[9]:

---

[7] Մեջբերումը տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 185-186:

[8] Նույն տեղում, էջ 192:

[9] Մեջբերումը տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ. Ա, էջ 205:

Տեղի ունեցած իրադարձությունները չփոխեցին Ներսես Վարժապետյանի կարծիքը, և նա շարունակում էր մնալ այն համոզմանը, թե պետք չէ գործել Թուրքիայի դեմ և դիմել օտար տերություններին, այլ թրքական կառավարության միջոցով ձեռք բերել բոլոր այն առանձնաշնորհումները, ինչը անհրաժեշտ է Հայաստանին: Բայց քանի որ թրքական կառավարությունն այլևս հավատ չէր ներշնչում, այդ պատճառով էլ պատրիարքը կորցնում էր ժողովրդի համակրությունը: Ներսեսի որդեգրած քաղաքականությանը դեմ էին նաև բարձրաստիճան հոգևորականները: Նրանք նույնպես պահանջում էին փոխել քաղաքականությունը, դիմել օտար տերություններին: Բայց, ըստ Ազգային սահմանադրության, ազգային գործերի ղեկը պատրիարքի ձեռքին էր, նա Ազգային վարչության պետն էր, Ազգային ժողովի նախագահը: Հետևաբար, Ներսեսին պետք էր պարտադրել փոխելու քաղաքականությունը: Պատմական այս պահին դարձյալ ասպարեզ եկավ Մ. Խրիմյանը: Նա պատրիարքությունից հրաժարվելուց հետո ապրում էր Բոսֆորի ափին գտնվող Կուստունջուք փոքրիկ գյուղում և զբաղվում գրականությամբ: 1877 թ. նոյեմբերյան մի օր Կուստունջուքի իր բնակարանում Մ. Խրիմյանը հրավիրեց եպիսկոպոսներին և առաջարկեց տապալել Ներսեսին և նոր քաղաքական կուրս որդեգրած մարդու առաջադրել պատրիարք: Բայց, մինչ այդ, որոշվեց տեսակցել Ներսեսի հետ և համոզել նրան փոխելու քաղաքականությունը: Պատվիրակությունը հանդիպեց Ներսեսին և համոզեց նրան: Ներսեսը հայտարարեց. որտեղ ազգի շահերն են, այնտեղ էլ ինքն է, պարզապես պահանջեց միաբանություն[10]: Այսպես տեղի ունեցավ Ներսեսի շրջադարձը, որին նպաստեցին նաև արտաքին քաղաքական հանգամանքները: Փաստորեն Ներսեսի նոր գծի որդեգրումը ձեռնտու էր և՛ Թուրքիային, և՛ Անգլիային, որոնք այդ ժամանակահատվածում ցանկանում էին Ռուսաստանի կողմից գրաված տարածքներում հայերի միջոցով ստեղծել մի արգելակ պետություն՝ Թուրքիայի հովանու ներքո, և դրանով իսկ առնել ռուսական առաջխաղացման դեմը:

Բայց մինչև ամբողջական շրջադարձը, Ներսեսը թրքասիրության մի օրինակ ևս ցույց տվեց: Թրքական կառավարությունը բարձրացրեց քրիստոնյա հպատակների զինվորագրության հարցը: Այդ հարցը քննարկելու համար 1877 թ. նոյեմբերի 25-ին հրավիրված Ազգային ժողովը դեմ դուրս եկավ զինվորագրությանը: Ներսեսը դժգոհ մնաց և հրաժարական տվեց: Հրաժարականը մերժվեց:

1878 թ. հունվարի 19-ին կնքվեց Ադրիանապոլսի զինադադարը, որում ակնարկ իսկ չկար հայերի մասին, կարծես թրքական տիրապետության տակ տառապող այդպիսի ազգ գոյություն չուներ: Այդ հանգամանքը խուճապի մատնեց պոլսահայ ղեկավարությանը: Օգտվելով այն հանգամանքից, որ Ազգային ժողովը ազատ գործելու հնարավորություն է տվել, Ներսեսը որոշեց անմիջապես դիմել ռուսական

---

[10] Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ. Բ, էջ 266:

կառավարությանը: Նա ստեղծեց գաղտնի պատգամավորական խումբ, որը հանդիպելու էր ռուսական ներկայացուցիչների հետ, իսկ մինչ այդ նման հանդիպում ունեցավ Էդիրնեի (Ադրիանապոլսի) առաջնորդ Գևորգ Ռուսչուգլյանը (Ռուսճուգլեան): Ողջունելով Իգնատևին և ռուսների կողմից Հայկական հարցի լուծման հույսը հայտնելով, նա լսում է Իգնատևի հետևյալ պատասխանը. «...բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասը պիտի չկարենայ գտնել առ այժմ այն ազատութիւնը, զոր ունեցած են պուլղարք, *վասնզի հայք անպատրաստ գտնուեցան եւ Հայաստանի մէջ դարձած են մեռեալ տարերք*... Բայց մի վհատիք, կը յուսադրեմ զձեզ: Քանի որ Թիւրքիոյ հպատակ էք, ապագայի յուսով, *այս վայրկեանես սկսեցէք պատրաստ լինիլ*, պատրաստ՝ դաստիարակութեամբ, ուսմամբ եւ քաղաքագիտութեամբ, պատրաստ՝ նիւթապէս եւ բարոյապէս, պատրաստ՝ ներքին կազմակերպութեամբ. պատրաստ եղիք այն օրուան համար, յորում քաղաքականութիւնը պիտի առաջնորդէ զձեզ յազատութիւն, եւ ես պատրաստ եմ միշտ օգնել ձեզ: *Պատրիարքնիդ թող ժամանակաւոր չլինի*, թող սկսէ գործելու, ժամ է»[11]: Ռուսչուգլյանը տեսակցության արդյունքների մասին Ներսեսին հայտնեց հունվարի 20-ին: Եվ Ներսեսը սկսեց գործել: 1878 թ. փետրվարի 25-ին, սուլթանի գիտությամբ, Ներսեսը հանդիպեց ռուսական բանակի ղեկավարության հետ և առաջարկեց հայերին տալ այն, ինչ տրվելու էր մյուսներին (հայերի ցանկացածը ինքնավարությունն էր Լիբանանի օրինակով): Բայց արդյունքում ունեցանք Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, որով Հայկական հարցը Թուրքիայի ներքին հարց լինելուց փոխակերպվեց Ռուսական հարցի:

16-րդ հոդվածից հայերը դժգոհ մնացին, որովհետև չստացան այն, ինչ ցանկանում էին, բայց որոշ գոհունակություն էլ կար, որովհետև, ինչպես Նար-Պեյն էր Գևորգ կաթողիկոսին գրում. ա) Հայաստան անունը պաշտոնապես ընկալելի դարձավ Օսմանյան կայսրության համար, բ) Խոստացան և երաշխավորեցին ամբողջական բարեկարգություններ կատարել Հայաստանում, գ) Հնարավորություն ստեղծվեց ռուսական պետությանը դիմելու միջոցով ստիպել Բ. Դռանը իրականացնելու 16-րդ հոդվածի պահանջները[12]: Այդ նույն հոդվածի հետ կապված Ներսես Վարժապետյանն Ազգային ժողովում ասաց. «Հիմա տիարք պատվականք, ալ մոռացած չենք, ալ այն անհանդուրժելի սոսկալի մոռացումը վերացավ: Հիմա «Հայ ենք» ըսելու սկսան չամչնալ անոնք՝ որ կամչնային երբեմն»[13]:

Երբ պարզ դարձավ, որ մեկ ուրիշ վեհաժողովում վերաքննվելու է Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, Ներսեսն ակտիվ գործունեություն ծավալեց, որպեսզի ոչ միայն պահպանվի 16-րդ հոդվածը, այլև ավելի մեծ նվաճումներ ձեռք բերի ի

---

[11] Մեջբերումը տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), Ա. Բ, էջ 270-271:

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 292:

[13] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1877-79, 2-ը յունիսի 1878, էջ 4:

նպաստ հայ ժողովրդի: Սկսեց Բեռլինի վեհաժողովը, որի հետ մեծ հույսեր էին կապում հայերը և Ներսես Պատրիարքը: Պատգամավորների պահանջով իր կատարած աշխատանքների մասին Ազգային ժողովին տեղյակ է պահում Ներսեսը՝ ասելով. «Հայոց խնդիրը իր արժանաւոր կերպովը ներկայացած է թէ՛ Բ. Դրան, եւ թէ՛ եւրոպական տէրութեանց: Բ. Դուռն իր պաշտպանութիւնը խոստացաւ, եւրոպական տէրութիւնք ամենքն ալ իրենց համակրութիւնը յայտնեցին եւ ամենէն ալ խօսք առած եմ, որ դեսպանաժողովին մէջ նկատողութեան պիտի առնուի մեր ազգին վիճակն ալ. հասարակաց կարծիքն ալ այսօր Եւրոպայի մէջ ոչ եւս անտարբեր է մեզի համար»[14]: Հուսադրող պատասխանն այնքան ոգևորեց, որ Իզմիրլյանը իր ընկերների անունից ջերմ շնորհակալություն հայտնեց պատրիարքին, որ «անկուն արիութեամբ աշխատած է եւ կ'աշխատի ազգին խնդրոյն համար»: Եվ Իզմիրլյանից սկսած բոլոր պատգամավորները «լուզեալ սրտիւ» ոտքի ելնելով համբուրեցին Նորին Սրբութեան աջը»[15]:

Ներսեսի Եվրոպա ուղարկած պատվիրակությունն իր գործունեությամբ սկսեց անհանգստացնել Բեռլինում գործող թրքական պատվիրակությանը, և Կարաթեոդոր փաշան սուլթանի միջոցով պահանջեց հայկական պատվիրակությանը հետ կանչել Բեռլինից: Ներսեսը հրաժարվեց: Այս անգամ Ներսեսի արարքը արժանացավ Գրիգոր Արծրունու հիացական վերաբերմունքին և նա գրեց. «Թուրքիայի հայոց հոգեւորականութիւնը արժանի է դառնում ամբողջ ազգի խորին համակրութեանը... Այժմ մենք չենք կարող չը յայտնել նրան (Ներսեսին - Ա. Ս.) մեր կատարեալ համակրութիւնը, մեր յարգանքը, երբ նա իր քաջ վարմունքով, իր վեհանձն պատասխանով կրկին յարուցանում է հայ մարդու հոգու մէջ հինգերորդ դարի հայոց հոգեւորականութեան յիշատակը: Աշխարհը կը յարգէ հայերին միայն այն ժամանակ, երբ ամենքը կը տեսնեն որ հայը իր կեանքի գնով պաշտպանում է իր անձը, իր պատիւը, իր ազգի իրաւունքները»[16]:

Բեռլինի վեհաժողովում ծնվեց 61-րդ հոդվածը, որով Հայկական հարցը դարձավ Միջազգային հարց: Պատվիրակությունն իր բողոքը հայտնեց ու հետ վերադարձավ: Սկսեց ձեռք բերածի արժեքավորման խնդիրը: Զևավորվեցին երկու իրարամերժ մոտեցումներ: Առաջինը լավատեսականն էր, որը ներկայացնում էին Ներսես Պատրիարքը, Բեռլինից վերադարձած Մինաս Չերազը և Խորեն Նարբեյը: Չերազը գտնում էր, որ հայերը Բեռլինում շահել են և անհնար էր «աւելի շահել լեզուով և գրիչով»[17] (նույնն էին ասում նաև Ներսես Պատրիարքն ու Խորեն Նարբեյը), իսկ շահածն էլ մի ոսկեհանք է, մեզ մնում է միայն «խիզախել եւ հանել ոսկին»[18]:

---

[14] Նույն տեղում, էջ 8:

[15] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1877-1879, 2-ը յունիսի, 1878, էջ 9:

[16] Գր. Արծրունի, Դուք ձեր պարտականութիւնը կատարեցիք, «Մշակ», 1878, թիվ 110, էջ 1:

[17] Մ. Չերազ, Թէ ինչ շահեցանք Պէռլինի վեհաժողովէն, Կ. Պոլիս, 1878, էջ 17:

[18] Նույն տեղում, էջ 30:

Հետագայում անդրադառնալով Մ. Զերազի «Թէ ինչ շահեցանք Պէռլինի վեհաժողովէն» բրոշյուրին, Լեոն գրում է. «Այսօր Մինաս Զերազի բրոշյուրը մի հուշարձան է քաղաքական անգրագիտության, համբակային միամտության և անուղղելի ռոմանտիզմի»[19]:

Ելույթ ունենալով Ազգային ժողովում Խորեն Նարբեյն ասաց. «Առաջին անգամ ըլլալով Հայուն անունը լոկ կրօնական կերպարանքէ մերկանալով՝ քաղաքական կերպարանք մը կ'առնու, եւ միջազգային մեծ դաշնագրի մը մէջ միջազգային խընդիր մը կը դառնայ Հայկական խնդիրը»[20]:

Ավելի մեծ թիվ էին կազմում հոռետեսները: Նրանց կարծիքների մի մասը հայտնվեցին Բեռլինից անմիջապես հետո: Դրանք են.

1. Ինչո՞ւ սկսեցինք, եթե չէինք շահելու:

2. Քիչ խնդրեցինք, քիչ տվեցին:

3. Հայկական հարց կոչվածը պատրիարքի հնարածն է, ազգն այստեղ մասնակցություն չունի: Այս կարծիքը հայտնել է պատրիարքը, որպես իր հասցեին ուղղված մեղադրանք: Ըստ այդ կարծիքի նա գործել է օտար ուժերի ազդեցության տակ և դարձել այդ ուժերի ձեռքին գործիք: Այս մեղադրանքը Ազգային ժողովը մերժեց անմիջապես:

4. Ներսես Պատրիարքին մեղադրանքների ողջ շարք է ներկայացնում Ազգային ժողովի պատգամավոր Թադեոս Պեկյանը: Դրանք են.

ա) Գաղտնի մի ձեռք բարձրաստիճան հոգևորականության վստահությունը չարաշահելով ազգային շարժումն օգտագործել է ի վնաս ազգի:

բ) Ազգային կամքը պետք է հայտնվեր Եվրոպային՝ օրինավոր և հանդիսավոր կերպով, որը չի կատարվել:

գ) Փոխանակ ազգային իսկական և անկեղծ կամքի, տարբեր կամք է հայտնվել Եվրոպային, իսկ Բեռլինի վեհաժողովին պաշտոնապես ոչ մի կամք չի ներկայացվել:

դ) Քաղաքական սխալներ թույլ տրվեցին՝ որդեգրելով մերթ այս, մերթ մյուս կողմնորոշումը, որով կորցրեցին հակառակ կողմերի վստահությունը և համակրությունը[21]:

Պատրիարքը, ըստ Պեկյանի, գործել է ինքնուրույնաբար և ոչ թե Ազգային ժողովի որոշմամբ: Միշտ է, 1876 թ. դեկտեմբերի 10-ի Ազգային ժողովի թույլտվությամբ պատրիարքը կարող էր ինքնուրույնաբար գործել, բայց քաղաքական հանգամանքները փոխվել էին, և նա պարտավոր էր փոփոխված հանգամանքներին համապատասխան գործելու արտոնություն ստանալ Ազգայն ժողովից: Մինչդեռ պատրիարքը դա չի կատարել, և արդյունքում ազգի համար կայացվել է աննպաստ որո-

---

[19] Լեո, Անցյալից. էջ 28:

[20] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1877-1879, 10-ը նոյեմբերի 1878, էջ 214:

[21] Նույն տեղում, 6-ը հոկտեմբերի, 1878, էջ 161:

շում: Պատրիարքը և Ազգային ժողովը ամբողջությամբ մերժեցին այս մեղադրանքները նույնպես:

Որոշ ժամանակ անց այս մեղադրանքներին ավելացան հետևյալները.

5. Բեռլինի նախօրեին թուրքական կառավարությունը մոլորեցրեց հայ պաշտոնյաներին, նրանք էլ՝ Ներսեսին: Արդյունքում հայերը խաբվեցին, իրենց դեմ հանեցին և՛ թուրքերին, և՛ ռուսներին ու իրենց կամքից անկախ իրականացրեցին Թուրքիայի կամքը (Ա. Զոպանյան):

6. Ներսեսը համարվեց «հայ անպետք դիվանագիտության» (Լեո) ներկայացուցիչ, ով իրականում «հանդիսացաւ խակ ու անփորձ «փոլիթիքոս» մը, որուն դիւանագիտական մարզանքները աղետալի եղան մեր դատին համար: Անիկա յոյս դրաւ Անգլիոյ բարեացակամութեան վրայ,- կարդալով Կլատըսթոնի եւ այլ «հայասէրներու» կամ «մարդասէրներու» ճառերը եւ քաղաքական սխալ հունի մէջ դրաւ մեր դատին հետապնդման գործընթացը,- նմանելով մորթուելու դատապարտուած ոչխարի մը, որ մսագործի՛ն մէջ կը տեսնէ զինք փրկող բարի հովիւը»[22]:

7. «Ո՞չ մէկ ատեն հայ գործիչներ ունեցած են անորակելի սայթաքումներ քաղաքական գետնի վրայ, որքան ունեցան Ներսէս Պատրիարք եւ իր գործակից «ինքնահաւան խելացիները» Խրիմեանի բառերով»[23] և այդ սխալները «շատ սուղի նստաւ մեզի: Հայ ժողովուրդը այդ սխալին փրկագինը իր արիւնով եւ ֆիզիկական փճացումով վճարեց»[24]:

Զխորանալով Ներսեսի՝ որպես ազգային գործչի շուրջ եղած բանավեճերի մեջ, նշենք միայն, որ դրանց մեծ մասը տրվել են հետին թվով, իսկ անդրադառնալով Մ. Խրիմյանի «ինքնահավան խելացիներ» արտահայտությանը, գտնում եմ, որ նա հոգու վրա մեղք է վերցնում: Չէ՞ որ այդ «խելոքներից» մեկն էլ ինքն էր: Ինքն էր պահանջում գահընկեց անել Ներսեսին՝ պասիվ դիրքորոշման համար, ինքն էր Եվրոպայում բանակցություններ վարում, ինքն էր «երկաթե շերեփի» կոչ անում:

Գնահատականների մի մասը, որ տրվել են եղեռնից հետո և գնահատվել՝ եղեռնը հիմք ընդունելով, շատ կողմերով նման են ուշացած մարգարեությունների: Կարծում եմ, Ներսեսը արդարացում չէր ունենա, եթե չբարձրացներ Հայոց հարցը, հատկապես երբ նրան գործունեության էին մղում Թուրքիան և Անգլիան՝ որոշակի խոստումներ տալով: Խոստումներ էին տալիս Ռուսաստանը, մյուս պետությունները, երբ առանձնաշնորհումներ էին ստանում բախտակից սլավոնական քրիստոնյա ազգերը, երբ նրան գործունեության էր մղում ողջ հայ ազգը:

Տեսնենք, թե ինչպես է արդարանում ինքը՝ Ներսեսը: Ներկայացնենք 1878 հուլիսի 21-ին Ազգային ժողովում նրա ունեցած նշանավոր ելույթը: Այդ ելույթում Ներսեսը խոստովանում է, որ ինքը տեսնում էր, թե ինչպես էր պատերազմի ըն-

---

22 Գ. Ահարոնեան. Մեծ երազի ճամբոյն վրայ, Լոս Անճելըս, 1986, էջ 35-36:

23 Մ. Սերոբեան. Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ, 1948, էջ 145:

24 Նույն տեղում, էջ 205:

թացքում և նրանից հետո վատանում ժողովրդի վիճակը, և եթե ազդու միջոցներ չձեռնարկվեին, ապա դրվելու էր ազգի լինել-չլինելու խնդիրը: Ներելո՞ւ էիք ինձ, հարցնում է Ներսեսը, եթե անգործ նստեի, երբ Թուրքիայում ապրող քրիստոնյաների բախտն էր որոշվում, ներելո՞ւ էին ինձ մեր նախնիների ոգիները՝ Հայկից մինչև Լևոն Լուսինյանը, մեր բոլոր կաթողիկոսները: Ես պատասխանատվություն զգացի նախնյաց հոգիների ու հիշատակների առջև, այն հայ սերունդների առջև, ովքեր հաջորդելու են մեզ: Կներե՞ր ինձ ժողովուրդը: Ինքն իրեն չէ՞ր ների, եթե հայ ժողովրդի աղաղակը Եվրոպա չհասներ, եթե Եվրոպային տեղյակ չպահեր, որ Արևելքում հայ ազգ էլ կա: Իսկապես, իրավունք ունե՞ր Ներսես Պատրիարքը լռելու և չգործելու: Չէ՞ որ երբ լռել է, ժողովրդի համակրանքից է զրկվել, գահազրկության վտանգին ենթարկվել: Ներսեսը իրավացի էր՝ նկատելով, որ ոչ ոք չի կարող դեմ դուրս գալ բուռն զորության դեմ, երբ միայն բարոյական զորություն ունի, չի կարող փոխել իրադարձությունների ընթացքը: Ներսեսի կարծիքով նույնիսկ 61-րդ հոդվածի պայմաններում շահել ենք, որովհետև.

ա) Առաջին անգամ հայոց ազգի անունն անցավ հանդիսավոր դաշնագրության մեջ,

բ) Հայոց ապագայի սերմունքը դրվեց,

գ) Եվրոպացիք ճանաչեցին և սիրեցին հայ ազգը, ու այս պահիս, ասում է Ներսեսը, երբ ես ձեզ հետ խոսում եմ, գուցե մեծ բեմերում եվրոպական կառավարությունները հարցումներ են կատարում Հայոց հարցի վերաբերմամբ:

Դարձյալ իրավացի էր Ներսեսը՝ նշելով, որ այսպիսի գործեր ո՛չ մեկ օրում, և ո՛չ էլ մեկ մարդու ձեռքերով են կատարվում: Անհրաժեշտ է պատրաստվել ապագային, դրա համար անհրաժեշտ է, որ չմնանք այստեղ, այլ Հայաստան գնանք: Հայաստան պետք է ուղարկել մեր բանիբուն, տաղանդավոր, ազգասեր, ուսումնասեր եկեղեցականներին, դաստիարակներին, ուսուցիչներին, երիտասարդներին, արվեստագետներին: Հայաստան պետք է գնան մեր առևտրականները, պանդուխտները, «...ոչ եռ պիտի ըլլա հոն սով, սրածութիւն, ոչ եռ հարստահարութիւն... ուղիներ պիտի բացուին, ջրանցքներ պիտի շինուին. գործարաններ պիտի կառուցուին, Անգլիոյ դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու, թող երթան մեր դրամատէրք ալ, ընկերութիւններ կազմեն այս օրուընէ, ընկերութիւններ ամէն քաղաք ու գիւղ դպրոցներ հաստատելու համար. ընկերութիւններ առեւտրական յարաբերութիւններ հաստատելու համար... Հնդկաստանէն, Հայաստանէն, Անգղիայէն, Թուրքիայէն, Ռուսաստանէն ու Աւստրիայէն մինչև Պարսկաստանէն միանան, ձեռք ձեռքի տան բոլոր Հայերը...»[25]: Դժվար է ավելի գեղեցիկ ու պատկերավոր ներկայացնել:

---

[25] Ս. Պատրիարք Հօր ատենախօսութիւնը, «Մշակ», 1878, թիվ 159, էջ 2, ինչպես նաև՝ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1877-1879, 21-ը յուլիսի 1878, էջ 61-62:

Մ. Վարանդյանը այն տեսակետն է հայտնում, թե չարիքի արմատը հայկական դիվանագիտության այս կամ այն ձևի ու վրիպումի մեջ չէր, այլ բուն այդ դիվանագիտության էության մեջ: Սխալն այն էր, որ հայությունն իր դատն առաջ քաշելու համար դիմել էր միայն դիվանագիտական միջոցների: Չկար այնտեղ և «նոյնիսկ արհամարհուած էր ամենաէականը,- ժողովրդի պատրաստութիւնը, նրա իրական-դիմադրական ուժը: Չկար «երկաթէ շերեփը», որի բացակայութիւնը այդքան դառն-օրէն ողբում էր Խրիմեան Հայրիկ, իր վերադարձին Բեռլինից...»[26]:

Դեռևս մինչև Բեռլինը Մ. Նալբանդյանը, Րաֆֆին, Մ. Մամուրյանը, իսկ բեռլինյան շրջանում և նրանից հետո դարձյալ Րաֆֆին, Գր. Արծրունին, Մ. Խրիմյանը գտնում էին, որ զենքով պետք է պաշտպանել մեր շահերը, օտարը մեզ համար մեկ քայլ էլ չի կատարի, եթե նրան չստիպենք: Մ. Մամուրյանը գրում էր. «Ցուսալ որ օտար ազգ մը Ցիսուսի ըրած հրաշքը պիտի գործէ ըսելով՝ անկեալ եւ հէք ժողովրդեան մը,- Արի, եղ... ցնորք է: Սպասել որ արտաքին փրկիչներ գան եւ հայ ժողովրդեան սեւ պատանքը քակեն՝ յիմարութիւն է: Հէք եւ ստրուկ ժողովդեան մ'առաջին եւ միակ ազատարարն ինքն է...»[27], իսկ Րաֆֆին գրում էր, որ «Ոչ ոք իր հոր հոգու համար մեզ չի օգնիլ»[28], որովհետև «...ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրանց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի՝ փրկություն»[29]: Դարձյալ Մ. Մամուրյանն էր գրում, որ «Եթէ հայերն իրապէս չգործեն, արիւն չթափեն, չեն կրնար ապրիլ քաղաքականապէս»[30]: Այսպես ծնվեց արյունով հողը նվաճելու գաղափարախոսությունը: 19-րդ դարի 80-ական թվականներին արյունով հողը նվաճելու գաղափարը շատ կողմնակիցներ ուներ: Նույն թվականներից ազգային կուսակցությունների ձևավորմամբ անցում կատարվեց արյունով հողը նվաճելու գործնական իրականացմանը: Քաղաքական կուսակցությունները, ֆիդայական խմբերը, արևմտահայության մի մասը դուրս եկան մահու և կենաց պայքարի թրքական բռնակալության դեմ: Իսկ թե իրադարձությունները հետագա ինչ ընթացք ունեցան, բոլորիս է հայտնի:

[26] Մ. Վարանդեան. Հայկական շարժման նախապատմութիւն, հ. 2, ժրնեւ, 1913, էջ 151:

[27] «Արեւելեան մամուլ», 1876, թիվ 1, էջ 5:

[28] Րաֆֆի. Կայծեր, Երկերի ժողովածու 12 հատորով. հ. 5, Երևան, 1985,էջ 574:

[29] Րաֆֆի. Դատարկ հոյսերով ենք խաբվում. Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 11, Երևան, 1991, էջ 10:

[30] Մ. Մամուրեան. Թղթակցութիւն. «Արեւելեան մամուլ», 1878, թիվ 5, էջ 36:

ԿԱՐԵՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ մշակույթի հանճարեղ գործիչ Կոմիտասի բազմաբնույթ ու լայնածավալ գործունեության անբաժան և անջնջելի էջերից է մանկավարժական աշխատանքը:

Այսօր էլ ուսուցիչների համար ուսանելի է և որպես սրբազան պատգամ է հնչում Կոմիտաս-մանկավարժի խոսքը. «Ուսուցիչ պարոննե՛ր ու քույրե՛ր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցե՛ք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կխորտակեք վերջը»[1]:

Կոմիտասի բազմազբաղ միտքը նոր գաղափարներ է երկնել երեխաների կրթության ու դաստիարակության վերաբերյալ, որոնց բացահայտման և արժևորման համար ամենից առաջ պարտական ենք նրա աշակերտներին, որոնք տարիների հեռավորությունից մեզ են հասցրել իրենց անմոռանալի տպավորությունները և անսահման հիացմունքը, խոր հարգանքն ու ակնածանքը Կոմիտաս-մարդու, Կոմիտաս-արվեստագետի և Կոմիտաս-մանկավարժի հանճարի հանդեպ:

Բազմաբովանդակ էր Կոմիտասի մանկավարժական գործունեությունը Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: Այն ներառում էր երաժշտության դասավանդում դասարանական բաժնում՝ հայկական և եվրոպական ձայնագրության, հոգևոր և ժողովրդական երգերի ուսուցմամբ, երաժշտության պատմության դասավանդում լսարանական բաժնում, քառաձայն երգչախմբի կազմակերպում և ղեկավարում, երգչախմբի մշտական մասնակցություն եկեղեցական արարողություններին, նվագարանների ձեռքբերում և նվագուրդի կազմակերպում, Գևորգյան ճեմարանի հիմնադրման տարեդարձերին, եկեղեցական տոներին և հանդիսություններին նվիրված բազմաթիվ համերգներ՝ հոգևոր և ժողովրդական երգացանկով, ըստ առանձին դասարանների երաժշտության ծրագրերի կազմում, երաժշտության տարրական տեսության և հարմոնիայի դասագրքերի ստեղծում, ավարտական աշխատանքների ղեկավարում և ընդդիմախոսություն, մանկավարժական ժողովներին պարտա-

[1] Կոմիտաս. Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 67:

ճանաչ մասնակցություն, դասարանական բաժնի որևէ դասարանի դաստիարակի պարտականությունների կատարում, մասնակցություն ընդունելության, ընթացիկ և ավարտական քննություններին որպես քննող և ընթերակա, ճեմարանի երգչախմբի համար բազմաթիվ խմբերգերի ստեղծում, անհատական պարապմունքներ երաժշտական ձիրք ունեցող աշակերտների հետ, նրանցից լավագույնների նախապատրաստում երաժշտական բարձրագույն կրթություն ստանալու Եվրոպայի և Ռուսաստանի երաժշտանոցներում, արտադասարանական աշխատանքների, գիտարշավների, էքսկուրսիաների, զբոսանքների ու խաղերի կազմակերպում, աշակերտների ներգրավում բանահավաքության գործին և այլն:

1893 թ. մայիսին Կոմիտասն ավարտում է Գևորգյան ճեմարանի լսարանական բաժինը՝ ներկայացնելով «Ընորհալին. նորա դարը և նորա ժամանակ յուզուած կրոնական խնդիրները» ավարտական շարադրությունը: Նույն թվականի հոկտեմբերի 5-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի հրամանով Քրիստափոր Կարա-Մուրզայի փոխարեն ճեմարանի տեսուչ Արիստակես Սեդրակյանը եկեղեցական երգեցողության ուսուցիչ է նշանակում Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանին՝ Կոմիտասին:

Մանկավարժական գործունեության առաջին քայլերից Կոմիտասը մեծ եռանդով աշխատում է բարելավել երաժշտության դասավանդումը և այդ նպատակով կազմում երաժշտության նոր ծրագրեր՝ ըստ առանձին դասարանների, կազմակերպում քառաձայն երգչախումբ: Նույն թվականի նոյեմբերի 21-ին, պաշտոնը ստանձնելուց ընդամենը մեկ և կես ամիս անց, Մայր Տաճարում Կոմիտասի ղեկավարած քառաձայն երգչախումբն առաջին անգամ կատարում է «Հայր մեր» շարականը, որը ցնցող տպավորություն է թողնում ունկնդիրների վրա:

ՀՀ ՊԿՊ դիվանի Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ֆոնդում պահպանված Կոմիտասի կազմած եկեղեցական երգեցողության առաջին ծրագրերը վերաբերում են 1894/95 ուսումնական տարվա Գ և Դ դասարաններին[2]:

Երրորդ դասարանի ծրագիրն ընդգրկում է հետևյալ բաժինները՝ 1. հայոց արդի ձայնանիշների գյուտը. 2. ձայն, 3. տևողություն, 4. ընդհարումներ, երաժշտական զանազան նշաններ, 5. ձայնական երաժշտություն, 6. ձայների հարաբերական չափը, 7. ութ բուն ձայնեղանակներից ԱՋ, ԱԿ, ԲՋ, ԲԿ: Վերջում նշված է, որ դասերի ընթացքում երգել են շարականներից օրինակներ և վարժություններ:

Չորրորդ դասարանի ծրագիրն ունի հետևյալ բաժինները՝ 1. ձայնական երաժշտություն, 2. ձայնական երաժշտության ձևերը, 3. երաժշտական եղանակ, 4. ձայների հարաբերական չափը, 5. ութ բուն ձայնեղանակները, 6. դարձվածքներ: Այստեղ ևս նշված է գործնական պարապմունքների բնույթը՝ երգել բուն ձայներին և դարձվածքներին վերաբերող շարականներ, կատարել ութ ձայների և նրանց դարձվածքների ելևէջների տեղափոխություն ու փոխանցում:

---

[2] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 312, ց. 1, գ. 243, թ. 8, 30:

Իր երաժշտական գիտելիքները խորացնելով Թիֆլիսում Մակար Եկմալյանի մոտ, ապա Բեռլինում Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում և Ֆրեդերիկ Վիլհելմ արքունի համալսարանում Կոմիտաս վարդապետը 1899 թ. սեպտեմբերից Գևորգյան ճեմարանում շարունակում է մանկավարժական գործունեությունը մինչև 1910 թ.:

Այդ տարիներին Կոմիտասը կազմել է առաջինից չորրորդ դասարանների երաժշտության բազմաթիվ ծրագրեր, որոնք աչքի են ընկնում խոր բովանդակությամբ, կուռ կառուցվածքով, երաժշտության տեսության հարցերի լայն և բազմակողմանի ընդգրկմամբ, աշակերտների տարիքահոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ, շարադրման հաջորդականությամբ, տեսականի և գործնականի լիակատար համակցությամբ:

Ծրագրերն ընդգրկում են. տեսականից՝ 1. հայկական տարրական երաժշտություն, 2. հայկական եկեղեցական երաժշտություն, 3. եվրոպական տարրական երաժշտություն, 4. ներդաշնակման սկզբունքներ, 5. եղանակների վերլուծություն և այլն. գործնականից՝ եկեղեցական, ժողովրդական, մանկական, եվրոպական երգեր, ձայնագրություն հայկական և եվրոպական ձայնանիշներով, ծանոթ և անծանոթ եղանակների փոխադրում հայկական ձայնանիշներից եվրոպականի և հակառակը, հանպատրաստից երգեցողություն Ծարակնոցից, Ժամագրքից, Պատարագից և այլն:

Որոշ ծրագրերի վերջում որպես ուսումնական ձեռնարկ Կոմիտասը նշում է իր տետրերը: Դրանք Գևորգյան ճեմարանի աշակերտների համար Կոմիտասի կազմած երաժշտության տարրական տեսության և հարմոնիայի դասագրքերն էին:

Կոմիտասն իր ծրագրերով ու գործունեությամբ ճեմարանում հաստատեց երաժշտական դաստիարակության նոր, առաջավոր և կատարելագործված համակարգ, որի նպատակն էր երաժշտությունը կապել կյանքի հետ, օգնել աշակերտներին հասկանալ ու սիրել երաժշտությունը, մտքով փոխադրվել երաժշտության ոգուն համապատասխան իրադրություն, զարգացնել լադային, տեմբրային լսողությունը, ռիթմի զգացողությունը, երաժշտական մտածողությունը, հիշողությունը, կատարողական ունակությունները, ստեղծագործական երևակայությունը, սովորել բազմաձայն երգեցողություն, թափանցել հայ հոգևոր և աշխարհիկ երաժշության ակունքները, նվագել ժողովրդական ու դասական նվագարաններ, ձայնագրել ժողովրդական երգեր, ծանոթանալ արևմտաեվրոպական, ռուսական, արևելյան երաժշտությանը և այլն:

Կոմիտասը տալիս էր երաժշտական մասնագիտական խոր ու բազմակողմանի գիտելիքներ, և պատահական չէ, որ նրա օժտված սաներն առանց դժվարությունների ընդունվում էին երաժշտանոցներ և դառնում հայ երաժշտական մշակույթի անվանի գործիչներ:

Կոմիտասի մերձավորներն ու սաներն առանց բացառության վկայում են նրա անսահման մանկասիրությունը, իսկ Խրիմյան Հայրիկը Կոմիտասին բնորոշել է որ-

պես հոգեբան-մանկաբան: Կոմիտասն օժտված էր մանկավարժի բնածին խառնվածքով և համակողմանի ձիրքով: Կոմիտասի մասին Հովհաննես Հովհաննիսյանն աշակերտներին ասել է. «Աստված լսել է ձեր աղոթքները և ուղարկել ձեզ Կոմիտաս հայր սուրբը, որը այնքան բախտավոր է ձեզնով և դուք՝ այնքան նրանով»[3]:

Դերենիկ Դեմիրճյանն իր երիտասարդ ուսուցչին հիշում է այսպես. «...առաջին իսկ օրերում ես մի ծածուկ համակրանք զգացի դեպի Կոմիտասը: Նրա դասավանդությունը հանգիստ, ընկերական էր, մեղմ ոգևորությամբ տոգորված: Նրա ժպտուն աչքերում թաքնված թախծալի ինչ-որ ցոլքը, պարզ ինտոնացիան, խանդաղատալի ձայնը մատնում էր նրա ներքին կրակը»[4]:

Մանկավարժությունը Կոմիտասի համար ստեղծագործական աշխատանք էր, անընդհատ նորի որոնում և կիրառում: Այս առումով անգնահատելի է նրա կողմից երաժշտության ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի օգտագործումը: Վերջինս Կոմիտասը լայնորեն օգտագործել է երաժշտության ուսուցման արդյունավետության բարձրացման, աշակերտների տրամաբանական մտածողության, ստեղծագործական երևակայության և գեղագիտական ճաշակի զարգացման, աշխարհը ճանաչելու և այն միասնական ընկալելու նպատակադրումից ելնելով:

Նա մեծ արվեստագետի վարպետությամբ ու խորաթափանցությամբ երաժշտությունը կապում էր պարարվեստի, լեզվի, հայ հին ու նոր գրականության, միջնադարյան քնարերգության, տաղաչափության, ազգագրության, բանահյուսության, պատմության, աստվածաբանության, կերպարվեստի, ճարտասանության, քանդակագործության, քնագիտության, մարդակազմության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, աստղագիտության, աշխարհագրության և գիտության ու արվեստի այլ ճյուղերի հետ:

Գևորգյան ճեմարանում աշակերտների գիտելիքների ստուգումը և գնահատումը կատարվում էր ոչ միայն բանավոր հարցման, այլև ստուգողական գրավոր աշխատանքների միջոցով: Գրավորներ տրվել են նաև երաժշտությունից: Պահպանվել են 1895 թ. հունվարի 30-ին տրված 10 աշակերտների շարադրությունները՝ «ձայնական երաժշտութիւն. կրծքի, կոկորդի եւ գլխի ձայն. արական եւ իգական ձայների տեսակները. նոցա պտոյտը եւ յատկութիւնը» վերնագրով, որոնք ստուգված և գնահատված են Կոմիտասի կողմից:

Խստ արժեքավոր և ուսանելի է այն հանգամանքը, որ նա մեծ ուշադրություն է դարձրել շարադրանքի ինչպես մասնագիտական ճշգրտությանը, այնպես էլ լեզվական կողմին, ընդգծել, ուղղել է ոճական անհարթությունները, կետադրությունը և բառերի ուղղագրությունը[5]:

---

[3] Մ. Քրիշչյան, Անմար կանթեղ, Եր., 1969, էջ 45-46:

[4] «Կոմիտաս», ժողովածու՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 60-ամյակին, կազմեց Ռուբեն Թերլեմեզյան, Եր., 1930, էջ 71:

[5] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 312, ց. 1, գ. 321, թ. 1-13:

Կոմիտասը փայլուն տիրապետում էր հին ու նոր հայերեններին՝ գրաբարին և աշխարհաբարին: Մեծ նշանակություն տալով լեզվին՝ նա երաժշտության դասերին պահանջում էր լեզվական կայուն և ճշգրիտ գիտելիքներ: Նա պատրաստ էր նրել և նրում էր երաժշտությունից թույլ աշակերտներին, սակայն անզիջում էր հայոց լեզվից անբավարար ունեցողների նկատմամբ, դեմ էր նրանց հաջորդ դասարան փոխադրելուն: Եվ երբ մանկավարժական ժողովում բոլոր ուսուցիչները տեղի էին տալիս, Մանուկ Աբեղյանի պաշտպանը Կոմիտասն էր մնում[6]:

Կոմիտասը մինչև մեղեդու ուսուցումը բացատրում էր երգի բովանդակությունը՝ լիներ դա հոգևոր տաղ և շարական կամ ժողովրդական խաղ ու պարերգ: Այդ նպատակով նա աշակերտներին հիշեցնում էր այլ առարկաներից անցածը, ըստ անհրաժեշտության այն խորացնում նոր փաստերով: Նա ճշմարտացիորեն գտնում էր, որ երգի բառերն ու մեղեդին մի ամբողջություն են, միասնություն, և առանց բովանդակության ընկալման անհնար է արտահայտել մեղեդու հուզական կողմը և ազդել ունկնդիրների զգացմունքների վրա:

Կոմիտասը մեծ տեղ էր տալիս ազգագրությանը, ժողովրդի նիստ ու կացին, կենցաղին, տվորություններին, ավանդություններին, կենսափիլիսոփայությանը, հոգևոր-բարոյական կերտվածքին, որոնք արտացոլված են ժողովրդական երգերի մեջ:

«Ի՞նչ է ազգային երաժշտությունը, ի՞նչ է նյութ տալիս ազգային ժողովրդական երգերին: Արդյո՞ք նրա հպարտ լեռները, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կլիման, պատմական հազար ու մի դեպքերն ու անցքերը, ժողովրդի ներքին և արտաքին կյանքը.- այո՛, այս բոլորը, բոլորը նյութ են կազմում ազգային երաժշտության, մի խոսքով՝ այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարանքների և մտքի վրա»[7]:

Կոմիտասը պաշտում էր խաչատուր Աբովյանին, նրան համարում իր ուսուցիչը: Կոմիտասը Աբովյանի մեջ տեսավ ոչ միայն «Վերք Հայաստանի» վեպի հեղինակին, աշխարհաբար լեզվով հայ նոր գրականության հիմնադրին, մեծ լուսավորչին, այլև ազգագրագետի, բանահավաքի, երգիչ-երաժշտի: Ինքն էլ Աբովյանի նման աշխատեց, տքնեց ու պայքարեց իր ժողովրդի համար և Աբովյանի նկատմամբ տածած անսահման սերը ներարկեց իր սաներին:

Կոմիտասն աշակերտներին ծանոթացրել է նաև արևմտահայ բանաստեղծներ Պ. Դուրյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Ղ. Ալիշանի և ուրիշների ստեղծագործություններին: Անսահման էր նրա սերը մեծ գիտնական, բանաստեղծ և բանահավաք Ղևոնդ Ալիշանի նկատմամբ: Կոմիտասը հզոր հոգևորությամբ էր պատմում նրա կյանքի և բեղմնավոր գործունեության մասին, մեծ զգացմունքով արտասանում նրա բանաստեղծություններից և հուզում աշակերտներին:

Կոմիտասը մեծ նշանակություն էր տալիս արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին: Հանդեսներ և էքսկուրսիաներ կազմակերպելը ա-

---

[6] Նույն տեղում, գ. 108, թ. 10:

[7] Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 9:

վանդույթ էր Գևորգյան ճեմարանում: Հանդեսներին եղույթ էին ունենում քառաձայն երգչախումբը, անհատ կատարողներ:

Կոմիտասը առիթը բաց չէր թողնում զարգացնելու իր սաների երաժշտական ճաշակը: Երբ Էջմիածին իրեն տեսակցության է գալիս իր նախկին սան, երգիչ Արմենակ Շահմուրադյանը, Կոմիտասը ճեմարանի հանդիսասրահում կազմակերպում է հանպատրաստից համերգ: Շահմուրադյանին նվագակցում է ինքը՝ Կոմիտասը: Այսպես նաև, երբ Էջմիածին է գալիս աշուղ Ջիվանին, Կոմիտասը նրան հրավիրում է ճեմարան, կազմակերպում համերգ, աշակերտներին հաղորդակից դարձնում աշուղական արվեստին:

Մի ուրիշ անգամ, երբ ճեմարան է այցելում ճարտարապետ Թորոս Թորամանյանը, Կոմիտասը կազմակերպում է հայ ճարտարապետությանը նվիրված դասախոսություն:

Կոմիտասը ճեմարանի սաների և ուսուցիչների հետ մասնակցել է էքսկուրսիաների: Անմոռանալի է Անի կատարած էքսկուրսիան, որ գլխավորել էին Կոմիտասը և Հակոբ Մանանդյանը: Անիում ծանոթացել էին հնություններին, ներկա գտնվել պեղումներին: Եվ ամենաանպասելին, զարմանալին ու հիասքանչը. «Կոմիտասն իր երգիչներով փորձել էր Անիի կանգուն մնացած եկեղեցիների հնչականությունը (որով և սքանչացել էր), եկեղեցում երգել էին իր մշակած Պատարագի երգերից»[8]:

Հիշարժան են նաև ուղևորությունը Օշական, այցելությունը հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին, Ս. Ատվածածնի տոնին երգիչ-աշակերտների հետ խաթունարխ կազմակերպած գիտարշավը՝ ժողովրդական երգեր և պարեղանակներ հավաքելու նպատակով՝ նախապես տանելով բացատրական և ուսուցողական աշխատանք քանահյուսության և բանահավաքության մասին:

Գևորգյան ճեմարանում դասարանների ու լսարանների համար մանկավարժական ժողովի կողմից նշանակվում և ընտրությամբ հաստատվում էին դաստիարակներ: Կոմիտասը դաստիարակի աշխատանքը կատարում էր ոչ որպես պարտականություն, այլ մեծ սիրով, նվիրվածությամբ և շրջահայացությամբ:

Ուսուցիչները և դաստիարակները սերտողության ժամերին սովորաբար չէին այցելում աշակերտներին: Իսկ Կոմիտասը ոչ միայն գալիս ու հետաքրքրվում էր նրանց դասերով, այլև դժվարացողներին օգնում կատարելու գերմաներենի, մաթեմատիկայի և այլ առարկաների առաջադրանքները:

Կոմիտասը երեխաներին սիրում էր մեծ ու անկեղծ սիրով, որ զգում էին նրանք և պատասխանում փոխադարձաբար: Նա մտերիմ էր աշակերտների հետ, որոնք առանց թաքցնելու պատմում էին իրենց հոգսերի ու ցավերի մասին՝ համոզված լինելով, որ Կոմիտասն իրենց կհասկանա, սրտաբաց խոստովանում էին իրենց զանցանքները՝ ակնկալելով նրա ներումն ու խորհուրդները:

---

[8] Ս. Ոսկերչյան, Կոմիտասը Գևորգյան ճեմարանում, «Սովետական մանկավարժ», Եր., 1969, թիվ 10, էջ 85:

Կոմիտասը հազվադեպ էր բարկանում ու մռայլվում. չէր սիրում, երբ երգչախմբի պարապմունքից ուշանում էին, բայց չէր կշտամբում, այլ կատակում էր, և այդ ավելի էր ազդում: Նրա զվարթությունը փոխանցվում էր աշակերտներին, անկաշկանդ մթնոլորտը նպաստում էր գործի հաջողությանը: Սակայն հարազատությունը, մտերմությունն ու ընկերականությունը երբեք թույլ չտվեցին չարաշահել դրանք: Կոմիտասը վայելում էր աշակերտների լիակատար վստահությունը, անկաշառությունը, մեծ հարգանքն ու խորին պատկառանքը:

Կոմիտասը սկզբունքորեն դեմ էր պատիժներին, անձը վիրավորող, մարդկային արժանապատվությունը ստորացնող նկատողություններին, որոնք միայն ստեղծում էին շիկացած ու լարված իրավիճակ, անբարեհամբույր, կաշկանդող մթնոլորտ բոլորի և ոչ միայն կարգը խախտողի համար:

Ու Կոմիտասը կատակում է. ուշացողին անվանում է քերթենքելե, սխալ երգողին՝ զուռնաչի, հարևան ձայնի մեղեդին կատարողին՝ քյանդիրբազ, ու նրանից չեն նեղանում, այլ շոյվում՝ ամաչելով հանդերձ: Միծաղում են բոլորը, բեռնաթափվում կաշկանդիչ լիցքերից, և աշխատանքն ընթանում է իր անխափան ու սահուն հունով:

1904/05 ուսումնական տարվա Դ դասարանի և դաստիարակ Կոմիտասի մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս նրա աշակերտ Արտաշես Տիրացյանը: Դասարանը հեղափոխականորեն էր տրամադրված, մասնակցում էր ելույթներին և ճեմարանի մյուս աշակերտության հետ պահանջներ ներկայացնում տեսչությանը: Հովհաննես Հովհաննիսյանը մեղմորեն համոզում էր, որ աշակերտությունը չի կարող պահանջ ներկայացնել, այլ՝ խնդիր: Այս նույն միտքը Մանուկ Աբեղյանն ու Ստեփան Կանայանն ասում էին ավելի հրամայական շեշտով:

Իսկ Կոմիտա՞սը: Նա ազդում է ամենաքնքուշ լարերի՝ զգացմունքների վրա՝ հուզվելով և հուզելով 10-12 աշակերտի, որոնց հրավիրել էր իր սենյակ. «Նա մեզ իր շուրջն հավաքելով՝ նստեց ճիշտ Գևորգ Դ Կաթողիկոսի (ճեմարանի հիմնադրի) պատից կախված մեծադիր լուսանկարի առջև և արցունք թափելով մեզ ասաց. իսկ ի՞նչ պատասխան եք տալու սրան (ցույց տալով լուսանկարը), եթե ճեմարանը կառավարության կողմից փակվի ձեր անկարգությունների հետևանքով:... Հայր սուրբն այնքա՜ն հուզված էր և լաց էր լինում, մեզ էլ հետը լացացնելով»[9]: Կոմիտասի մտահոգությունն անտեղի չէր, և դա հասկացան նրանք:

Կոմիտասը կրթության և դաստիարակության գործում կարևորում էր խաղի դերը: Հանգստի ժամերին ճեմարանի ընդարձակ բակում աշակերտները կազմակերպում էին զանազան խաղեր՝ «լախտի», «բերդ», «աթրմա», «կոճի» և այլն: Կոմիտասը չէր խանգարում կամ արգելում խաղերը, ընդհակառակը՝ խրախուսում էր, հաճախ էլ ինքն էր կազմակերպում տարատեսակ խաղեր և մասնակցում դրանց: Աշակերտների խաղերին Կոմիտասի մասնակցության մասին Ա. Տիրացյանը

[9] ԳԱԹ, ԿՖ, 1661, էջ 12-13:

պատմում է. «Բարեկենդանի տոներին ճեմարանում աշակերտներիս տալիս էին օրը 1-2 անգամ կաղին, որի խաղը շատ տարածված էր ճեմարանում Բարեկենդանի ամբողջ տոնական շաբաթվա ընթացքում: Կոմիտաս հայր սուրբը, միակը ուսուցիչներից, գալիս էր այդ օրերին մեր դասարան և մեզ հետ կաղին էր խաղում ամբողջ օրեր ու ժամեր»[10]:

Աշակերտներին և ուսանողներին օգնելու և օգտակար լինելու ցանկությամբ լցված՝ Կոմիտասը երբեմն նույնիսկ դիմում էր անթույլատրելի քայլի: Լսարանական քաժնում Հայ Եկեղեցու պատմության քննության ժամանակ քննող դասախոսն ուսանողին հարցնում է, թե ով և երբ է կառուցել Ս. Հռիփսիմեի տաճարը: Տեսնելով ուսանողի անելանելի վիճակը՝ քննողից մի քիչ հեռու նստած Կոմիտասը, որ ընթերականերից մեկն էր, հուշում է. «... սկսում է մատով կուրծքը ծեծել և մի բան փսփսալ քննվող ուսանողին: Վերջինս շտապում է պատասխանել. Ս. Հռիփսիմեի վանքը շինել է Կոմիտաս վարդապետը, փոխանակ ասելու Կոմիտաս Կաթողիկոսը, այսպիսով բոլորի ծիծաղի ներքո խնդիրը բացվում է, և Կոմիտաս Հայր Սուրբի օգնության ժեստը չի հաջողվում»[11]:

Աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում Կոմիտասն առանձնապես կարևորում էր բարոյական դաստիարակության դերը: Նա մարդու բարոյական հատկանիշները գերադասում էր մասնագիտական գիտելիքներից և իր սաներին սովորեցնում լինել հայրենասեր, բարի, ազնիվ, ճշմարտախոս, ընկերասեր, հոգատար, համեստ, ունենալ պարտքի, պատասխանատվության, արժանապատվության և ազգային հպարտության բարձր զգացումներ:

Կոմիտասի անձնվեր ջանքերով ճեմարանում երաժշտության ուսուցումը գտնվում էր բարձր մակարդակի վրա: Սակայն կային երաժշտությունից համեմատաբար թույլ աշակերտներ, որոնք եկեղեցական արարողությունների ժամանակ Կոմիտասի հայեցողությամբ մոմակիրներ էին կարգվում, քանի որ այն մտնում էր ճեմարանի սաների պարտականությունների մեջ: Մի անգամ, ժամերգությունից հետո, ժամաշապիկը հանելիս Լևոն Սաղաթելյանն անզգուշորեն պատռում է օձիքը և իր վրա ծիծաղող ընկերոջ՝ Անքանազ Մռավյանի հետ պատժվում լուսարար Սրբազանի կողմից, որն ապտակում է նրանց և ոլորում ականջները: Նրանք ամաչում են կարմրած ականջներով ներկայանալ Մանուկ Աբեղյանի դասին: Խուսափում են նաև Կոմիտասին հանդիպելուց, որը ոչ միայն նրանց երաժշտության ուսուցիչն էր, այլև դաստիարակը: Նրանք ոչ թե վախենում էին Կոմիտասից, այլ անչափ սիրելով ու հարգելով՝ չէին ուզում վշտացնել իրենց սիրելի Վարդապետին: Սակայն հանդիպելով Կոմիտասին՝ դառնագին պատմում են եղելությունը և խնդրում ազատել մոմ բռնելուց: Ընդառաջելով նրանց խնդրանքին՝ Կոմիտասը խոստանում է ազատել՝ ամենօրյա դասերը բավարար պատասխանելու պայմանով: Տղաները, նշանակված

[10] Նույն տեղում, էջ 8:

[11] Նույն տեղում, էջ 15-16:

օրը գրատախտակի մոտ գալով, չեն կարողանում պատասխանել դասը և մնում են մոմակիրներ, քանի որ չէին կատարել իրենց խոստումը, իսկ Կեհեյան Կարապետին, որն ազնվորեն խոստովանում է դասին անպատրաստ լինելը, ճշտախոսության համար Կոմիտասն ազատում է մոմակրությունից. «-Կեհեյան Կարապետ, համեցե՛ք, արի տեսնենք դո՛ւ ինչ կասես, եգիպտացի՛, արի՛, արի՛ գրատախտակի մոտ:

- Չէ՛, Հա՛յր Սուրբ ջան, ես խնդրում եմ ո՛չ դու չարչարվես, ո՛չ էլ ինձ չարչարես, խնդրում եմ ինձ միշտ մոմակալ նշանակես:

- Ա՛յ, արդար ու ազնիվ մարդ ես, քեզ մոմակալությունից իսպառ կազատեմ, իսկ Ասքանազը և Լևոնը՝ հավիտենական մոմակալներ...»[12]:

Կարևորելով աշակերտների ինքնուրույն աշխատանքը՝ Կոմիտասը նրանց մասնակից էր դարձնում ժողովրդական երգեր հավաքելուն:

Մանուկ Արեղյանի վկայությամբ, Կոմիտասը մի քանի տարի շարունակ ամառային արձակուրդներին իրենց ծննդավայրերը գնացող աշակերտներին բաժանում էր իր պատրաստած միատեսակ թերթիկները՝ ժողովրդական երգեր հավաքելու նպատակով: Արդյունքը զոհացուցիչ և ապշեցուցիչ էր: Հավաքվում է մոտ 25 հազար թերթիկ:

Արեղյանը և Կոմիտասը մշակում ու դասակարգում են դրանք, բազմաթիվ տարբերակներից ընտրում լավագույնները՝ մոտ 1300 քառյակ, որոնք պետք է հրատարակեին առանձին հիսնյակներով՝ «Հազար ու մի խաղ» խորագրով, սակայն լույս է տեսնում միայն երկու հիսնյակ:

Երգի ուսուցման Կոմիտասի մեթոդի մասին նրա սան Վարշամ Փարսադանյանը հիշում է. «Դասարան մտնելով, նա առաջին հերթին աշխատում էր բարձրացնել սաների ընդհանուր տրամադրությունը, ապա անցնում էր բուն նյութին: Կոմիտասը նախ պարզ առոգանությամբ մեկ-երկու անգամ արտասանում էր երգի առաջին քառյակը, նույնը կրկնել էր տալիս մի քանի աշակերտի, ապա կրկնել էր տալիս ամբողջ դասարանին, որից հետո չափազանց հանդարտ, մեղմ ձայնով երգում էր քառյակը: Նրա երգելու ժամանակ դասարանում արտասովոր լռություն էր տիրում: Բոլորս հմայվում և ամբողջապես լսողություն էինք դառնում: Հրաշալի էր նրա գութաններգի կատարումը: Իսկույն բոլորիս երևակայության մեջ կենդանի կերպով պատկերվում էին հանդը, մանգալը, եզները, հոտաղը՝ ճիպոտը ձեռքին: Կարծես մենք տեսնում էինք, թե ինչպես ծանր քայլերով առաջանում էին եզները, ինչպես խոփը պատռում էր հողի կուրծքը, հողը սևանում, սպասում սերմնացանին:

Կոմիտասը մի երկու անգամ նույն քառյակը երգելուց հետո՝ առաջարկում էր դասարանին խմբովին երգել: Եվ բոլորս այնպես էինք տարվում երգով, որ երբ հը-

---

[12] Լ. Սաղաթելյան. Պատկերներ Գևորգյան ճեմարանից, «Սովետական գրականություն», Եր., 1957, թիվ 8, էջ 140:

չում էր ընդմիջման զանգը, մենք տհաճություն էինք զգում, մի բան, որ տեղի չէր ունենում մյուս դասերին»[13]:

Գևորգյան ճեմարանում Կոմիտասին աշակերտած սաների հիշողության մեջ անմոռաց են մնացել նրա վարած դասերը և երգչախմբի պարապմունքները: Մելքոն Քրիշյանը հիշում է «Սիփանա քաջեր» երգի ուսուցումը, երգ, որ գիտեին և սիրով երգում էին բոլոր ճեմարանականները: Սակայն Կոմիտասի խորիմաստ բացատրություններն օգնում են հասկանալ և թափանցել երգի բովանդակության խորքերը, բազմիցս կրկնվող «լո-լո»-ների մեջ տեսնել նոր հույզ, աստիճանաբար ահազնացող ուժ, նենգ ու վայրագ թշնամու դեմ բուռն ատելություն, սաստկացող ցասում, պոռթկման պատրաստ անսանձելի ընդվզում ու արդար վրեժի կոչ:

Երգի վերլուծությունն ուղեկցվում էր Կոմիտասի կատարմամբ, որով հմայված մեծ ու փոքր տղաները շունչները պահած զամվել էին նստարաններին. «... սա չէ՞ որ իրենց լավ ծանոթ «Սիփանա քաջեր»-ն էր, նույն բառերով ու խոսքերով: Սակայն ի՞նչ էր կատարվում իրենց հետ, երբ «Հայր Սուրբն» էր երգում: Եվ 22ունկը գնում էր նստարանից նստարան. «Իսկապես որ, ճիշտ են ասում, թե «Հայր Սուրբը» երգելու ժամանակ կախարդ է դառնում»[14]:

Կոմիտասը յուրահատուկ գուրգուրանքով ու հոգատարությամբ է վերաբերվել ճեմարանի երգչախմբին: 1904/05 ուսումնական տարում նա կազմավորում է քառաձայն երգչախումբ և նախապատրաստում Թիֆլիսի համերգներին: Կոմիտասը երգչախմբում ստեղծում է փոխկապվածության, փոխադարձ սիրո, համակրանքի ու հարգանքի անկաշկանդ, մտերմիկ ու ջերմ մթնոլորտ և ոգևորում, խանդավառում է տղաներին գալիք հաղթանակի հեռանկարով:

Կոմիտասի սիրված մենակատարն էր Վահան Տեր-Առաքելյանը, որի հետ նա ամեն օր պարապում էր առանձին, մշակում ձայնը: Վ. Տեր-Առաքելյանը հիշում է. «Պարապմունքները վերջանալուց հետո նա ինձ հյուրասիրում էր նախաճաշով և սերկևիլի հատիկների հետ եփած մի բաժակ կարմիր գինով, որպես ձայնալարերը փափկացնելու, ավելի առաձիգ դարձնելու միջոց: Մեծ պահքին, երբ ճեմարանի սաներին կերակրում էին համարյա բացառապես լոբիով, ձիթապտուղով, զզվելի թթու մախոխով, առանձնապես մեծ էր լինում Կոմիտասի՝ ինձ տված նախաճաշի բաժինը: Այդ օրերին նա խորապես տանջվում էր, որ խմբի անդամները վատ սննդի պատճառով ուժասպառ են լինում, և տուժում է նրանց ձայների որակը, իսկ ինքը հնարավորություն չունի բարելավելու նրանց վիճակը: Կոմիտասը դիմել, խնդրել էր, որ երգիչներին ուտիսի կերակուր տան, բայց ապարդյուն»[15]:

Կոմիտասը հայրաբար փայփայում էր երգչախմբի յուրաքանչյուր երգչին: Թիֆլիս գնալիս գնացքում թույլ չի տալիս, որ կանգնեն բաց պատուհանի առջև, իսկ ա-

---

[13] ԳԱԹ, Կ5, 1314, էջ 11:

[14] Մելքոն Քրիշյան, նշվ. աշխ., էջ 61:

[15] Վահան Տեր-Առաքելյան. Նյութերի ժողովածու, կազմող՝ Խաչիկ Սաֆարյան, Եր., 1998, էջ 89:

ինաձաղկի սերմ ուտող երկու տղաներին դիմելով՝ դառնությամբ ասում է. «Մի՞թե զինվոր է նա, ով գնում է կռվի և կոտրում, դեռ է ձգում իր զենքը:... Ո՛չ, այդպիսին է դասալիքը, իր ընկերոջ և ընդհանուր գործի դավաճանը»[16]:

Սակայն քիչ անց նա քնքշանքով գուրգուրում է զանցառուներին՝ նաբաթի մի քանի բյուրեղ տալով:

Թիֆլիսի համերգները երգահան, ազգագրագետ, խմբավար, երգիչ, երաժշտագետ ու մանկավարժ Կոմիտասի աներկբա հաղթանակներն էին:

Երախտապարտ հանդիսատեսն անզուսպ արցունքների հեղեղով, անլռելի ծափերի թնդյունով, խանդավառ բացականչություններով, սպիտակ թիթեռների պես դահլիճում ճախրող, զարմանքի, հիացմունքի ու շնորհակալական խոսքերով լի այցետոմսերով, անվերջ տեղացող երփնավառ ծաղիկներով վարձահատույց է լինում հայ երաժշտության հանճարին:

Եվ այսպես, Գևորգյան ճեմարանից Կոմիտասի ու հայ երգի փառքի ճամփան ձգվում է դեպի Թիֆլիս, Փարիզ, Բեռլին, Ցյուրիխ, Ժնև, Լոզան, Բեռն, Վենետիկ, Իգդիր, Երևան, Բաքու, Բաթում, Պոլիս, Զմյուռնիա, Ալեքսանդրիա, Կահիրե, Վիեննա...

Էջմիածնի Գևորգյան ճեմարանում Կոմիտասի մանկավարժական գործունեությունը չի սահմանափակվում ներկայացված դրվագներով:

Կոմիտասի երազանքն էր Էջմիածնում երաժշտանոց հիմնել, որտեղ կպատրաստվեին երաժշտական մշակույթի տարբեր բնագավառների մասնագետներ, նաև երաժիշտ-մանկավարժներ՝ դպրոցների համար:

Կոմիտասն անձնվիրաբար պայքարում էր հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության անաղարտության, հայի՝ ինքնուրույն երաժշտություն ունենալն ապացուցելու համար: Նա իրավացիորեն գտնում էր. «Որքան ապրի հայկական երաժշտությունը, այնքան կապրի Հայաստանը»[17]:

Կոմիտասը միայնակ, ինքնանվիրումով, իր հանճարով կատարում էր մի ամբողջ երաժշտանոցի գործ՝ հանուն հայ երգի և հայ ժողովրդի հավերժության:

---

[16] Նույն տեղում, էջ 91:

[17] Կոմիտասյան. Գ. Օթրի, Հուշեր Հայաստան կատարած գիտական ուղևորությունից, հ.1, Եր., 1969, էջ 259:

ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆ

Երևանի պետական համալսարանը իր հիմնադրման առաջին իսկ օրերից ուսանողության շրջանում վառ է պահել հայրենասիրության ջահը: Անցած ութսունից ավելի տարիների ընթացքում մեր մայր բուհը, բարձրորակ մասնագետներ պատրաստելուն զուգընթաց, երիտասարդության սրտերում սերմանել է սեր ու նվիրում անցյալի մեր հոգևոր ու նյութական արժեքների նկատմամբ: Եվ պատահական չէ, որ երբ 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) տեղի էր ունենում Հայաստանի նորաստեղծ Հանրապետության անդրանիկ համալսարանի հանդիսավոր բացումը, առաջին ակադեմիական դասախոսությունը նվիրված էր «Հայոց վանքերի նշանակությունը Հայաստանի մշակութային գործերում» թեմային, որով հանդես է եկել պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան, հասարակական-մշակութային ու եկեղեցական խոշոր գործիչ, անվանի գիտնական ու մանկավարժ Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը[1]:

---

[1] Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (ավազանի անունով՝ Փարսադան Վարդանի Տեր-Մովսիսյան, 1865-1939) ծնվել է Եյիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի գավառի (այժմ՝ Սյունիքի մարզի Գորիսի շրջան) Օրկանոզ գյուղում, 1882-ին ավարտել է Օուշու թեմական, իսկ 1885-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցները, ապա Ռնելում (Ռիգա) էքստեռն կարգով քննություններ հանձնելով և հասունության վկայական ստանալով՝ ընդունվել է Դորպատի համալսարան, որի դասական բանասիրության բաժինը 1891-ին ավարտել է ոսկե մեդալով: Հետագայում նա իր գիտելիքները հարստացրել է Վիեննայի, Փարիզի, Օքսֆորդի, Լոնդոնի, Բեռլինի, Հռոմի, Վենետիկի, Կահիրեի, Երուսաղեմի և այլ քաղաքների ազգային ու արքունական գրադարաններում կատարելով գիտահետազոտական բեղմնավոր աշխատանք հայոց հին ձեռագրերն ուսումնասիրելու և դրանց լիակատար ցուցակը կազմելու ուղղությամբ: Գրել է «Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը» (ռուսերեն), որը 1902 թ. Պետերբուրգում պաշտպանել և ստացել է հայ բանասիրության մագիստրոսի գիտական աստիճան, հայերեն և գերմաներեն տպագրել է «Հայ գյուղական տունը» ազգագրական երկը, աշխատակցել է «Հանդէս ամսօրեայ»-ին, հեղինակ է ավելի քան 130 հետազոտությունների: Նա ուսումնասիրել է 23.500 ձեռագիր և կազմել դրանց լիակատար ցուցակը, որն այժմ պահվում է Մատենադարանում:

Մեսրոպ Մագիստրոսը սկզբում, որպես տեսուչ, պաշտոնավարել է Երևանի և Օուշու թեմական դպրոցներում, եղել Օամախու կոնսիստորիայի նախագահ, ապա, որպես հայագիտության դասատու, աշխատել է Գևորգյան ճեմարանում, որի տեսուչն է եղել 1910-11-ին, 1906 և 1918-20 թթ. եղել է Էջմի-

... Երբ 1995 թ. սեպտեմբերի 16-ին դարձյալ մեծ հանդիսություն էր Երևանի պետական համալսարանում, այս անգամ արդեն այն նվիրված էր համալսարանի 20-րդ Աստվածաբանության ֆակուլտետի բացմանը: Մեր մայր կրթօջախի պատմական շենքի կամարների ներքո հնչած ռեկտորի, պետական ու հասարակական նշանավոր գործիչների, ակադեմիկոսների և ուսանողների, ինչպես նաև Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի ու օրհնանքի խոսքերից հետո, դասախոսությամբ հանդես եկավ նորաստեղծ ֆակուլտետի առաջին դեկան, երևելի հոգևորական, Հայ Եկեղեցու նշանավոր գործիչ, բանասիրության և փիլիսոփայության դոկտոր, պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանը, որը հանգամանորեն ներկայացրեց «Աստվածաբանության» նշանակությունը մեր գիտության ու մշակույթի հետագա զարգացման գործում:

Հայոց մայր համալսարանի կյանքում տեղի ունեցած այս երկու նշանակալից իրադարձություններն իրարից բաժանող շուրջ ութ տասնամյակների ընթացքում, անգամ 1930-ականների մոայլ ու մղձավանջային տարիներին և 1940-ականների վերջերի աքսորների ու բռնությունների շրջանում, մեր Ալմա մատեր դասախոսները շարունակել են իրենց հայրենանվեր գործունեությունը՝ ուսանող երիտասարդությանը դաստիարակելով քրիստոնեական ինքնության ու առաքինություններին հավատարիմ մնալու սկզբունքներով և անցյալի մեր մշակութային արժեքները հարգելու և բարձր գնահատելու մի ներքին խոր զգացումով: Նրանք, այդ ծանր տարիներին անգամ, երբ մեր հոգևոր ու նյութական շատ արժեքներ ոմանց կողմից «անցյալի մնացուկ» էին համարվում, ուսանողներին ուսուցանում էին սիրել այդ գանձերը, ուսումնասիրել մեր մագաղաթե ու քարագիր մատյանները, կազմակերպում էին էքսկուրսիաներ ու գիտարշավներ դեպի մեր վանքերն ու եկեղեցիները, պատմաճարտարապետական մյուս կոթողները:

Դեռևս 1923 թ. դեկտեմբերի 18-ին ՀԽՍՀ ժողկոմխորհի դեկրետով Լուսժողկոմատի կազմում ստեղծվում է հուշարձանների պաշտպանության կոմիտե, որի կազմում հայ մշակույթի անվանի գործիչներ Թորոս Թորամանյանի, Երվանդ Օահազիզի, Հովսեփ Օրբելու, Երվանդ Լալայանի, Մարտիրոս Սարյանի հետ ընդգրկվում են նաև համալսարանի դասախոսներ Աշխարհբեկ Լոռու Մելիք-Բալանթարյանը, Նիկողայոս Բունիաթյանը, Գևորգ Ասատուրը, Գարեգին Լևոնյանը, Ստեփան Լի-

---

ածնի մատենադարանապետը: Նա 1909-ին ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան և ձեռնադրվել եպիսկոպոս, ապա՝ ստացել է արքության աստիճան, առաջնորդել է Վրաստանի և Իմերեթիայի (1913-16 թթ.), Աստրախանի (1916-17 թթ.), Պարսկա-Հնդկաստանի (1929-31 թթ.) հայոց թեմերը, ընդգրկվել Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմում: 1919 թ., երբ հիմնադրվում է Հայաստանի համալսարանը, Մեսրոպ Մագիստրոսը հրավիրվում է այնտեղ որպես «Հայոց հին գրականության և մատենագիտության» դասախոս, միաժամանակ 1919-20 թթ. Ալեքսանդրապոլում եղել է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկանը (նրա կենսագործունեության և գիտահետազոտական աշխատանքների մասին ավելի հանգամանալից տե՛ս Գ. Տէր-Վարդանեանի «Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան» գրքում (Երևան, «Մագաղաթ» հրատ., 1999, 180 էջ):

սիցյանը և ուրիշներ: Առաջին նախագահն է եղել դարձյալ համալսարանի դասախոս, ակադեմավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը (1923-33 թթ.): Այդ կոմիտեն, որ գործել է շուրջ 40 տարի՝ մինչև 1964 թվականը[2], և նրա կազմը ամեն անգամ թարմացվել ու համալրվել է նորանոր անդամներով (Կարո Ղաֆադարյան, Սեդրակ Բարխուդարյան, Նիկոլայ Տոկարսկի և ուրիշներ), շատ բան է արել մեր պատմաճարտարապետական հուշարձանները գիտականորեն հաշվառելու, նորոգելու և մասսայականացնելու ուղղությամբ: Ինչ խոսք, այդ հայրենանվեր գործում միշտ էլ ընդգրկվել են մեր լավագույն ուսանողներն ու դասախոսները: Նախապատերազմյան և ետպատերազմյան դժվարին տարիներին Հայաստանի կառավարությունը զգալի միջոցներ է հատկացրել այդ մարմնին՝ հնագույն հուշարձանները ուսումնասիրելու ու պահպանելու նպատակով: Այդ տարիներին է, որ լույս են տեսնում մի շարք կոթողային աշխատություններ՝ նվիրված հայկական հին արվեստին ու ճարտարապետությանը[3]:

Բացի այդ, կատարվում են մի շարք պեղումներ, ուսումնասիրվում Գառնիի տաճարը, Մարմաշենը, Բջնիի, Ամբերդի եկեղեցիները, Թալինի կաթողիկեն, Տաթևի վանքը, Դվինի, Զվարթնոցի, Էջմիածնի, Կարմիր բլուրի և այլ վայրերի հնությունները ու ճարտարապետական կոթողները, և այդ աշխատանքներին իրենց գործուն մասնակցությունն են բերում Երևանի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները: Ցավոք, դարերի ընթացքում օտար նվաճողների կողմից ավերված, լքված ու շատ դեպքերում հողի հաստ շերտերով ծածկված մեր բազմաթիվ ամրոցներն ու բերդերը, կամուրջները ու իջևանատները, վանքերն ու եկեղեցիները լիարժեք կերպով ուսումնասիրելու և վերականգնելու համար միայն հիշյալ կոմիտեն ու պետությունը ոչինչ անել չէին կարող: Դրանց համար անհրաժեշտ էին համաժողովրդական հոգատարություն և ուշադրություն, ինչպես և գործնական օգնություն:

---

[2] 1933 թ. հունիսի 2-ից կրել է «Հնությունների կոմիտե» անվանումը և ընդգրկվել ՀԽՍՀ Կենտգործկոմի կազմում, ՀԽՍՀ ԺողկոմխորհԻ 1941 թ. հունվարի 25-ի որոշմամբ մտել է ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի (Արմֆան) մեջ, 1945-52 թթ. կրկին գործել է որպես ինքնուրույն մարմին, 1953-79 թթ. եղել է ՀԽՍՀ Պետշինի պատմության և կուլտուրայի հուշարձանների վերականգնման ու պահպանման վարչություն, որը ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թ. ապրիլի 19-ի որոշմամբ դարձել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչություն և սկսել է գործել 1979 թ. սեպտեմբերի 20-ից: Այս կարևոր մարմինը տարբեր տարիների ղեկավարել են Հ. Օրբելին (1943-44 թթ.), Վ. Հարությունյանը (1945-52 թթ.), Կ. Հովհաննիսյանը (1953-79 թթ.), Գ. Հասրաթյանը (1279-91 թթ.) և ուրիշներ:

[3] Առանձնապես արժեքավոր են Խ. Սամուելյանի «Հին Հայաստանի կուլտուրա» եռահատոր աշխատությունը (Եր., 1931-41 թթ.), Թ. Թորամանյանի «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» երկհատորը (Եր., 1942-48 թթ.), **Н. М. Токарский**, Архитектура древней Армении, Ер., 1946, նույնի՝ Архитектура Армении IV-XIV вв., նույնի՝ По страницам истории армянской архитектуры, Ер.,1973, **А. Л. Якобсон**, Очерки истории зодчества Армении V-XVIII веков, М.-Л., 1950, **Б. Арахелян**, Гарни, Ер.,1952, **К. В. Тревер**, Очерки по истории культуры древней Армении, М.- Л., 1953 և այլն:

Այդ նպատակով էլ 1941-45 թթ. հիշյալ կոմիտեի նախագահի տեղակալ պրոֆ. Ն. Մ. Տոկարսկու ղեկավարությամբ 1949 թ. փորձ է արվում ստեղծելու Հուշարձանների պահպանության հանրապետական ընկերություն: Նրա այդ իղձը, սակայն, իրականություն է դառնում 1964 թ. միայն, երբ Հայաստանում ստեղծվում է կամավոր սկզբունքների վրա հիմնված այդ կազմակերպությունը, որը ղեկավարելու պատասխանատու պարտականությունների կատարումը դրվում է մեր հուշարձանների պահպանման մեծ երախտավոր ու կազմակերպիչ Մ. Սարյանի վրա, իսկ տեղակալ է ընտրվում ճարտարապետության դոկտոր, պրոֆ. Վ. Հարությունյանը, որը հետագայում ստանձնում է նախագահի պաշտոնը (1977-82 թթ.): Այս նորաստեղծ կամավոր կազմակերպությունը, փաստորեն, գործում է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությանը զուգահեռ, հասարակական հիմունքներով, որին շատ կարճ ժամանակաընթացքում անդամագրվում են 100 հազարից ավելի երիտասարդներ, ովքեր սկսում են նվիրումով ծառայել մեր ճարտարապետության հնագույն կոթողների պահպանության, վերականգնման ու պրոպագանդման սրբազան գործին:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ այդ հայրենանվեր աշխատանքը Երևանի պետական համալսարանի ուսանողության կողմից սկսվել էր դեռևս հիշյալ ընկերության ստեղծումից ավելի վաղ՝ 1960-ականների սկզբից: Համալսարանում այդ հայրենանվեր գործի առաջին կազմակերպիչն ու ջատագովը եղել է ֆիզիկոս, ներկայումս լաբորատորիայի վարիչ Միսաք Մարտիրոսյանը: Նրա ղեկավարությամբ ուսանողները նույնիսկ ամառային արձակուրդների ընթացքում, իրենց հանգստի հաշվին, կազմակերպել են աշխատանքային բազմաթիվ այցելություններ անբարենպաստ ու լքված վիճակում գտնվող վանքերն ու եկեղեցիները, մացառներից ու բույսերից մաքրել ու բարեկարգել են դրանց փլվող պատերն ու այուները, խորանները ու կամարները, գմբեթները ու քիվերը և շրջակայքը բերել պատշաճ տեսքի: Հարյուրավոր խաչքարեր ու վիմագիր արձանագրություններ են հանվել փլվածքների ու հողի տակից և ամրացվել իրենց տեղերում:

Ուսանողության շրջանում այդ գործը ավելի մեծ չափերի ու ծավալների է հասնում, երբ 1967 թ. ստեղծվում է Պատմական հուշարձանների պահպանության հանրապետական խորհուրդ, որի վրա է դրվում ուսանողության կողմից ծավալված հուշարձանների պահպանման ու վերականգնման աշխատանքների ղեկավարումը: Այդ երիտասարդական խորհուրդը կարճ ժամանակաընթացքում ստեղծում է տեղական միություններ, որոնց միջոցով էլ, ըստ հանրապետության շրջանների, ցուցակագրվում ու քարտեզագրվում են առավել վտանգված ու փլման եզրին կանգնած հուշարձանները, մշակվում դրանց վերականգնման կամ բարեկարգման ծրագրեր:

Սկսված գործին մասնակցում են գրեթե բոլոր բուհերի ուսանողներն ու հանրապետության դպրոցների բարձր դասարանների աշակերտները: Համալսարանականները ևս ընդգրկվում են նորաստեղծ մասնաճյուղի մեջ: Շուտով կազմակերպ-

վում է հանրապետական հավաք, որի առթիվ Երևանի պետական համալսարանը կազմակերպում է Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների վիճակը և նրանցում իր սաների կողմից կատարված աշխատանքները պատկերող լուսանկարների հարուստ ցուցահանդես: Այդուհետև ավելի մեծ ծավալ է ստանում ձեռնարկված գործը: Համալսարանում և բացօթյա՝ հուշարձանների մոտ, կազմակերպվում են դասախոսություններ, որոնց միջոցով ուսանողները ծանոթանում են տվյալ կառույցի պատմությանը, հաճախ նշվում են կարևոր հուշարձանների տարեթվերը, հրատարակվում են հանրամատչելի գրքեր ու գրքույկներ, քարտեզ-ուղեցույցներ ու փոստային բացիկներ, դրոշմանիշներ ու հուշանվերներ, լույս է տեսնում ընկերության տարեգիրքը[4]: Սրանց զուգահեռ շարունակվում են տպագրվել գիտական արժեքավոր աշխատություններ՝ նվիրված միջնադարյան հայոց վանքերին ու եկեղեցիներին[5]: Այստեղ հատկապես պետք է ընդգծել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակած «Հայկական եկեղեցիներ», «Հայկական խաչքարեր» շքեղ ալբոմները, որոնց մեջ ի մի են բերված ողջ Հայաստանի (Արևելյան և Արևմտյան) տարածքում պահպանված ու եզակի արժեք ունեցող վանքերի ու եկեղեցիների լուսանկարների սև-սպիտակ և գունավոր վերատպությունները:

Համալսարանականները պատմական հուշարձանների պահպանման ու վերականգնման աշխատանքներին գործուն մասնակցություն են ունեցել մինչև 1980-ականների կեսերը: Նրանց ուժերով պարբերաբար կազմավորվել են մասնագիտացված ջոկատներ, որոնց աշխատանքներին մասնակցել են 2500-ից ավելի ուսանողներ ու դասախոսներ: Նրանց հայրենանվեր գործին աջակցել են այդ շրջանի ռեկտորներ Ն. Հարությունյանը, Հր. Բատիկյանը, Մ. Ներսիսյանը, Ս. Համբարձումյանը, ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարներ Ստ. Պողոսյանը, Ս. Հարությունյանը, Լ. Տիտանյանը, Ա. Հայթյանը, Ռ. Մխիթարյանը և ուրիշներ, ինչպես նաև հուշարձանների պահպանման հայկական ընկերությունը: Նրանք անում են ամեն ինչ, որպեսզի ուսանողության հայրենանվեր նախաձեռնությունը հաջողությամբ պսակվի: Հիշյալ ընկերության և համալսարանի ղեկավարության կողմից հատկացվում են

---

[4] Դրանցից են՝ Ցու. Թամանյանի «Գարե տարեգրության վերականգնումը» (Եր.,1971), Կ. Հովհաննիսյանի «Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը Սովետական Հայաստանում» (Եր., 1978) աշխատությունները, ինչպես նաև «Էջմիածին», «Հաղբատ-Սանահին», «Գառնի-Գեղարդ» և այլ հանրամատչելի պատկերազարդ գրքույկները:

[5] Այդ գրքերից են՝ Ալ. Սահինյանի «Գասաղի բազիլիկայի ճարտարապետությունը» (1955), նույնի՝ «Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը» (1983), Ս. Մնացականյանի «Հայկական ճարտարապետության նյութերի դպրոցը» (1960), նույնի՝ «Երևանը և նրա ջրջակայքը» (1971), նույնի՝ «Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները» (1971), Կ. Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» երկհատորյակը (1962-1982), Ի. Էլչարյանի «Աղստևի հովտի պատմական հուշարձանները» (1978), Ե. Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (1985), Ա. Այվազյանի «Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները» (1987) աշխատությունները:

նյութական միջոցներ ու փոխադրամիջոցներ, տրամադրվում վրաններ և հանդերձանք՝ տեղերում գիշերելու և բարեկարգման աշխատանքներ կատարելու համար: Այդ տարիներին համալսարանականները մաքրել ու բարեկարգել են Իջևանի շրջանում գտնվող Մակարավանքը, Դիլիջանի տարածքի Ջուխտակ վանքը, Նորավանքի ճարտարապետական համալիրը, ապա՝ Գրիգոր Մամիկոնյան իշխանի ապարանքի փլատակների շրջակայքը՝ Թալինում, Ցախացքարի վանքը՝ Եղեգնաձորի շրջանի Եղեգիս գյուղի մոտ, վերանորոգչական աշխատանքներ են կատարվել Աշտարակի, Թալինի, Ապարանի, Հրազդանի, Աբովյանի և այլ շրջաններում, կազմակերպվել են ջոկատ «Համալսարանը որոնում է համալսարանին» խորհրդանշական անվամբ, որն էլ գտել է Գլաձորի համալսարանի տեղը Եղեգնաձորի շրջանի Վերնաշեն գյուղի մոտ, Թանահատի վանքի շրջակայքում, ուր և հնագետ-դասախոս Իգիթ Ղարիբյանի ղեկավարությամբ կատարվել են պեղումներ ու հայտնաբերվել միջնադարյան մեր հռչակավոր համալսարանի պատմության վերաբերյալ հարուստ նյութեր[6]: Ուսանողներին մշտապես խրախուսել և գիտականորեն ղեկավարել են հնագիտության և ազգագրության ամբիոնի (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան) դասախոսները, որոնց թվում հատկապես հիշատակության արժանի է հնագետ, դոց. Ս. Սարդարյանի նվիրումն այդ գործին:

Համալսարանական ջոկատի ղեկավար Մ. Մարտիրոսյանի ելույթների ու ահազանգերի հիման վրա ավերումից փրկվել են մ.թ.ա. 2-րդ դարին պատկանող Քարաշամբի ամրոցը և նրան կից լայնածավալ դամբարանադաշտը, Երևանի կենդանաբանական այգուց արևելք ընկած Զորաբերդը և նրա դամբարանադաշտը և այլ հնություններ: Նա ժամանակին կազմել և ընկերության ղեկավարության ուշադրությանն է ներկայացրել հնագիտական այն հուշարձանների ոչ լրիվ ցանկը՝ շուրջ 50 անուն, որոնք ենթակա են եղել կորստյան: Նրա միջամտությամբ ու ջանքերով վերականգնվել են դրանցից շատերը:

Շուրջ քառորդ դար տևած այդ աշխատանքներին իրենց գործուն մասնակցությունն են բերել տարբեր ֆակուլտետների բազմաթիվ ուսանողներ, որոնց թվում Գագիկ Հովսեփյանը, Կարեն Մովսիսյանը, Անդրանիկ Ղուկասյանը (ֆիզիկայի ֆակուլտետից), Կարապետ Քացախյանը (քիմիականից), Էվելինա Հարությունյանը (կենսաբանականից), Աստղիկ Բեքմեզյանը, Գուրգեն Մելիքյանը, Խաչատուր Վարդանյանը, Խորեն Պալյանը (բանասիրականից) և շատ ուրիշներ, որոնք ներկայումս անվանի գիտնականներ ու դասախոսներ են: Ուսանողների հետ այդ աշխատանքներին գործուն մասնակցություն են ունեցել նաև ֆիզդաստիարակության ու սպորտի ամբիոնի երիտասարդ դասախոսներ Հարություն Երանոսյանը, Հենրիկ Սարյանը և Ռոբերտ Գալոյանը, որոնք «Ճանաչենք հայրենի բնությունը և մեր պատմական հուշարձանները» նշանաբանը կրող վաղօրոք մշակված երթուղիներ-

---

[6] Այդ նյութերի հիման վրա Ի. Ղարիբյանը հետագայում գրեց իր «Գլաձոր» (Եր. 1983) մենագրությունը՝ նվիրված Գլաձորի համալսարանի 700-ամյակին:

րով հարյուրավոր արշավներ են կազմակերպել դեպի հազարամյա վանքերն ու եկեղեցիները և, նրանց վիճակին ու պատմությանը ծանոթանալուց բացի, ամեն անգամ մաքրվել ու բարեկարգվել են տվյալ երթուղու շրջակայքում եղած հուշարձանները:

Համալսարանականները մտահոգվել են նաև Հայաստանի սահմաններից դուրս՝ այլ հանրապետություններում գտնվող հայկական ճարտարապետական կոթողների ճակատագրով: Այդ վայրերից եկած ուսանողներից շատերը ամառային արձակուրդների ընթացքում տեղեկություններ են հավաքել իրենց ծննդավայրերում գտնվող եկեղեցիների վիճակի մասին և, վերադառնալով դասերի, մասնաճյուղի նիստերում ներկայացրել կատարված դիտարկումների արդյունքները, ըստ որոնց, հանրապետության ընկերության հետ մեկտեղ ձեռնարկել են համապատասխան միջոցառումներ՝ այդ հուշարձանները հոգատարությամբ/շրջապատելու համար: Արդյունքում՝ պահպանվել են Դոնի Ռոստովի, Մոսկվայի, Լվովի, Լենինգրադի, ինչպես նաև Ղրիմի, Մոլդովայի, Վրաստանի ու Ադրբեջանի տարածքներում եղած շատ վանքեր ու եկեղեցիներ[7]: Այդ տարիներին են սկսվել ու ավարտվել Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի վերանորոգման ու շրջակայքի բարեկարգման աշխատանքները: Ի դեպ, նրա գավթում են հանգչում Հարություն Ալամդարյանի (1795-1834), Միքայել Նալբանդյանի (1829-1866) և Ռափայել Պատկանյանի (1830-1892) աճյունները:

Հուշարձանների պահպանման հայկական ընկերության գործունեությունը ժամանակին լայն արձագանք է գտել սփյուռքում: Տարբեր գաղթօջախների շատ գործիչներ ողջունելով նրա հիմնադրումը՝ իրենց բարոյական ու նյութական աջակցությունն են ցուցաբերել: «Գալուստ Կյուլպենկյան» հաստատությունը, օրինակ, ընկերությանը նվիրաբերել է 20 հազար դոլար, որով վերականգնվել են Գնդեվանքն ու նրա ժամատունը: Սփյուռքում ևս իրականացվել են մի շարք արժեքավոր հրատարակություններ՝ նվիրված մեր պատմաճարտարապետական կոթողներին:

Անցել են տարիներ, սակայն Երևանի պետական համալսարանում դարձյալ շարունակվում են հին ավանդույթները, կրկին կազմակերպվում են արշավներ ու երթեր դեպի մեր ժողովրդի հոգու պատկերն արտացոլող հնագույն հուշարձանները, դեպի մեր սրբավայրերը: Մեզանից ութսուն տարի առաջ, համալսարանի հիմնադրման օրը, Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանի կարդացած հայոց վանքերի դերի ու նշանակության մասին առաջին դասախոսության արձագանքները այսօր էլ թնաձում են մեր մայր կրթօջախի լսարաններում: Այդ սուրբ գործի մերօրյա շարունակողներից ու հարստացնողներից մեկը Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանն է, որը վերջին հինգ տարիների ըն-

---

[7] Նախկին Խորհրդային Միության տարածքի եվրոպական մասում գտնվող մեր հնավայրերի, վանքերի ու եկեղեցիների, ինչպես նաև մյուս հուշարձանների մասին տե՛ս **М. Г. Петмазджян.** Памятники армянских поселений. Ер., 1987, պատկերազարդ ու շքեղ գրքում:

թացքում կազմակերպել է բազմաթիվ այցելություններ Հայաստանի հնավայրերն ու ուխտատեղիները, որոնց ընթացքում դասախոսությունների միջոցով ուսանողությանը ծանոթացրել է դրանց հարուստ պատմությանը, ակնածանք ու սեր ներարկել նրանց հոգիներում դեպի մեր մշակութային կոթողները, մեր վանքերն ու եկեղեցիները: Դա հայրենանվեր ու արբազան մի գործ է իր ութսունամյա հարուստ պատմությամբ, որով հայոց մայր համալսարանը դիմավորում է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 5-ին, կիրակի.- Ը. կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: Հընթացս Ս. Պատարագի, Տ. Փառեն եպս. Ավետիքյանի ձեռամբ, կատարվեց ճեմարանավարտ հինգ սարկավագների՝ Հրայր Խաչատրեանի, Մկրտիչ Այվազյանի, Վիգեն Ղազարյանի, Մանվել Շաքարյանի և Արտակ Թումանյանի քահանայական ձեռնադրությունը: Ձեռնադրության ավարտին պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 11-ին, շաբաթ.- Մրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:

Այսօր, երեկոյան, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարները Մայր Աթոռ բերելու կապակցությամբ, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Այսօր զիմանալի լուսոյն ծագդեն ի խաւարի նստելոցս, զԳրիգորիոս Սուրբ Հայրապետն եկայք վերապատուեսցուք» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 12-ին, կիրակի.- Թ. կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 19-ին, կիրակի.- Ժ. կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 21-ին, երեքշաբթի.- Բ. օր Յիսնակաց պահոց: Ընծայումն Ս. Ցպուտածանի երից ամաց ի Տաճարն:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մարկոս աբեղա Մարկոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 26-ին, կիրակի.- Ա. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շնորհք ծ. վրդ. Գասպարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Ноябрь 2000)

ОФИЦИАЛЬНАЯ ИНФОРМАЦИЯ

1. Информация о визитах Его Святейшества в Рим (8-11 ноября 2000 г.) и в Москву (24 ноября 2000 г.) – (с. 3).
2. Визит Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, в Москву и возвращение святых мощей Григория Просветителя в Армению (помещено также совместное Коммюнике Папы Иоанна-Павла II и Католикоса Гарегина II) – (с. 4-18).
3. Трехсторонняя встреча Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Святейшества Патриарха Всея Руси Алексия II, Духовной главы мусульман Азербайджана Шейх-уль Ислама Аллахшукюра, 24 ноября 2000 г. (с. 19-20).
4. Совместная декларация Его Святейшества Патриарха Всея Руси Алексия II, Духовной главы мусульман Азербайджана и Председателя Высшего религиозного совета народов Кавказа Шейх-уль Ислама Аллахшукюра и Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса всех армян (с. 21-22).
5. Обращение к Президентам России, Азербайджана и Армении (подписанное Алексием II, Гарегином II и Аллахшукюром Паша-заде) - (с. 23-25).
6. Слово Его Святейшества Патриарха Москвы и Всея Руси Алексия II на церемонии открытия Трехсторонней встречи духовных глав России, Азербайджана и Армении, 24 ноября 2000 г. (с. 26-28).
7. Выступление Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса всех армян, на Встрече духовных глав в Москве, 24 ноября 2000 г. (с. 29-30).

ПАТРИАРХАЛЬНЫЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

8. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Ара Абрамяну по случаю его награждения орденом "Св. Григорий Просветитель", 5 ноября 2000 г., № 31 (с. 31-32).

9. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Торосу Тораняну по случаю его награждения орденом "Св. Саак - Св. Месроп", 17 ноября 2000 г., № 32 (с. 33-34).
10. Благословение и поздравление Его Святейшества учебному заведению Мари Манукян в Буэнос-Айресе, 29 ноября 2000 г., № 129 (с. 35-36).
11. Выступление Его Святейшества Гарегина II на церемонии открытия Симпозиума Армянской Национальной Академии Наук, посвященного 300-летию основания Конгрегации Мхитаристов, 22 ноября 2000 г. (с. 37-39).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

12. **ДИАКОН ГЕВОРК МАКАРЯН** - Церемония в Св. Престоле, посвященная 1-ой Годовщине посвящения в сан и интронизации Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 4 ноября 2000 г. (с. 40-43).
13. Заседание Верховного Духовного Совета Эчмиадзина, 6 ноября 2000 г. (с. 44-45).
14. **АРМЕН ПЕТРОСЯН** - Посвящение в сан священника в Кафедральном соборе Св. Эчмиадзина, 4-5 ноября 2000 г. (помещены также биографии аббатов Григора Хачатряна, Аристакеса Айвазяна, Саака Шакаряна, Даниела Туманяна и священника Хада Казаряна) - (46-53).
15. Освящение новой колокольни епархиальной церкви Св. Саркиса в присутствии Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 2 ноября 2000 г. (с. 54).
16. Освящение церкви Св. Анны в Малышке Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, 4 ноября 2000 г. (с. 55).
17. Открытие нового павильона телестудии "Шогакат" в Св. Престоле Эчмиадзина, 2 ноября 2000 г. (с. 56).
18. Участие Его Святейшества Гарегина II в юбилейной церемонии школы им. Байрона в Гюмри, 3 ноября 2000 г. (с. 57-58).
19. Присутствие Его Святейшества Гарегина II на открытии Давидашенского моста, 17 ноября 2000 г. (с. 58).
20. Аудиенция Начальника ФСБ Российской Федерации Генерала-лейтенанта Николая Патрушева у Его Святейшества Гарегина II, 29 ноября 2000 г. (с. 58-59).
21. Аудиенция представителей Министерства Обороны Великобритании у Его Святейшества Гарегина II, 13 ноября 2000 г. (с. 59).
22. Межепархиальная встреча в Св. Престоле Эчмиадзина, посвященная молодежному паломничеству по случаю 1700-летия, 23 ноября 2000 г. (с. 60).

РЕЛИГИОЗНОЕ ИССЛЕДОВАНИЕ

23. **В. ЛОССКИЙ** - Божественный свет (научное исследование, переведенное с русского языка диаконом Арманом Сарояном) - (с. 61-75).

ИСТОРИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

24. **Р. МАТЕВОСЯН** - Проповедование Евангелия Григорием Просветителем в Закавказье (научное исследование) - (с. 76-83).
25. **ЭММА АШОТОВНА КОСТАНДЯН** - Мхитаристы и Мкртич Хримян (научное исследование) - (с. 84-90).
26. **ЛУСИК АВАКЯН** - Армянские церкви Новой-Джульфи (научное исследование) - (с. 91-101).
27. **АРАМ АКОПОВИЧ САРГСЯН** - Армянский вопрос и Армянское Патриаршество Константинополя в 70-ых годах XIX в. Мкртич Хримян и Нерсес Варжапетян (научное исследование) - (с. 102-113).
28. **КАРЕН СОГОМОНЯН** - Эпизоды педагогической деятельности Комитаса в Семинарии Геворкян (научное исследование) - (с. 114-124).
29. Ереванский Государственный Университет на страже наших исторических памятников (научное исследование) - (с. 125-132).
30. Краткие церковные новости. Информации о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном Соборе и Св. Престоле Эчмиадзина в течение ноября (с. 133-134).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(November 2000)

OFFICIAL INFORMATION

1. Information about His Holiness Visits to Rome (8-11 November 2000) and to Moscow (24 November 2000) - (p. 3).
2. Visit of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to Rome and Return of Saint Gregory the Illuminator's Relics to Armenia, 8-11 November 2000 (Joint Communiqué of the Pope John-Paul II and the Catholicos Gareguin II) - (p. 4-18).
3. Trilateral Meeting between His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, His Holiness Alexy II, Patriarch of all Russia, and Sheikh-ul Islam Allahshukur, Head of Azerbaijan's Moslems, 24 November 2000 (p. 19-20).
4. Joint Declaration of His Holiness Alexy II, Patriarch of all Russia, Sheikh-ul Islam Allahshukur, Head of Azerbaijan's Moslems and Chairman of Caucasian Nations Supreme Religious Council, and His Holiness Gareguin II, Supreme Patriarch and Catholicos of all Armenians (p. 21-22).
5. Appeal Addressed to the Presidents of Russia, Azerbaijan and Armenia (signed by Alexy II, Gareguin II and Allashukur Pasha-zadeh) - (p. 23-25).
6. Speech of His Holiness Alexy II, Patriarch of Moscow and all Russia, at the Opening Ceremony of Russia, Azerbaijan and Armenia Religious Heads Trilateral Meeting, 24 November 2000 (p. 26-28).
7. Speech of His Holiness Gareguin II, Supreme Patriarch and Catholicos of all Armenians, at the Religious Heads Meeting in Moscow, 24 November 2000 (p. 29-30).

PATRIARCHAL ENCYCLICALS AND BLESSING MESSAGES

8. Encyclical of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians to Ara Abrahamian on the Occasion of his Decoration by the Order "Saint Gregory the Illuminator", 5 November 2000, no. 31 (p. 31-32).
9. Encyclical of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians to Thoros Thoranian on the Occasion of his Decoration with the Order "Saint Sahak – Saint Mesrop", 17 November 2000, no. 32 (p. 33-34).
10. Blessing and Congratulation Message of His Holiness to the Marie Manoukian School of Buenos Aires, 29 November 2000, no. 129 (p. 35-36).

11. Speech of His Holiness Gareguin II at the Opening Ceremony of the Armenian National Academy of Sciences' Symposium Dedicated to the 300th Anniversary of Mekhitarists Congregation Foundation, 22 November 2000 (p. 37-39).

AT THE HOLY SEE AND THE DIOCESES

12. **DEAGON GUEVORK MAKARIAN** – Ceremony at the Holy See, Dedicated to the 1st Anniversary of Ordination and Inthronization of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, 4 November 2000 (p. 40-43).
13. Session of the Echmiadzin Supreme Religious Council, 6 November 2000 (p. 44-45).
14. **ARMEN PETROSSIAN** – Priests Ordination at the Cathedral of Saint-Echmiadzin, 4-5 November 2000 (Biographies of Abbots Grigor Khachatrian, Aristakes Ayvazian, Sahak Shakarian, Daniel Toumanian and Priest Khad Ghazarian) – (p. 46-53).
15. Blessing of the Diocesan Church St.-Sarkis new Bell Tower in Presence of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, 2 November 2000 (p. 54).
16. Benediction of the Church Saint-Anna of Malishka by His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, 4 November 2000 (p. 55).
17. Opening of the TV-Studio "Shoghakat" new Pavilion at the Holy See of Echmiadzin, 2 November 2000 (p. 56).
18. Participation of His Holiness Gareguin II to the Byron School Jubilee Ceremony in Gumri, 3 November 2000 (p. 57-58).
19. Presence of His Holiness Gareguin II at the Davitashen Bridge Opening, 17 November 2000 (p. 58).
20. Audience given by His Holiness Gareguin II to Lieutenant General Nikolai Patrushev, Head of the Russian Federation Federal Security Department, 29 November 2000 (p. 58-59).
21. Audience given by His Holiness Gareguin II to the Representatives of Great Britain Ministry of Defense, 13 November 2000 (p. 59).
22. Interdiocesan Meeting Dedicated to the Youth Pilgrimages on the Occasion of the 1700th Anniversary at the Holy See of Echmiadzin, 23 November 2000 (p. 60).

RELIGIOUS STUDY

23. **V. LOSSKY** – Divine Light (investigation translated from Russian by Deacon Arman Saroyan) – (p. 61-75).

HISTORICAL STUDIES

24. **R. MATHEVOSSIAN** – Evangelical Preachment by Gregory the Illuminator in Transcaucasus (investigation) – (p. 76-83).

25. **EMMA A. KOSTANDIAN** – The Mekhitarists and Mekertich Khrimian (investigation) – (p. 84-90).

26. **LOUSSIK AVAKIAN** – Armenian Churches in New-Julfa (investigation) – (p. 91-101).

27. **ARAM H. SARGSIAN** – The Armenian Question and the Armenian Patriarchate of Constantinople during the 1870-ies. Mekertich Khrimian and Nerses Varzhapetian (investigation) – (p. 102-113).

28. **KAREN SOGHOMONIAN** – Episodes from the Pedagogical Activities of Komitas at the Guevorkian Seminary (investigation) – (p. 114-124).

29. The Yerevan State University in guard of our Historical Monuments (investigation) – (p. 125-132).

30. Brief Church News. Information about the Holy Masses, Sermons and other Ceremonies held in November at the Holy See and the St.-Echmiadzin Cathedral (p. 133-134).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(Novembre 2000)

INFORMATION OFFICIELLE

1. Information sur les visites de Sa Sainteté à Rome (8-11 novembre 2000) et a Moscou (24 novembre 2000) - (p. 3).
2. Visite de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Rome et retour des reliques de saint Grégoire l'Illuminateur en Arménie, 8-11 novembre 2000 ("Communiqué commun du Pape Jean-Paul II et du Catholicos Garéguine II) - (p. 4-18).
3. Recontre trilatérale entre Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, Sa Sainteté Alexy II, Patriarche de toute la Russie, et Cheikh-ul Islam Allahchukur, Chef spirituel de l'Azerbaïdjan, 24 novembre 2000 (p. 19-20).
4. Déclaration commune de Sa Sainteté Alexy II, Patriarche de toute la Russie, de Cheikh-ul Islam Allahchukur, Chef spirituel des musulmans de l'Azerbaïdjan et Président du Conseil Religieux Suprême des nations du Caucase, et de Sa Sainteté Garéguine II, Patriarche Suprême et Catholicos de tous les Arméniens (p. 21-22).
5. Appel adressé aux Présidents de la Russie, de l'Azerbaïdjan et de l'Arménie (signé par Alexy II, Garéguine II et Allahchukur Pacha zadeh) (p. 23-25).
6. Allocution de Sa Sainteté Alexy II, Patriarche de Moscou et de toute la Russie, à la cérémonie d'ouverture de la rencontre trilatérale des chefs spirituels de la Russie, de l'Azerbaïdjan et de l'Arménie, 24 novembre 2000 (p. 26-28).
7. Intervention de Sa Sainteté Garéguine II, Patriarche Suprême et Catholicos de tous les Arméniens, au cours de la rencontre des chefs spirituels à Moscou, 24 novembre 2000 (p. 29-30).

ENCYCLIQUES PATRIARCAUX ET MESSAGES DE BENEDICTION

8. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Ara Abrahamian à l'occasion de sa décoration de l'ordre "Saint Grégoire l'Illuminateur", 5 novembre 2000, no. 31 (p. 31-32).

9. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Thoros Thoranian a l'occasion de sa décoration de l'ordre "Saint Sahak - Saint Mesrop", 17 novembre 2000, no. 32 (p. 33-34).
10. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté à l'établissement d'enseignement Marie Manoukian de Buenos Aires, 29 novembre 2000, no. 129 (p. 35-36).
11. Allocution de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion de la cérémonie d'ouverture du Symposium de l'Académie Nationale des Sciences d'Arménie, consacré au 300e anniversaire de la fondation de la Congrégation des Mekhitaristes, 22 novembre 2000 (p. 37-39).

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

12. **DIACRE GUEVORK MAKARIAN** - Cérémonie au Saint-Siège, consacrée au 1er anniversaire de l'onction et de l'intronisation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, 4 novembre 2000 (p. 40-43).
13. Séance du Conseil Religieux Suprême au Saint-Siège d'Etchmiadzine, 6 novembre 2000 (p. 44-45).
14. **ARMEN PETROSSIAN** - Ordination de prêtres à la Cathédrale de Saint-Etchmiadzine, 4-5 novembre 2000 (Biographies des abbés Grigor Khatchatrian, Aristakès Ayvazian, Sahak Chakarian, Daniel Toumanian et du prêtre Khad Ghazarian) - (p. 46-53).
15. Bénédiction du nouveau clocher de l'église diocésaine St.-Sarkis en présence de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, 2 novembre 2000 (p. 54).
16. Bénédiction de l'église Sainte-Anne de Malichka par Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, 4 novembre 2000 (p. 55).
17. Inaguration du nouveau pavillon du téléstudio "Choghakat" au Saint-Siège d'Etchmiadzine, 2 novembre 2000 (p. 56).
18. Participation de Sa Sainteté Garéguine II à la cérémonie jubilaire de l'école Byron de Gumri, 3 novembre 2000 (p. 57-58).
19. Présence de Sa Sainteté Garéguine II à l'inauguration du pont de Davitachen, 17 novembre 2000 (p. 58).
20. Audience donnée par Sa Sainteté Garéguine II au lieutenant-général Nikolai Patrouchev, chef du Service Fédéral de Sécurité de la Fédération de Russie, 29 novembre 2000 (p. 58-59).
21. Audience donnée par Sa Sainteté Garéguine II aux représentants du Ministère de la Défence de la Grande-Bretagne, 13 novembre 2000 (p. 59).

22. Réunion interdiocésaine, consacrée aux pélerinages de jeunes à l'occasion du 1700e anniversaire, au Saint-Siège d'Etchmiadzine, 23 novembre 2000 (p. 60).

ETUDE RELIGIEUSE

23. **V. LOSSKI** - Lumière Divine (recherche scientifique traduite du russe par Diacre Arman Saroyan) - (p. 61-75).

ETUDES HISTORIQUES

24. **R. MATHEVOSSIAN** - Prédication évangélique de Grégoire l'Illuminateur en Transcaucasie (recherche scientifique) - (p. 76-83).
25. **EMMA A. KOSTANDIAN** - Les Mekhitaristes et Mekertitch Khrimian (recherche scientifique) - (p. 84-90).
26. **LOUSSIK AVAKIAN** - Eglises arméniennes de la Nouvelle-Julfa (recherche scientifique) (p. 91-101).
27. **ARAM H. SARGSIAN** - La Question Arménienne et le Patriarcat arménien de Constantinople aux années 1870. Mekertitch Khrimian et Nersès Varjapétian (recherche scientifique) - (p. 102-113).
28. **KAREN SOGHOMONIAN** - Episodes des activités pédagogiques de Komitas au Séminaire Guévorkian (recherche scientifique) - (p. 114-124).
29. L'Université d'Etat d'Erévan à la garde de nos monuments historiques (recherche scientifique) - (p. 125-132).
30. Brèves nouvelles ecclésiastiques - Information sur les Saintes-Messes, les sermons et les autres cérémonies accomplies en novembre au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine (p. 133-134).